

ԱՐԱՔՍ ՓԱԾԱՅԱՆ

ԻՒԼԱՄԱԿԱՆ  
ԿՈՆՖԵՐԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ.

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ,  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ,  
ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ ՂԱՐԱԲԱԴՅԱՆ  
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄ



ԳԻՐՋԸ ՀՐԱՏԱՐԿՎՈՒՄ  
«ԱՐՄԵՆ ԵՎ ԲԵՐՍԱԲԵԼ ԹԵՐԵՑԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» (ԱՄՆ)  
ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՆ

THIS PUBLICATION WAS MADE POSSIBLE BY  
"ARMEN AND BERSABE JEREJIAN FOUNDATION" INC. USA

*The author expresses her gratitude to the late President of the Foundation  
Arsen Jerejian for the support in publication of this monograph*

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

ARAKS PASHAYAN

ORGANIZATION OF THE ISLAMIC CONFERENCE  
THE OBJECTIVES, ACTIVITY, POSITION  
TOWARDS THE KARABAKH CONFLICT

*It is recommended for publication by the Scientific Council  
of the Institute of Oriental Studies of National Academy of Sciences  
of the Republic Armenia*



YEREVAN 2003

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿADEMԻԱՆ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ



## ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ.  
ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ,  
ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԴԱՐԱԲԱՂՅԱՆ  
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

A II  
88/38



ԵՐԵՎԱՆ - 2003

**ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄԸ ՀՀ ՊԱՍ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՆՍՏԻՌԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՆ**

ՀՏԾ 329  
ԳՄԴ 66.6  
Փ 220

**Խմբագիր՝ Ն. Յ. Չովիհաննիսյան  
պատմական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր**

**Փաշայան Ա.**

**Փ 220 Կապամական կոնֆերանս կազմակերպությունը. նպատակները, գործունեությունը, դիրքորոշումը դարաբաղյան հակամարտության նկատմամբ:- Եր.: «Զանգակ-97», 2003, 248 էջ:**

Աշխատության մեջ բննարկվում են Խոլանական կոնֆերանս կազմակերպության ստեղծման պատմական նախադրյալները, հիմնական նպատակները, գործունեության սկզբունքները, կառուցվածքը, զաղափարական-քաղաքական հայեցակարգը, սոցիալ-տնտեսական և ֆինանսական գործունեության առանձնահատկությունները, ինչպես նաև՝ դիրքորոշումը մահմեդական աշխարհին առնչվող հիմնահարցերի նկատմամբ 1969-2002 թվականների ընկած ժամանակահատվածում։ Առաջին անգամ լուսաբանվում է Խոլանական կոնֆերանս կազմակերպության դիրքորոշումը դարաբաղյան հակամարտության նկատմամբ։

Նախատեսվում է արևելագետների, միջազգայնագետների, դիվանագետների և ընթերցող լայն շրջանների համար։

Փ — 0802000000  
0003(01)-2003 2003 թ.

ԳՄԴ 66.6

ISBN 99930-2-684-0

© Փաշայան Ա.Ա., 2003 թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ Յ ՈՒ Ն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 7

ԳԼՈՒԽ ՄՈՎՃԻՆ

ԻՍԼԱՍՍԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄ ..... 17

1. Իսլամական կոնֆերանս կազմակերպության ստեղծման  
պատմական նախադրյալները ..... 17  
2. Իսլամական կոնֆերանս կազմակերպության հիմնական  
նպատակները, գործունեության սկզբունքները, կառուցվածքը ..... 48

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԻՍԼԱՍՍԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ..... 75

1. Իսլամական կոնֆերանս կազմակերպության տնտեսական  
քաղաքականության բնորոշ առանձնահատկությունները ..... 75  
2. Իսլամական զարգացման բանկ (ԻԶԲ) ..... 86

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԻՍԼԱՍՍԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԳԱՂԱՓՐՄԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ..... 96

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԻՍԼԱՍՍԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՔՅՈՐՈՇՈՒՄԸ

ՄԱՐՄԵՂԱԿԱՆ ԱՇԽԱՐԺԻՆ ԱՌԵՎԿՈԴ ՀԻՄՆԱՐԺԵՐԻ ՆԿԱՏՄԱԲԸ ..... 106

1.Իսլամական կոնֆերանս կազմակերպության դիրքորոշումը պաղեստինյան խնդրի և արար-խսրայելական հակամարտության նկատմամբ .....	106
2.Իսլամական կոնֆերանս կազմակերպության քաղաքականությունը աֆղանական քննուկի նկատմամբ .....	131
3.Իսլամական կոնֆերանս կազմակերպության դիրքորոշումը մահմեդական փոքրանասնությունների նկատմամբ .....	146
4.Իսլամական կոնֆերանս կազմակերպության դիրքորոշումը միջիսլամական հակամարտությունների նկատմամբ .....	158
5.Իսլամական կոնֆերանս կազմակերպության դիրքորոշումը միջազգային մի շարք խնդիրների նկատմամբ .....	168
<b>ԳԼՈՒԽ ՔԻՆԳԵՐՈՐԾ</b> ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՍ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՂԱՐԱԲԱԴՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՍ ՆԿԱՏՄԱՄԲ .....	181
ՎԵՐՋԱԲԱՆ .....	220
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՍ ԵՎ ԱՐԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ .....	223
ԱՍՓՈՓՈՒՄ (անգլերեն) .....	233

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իսլամական աշխարհ (կամ մահմեդական աշխարհ) արտահայտությունը 1970-ականներից ավելի ու ավելի հաճախ սկսեց հայտնվել արևելագիտական գրականության մեջ, որտեղ փորձ է արվում ուսումնասիրել իսլամի աշխարհը՝ որպես իրականում գոյություն ունեցող համակարգ՝ իրեն հատուկ օրինաչափություններով: Այն գործընթացները, որոնք տեղի են ունենում իսլամի ավանդական տարածման շրջաններում, թույլ են տալիս ենթադրել, որ իսլամադավան երկրներին<sup>1</sup> միավորում են կրոնական և պատմամշակութային ընդհանրությունները:

Զգտելով ուրվագծել իսլամական աշխարհի սահմանները՝ մահմեդական հեղինակները նշում են, որ ամբողջ աշխարհի իսլամադավան բնակչությունը<sup>2</sup>, որը ծևավորում է իսլամական ազգ՝ ուժմամբ<sup>3</sup> հասկացությունը, իր միասնության մեջ ներկայացնում է ողջ իսլամական աշխարհը: Դենց այսպես է ներկայացված իսլամի աշխարհը քարտեզներում:

<sup>1</sup>Այն երկրները, որտեղ մահմեդականները բնակչության մեծամասնությունն են, պայմանականորեն կոչվում են իսլամական կամ մահմեդական երկրներ: Սակայն կան նաև մահմեդական փոքրամասնությամբ երկրներ (Ուզբեկան, Գարուն, Կամբուռն), որոնք, որպես իսլամական երկրներ, անդամակցում են առանձին միջազգային իսլամական կազմակերպությունների, այդ թվում՝ Խոլամական կոնֆերանս կազմակերպությանը:

<sup>2</sup>Ներկայուն երկրագնդի բնակչության ավելի քան 1. 200մլն-ը մահմեդականներ են: Բնակչության ամի ամենաբարձր ցուցանիշներից մեկը մահմեդական աշխարհում է, առանձին երկրներում այն հասնում է տարեկան միջնեւ 3, 6 %-ի:

<sup>3</sup>Ուժման հավատացյալների համայնքն է, որը կազմված է տարբեր ցեղերի և ազգությունների մահմեդականներից, որոնց միավորում է նույն կրոնը՝ իսլամը:

րում, որոնք թողարկում են իսլամական ամենատարբեր կազմակերպությունները<sup>4</sup>:

Իսլամական աշխարհի քաղաքական ինքնագիտակցության ծևավորման հարցում բացառիկ նշանակություն ունի իսլամական միասնության սկզբունքը: Բոլոր մահմեդականների միասնության գաղափարը՝ ամկախ էրնիկ և սոցիալական պատկանելությունից, իսլամի ամենակարևոր սկզբունքներից մեկն է, որը պայմանավորում է իսլամական քաղաքական գործնթացների եռթյունը:

1960-70-ականներին միջազգային հարաբերություններում իսլամի ներգործությամբ լայն թափ ստացան իսլամական համերաշխությանը միտված շարժումները, ընդլայնվեց և ամրապնդվեց իսլամական պետությունների համագործակցությունը ոչ միայն երկկողմ հարաբերությունների շրջանակում, այլև բազմակողմ, տարածաշրջանային և այլ մակարդակներով՝ ներառյալ ոչ իսլամական պետություններում իսլամական փոքրամասնությունները: Միջազգային հարաբերություններում առկա ճգնաժամային իրավիճակը, հակասությունը երկու գլխավոր սոցիալ-քաղաքական համակարգերի միջև խթանեցին Արևելքում առանձին միջազգային կազմակերպությունների գործունեությունը, որոնք առաջադրում էին արդեն մշտական դարձած խնդիրների լուծման սեփական մոտեցումները, այդ թվում՝ կրօնական հենքի վրա, ինչպես նաև ձգտում էին ստանձնել իսլամական աշխարհի գաղափարական և քաղաքական դեկավարումը:

Միջազգային իսլամական համագործակցության և համերաշխության գաղափարը ամրագրվեց 1969թ. Իսլամական կոնֆերանս կազմակերպության (ԻԿԿ) ստեղծմամբ, որի շրջանակներում նոր թափ ստա-

<sup>4</sup> Г. Милославский, Интеграционные процессы в мусульманском мире, М., 1991, с. 8.

ցավ իսլամական պետությունների համագործակցությունը քաղաքական, տնտեսական, գաղափարական, մշակութային, տեղեկատվական և կենսական այլ կարևոր բնագավառներում: Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը փորձեց համակարգել մահմեդական ժողովուրդների և պետությունների համընդհանուր հետաքրքրությունները:

Իսլամական կոնֆերանս կազմակերպության կառուցվածքի, հիմնական նպատակների, սկզբունքների, քաղաքական գործունեության, ինչպես նաև գաղափարական-քաղաքական հայեցակարգի ուսումնասիրությունն ունի ոչ միայն կարևոր գիտական, այլև քաղաքական ու գործնական նշանակություն:

Իսլամական երկրների քաղաքականության մեջ իսլամի կրոնի և գաղափարախոսության անմիջական ազդեցությունը գնալով ավելի լայն չափեր է ընդունում: Իսլամն իր կայուն դերն ունի պետական համակարգում, իսլամական պետությունների ներքին և արտաքին քաղաքական սկզբունքների ծևավորման մեջ: XXI դար իսլամը նույնը է գործում որպես մարդկային քաղաքակրթության ուղղություններից մեկը՝ որպես առանձին հայեցակարգ:

Իսլամի քաղաքականացումը վճռորոշ գործոն է միջազգային հարաբերություններում: Այդ են վկայում նաև 2001թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած աննախադեպ ահարեւէչական գործողությունները, որոնք մեկ անգամ ևս ապացուցեցին, որ իսլամը շարունակում է քաղաքական կարևոր նշանակություն ունենալ:

Ակնհայտ է դառնում նաև իսլամական միակ բարձրագույն քաղաքական մարմնի՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում միասնական իսլամական քաղաքականություն իրականացնելու իսլամական պետությունների հարածուն ցանկությունը:

Իսլամական աշխարհի ամենախոշոր, կառավարական մակարդակով միակ կազմակերպությանը անդամակցելու իրավունքը վերապահվում է միայն իսլամական պետություններին: Ներկայումս Խոլամական կոնֆերանս կազմակերպությանը անդամակցում են շուրջ 60 պետություններ:

ԽՍՇՄ-ի փլուզումից հետո կազմակերպությանն անդամակցեցին նաև Աղրբեջանն ու կենտրոնականասիական բոլոր մահմեդական հանրապետությունները՝ Ղազախստանը, Ուզբեկստանը, Թուրքմենստանը, Ղրղզստանը և Տաջիկստանը: 1990-ականների սկզբին կազմակերպությանն անդամակցեց նաև Ալբանիան, ԻԿԿ-ի հետ սկսեց համագործակցել Բունիայի և Հերցեգովինայի Հանրապետությունը. կազմակերպության աշխարհագրական սահմաններն ավելի ընդլայնվեցին:

Իսլամական կոնֆերանս կազմակերպության գործունեությամբ ամրապնդվեց դեռևս իսլամի տարածման սկզբնական շրջանում ծևավորված իսլամական ազգի՝ ումմայի գաղափարը, համաձայն որի՝ բոլոր մահմեդականներին միավորում է նույն կրոնը: Կազմակերպության գաղափարախոսությունը խարսխվեց իսլամական միասնության և եղայրության գաղափարներով:

Իսլամական ումմայի սկզբունքը պաշտոնապես հայտարարվեց իսլամական պետությունների ղեկավարների Մեթքայի գագաթնաժողովում, 1981-ին, որտեղ սահմանվեցին նաև իսլամի երթմնի փառքի և քաղաքակրթության ամրապնդման, ինչպես նաև աշխարհում ազդեցիկ և տիրապետող դիրքեր նվաճելու մահմեդական ժողովուրդների պարտավորությունները:

Ակնհայտ է, որ Խոլամական կոնֆերանս կազմակերպության ստեղծումը և գործունեությունը պայմանավորված է միջազգային հարաբե-

բություններում իսլամի քաղաքականացման հանգանանքով, որը նկատի է առնում իսլամի քաղաքական նշանակության և դերի մեծացումը քաղաքական գործընթացների մեջ:

Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը իր գործունեության բոլոր բնագավառներում պարտավորվում է առաջնորդվել իսլամի դրույթներով, քանի որ ինչպես հավատացած են մահմեդական աշխարհի գործիչները, իսլամը կարող է հանդես գալ իրու իսլամական աշխարհի զարգացման հիմնական ուղղություն, մահմեդական երկրների և ժողովուրդների միջև սերտ համագործակցության, փոխըմբռնման և առաջընթացի կարևոր նախապայման: Մահմեդական շատ քաղաքագետների և տեսաբանների համագոմամբ՝ իսլամը կարող էր հանդես գալ որպես զարգացման այլընտրանքային ուղի՝ կապիտալիզմին և սոցիալիզմին:

Իսլամական համագործակցության շրջանակներում իսլամական բարձրագույն քաղաքական մարմինը աջակցում է մահմեդականներին առնչվող իիմնահարցերի և հականարտությունների լուծմանը: Բացի այդ ԻԿԿ-ն անդամ բոլոր երկրներում իրականացնում է ֆինանսական, տնտեսական, մշակութային, սոցիալական տարրեր ծրագրեր, որոնք ներառում են նաև ոչ իսլամական պետություններում մահմեդական փոքրամասնությունները: Միջազգային իրավունքի շրջանակներում իսլամական կոնֆերանս կազմակերպությունը ձգտում է ներկայանալ որպես իսլամական ազգերի կազմակերպություն:

Իսլամական կոնֆերանս կազմակերպության գործունեության մասնակիւտ ուսումնասիրությամբ ավելի տեսանելի ու ընկալելի են դաշնում իսլամական համագործակցության գաղափարական-քաղաքական սկզբունքներն ու մի շարք առանձնահատկությունները, բացահայտվում են իսլամական համագործակցության ուղիներն ու հեռանկարները:

Իր աշխարհագրական դիրքի պատճառով Հայաստանը ներգրավված է Արևելքի քաղաքական և տնտեսական հարաբերությունների ոլորտում: Այդ իսկ պատճառով Հայաստանը պետք է հաշվի առնի միջազգային հարաբերություններում իսլամական գործոնի ազդեցությունը և դրանից բխող հեռանկարային գարգացումները: Մերձավոր և Սիցին Արևելքի իսլամական երկրներում տեղի ունեցող քաղաքական գործնթացները Հայաստանի համար կարևորվում են նաև այդ պետություններում մեծաքանակ հայկական համայնքների գոյության փաստով:

Հարկ է նշել, որ իսլամական բարձրագույն քաղաքական մարմինը, որպես կանոն անդրադառնում է դարաբաղյան հակամարտությանը, որը սույն աշխատության հիմնահարցերից մեկն է:

Ժամանակագրական առումով աշխատությունն ընդգրկում է 1969-2002 թվականները՝ 1969թ. կազմակերպության կազմավորումից մինչև մեր օրերն ընկած շրջանը:

Անհնար է մի աշխատության շրջանակներում ամբողջությամբ քննարկել կազմակերպությանը վերաբերող բոլոր խնդիրները, ինչպես նաև՝ մահմեդականներին առնչվող բոլոր հակամարտությունները, որոնց ԻԿԿ-ն անդրադարձել է: Ուստի սահմանափակվել ենք միայն այն հիմնահարցերի լուսաբանմամբ, որոնք կազմակերպության համար հանգուցային նշանակություն են ունեցել կամ որոնց միջոցով հնարավոր է բացահայտել կազմակերպության գաղափարական-քաղաքական հայեցակարգի և գործունեության առանձնահատկությունները:

Աշխատությունը գրելիս մեծապես օգտվել ենք հայերեն, ռուսերեն, անգլերեն, արաբերեն լեզուներով աղբյուրներից և ուսումնասիրություններից:

Ուսումնասիրության համար սկզբնաղբյուրներ են ծառայել Խոլամական կոնֆերանս կազմակերպության Ռաբարի 1969թ., Լահորի 1974թ., Մեքսիկայի 1981թ., Կասարլանկայի 1994թ., Թեհրանի 1997թ. և այլ գաղաքանակողովների, ինչպես նաև՝ խոլամական պետությունների արտաքին գործերի նախարարների ամենամյա կոնֆերանսների որոշումները, բանաձևերն ու հայտարարությունները<sup>5</sup>:

Գոյություն ունեցող սկզբնաղբյուրների մեջ կարևորվում են նաև Խոլամական կոնֆերանս կազմակերպության կանոնադրությունը<sup>6</sup>, օժանդակ մարմինների և կից կառույցների մասին գոյություն ունեցող նյութերը, ինչպես նաև՝ ԻԿԿ շրջանակներում տեղի ունեցած հանդիպումներում անդամ պետությունների առանձին քաղաքական գործիքների հայտարարությունները:

Մյուս կարևոր աղբյուրը արաբական զանազան պարբերականներն են, հատկապես՝ Եգիպտոսի, Լիբանանի, Սիրիայի, Սաուդյան Արաբիայի, որոնցից հարկ է նշել «ալ-Արաբ», «ան-Նահարը», «ալ-Անուարը», «աս-Սաֆիրը», «ալ-Բաասը», «աշ-Շարկ ալ-Առաստը» և այլն, ուր տեղ են գտել ԻԿԿ հայտարարություններն ու որոշումները՝ համապատասխան մեկնաբանություններով:

Աշխատանքի մեջ օգտագործվել են Յայաստանի Յանրապետության արտաքին գործերի նախարարության նյութերը: Դրանք դարաբաշխ հակամարտության վերաբերյալ Խոլամական կոնֆերանս կազմակերպության որոշումներն ու հայտարարություններն են, ինչպես նաև՝ ՀՀ իշխանությունների և դիվանագետների թղթակցությունները, որոնք վե-

<sup>5</sup> Organization of Islamic Conference <http://www.oic-un.org>

<sup>6</sup> Charter of the Islamic Conference, The Islamic Summit Conference, Sixth Issue, Revised Edition, November, 1981, Kuwait News Agency, pp. 55-62.

րաբերում են ԻԿԿ շրջանակներում դարաբաղյան հակամարտության քննարկումներին:

Մեր առջև ծառացած խնդիրների լուծմանը նպաստել են մասնավորապես խորհրդային հետազոտողների արժեքավոր աշխատությունները, Մերձավոր և Սիրիա Արևելքի պատմության և արտաքին քաղաքական հարցերի վերաբերյալ տպագրված նրանց մենագրությունները, ժողովածումներն ու պարբերականները:

Դարկ է նշել, որ հայ արևելագիտությունը լավագույնս ուսումնասիրել է միջազգային հարաբերություններում իսլամի քաղաքականացման դրսնորումները՝ այդ համատեքստում առաջին անգամ քննարկելով իսլամի գլոբալ ռազմավարությունն ու իսլամական կոնֆերանս կազմակերպության գործունեությունը, որի վկայությունն են արաբագետ Ն. Շ. Յովհաննիսյանի ուսումնասիրությունները<sup>7</sup>:

Խորհրդային հեղինակների հրատարակությունների շարքում հարկ է հիշատակել Գ. Միլոսլավսկու, Տ. Միլոսլավսկայայի, Ա. Ինոնվայի, Ի. Իվանովայի, Լ. Վալեկովայի, Ա. Վասիլկի, Ա. Իգնատենկոյի, Ն. Ժդանովի, Ե. Դորոշենկոյի, Մ. Ֆիլիպովայի, Ռ. Շարիպովայի, Պ. Միշենկոյի, Ա. Մաքսիմովի, Է. Նաջիպի, Վ. Միջկի, Լ. Բորիսովի ուսումնասիրությունները<sup>8</sup>, որոնք առնչվում են իսլամական կոնֆերանս կազմակերպության

<sup>7</sup> Оганесян Н., Активизация ислама: характер, специфика и последствия. В кн.: Ислам в политической жизни стран современного Ближнего и Среднего Востока, Ер., 1986; его же; Глобальная стратегия ислама: основополагающие принципы и конечные цели, "Вестник обиесденных наук", Ер., 1989, №. 1.

<sup>8</sup> Милославский Г., Интеграционные процессы в мусульманском мире, М., 1992; его же; Содержание понятия "исламский фактор" в современных международных отношениях. В кн.: "Исламский фактор" в современных международных отношениях в Азии, М., 1987; Милославская Т., Милославский Г., Некоторые вопросы теории и практики финансово-экономической деятельности ОИК. В кн.: Ислам: проблемы идеологии, права, политики и экономики, М., 1985; их же; Концепция "исламского единства" и интеграционные процессы в "мусульманском мире". В кн.: Ислам и проблемы национализма в странах Ближнего и Среднего Востока, М., 1986; Ионова А., Ислам и международное экономическое сотрудничество, "Азия и Африка сегодня", 1983, №. 3;

ստեղծմանը, նրա կառուցվածքին, սկզբունքներին, նպատակներին և գործունեության գանձան կողմերին:

Արարական մահմեդական հասարակական-քաղաքական մտքի զարգացումները քննարկելիս մեծապես օգտվել ենք Զամալ աղ-Դին ալ-Աֆղանիի, Սուլիհամմեդ Արդոյի, Արդ առ-Ռահման ալ-Բազզազի, Մուհամմեդ Իկրազի, Արուլ Ալա Մաուլուդիի<sup>9</sup>, ինչպես նաև՝ արևելագետներ Ա. Պետրուչչևսկու, Զ. Լսինի, Մ. Ստեփանյանցի, Ռ. Շարիպովայի, Ա. Չուրանիի, Յ. Գիբբի, Է. Ողենտալի<sup>10</sup> և այլոց ուսումնասիրություններից:

Օգտվելով առիթից՝ հեղինակը շնորհակալություն է հայտնում Արևելագիտության ինստիտուտի իր գործընկերներին աջակցության և մարդկային ջերմ վերաբերմունքի համար, մասնավորապես՝ նրա տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր արաբագետ Նիկոլայ

Иванова И., Турецко-арабские отношения и их место в системе международных связей на Ближнем Востоке (1945-1983), М., 1985; Валькова Л., Саудовская Аравия в международных отношениях, М., 1979, ее же; Саудовская Аравия: нефть, ислам, политика, М., 1987; Васильев А., История Саудовской Аравии, М., 1982; Жданов Н., Игнатенко А., Ислам на пороге XXI века, М., 1985; Жданов Н., Исламская концепция миронядка, М., 1991; Филиппова М., Оценка американскими учеными "исламского фактора" в международных отношениях. В кн.: "Исламский фактор" в международных отношениях в Азии, М., 1987; Минченко П., Проблема урегулирования ближневосточного конфликта в деятельности ОИК, "Зарубежный мир", вып II, К., 1986; Максиимов А., Милюславская Т., Исламские банки в странах Ближнего и Среднего Востока. В кн.: Ислам в странах Ближнего и Среднего Востока, М., 1982; Наджин Э., XII сессия ОИК (Нигер, 1982). В кн.: Современный ислам: проблемы политики и экономики, вып. II, М., 1983; Сычев В., Новые тенденции в деятельности Организации Исламской Конференции (ОИК). В кн.: Современный ислам: проблемы политики и экономики, вып. III, М., 1982; Борисов Л., Организация Исламская Конференция: политические аспекты деятельности, "Народы Азии и Африки", № 4, М., 1983.

<sup>9</sup> Islam in Transition (Muslim Perspectives). Edited by J. Donohue and L. Esposito, Oxford University Press, 1982; Iqbal M., The Reconstruction of Political Thought in Islam, Lahore, 1951; Mawdudi A., Towards Understanding Islam, L., 1980.

<sup>10</sup> Петрушевский И., Ислам в Иране, Л., 1966; Левин З., Развитие арабской общественной мысли, М., 1984; Стенянианн М., Мусульманские концепции в философии и политике XIX-XX вв., М., 1982; Шарипова Р., Движение исламской солидарности. Основные теоретические концепции. В кн.: "Исламский фактор" в международных отношениях в Азии, М., 1987; Hourani A., Arabic Thought in the Liberal Age. 1978-1939, Oxford University Press, L.-N.Y., 1970; Gibb H., Islam, L., 1978; Rosenthal E., Political Thought in Medieval Islam, Cambridge, 1962.

Յովհաննիսյանին՝ աշխատանքը դեկավարելու համար, արաբական երկրների բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, արաբագետ Շահեն Կարամանուկյանին՝ արժեքավոր խորհուրդների և դիտողությունների համար:

Դեղինակը հատուկ շնորհակալություն է հայտնում «Արմեն և Բերսաթ ճերեծեան» հիմնադրամին, նրա հանգուցյալ նախազահ Արսեն Զերեցյանին՝ սույն գրքի հրատարակությանը օժանդակելու համար:

A //  
88/38


ԳԼՈՒԽ ԱՊԱՅԻՆ

ԽՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՆԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԽՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ  
պատմական նախադրյալները

ԽՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ հիմքում  
ընկած են խսլամական միասնության և համերաշխության գաղափարնե-  
րը, որոնք XIX դարի վերջին և XX դարի սկզբին Ասիայի և Աֆրիկայի խ-  
լամադավան ժողովուրդների՝ անկախության համար մղված պայքարի  
կարևոր գործոն էին: Չնայած խսլամը գրկված էր քաղաքական գործա-  
ռություններից, որը կենտրոնացած էր գաղութային իշխանությունների  
ծեռքում, այն զգալի ազդեցություն ուներ հասարակական-քաղաքական  
գործընթացների վրա, ինչը պայմանավորված էր խսլամի հոգևոր-ավան-  
դական և սոցիալական նշանակության կարևորությամբ: Խսլամը խոր  
հիմքեր ունի խսլամական հասարակության կյանքում և զգալի ներգոր-  
ծություն անհատի ինքնագիտակցության վրա, իսկ հասարակության  
բարոյական, սոցիալական և կենցաղային կողմերը պայմանավորում են  
խսլամի սուրբ գիրքը՝ Դուրամը և Շարիաթը<sup>11</sup>:

<sup>11</sup> Շարիաթը մահմեդակների իրավական նորմերի, նրանց կրոնական, կենցաղային և սո-  
ցիալական կյանքի, վարքածի սկզբունքների և կանոնների ամբողջությունն է: Շարիա-  
թին հետևել նշանակուն է ճշմարիտ և աստվածահան կյանք վարել:



Հսլամական համերաշխության և միասնության գաղափարական հիմքը ընդունված է համարել պանխալամիզմի տեսությունը, որի ելակետը աշխարհի բոլոր մահմեդականների միասնության գաղափարն է խալիֆայության<sup>12</sup> շրջանակներում, որտեղ պետք է առաջնորդվեն շարիաթի օրենքներով:

Պանխալամիզմը, որ փորձում էր հակառել իսլամական աշխարհը ոչ իսլամականին, որպես քաղաքական ուսմունք՝ մի ծայրով ուղղված էր Արևմուտքի գաղութատիրության տնտեսական և քաղաքական շահագործման դեմ:

Պանխալամիզմը՝ որպես քաղաքական վարդապետություն, ասպարեզ իջավ Օսմանյան կայսրությունում 1860-ականների սկզբներին մամուլի միջոցով: Պանխալամիզմի, ինչպես նաև օսմանիզմի հիմնական նպատակը Օսմանյան կայսրության և սուլթանի՝ որպես մահմեդական ժողովուրդների հոգևոր և քաղաքական առաջնորդի, իշխանության ամրապնդումն էր ոչ միայն թյուրքալեզու ժողովուրդների, այլև համամահմեդական մի կայսրության շրջանակներում<sup>13</sup>:

XIX դարի վերջին տասնամյակներին պանխալամիզմի շարժման ամենազերծնուանդ Ենթակայացուցիչներից մեկը Մուհամմեդ Զամալ աղ-Դին ալ-Աֆիդանին (1839-1897թթ.) էր: Նա այն պահպանողական քարոզիչներից էր, ովքեր Օսմանյան կայսրությունը դիտում էին որպես վերջին հույս համամահմեդական միասնության համար<sup>14</sup>:

<sup>12</sup> Խալիֆայությունը VII դարում խլամ ընդունած արաբների նվաճողական արշավանքների հետևանքով ծևավորված արար մահմեդական թեոկրատ պետությունն է: Պետության առաջնորդը խալիֆան (արաբերեն փոխանորդ), մարմանվորում էր ինչպատճեն քաղաքական (էմիրաթ), այնպես էլ հոգևոր (իմամաթ) իշխանությունը: Մահմեդական իրավունքի մեջ խալիֆայությունը համարվում է կատարյալ վարչա-քաղաքական կառույց, որը միավոր է խլամական ազգին ումբային:

<sup>13</sup> Ե. Խաջարյան, Արաբական ազգային-մշակութային գարբոնքը, Եր., 1988, էջ 194, 197:

<sup>14</sup> The Islamic World. From Classical to Modern Times, Princeton-New Jersey, 1989, p.755.

XIX դարի 60-ականներին ալ-Աֆղանին առաջ է քաշում մահմեդական ժողովուրդների կրոնաքաղաքական միության գաղափարը խալի-ֆայության մեջ: Խաղամադավան ժողովուրդների միավորման սկզբանական ծրագրով թուրքական սուլթանի համաձայնությամբ և Հնդկաստանի մահմեդականների ֆինանսական աջակցությամբ նախատեսվում էր ստեղծել Աֆղանստանի, Բելուջիստանի, Թաջգարի, Յարքանդի, Բուխարայի և Կոկանդի քաղաքական միությունը<sup>15</sup>:

Ըստ ալ-Աֆղանիի միայն խաղանը կարող էր միավորել մահմեդականներին և ուղղորդել նրա պայքարը արևմտյան գաղութատիրության դեմ: Ավելին, նա հակված էր ազգայինին հակադրել կրոնականը. «Մահմեդականները չգիտեն մի այլ խսկական ազգություն, բացի իրենց կրոնից»<sup>16</sup>:

Պանհսլամիզմի տեսաբանի կարծիքով ազգայնականությունը չի կարող առաջնորդել խաղամական համայնքին. «Մահմեդական հավատացյալներին չեն հետաքրքրում ո՞չ իրենց երնիկ արմատները, և ո՞չ էլ այն ազգը, որի մի նասն են, որովհետև նրանք հավատարիմ են իրենց հավատքին. նրանք իրաժարվել են սահմանափակ կապից հօգուտ համաշխարհային կապի՝ հավատքի կապի»<sup>17</sup>:

Փարիզում ալ-Աֆղանին իր աշակերտ Սուլեյման Աբդոյի (1849-1905)<sup>18</sup> հետ հիմնում է «ալ-Ռուկաթ ալ-Ռուկա» («Սերտագույն կապ»)

<sup>15</sup> М. Степанянин, Мусульманские концепции в философии и политике XIX-XX вв., М., 1982, с. 119.

<sup>16</sup> Մեջքերումը՝ Յ. Լևин, Развитие основных течений обицетивно-политической мысли в Сирии и Египте, М., 1972, с. 110.

<sup>17</sup> Sayyid Jamal al-Din al-Afghani, Islamic Solidarity, Islam in Transition, Oxford University Press, 1982, p. 21.

<sup>18</sup> Մահմեդական տեսաբան, հասարակական, մշակութային, հոգևոր գործիչ, 1889-ից Եգիպտոսի մուժտի:

գաղտնի ընկերությունը և 1884թ. ընթացքում հրատարակում նույնանուն թերթը, որը պանիսլամական ուղղվածություն ուներ:

Ալ-Աֆղանին առաջադրում էր իսլամական աշխարհի կրոնաքաղաքական, տնտեսական և մշակութային սերտ համագործակցության գաղափարներ՝ իսլամական միասնության գրավականը համարելով ուժմայի համերաշխությունը, որի անդամները պետք է համագործակցեն՝ հանուն ընդհանուր բարեկեցության, քանի որ միայն այդ ձևով էր հնարավոր պայքարել գաղութատիրության դեմ:

Միևնույն ժամանակ պանիսլամիզմի գաղափարախոսը, համոզված լինելով, որ մահմեդականների միասնությունը պետք է խարսխվի կրօնական հենքի վրա, չեր ժխտում ազգային կապերի անհրաժեշտությունը: Նրա կարծիքով հայրենասիրությունը և ազգայնականությունը պետք է միայն նպաստեն համաշխարհային իսլամական համայնքի ձևավորմանը<sup>19</sup>: Ալ-Աֆղանին հավատում էր, որ ազգային կապերը կանհետանան, երբ վերանան դրանց ծնող պաճառները, և այդ ժամանակ կմնա իսլամը, որը համերաշխության բարձրագույն ձևն է, վերազգային համերաշխությունը:

Լիբանանցի պատմաբան Յասան Սաադի կարծիքով՝ պանիսլամիզմի քաղաքական հայրը սուլթան Աբդուլ Յամիդն էր, իսկ հոգևոր և գաղափարական հայրը՝ ալ-Աֆղանին<sup>20</sup>:

Առաջին աշխարհամարտից հետո իսլամադավան երկրներում տեղի ունեցան զգալի փոփոխություններ, որոնք նախադրյալներ ստեղծեցին պանիսլամիզմի հակադիր տեսությունների, մասնավորապես՝ ազգայնականության ընդլայնման համար, որն անկախության հա-

<sup>19</sup> A. Hourani, Arabic Thought In The Liberal Age. 1798-1939, Oxford Universiy Press, L.-N.Y., 1970, p. 117.

<sup>20</sup> Saab Hassan, The Arab Federalists of the Ottoman Empire, Djambatan, Amsterdam, 1958, p. 187.

մար մղվող ազգային-ազատագրական պայքարում կարևոր գաղափարական գործոն էր:

1920-ականներին պանխսլամիզմի շարժման մեջ ճգնաժամային պահեր նկատվեցին, որը կապված էր Թուրքիայում ազգայնական շարժման և քենալական հեղափոխության հետ: 1924թ. մարտի 3-ին Թուրքիայում ընդունվեց Խալիֆայության վերացնան և Օսմանյան դինաստիան Թուրքիայից արտաքսելու մասին օրենքները, իսկ ապրիլին՝ Երկրի սահմանադրությունը: Թուրքիայի Հանրապետությունը դարձավ Մերձավոր և Միջին Արևելքում առաջին աշխարհիկ, ազգային պետություններից մեկը<sup>21</sup>:

Թուրքիայի պետական գաղափարախոսության մեջ մեկընդմիշտ ամրագրվեցին ազգայնականության (կամ թյուրքիզմի) և լաիցիզմի սկզբունքները: Կրոնը անջատվեց պետությունից, փակվեցին կրոնական դպրոցները, կազմալուծվեց շեյխ ուլ-խուլամի և վակիերի նախարարության ինստիտուտը, իսլամն այլևս պետական կրոն և գաղափարախոսություն չեր:

Խալիֆայության վերացումը անակնկալ էր և դժգոհության ալիք առաջացրեց պանխսլամիզմի կողմնակիցների և արմատական մահմեդականության շրջանում: Ինչպես արդեն նշել ենք, Օսմանյան կայսրությունը խորհրդանշում էր թեոկրատ մահմեդական պետության՝ խալիֆայության, գաղափարը, իսկ թուրք սուլթանը համարվում էր սուլթանիների խալիֆան, համայն մահմեդականների հոգևոր առաջնորդը:

1924թ. մարտի 16-ին անգլիական «Փայոնիըր» ամսագրում իրապարակվեց Հնդկաստանի խալիֆայական կազմակերպության և հնդկա-

<sup>21</sup> Քենալական Թուրքիայի մասին մանրամասն տե՛ս Ս. Բաղդասարյան, Թուրքիայի քաղաքական համակարգը 1920-1930-ական թթ., Եր., 2001:

կան աստվածաբանական ընկերության նամակը Թուրքիայի Ազգային ժողովին և Քենալ Արաքյուրքին, ուր ափսոսանք էր հայտնվում իսլամի ամենակարևոր ինստիտուտներից մեկի՝ խալիֆայության վերացման կապակցությամբ և առաջարկվում էր հնարավորության դեպքում պահպանել այն վերակառուցելով դեմոկրատական հիմքի վրա<sup>22</sup>:

Ոգեշնչվելով նման տրամադրություններով՝ վտարանդիության մեջ գտնվող Օսմանյան կայսրության վերջին, գաղընկեց արված սուլթան Աբդուլ Մեջիդը 1924թ. հանդես եկավ խալիֆայությունը վերականգնելու կոչով, որին արձագանքեցին Եգիպտոսի աստվածաբանները: Ակսեցին առաջ քաշվել խալիֆայի թեկնածուներ<sup>23</sup>:

Օսմանյան կայսրության փլուզումը կյանքի կոչեց իսլամադավան ժողովուրդներին միավորելու և խալիֆայականության գաղափարներ առաջադրող նոր կենտրոններ, որոնք առաջացան Արաբական Արևելքում: Այս հանգամանքները պայմանավորված էին քաղաքական այն գործընթացների հետ, որոնք զարգանում էին այդ երկրամասում:

1926թ. մարտին Կահիրենում հրավիրված կոնգրեսում, որին մասնակցեցին մահմեդական 11 երկրներից ժամանած 30 պատվիրակներ, ողջ աշխարհի մահմեդականներին կոչ արվեց՝ նպաստել նոր խալիֆայության կազմավորմանը: Նույն թվականի հունիսին՝ Մեքքայում Ղամաշխարհային իսլամական կոնգրեսի<sup>24</sup> առաջին հանդիպման ժամանակ պայմանավորվածություն ծեռք բերվեց՝ շարունակելու նման նախաձեռնությունները<sup>25</sup>:

<sup>22</sup> Л. Климонич, Мусульманам дают халифа, М., 1932, с. 1932, с. 62.

<sup>23</sup> Նոյն տեղում, էջ 63:

<sup>24</sup> Այս մասին տե՛ս ստորև:

<sup>25</sup> Н. Жданов, А. Игнатенко, Ислам на пороге XXI века, М., 1989, с. 188.

/Առանձնահատուկ ուշադրության է արժանի Երուսաղեմի մեջ մուժ-  
տի/<sup>26</sup> Ամին ալ-Ճուսեյնի ջանքերը Յամաշխարհային իսլամական Երկ-  
րորդ կոնգրես հրավիրելու հարցում, ուր քննարկվելու էին նաև պանխ-  
լամիզմի և իսլամական սրբավայրերի հետ կապված խնդիրներ: Կոնգ-  
րեսի հիմնահարցը լինելու էր խալիֆայության վերականգնումը, անց-  
կացվելու էին խալիֆայի ընտրություններ: Ենթադրվում էր, որ Երուսա-  
ղեմը կարող էր դառնալ նորաստեղծ խալիֆայության կենտրոնը<sup>27</sup>:

Երուսաղեմի կոնգրեսում խալիֆայի ընտրությունների՝ մասնավորա-  
պես Արդու Մեջիդի թեկնածության առաջադրման հարցը, խիստ բացա-  
սական արձագանքների արժանացավ թուրքական մամուլում: Թուր-  
քիան հայտարարեց, որ Անգլիան և Ֆրանսիան, օգտագործելով խալի-  
ֆայության գաղափարը, ձգտում են թուլացնել իրենց ենթակա Երկրնե-  
րում ազգային շարժումները՝ դժվարություններ ստեղծելով Թուրքիայի  
համար: «Խալիֆայությունը խալիֆաների ձեռքին արյունալի տապար  
է,-գրում էր թուրքական մամուլը: Այդ տապարը, որը հիմա վաճառքի է  
հանվել, ընկնելով արտասահմանցիների ձեռքը՝ նրանց վիրխարի ծա-  
ռայություններ կմատուցի»<sup>28</sup>:

Երուսաղեմի կոնգրեսի հրավիրումից առաջ թուրքական իշխանութ-  
յունները Անգլիային հասկացնել տվեցին, որ Թուրքիան զգուշանում է  
խալիֆայության վերականգնումից, որը կարող է խթանել միապետա-  
կան և կղերական շարժումները<sup>29</sup>:

<sup>26</sup> Մուֆտիին իսլամական համայնքի հոգևոր առաջնորդն է, կղերական աստիճանակարգի  
բարձրագույն ներկայացուցիչը, որը կորոնական իրավական հարցերի վերաբերյալ կարող  
է որոշումներ ընդունել:

<sup>27</sup> Մեջքերում՝ Լ. Կևմովիչ, նշվ. աշխ. մեջ, էջ 86-88:

<sup>28</sup> Խոյս տեղում, էջ 87:

<sup>29</sup> Խոյս տեղում, էջ 90:

Երուսաղեմի կոնգրեսը տեղի ունեցավ 1931թ. դեկտեմբերին, սակայն այն ամենախն էլ համամահմեղական բնույթ չկրեց, իսկ խալիֆայի ընտրության հարցը հանդիպման օրակարգից հանվեց<sup>30</sup>:

Պանխւամական շարժման ծախողությունը ակնհայտ դարձրեց, որ խալիֆայության մեջ մահմեղական ժողովուրդներին միավորելու գաղափարներուն իրական հիմքեր չունեն: 1930-ականներին առաջ քաշվեցին պանխւամիզմի այլընտրանքային տեսություններ, մասնավորապես՝ մահմեղական ազգայնականությունը, որի նշանավոր տեսարան, փիլիսոփա, հնդիկ Մուհամմեդ Իկրալը (1873-1938) առաջադրեց խւանական միասնության գաղափարը ազգերի լիգայի շրջանակում: «Քաղաքական նորի վերակառուցումը» գրքում, որը անփոփած են նրա դասախոսությունները, նշվում է, որ համաշխարհային խւանական կառավարման համակարգը, որը գործուն և անեղծ էր արար մահմեղական պետության ժամանակ, գործնականում ծախողվել էր<sup>31</sup>: Իկրալի կարծիքով՝ խւանական քաղաքական միությունը ապագայի խնդիր է: «Խւանական քաղաքական իրական, գործուն միություն ստեղծելու համար մահմեղական երկրները առաջին հերթին պետք է անկախանան և, ապա, ի մի գալով, միավորվեն խալիֆայի հովանու ներքո: Արդյո՞ք սա հնարավոր է այս պահին,- գրում է Իկրալը: Եթե ոչ այսօր, ուրեմն պետք է սպասել»<sup>32</sup>:

Խւանական միասնության հարցում լավատեսությունը չկորցրած տեսաբանի կարծիքով՝ մահմեղական երկրները պետք հզորանան, քանի որ միջազգային իրականության մեջ գնահատվում է միայն ուժը: Իկ-

<sup>30</sup> Սույն տեղում: Կոնգրեսին չմասնակցեցին Թուրքիայի, Պարսկաստանի, Ալբանիայի, Աֆղանստանի, Շունհուկ Պետքանի, Իրաքի և Եգիպտոսի նորկայացուցիչները:

<sup>31</sup> Iqbal Mohammad, The Reconstruction of Religious Thought in Islam, Lahore, 1951, p. 158

<sup>32</sup> Սույն տեղում, էջ 159:

բալն ունի հարցի լուծման իր տարբերակը. «Ինձ թվում է, որ աստված մեզ այն ծշմարտությանն է բերում, որ իսլամը ո՞չ ազգայնականություն է և ո՞չ էլ իմացերիալիզմ, այլ՝ ազգերի լիգա, որն ընդունում է արիեստական սահմաններն ու ռասայական տարբերությունները միայն՝ հաղորդակցությունը հեշտացնելու համար...»<sup>33</sup>:

Մ. Իկրալի և իր համախոհների կարծիքով՝ նմանօրինակ լիգան լինելու էր յուրատեսակ քաղաքական դաշինք՝ Արևոտքի դեմ պայքարելու համար: Իսկ ազգայնականությունը մերժելի է, քանի որ այն գործիք է, որն օգտագործում է արևմտյան գաղութատիրությունը, ինչպես Իկրալն է նշում՝ «խլամի կրոնական միասնությունը նաև ատելու համար»<sup>34</sup>:

Իսկ Իկրալի ժամանակակից, պակիստանցի մահմեդական տեսաբան Աբուլ Ալա Մաուլդուդին երբեք չկորցրեց հույսը մահմեդական միասնության հարցում: «Խոլանի նպատակը, -նշում է Մաուլդուդին, համաշխարհային պետության ստեղծումն է, որտեղ ռասայական շղաները և ազգային նախապաշարումները կփլուզվեն, և ամբողջ մարդկությունը կմիաձուլվի մշակութային և քաղաքական մի համակարգում՝ հավասար իրավունքներով և հնարավորություններով, որտեղ թշնամական մրցակցությունը տեղի կտա մարդկանց միջև բարեկամական հարաբորությունների, այնպես, որ նրանք կարողանան փոխադարձաբար օգնել իրար և մեկը նյութի համար նյութական և հոգևոր բարեկեցություն ստեղծել»<sup>35</sup>:

Երկրորդ աշխարհամարտից հետո՝ հատկապես՝ 1950-60-ականներին, երբ Մերձավոր Արևելքի արաբական երկրները ազատագրվեցին գաղութային լծից և հոչակեցին իրենց անկախությունն ու ինքնիշխա-

<sup>33</sup> Սույն տեղում:

<sup>34</sup> Islam and Politics, John L. Esposito, Syracuse University Press, N.-York, 1984, p. 232.

<sup>35</sup> Abu-I Ala Mawdudi, Nationalism and Islam, Islam in Transition, Oxford, 1982, p. 94.

նությունը, ազգայնականությունը դարձավ իշխող ուղղություն արաբական քաղաքական աշխարհայացքում: Այն ծևավորվեց երկու՝ իսլամական և աշխարհիկ հիմքերի վրա<sup>36</sup>: Պանարաբիզմի տեսաբանները տարրեր կերպ են ընկալում իսլամի և ազգայնականության փոխհարաբերությունները:

Աշխարհիկ հիմքի վրա ծևավորված արաբական ազգայնականության կարծիքով՝ արաբներին միավորում է ընդհանուր լեզուն, պատմությունը, մշակույթը, ժառանգությունը, ինչպես նաև՝ արաբական ոգին և ինքնագիտակցությունը՝ ուրութան: Իսկ մահմեդականությունը դիտարկվում է իբրև մշակութային արժեքների միասնություն, որն օրգանապես միավորվում է ազգային իդեալների հետ: Ըստ այդմ՝ իսլամը արաբական ազգայնականության ոգու արտացոլումն է, նրա բաղադրիչ մասը:

Մինչդեռ իսլամական հիմքի վրա ծևավորված արաբական ազգայնականության համար իսլամն առաջին եերթին կրոնական հավատքը է, ազգային և կրոնական բարոյականության հիմքը: Դանդես գալով ինքնիշխան և աշխարհիկ պետական կազմավորման մեջ արաբների միասնության և ինտեգրացման գաղափարներով՝ արաբական ազգայնականության իսլամական ուղու կողմնակիցները այդ ինտեգրացումը մի ետապ են համարում մահմեդականացված արաբական համարակության ծևավորման ճանապարհին, որը կարող է դառնալ համաշխարհային իսլամական համայնքի կորիգը: Նրանց կարծիքով՝ արաբական ազգայնականությունը անբաժան է իսլամից և ենթակա է նրան: Այս համատեքստում վերջիններս ընդգծում են աստծո կողմից արաբների ընտրյալ լինելու և մահմեդականների մեջ առանձնահատուկ տեղ գրավելու նրանց առաքելությունը: Իրաքցի գիտնական Յուսեֆ Ազ ադ-Դինի կարծիքով՝

<sup>36</sup> Յ. Լևин, Развитие арабской общественной мысли, М., 1984, с. 55.

արաբական միտքը և քաղաքակրթությունը զարգացել է միայն իսլամի շնորհիվ<sup>37</sup>:

Ուշագրավ է նաև պանարարիզմի գաղափարախոսների տեսակետը պանիսամիզմի մասին: Աբդ առ-Ռահման Բազզազը նշում է, որ չնայած բարեպաշտ մահմեդականների ցանկությանը՝ անհնար է հիմնել մի ընդգրկուն քաղաքական կազմակերպություն, որին բոլոր մահմեդականները հպատակվեն, քանի որ կան դրան խոչընդոտող մի շարք պատճառներ՝ աշխարհագրական, քաղաքական, սոցիալական և այլն: «Եթե նրանք (պանիսամիզմի կողմնակիցները-Ա. Փ.) հասկանային իրերն ինչպես որ է և գնահատեին իրականությունը ինչպես հարկն է, եթե նրանք չտրվեին միայն զգացմունքներին, ապա կհասկանային, որ իրենց պահանջն անտեղի է...»<sup>38</sup>:

Ինքնիշխան մահմեդական պետությունների ստեղծումից ի վեր քննարկվում էր այն հարցը, թե արդյոք ազգի (*nation*) սկզբունքը չի հակասում իսլամական համայնքի միասնության գաղափարին: Աշխարհիկ և ազգային գաղափարախոսություններին տուրք չտվող մահմեդական տեսաբանների կարծիքով՝ ազգ-պետության (*nation-state*) գաղափարը հակասում է իսլամի սկզբունքներին և համահունչ է եվրոպական չափանիշներին, ուստի անընդունելի է<sup>39</sup>:

Թեև անկախ պետությունների ծևավորման շրջանում իսլամը՝ որպես քաղաքական գործոն, հետ մղվեց՝ հօգուտ ազգայինի, սակայն երեք

<sup>37</sup> Յ. Լևин, Սմա և արաբական պատուազմ. В кн.: Социально-политические представления в исламе, М., 1987, с. 113.

<sup>38</sup> Abd al-Rahman al-Bazzaz, Islam and Arab Nationalism, Islam in Transition, Oxford University Press, 1982, p. 88.

<sup>39</sup> Սյու մասին մասնամասն տե՛ս James P. Piscatori, Islam in a World of Nation-State, Cambridge, 1986.

չդադարեց կարևոր դեր խաղալ իսլամադավան Երկրների կրոնական, մշակութային և հասարակական կյանքը համախմբելու հարցում:

Անկախ պետությունների ստեղծումից հետո պանիսլամիզմի գաղափարները պահպաննեցին իրենց նշանակությունը առաջին հերթին իրեն իսլամական պետությունների միջև համերաշխության և համագործակցության տեսություն, որի նպատակը իսլամական ուժմայի շահերի և հետաքրքրությունների պաշտպանությունն էր, միջազգային ասպարեզում ինքնուրույն և ամուր դիրքեր գրավելը: Նոր ժամանակների պանիսլամիզմը ծգտում էր իրականացնել իր գաղափարները՝ օգտագործելով իսլամական Երկրների կրոնական, քաղաքական, տնտեսական հնարավորությունները:

Իսլամական քաղաքական, սոցիալական և տնտեսական հայեցակարգերը, իսլամական աստվածաբանական և տեսական հարցերը ժամանակից աշխարհում հիմնավորելու, ինչպես նաև իսլամի «մաքրությունը» պաշտպանելու նպատակով ստեղծվեցին միջազգային իսլամական ոչ կառավարական կազմակերպություններ: Առանձնացնենք դրանցից մի քանիսը:

Միջազգային առաջին իսլամական կազմակերպությունը ընդունված է համարել Համաշխարհային իսլամական կոնգրեսը (ՅԻԿ)<sup>40</sup>, որի ստեղծումը սերտորեն կապված էր գաղութատիրության շրջանում պանիսլամիզմի գաղափարախոսության հետ: Զայած ՅԻԿ-ը հիմնվեց 1926-ին, սակայն ակտիվություն սկսեց գործել միայն 1949թ.: Կարաչիի կոնֆերան-

<sup>40</sup> ՅԻԿ-ի գործունեությունը ղեկավարում է բարձրագույն խորհուրդը, որ իրավիրվում է տարիին մեկ անգամ. Մերքայի մեջ ուստագնացությունից հետո: ՅԻԿ-ի նստավայրը Պակիստանի Կարաչի քաղաքում է:

սից հետո: 1962թ. ստեղծվեցին ԽՍՀՄ աշխարհի լիգան (ԽԱԼ)<sup>41</sup> և ԽՍՀՄ հարցերով բարձրագույն խորհուրդը (ԽՀԲԽ)<sup>42</sup>:

Նման կազմակերպությունները ստեղծում և հովանավորում էր հիմնականում Սաոււդյան Արաբիան, որտեղ խաղան ավելի ակտիվ դերակատարություն ունի քաղաքական և սոցիալական կյանում, քան որևէ այլ արաբական երկրում: Այն քաղաքական արժեքների վրա կարող է ազդեցություն գործել որպես կրոն, գաղափարախոսություն և մշակութային ինքնագիտակցության խորհրդանշ:

1940-ական 50-ականներին արաբական երկրներում ընթանում էին քաղաքական կարևոր գործընթացներ: Ընդլայնվում էին ազգային-ազատագրական շարժումները, ամրապնվում էին ազգայնական զաղափարախոսություններն ու քաղաքական աշխարհիկ տեսությունները, տեսանելի էր դառնում ԱՄՆ-ի և Արևմուտքի կողմից քաջալերվող քաղաքական և ռազմական դաշինքներին չմիանալու նրանց հատակ դիրքորոշումը: Միևնույն ժամանակ 1945թ. հիմնված Արաբական պետությունների լիգայի (ԱՊԼ) շրջանակներում ընդլայվում էր արաբական համագործակցությունը, խրարուսվում էին արաբական միասնության գաղափարները, մշակվում էին Խորայելի և իր դաշնակիցների դեմ տարվող քաղաքականության և այս հարցում միասնական արաբական դիրքորոշում որդեգրելու սկզբունքները:

<sup>41</sup> ԻԱԼ-ի բարձրագույն դեկանար մարմինը հիմնադիր խորհուրդն է, ուր ընդգրկված են մահմեդական շուրջ 60 աստվածաբաններ ու գիտականներ: Հիմնադիր խորհուրդը ղեկավարվում է զինավոր քարտուղարը: ԻԱԼ նաև վայրէ Սաքբայում է: ԻԱԼ-ի մասին մանրամասն տես' M. Шарипова, Панисламизм сегодня. Идеология и практика Лиги исламского мира, M., 1983, նաև՝ ۲۶۳، ۱۹۹۶, ص. ۱۹۹.

<sup>42</sup> ԽՀԲԽ-ն ունի մշտական գործող և մասնագիտացված հանճնաժողովներ, այն աստվածաբանական տեսական հարցերը կորորդինացնող մարմին է: Սատակայր Կահիրեռն է:

<sup>43</sup> Farouk A. Sankari, Islam and Politics in Saudi Arabia, Islamic Resurgence in the Arab World. Edited by Ali E. Hillal Dessouki, N.-Y. 1982, p. 178.

Այս գարգացումներին զուգահեռ՝ տարածաշրջանում առանձին միապետությունների, մասնավորապես՝ Սառույան Արաբիայի արտաքին քաղաքականության մեջ գնալով ավելի ակնհայտ էր դառնում իսլամական միասնությանն ուղղված քաղաքականության միտումը, որը կապված էր մի շարք հանգամանքների հետ: Որպես իսլամի հայրենիք՝ Սառույան Արաբիան համարձակորեն հանդիս էր գալիս իսլամական արժեքների պահպանման և իսլամական աշխարհին հուզող խնդիրները համակարգելու հավակնությամբ: Սառույան Արաբիային, որը թե՛ արաբական և թե՛ իսլամական ինքնության կրող էր, մտահոգում էր արաբական աշխարհում իր ոչ առաջնային դերը: Դայտնի է, որ 1950-ականների երկրորդ կեսից արաբական շրջանակներում մեծ հեղինակություն էր վայելում Եգիպտոսի առաջնորդ Գամալ Աբդ ան-Նասերը, որի կողմից ոգեշնչվող արաբական ազգայնական գաղափարախոսությունը՝ նասերականությունը, մեծ տարածում ուներ արաբական երկրներում: Այս հանգամանքները հակոտնյա էին Սառույան Արաբիայի պահպանողական վարչակարգի ծգտումներին, որը զգալի հեղինակություն և կշիռ ուներ իսլամական աշխարհում: Զոռանանք նշել նաև այն փաստը, որ նավթային հսկայական պաշարներ ունեցող Սառույան Արաբիան, որը ոչ պակաս դերակատարություն ուներ ԱՊԼ-ում, հայտնվել էր ԱՄՆ-ի կենսական հետաքրքրությունների և քաղաքական գործնկերության ոլորտում: ԱՄՆ-ը, ինչպես նաև Անգլիան, որոնք Սառույան Արաբիան դիտում էին որպես կարևոր հենակետ տարածաշրջանում համամահմեդական ուժերը արաբական միասնության և ազգայնականության դեմ ուղղորդելու և կոմունիզմի թափանցումը տարածաշրջան կանխելու համար, Ֆեյսալ թագավորին առաջարկեցին կազմավորել իսլամական երկրների մի դաշինք, որին վերջինս համաձայնեց:

1965թ. ապրիլին Սաուդյան թագավորը Մեքքայում հրավիրեց համաշխարհային խլանական համաժողով, որը նախագահեց Սաուդյան Արաբիայի մեջ մուֆտի շեյխ Մուհամմեդ բին Իբրահիմը: Իր ելույթում Ֆեյսալ թագավորը կոչ արեց հրավիրել խլանական պետությունների քարձր մակարդակի հանդիպում՝ լուծելու համամահեղական խնդիրները, որը մասնակիցները հավանության արժանացրիմ<sup>44</sup>:

Մեքքայի հանդիպումից հետո Սաուդյան թագավորը ԱՄՆ-ի և Անգլիայի հովանավորությամբ ծեռնամուխ եղավ խլանական դաշինք ստեղծելու քարոզությանը՝ այցելելով աֆրիկյան և ասիական մի շարք երկրներ: Ինչպես իրավացիորեն նշում է արևելագետ Լ. Վալկովան, առաջ քաշելով խլանական դաշինք ստեղծելու գաղափարը, «...Ֆեյսալ թագավորը հույս ուներ նաև այն հակառակ ԱՊԼ-ին, որը իշխող դիրք ուներ Եգիպտոսը՝ անձամբ Նասերը»<sup>45</sup>:

1965թ. դեկտեմբերին Իրանում Ֆեյսալն առաջին անգամ պաշտոնապես առաջարկեց շահին՝ հրավիրել խլանական պետությունների դեկավարների կոնֆերանս, որին վերջինն դրականորեն արձագանքեց: Սակայն ոչ մեկի համար գաղտնիք չէր, որ վահիհաբական Արաբիայի և շիական Իրանի միջև հակասություններ կային, որոնք ընդհանուր առմանք կապված էին մահմեղական աշխարհում սաուդական ազդեցության տարածման և այլ հաղերի հետ:

Ֆեյսալի առաջարկը հանողիչ չէր թվում և պատահական չէ, որ լիբանանյան «ալ-Ախրար» թերթը, խստագույնս դատապարտելով խլանա-

<sup>44</sup> Новейшая история арабских стран (1917-1966), М., 1968, с. 240.

<sup>45</sup> Л. Валькова, Саудовская Аравия в международных отношениях, М., 1979, с. 165.

կան միասնությանն ուղղված Ֆեյսալի ջանքերը, գրում էր, որ իսլամը սուկ քողարկում է իսլամական դաշինքի գաղափարը<sup>46</sup>:

1966թ. հունվարի 31-ին Ֆեյսալը, պաշտոնական այցով գտնվելով Ամմանում, հայտարարեց, որ իրենք պատրաստվում են ստեղծել մի հանճնախումբ, որը կնախապատրաստի իսլամական երկրների բարձր մակարդակի վեհաժողովի հրավիրման հետ կապված հարցերը: Ֆեյսալը վստահեցնում էր, որ այն չեղ լինելու դաշինք կամ խմբավորում, այլ մշտական գործող մի մարմին, որը գործնականում նշանակում էր ստեղծել մահմեդական երկրների իսլամական քաղաքականությունը համակարգող մի կառույց<sup>47</sup>:

Սակայն Սաուդյան Արաբիայի առաջարկությունը սկզբից ևեր հանդիպեց սուր քննադատության նախևառաջ արաբական երկրների կողմից, որոնք կտրականապես մերժեցին Արևմուտքից հովանավորվող նախաձեռնությունները: Եզիջտոսի նախագահ Գամալ Արբ ան-Նասերը 1966թ. փետրվարի 22-ին՝ Կահիրեի համալսարանի միտինգում, որը նվիրված էր Միասնության օրվա (Եզիջտոսի և Միրիայի միավորման) ութերորդ տարելիցին, հայտարարեց. «Մենք այստեղ՝ ԱՄՆ-ում (Արաբական Միացյալ Նամրապետությունում-Ա. Փ.), դեմ ենք, որպեսզի կրոնն օգտագործվի ինպերիալիզմի և հետադիմության նպատակներին ծառայելու համար: Մենք դեմ ենք Իսլամական դաշինքին և Իսլամական կոնֆերանսին, ինչպես նաև կիմում դեմ էինք Բաղդադի պակտին, եզգենիառությունների դոկտրինային և մնացած բոլոր հետադիմական ինպերիալիստական մանյովըներին... Մենք հայտարարում ենք, որ ճշմարիտ իսլամական համերաշխությունը մահմեդական բոլոր ժողովուրդների հա-

<sup>46</sup> 1966/1/23 «Հայրան»

<sup>47</sup> Լ. Վանկովա, նշվ. աշխ. մեջ, էջ 165, 166:

մերաշխությունն է, որոնք պայքարում են իմացերիալիզմի դեմ, և ոչ թե հետադիմական կառավարությունների համերաշխությունը, որոնք իմացերիալիզմի գործակալներն են, որ կեղծում են իսլամը հետադիմության հետաքրքրությունների համար՝ ձգտելով շրջել պատմության անիվը և խանգարել առաջընթացի ուղղում...Արաբական երկրների ժողովրդական զանգվածները շուտով կիասկանան, որ Խսլամական դաշինքի ստեղծման կողմնակիցները օգտագործում են կրոնը որպես զենք, որն ուղղված է արաբական երկրներին ազդեցության ոլորտը գցելու համար: Ժողովրդական զանգվածները ջախջախիչ հարված կտան Խսլամական դաշինքին, որին սպասվում է այն նույն ճակատագիրը, ինչ՝ Բաղրամի պակտին»<sup>48</sup>:

Մերժելով ԱՄՆ-ի և Անգլիայի հովանավորությամբ դաշինքներ ստեղծելու գաղափարը՝ Նասերը համոզված էր, որ խսլամական միասնության գաղափարը արտաքին ուժերի նախաձեռնության արդյունք է: Թեև նա դեմ էր միջազգային հարաբերություններում խսլամի դերակատարությանը, սակայն համոզված էր, որ խսլամը քաղաքական վիթխարի հնարավորություններ ունի: Չնորանանք նշել, որ 1960-ականներին Եգիպտոսի և Սաուդյան Արաբիայի միջև զգալի հակասություններ առաջացան, որոնք իրենց հերթին խոչընդոտում էին երկու երկրների միջև լիակատար փոխըմբռնմանը<sup>49</sup>:

Եգիպտոսի օրինակին հետևելով՝ խսլամական դաշինքի դեմ արտահայտվեցին նաև արաբական մյուս երկրները: Ալժիրի արտգործնախա-

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 167:

<sup>49</sup> Սաուդյան Արաբիայի և Եգիպտոսի միջև հակասությունը հիմնականում առնչվում էր 1962թ. սեպտեմբերի Եմենական հեղափոխությանը: Սաուդյան Արաբիան պաշտպանում էր միապետականներին, իսկ Եգիպտոսը Եմենում հանրապետություն ստեղծելու կողմնակից էր: Եմենական խնդրի շուրջ առաջացած հարցը միջազգային նշանակություն ստացավ և վկայում էր արաբական աշխարհում առկա հակասությունների մասին:

րար Արդ ալ-Ազիզ Բուտեֆլիկան Յորդանանում Ֆեյսալի հայտարարությունից անմիջապես հետո արձանագրեց, որ Ալժիրը չի միանա քաղաքական և ռազմական միությունների, եթե դրանք ինչ-որ ուժերի ազդեցության ոլորտում են: Եմենի Արաբական Հանրապետության հանրապետական խորհուրդը միաձայն մերժեց մասնակցել իսլամական պետությունների բարձր մակարդակի կոնֆերանսին: Իրաքի նախագահ Արդ աս-Սալամ Արեֆը խստորեն դատապարտեց իսլամական դաշինքի գաղափարը, քանի որ նրան վիճակվելու էր Բաղդադի պակտի ճակատագիրը: Պաշտոնական Սիրիան հայտարարեց, որ չի աջակցում իսլամական դաշինքին, քանի որ այն ներկայացնում է ռեակցիոն և իմպերիալիստական պետությունների հետաքրքրությունները: Նշվեց, որ Սիրիան չի ուղարկի իր ներկայացուցիչներին իսլամական երկրների բարձր մակարդակի կոնֆերանսին: Բուվեյրի Եմիր Ահմադ ալ-Զարերը հայտարարեց, որ իր երկիրը դեմ է դաշինքներին: Նման տեսակետ արտահայտեց նաև Սուլեյմանի վարչապետ Մուհամմեդ Ահմադ Մահջութը: Նա նշեց, որ եթե անգամ իսլամական դաշինք ստեղծելու նպատակով կոնֆերանս հրավիրվի, Սուլեյմանը չի մասնակցի: Լիբանանի վարչապետ Աբդալլահ Յաֆին, հարազատ մնալով Լիբանանի արտաքին քաղաքականության սկզբունքներին, հայտարարեց, որ Լիբանանը երբեք չի միանա ո՛չ իսլամական, ո՛չ էլ քրիստոնեական դաշինքի<sup>50</sup>:

Իսլամական դաշինքի ստեղծմանը դեմ արտահայտվեցին Ասիայի և Աֆրիկայի առանձին երկրներ, ինչպես նաև՝ արաբական և միջազգային մի շարք կազմակերպություններ<sup>51</sup>:

<sup>50</sup> Լ. Վալյովա, Սայдовская Аравия, նշվ. աշխ. մեջ, էջ 167, 168:

<sup>51</sup> Նույն տեղում, էջ 168:

Խսլամական դաշինքի հարցում Ֆեյսալին աջակցեցին Իրանը, Հորդանանը, որոշ աղբյուրների համաձայն նաև՝ Պակիստանը, Մարոկկոն և Սունալիմ<sup>52</sup>: Ուստի կողմերը հաջողության հասնել չկարողացան:

1967թ. հունիսին արաբ-խրայելական պատերազմը փոխեց դեպքերի հետագա ընթացքն ու Մերձավոր Արևելքում ուժերի հավասարակշռությունը: Պատերազմում արաբները պարտվեցին: Եգիպտոսը, Սիրիան, Հորդանանը կորցրին ավելի քան 60հզ. կմ<sup>2</sup> տարածք: Խսրայելը գրավեց նաև Արևելյան Երուսաղեմը, որտեղ խսլամական սրբավայրեր կան: Արևելյան Երուսաղեմի բռնազավթումը մահմեդակաները դիտարկեցին իբրև խսլամական սրբավայրերի պղծում «անհավատների» կողմից:

Սառույան Արաբիան ժամանակավորապես դադարեցրեց իր քարոզչությունը: Արաբական Երկրների ուշադրությունը սկսվեց Խսրայելի ազրեսիվ քաղաքականության դեմ պայքարին և այս հարցում արաբական Երկրների համախմբմանը:

1967թ. օգոստոս-սեպտեմբերին Սուլդանի մայրաքաղաք Խարբումում գումարվեց ԱՊԼ անդամ պետությունների ղեկավարների չորրորդ հանդիպումը, որի ընթացքում որոշվեց, որ նավարայունաբերող արաբական Երկրներ Սառույան Արաբիան, Քուվեյթը, Լիբիան ֆինանսական օգնություն հատկացնեն Եգիպտոսին և Հորդանանին: Խսրայելի նկատմամբ որդեգրվեց Երեք հայտնի «ոչերից» կազմված բանաձևը<sup>53</sup>:

<sup>52</sup> E. Ihsanoglu, Turkey in the Organization of the Islamic Conference. An Overview, Recent Developments, Edited by K.H. Karpat, Medison, 1996, p. 77. Խորհրդային արևելագետներից շատերի ուսումնասիրություններում Եցվում է, որ Պակիստանը պաշտոնապես համաձայնելի է նաևնակել խսլամական դաշինքին, պայմանով, եթե դրան միանան արաբական բոլոր Երկրները, այդ թվում Արաբական Միացյա Խանրապետությունը: Տե՛ս Լ. Վանկոս, Հայուսական Արանի և մեջազարօնական սույնություններ, Մ., 1979, ը. 169.

<sup>53</sup> Խարբումում հոչակվեց Խսրայելի նկատմամբ հայտնի բանաձևը՝ «ո՛չ խաղաղություն, ո՛չ ուղղակի բանակցություններ, ո՛չ ճանաչում»:

Խարթումի, ապա դեկտեմբերին Ռաբաթի բարձր մակարդակի հինգեռորդ հանդիպման արդյունքները դրական նշանակություն ունեցան Խսրայելի ագրեսիայի նկատմամբ արաբական միասնական դիրքորոշում որդեգրելու հարցում<sup>54</sup>:

1967թ. խրայելական ագրեսիան վերակենդանացրեց մահմեղական պետությունների համախմբմանն ուղղված ծրագրերը, սակայն նոր հիմքի վրա, որին խթանեցին նաև այդ շրջանում խլամական վերածննդի շարժումները: Արաբական հողերի բռնազավթումը դատապարտեցին բոլոր մահմեղական երկրները: Նրանցից շատերի կարծիքով՝ Թել-Ավիվի ագրեսիան վտանգավոր նախադեպ էր<sup>55</sup>:

1967թ. արաբների պարտությունը մահմեղականների մեջ ինքնաքննադատության դրսելորումներ ի հայտ բերեց: 1967թ. պատերազմից հետո պաղեստինյան հիմնահարցը վերաճեց խլամականի, իսկ Երուսաղեմի կորուստը մահմեղականների մեջ առաջացրեց ճգնաժամ: ««Երուսաղեմի ազատագրումը» դարձավ ոչ միայն տարածաշրջանային քաղաքական խնդիր, այլ նաև համաշխարհային (խլամական) կրոնաքաղաքական կարգախոս և հիմնահարց»<sup>56</sup>:

Իրավիճակն ավելի պայրունակտանգ դարձավ, երբ 1969թ. օգոստոսի 21-ին Երուսաղեմում անհայտ անձինք հրկիցեցին խլամի երեք գլխավոր սրբատեղիներից մեկի՝ ալ-Ակսա մզկիթի մի հատվածը, որի համար մահմեղականները մեղադրեցին խրայելցիներին<sup>57</sup>:

<sup>54</sup> Շ.Կարամանուկյան, Արաբական պետությունների լիզայի դերը արաբական երկրների հակահմապերիալիստական պայքարում, Եր., 1988, էջ 162:

<sup>55</sup> А. Васильев, История Саудовской Аравии, М., 1982, с. 445.

<sup>56</sup> John L. Esposito, Islam. The Straight Path, Oxford University Press, 1988, p. 165.

<sup>57</sup> ۱۹۹۴/۹/۱۱ «سچاد»

Իսլամական համերաշխության և միասնության կոչերը նորից կյանքի կոչեցին: Արևելյան Երուսաղեմի ազատագրման հարցում հետևողականությամբ աչքի ընկնող Սառույան Արաբիան ալ-Ակսայի հրկիզմից հետո արաբներին ջիհաղի<sup>58</sup> կոչ արեց մահմեդական սրբատեղիները «անհավատներից» ազատագրելու համար, որը, սակայն, մի շարք հանգամանքների պատճառով լայն արձագանք չգտավ:

Երուսաղեմի ազատագրության հարցում Սառույան Արաբիան կարող էր անվերապահորեն ակնկալել Յորդանանի աջակցությունը: Արևելյան Երուսաղեմը Յորդանանի համար հատուկ նշանակություն ուներ, քանի որ 1948-1967թթ. եղել էր հորդանանյան թագավորության կազմում, և Յուսեյն թագավորն ամեն կերպ փորձում էր այն հետ վերադարձնել: Ստեղծված պայմաններում Յորդանանի թագավորը կոչ արեց հրավիրել արաբական երկրների բարձր մակարդակի գագաթնաժողով՝ քննարկելու ստեղծված իրավիճակը: Մինչեօ Սառույան թագավորը առկա իրադրությունը նպաստավոր համարեց իսլամական երկրների բարձր մակարդակի հանդիպում անցկացնելու համար: Ֆեյսալ թագավորը պնդում էր, որ 1967թ. օգոստոսին Խարթումի կոմֆերանսում մերձավորակներան հակամարտության խաղաղ լուծումներ գտելու մասին որոշումներն ուժի մեջ են: Նա ամեն կերպ փորձում էր խնդրի քննարկումը տեղափոխել իսլամական շրջանակներ, որտեղ ավելի մեծ հեղինակություն ուներ:

(1969թ. օգոստոսի 25-ին ալ-Ակսա մզկիթի հրկիզմից չորս օր անց Կահիրեում հավաքված արաբական 14 երկրների արտգործնախարարները համաձայնեցին իսլամական երկրների բարձր մակարդակի գա-

<sup>58</sup> Իսլամում ջիհադ ասելով նկատի է առնվում բոլոր հնարավորությունների և ջանքերի գործադրումը հանուն ասսոծ:

գաթնաժողով հրավիրելու Ֆեյսալի կոչին<sup>59</sup>: Դանդիպման ընթացքում վերջինս առաջարկեց ստեղծել ոչ թե իսլամական դաշինք, այլ՝ իսլամական չափանիշներով միջազգային կազմակերպություն՝ փաստարկելով, որ իսլամական աշխարհը կապող թելերն ավելի հզոր են, քան դաշինքներն ու պայմանագրերը:

Անսպասելիորեն փոխված հանգամանքներում Գամալ Արդ ան-Նասերը և այլ ընդդիմախոս գործիչներ պաշտոնապես իրենց աջակցությունը հայտնեցին իսլամական երկրների բարձր մակարդակի գագաթնաժողով հրավիրելու Ֆեյսալի առաջարկին, որտեղ քննարկվելու էին երուսաղեմը արարներին վերադարձնելու և այլ բնույթի հարցեր:

Սառույան Արաբիայի և Մարոկկոյի արտգործնախարարները հանդիպեցին Զիդդայում՝ 1969թ. սեպտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում՝ քննարկելու գագաթնաժողովի հրավիրման հետ կապված հարցերը: Ստեղծվեց նախապատրաստական հանձնաժողով, ուր ընդգրկվեցին Իրանի, Պակիստանի, Սառույան Արաբիայի, Սոմալիի, Մալայզիայի, Մարոկկոյի և Նիգերի ներկայացուցիչները<sup>60</sup>: Հանձնաժողովը պետք է նախապատրաստեր հանդիպման հետ կապված հարցերը: Սահմանվեց գագաթնաժողովին բոլոր իսլամական պետությունների պարտադիր ներկայությունը:

Ի վերջո 1969թ. սեպտեմբերի 22-25-ը Ռաբաթում տեղի ունեցավ իսլամական կոնֆերանս կազմակերպության հիմնադիր համագումարը, որին հրավիրյալ 35 պետություններից մասնակցեցին 25-ը՝ Սառույան Արաբիան, Եգիպտոսը, Հորդանանը, Լիբիան, Մարոկկոն, Թունիսը, Ալժի-

<sup>59</sup> 5 سوریا ودوره المهمم، دمشق، 1997، ص

<sup>60</sup> The Islamic Summit Conference. Sixth Issue. Revised Edition, November, 1981. Kuwait News Agency, p. 8.

ոք, Լիբանանը, Թուվեյթը, Մալայզիան, Աֆղանստանը, Չաղը, Գվինեան, Իրանը, Նիգերը, Պակիստանը, Ինդոնեզիան, Մալին, Սավրիտանիան, Սենեգալը, Սոմալին, Սուդանը, Թուրքիան, Յոյուսիսային Եմենը և Յարավային Եմենը<sup>61</sup>: Մասնակից պետություններից միայն տասն էին ներկայացել պետության դեկավարի մակարդակով:

Նախապատրաստական հանձնաժողովը նախօրոք կազմել էր գագաթնաժողովի օրակարգը, ուր գլխավոր տեղը գրադեցնում էին ալ-Ակսա մզկիթի և Երուսաղեմի հարցերը:

Յանդիպումը տեղի ունեցավ իսլամական պետությունների միջև խիստ լարված պայմաններում: Տարածայնություններ առաջացան եգիպտոսի և Սաուդյան Արաբիայի միջև: Նասերը չճասնակցեց գագաթնաժողովին: Եգիպտական պատվիրակությունը, որը դեկավարում էր Ազգային ժողովի նախագահ Անվար Սադաթը, առաջ քաշեց այն տեսակետը, որ Երուսաղեմի խնդիրը արաբ-իսրայելական հակամարտության մի մասն է, հետևաբար այն պետք է լուծվի ոչ թե իսլամական աշխարհի, այլ միայն արաբական երկրների շանքերով:

Յանդիպման լարված իրադրությունը պայմանավորված էր նաև դրան նախորդած իրադարձություններով: 1969թ. սեպտեմբերի 1-ին Լիբիայում տապալվել էր միապետությունը, իսկ սեպտեմբերի 7-ին հեղաշրջման անհաջող փորձ էր կատարվել Սաուդյան Արաբիայում, որի մասնակիցները ծերակալվել էին:

Յակասությունների ոչ պակաս տեղիք տվեց գագաթնաժողովին Յնդկաստանի իրավերը, որն առաջացրեց այս երկրի հետ հակասություններ ունեցող Պակիստանի դժգոհությունը: Զնայած Յնդկաստանում 60 մլն մահմեդական բնակչության գոյության փաստին՝ Պակիստանի

<sup>61</sup> Նույն տեղում, էջ 12:

նախագահ Յահյա Խանը պնդում էր, որ հանդիպմանը պետք էր հրավիրել ոչ թե Հնդկաստանի իշխանություններին, այլ՝ մահմեդական համայնքին: Հնդկաստանի պատվիրակությանը խորհուրդ տրվեց հակասություններից խուսափելու համար հեռանալ դահլիճից:

Մասնակից պետություններից Իրանը և Թուրքիան ընդհանրապես խուսափեցին Խորայելի դեմ կտրուկ որակումներից և այդ երկրի հետ դիվանագիտական կապերի խզումից<sup>62</sup>: Իրանի շահը, իր ելույթում պաշտպանելով իսլամական համերաշխության գաղափարը, չանդրադարձավ ո՛չ արաբա-խորայելական հակամարտությանը, ո՛չ Երուսաղեմի, և ո՛չ էլ ալ-Ակսա մզկիթի հրկիզնանը, որն այդքան լայն արձագանք էր գտել հալամական աշխարհում:

«Ալ-Բաաս» թերթը, Վկայակոչելով «ան-Նահարի» մի հրապարակում, նշում էր, որ մի քանի պետություններ սպանացին կասեցնել իրենց մասնակցությունը գագաթնաժողովին, եթե օրակարգով նախատեսված ալ-Ակսայից և Երուսաղեմի իսլամական սրբավայրերից բացի այլ հարցեր քննարկվեն<sup>63</sup>:

Այս համատեքստում առանձնապես ուշագրավ է Արևմուտքի ռազմաքաղաքական կարևոր դաշնակցի՝ Թուրքիայի, մասնակցության հարցը: Իսլամական պետությունների բարձր մակարդակի հանդիպման հրավերը երկընտրանքի առաջ էր կանգնեցրել երկրի իշխանություններին: Իսլամական աշխարհի հետ սերտ համագործակցությունը հակասում էր աշխարհիկ պետության սկզբունքներին, որն ամրագրել էր իր իսկ հիմնադիրը՝ Զեմալ Արաբյուրքը: Սակայն հանդիպմանը չմասնակցելը բացասաբար կանդրադառնար ինչպես արաբական երկրների, այնպես էլ

<sup>62</sup> Նույն տեղում:

<sup>63</sup> 1969/9/23 «البصائر»

իսլամական աշխարհի հետ Թուրքիայի հարաբերությունների վրա, ինչը որոշակիորեն կմեկուսացներ նրան մերձավորարևելյան տարածաշրջանում: Մասնավորապես Սաուդյան Արաբիայի և Հորդանանի քաղաքական շրջանակները Թուրքիային հասկացնել տվեցին, որ մասնակցությունը Ռաբաթի հանդիպմանը գգալի նշանակություն կունենա արաբական աշխարհի համար<sup>64</sup>: Թուրքիայի վարչապետի կարծիքով՝ ռաբաթյան հանդիպումը իր բնույթով քաղաքական էր, այլ ոչ թե՝ կրոնական, ուր Թուրքիան քննարկելու էր միայն ալ-Ակսա մզկիթի և Երուսաղեմի հարցերը:

Հանդիպմանը Թուրքիան իրանի հետ դեկավարեց այն երկրների խումբը, որոնք թույլ չտվեցին, որ իսլամական պետությունները ներգրավվեն արաբա-իսրայելական հակամարտության քննարկումների մեջ:

Հանդիպմանը ներկա չէին մի շարք երկրներ: Սիրիայի և Մարոկկոյի միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայության պատճառով Սիրիան չմասնակցեց: Իրաքը չներկայացավ, քանի որ Պաղեստինի ազատագրական կազմակերպության (ՊԱԿ) նախագահ Յասեր Արաֆաթը պաշտոնապես չէր իրավիրել, այլ ժամանել էր իրու Հորդանանի Հուսեյն թագավորի հյուր<sup>65</sup>:

Հանդիպումը նախագահեց Մարոկկոյի Յասան II թագավորը, որն իր ելույթում նահմեղական ժողովուրդներին միավորման կոչ արեց: Նա նշեց, որ կգործադրի բոլոր ջանքերը, որպեսզի հանդիպումն ընթանաբարեկամության և եղբայրության մթնոլորտում<sup>66</sup>:

<sup>64</sup> И. Иванова, Туренко-арабские отношения и их место в системе международных связей на Ближнем Востоке (1945-1983), М., 1985, с. 124.

<sup>65</sup> Л. Вилькова, ճշգ. աշխ. մեջ, էջ 172.

<sup>66</sup> ۱۹۶۹/۹/۲۳ «البعث»

Ելույթ ունեցավ նաև հանդիպման հիմնական կազմակերպիչը՝ Ֆեյսալը: Նա նշեց, որ Իսլամական կոնֆերանս կազմակերպության ստեղծումը արտացոլում է «իսլամական աշխարհում առկա ինտեգրացման միտումները»<sup>67:</sup>

Ուրաքարի գագաթնաժողովին իսլամական երկրների առաջնորդները հայտարարեցին, որ իսլամական աշխարհին միավորում է ուժմայի գաղափարը, և չնայած ներքին հակասություններին՝ որոնք թվում են անվերջանալի, իսլամական պետություններին հաջողվեց «ընդհանուր լեզու» գտնել: Դանդիպման ամենակարևոր ծեռքբերումներից էր հոչակագրի ընդունումը, ինչպես նաև՝ պայմանավորվածությունը՝ «...սերտ համագործակցելու և փոխադարձաբար օգնելու միջյանց տնտեսական, գիտական, մշակութային և հոգևոր բնագավառներում՝ ներշնչվելով իսլամի անմահ ուսմունքով»<sup>68:</sup> Իսլամական պետությունները պարտավորվեցին իրենց մեջ ծագող հակամարտությունները լուծել խաղաղ ճանապարհով՝ նպաստելով միջազգային խաղաղության և անվտանգության ամրապնդմանը:

Ուրաքարի հոչակագրում ներկայացված էր իսլամական պետությունների դիրքորոշումը մերձավորարևելյան ճգնաժամի և Երուսաղեմի հարցի վերաբերյալ: Մերժվեց պաղեստինյան հարցի ցանկացած որոշում, որը չի ճանաչի Երուսաղեմի՝ մինչև 1967թ. հունիսի կարգավիճակը<sup>69:</sup> Խրայելից պահանջվեց դուրս գալ արաբական գրավյալ տարածքներից: Աջակցություն հայտնվեց պաղեստինյան ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին: ԽՍՀՄ-ին, Մեծ Բրիտանիային, Ֆրանսիային և ԱՍՍ-ին կոչ արվեց քայլեր ծեռնարկել՝ լուծելու մերձավո-

<sup>67</sup> Մեջբերումը Իслам. իրավական և տնտեսական հարցերի մասին. Ակադեմիական համակարգության կողմանից հայտնագործություն. Մ., 1985, ս. 64.

<sup>68</sup> The Rabat Declaration, The Islamic Summit Conference, նշվ. ժողովածովի մեջ, էջ 38:

<sup>69</sup> Սույն տեղում:

րարնելքան ճգնաժամը<sup>70</sup>: Ուարաքի հանդիպումը, սակայն, ծեռնպահ մնաց իսլամական պետություններում ՊԱԿ-ի ներկայացուցչություններ բացելու նախին որոշում ընդունելուց:

Հոչակագրում նշված էր, որ ընդհանուր հավատքը հզոր գործոն է մահմեղական ժողովուրդների փոխըմբռնման, միավորնան, ինչպես նաև իսլամի հոգեւոր, բարոյական, սոցիալ-տնտեսական արժեքները պաշտպանելու հարցում<sup>71</sup>:

(Ուարաքում որոշվեց, որ բացի իսլամական պետությունների դեկավարների բարձր մակարդակի հանդիպումից՝ անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ հրավիրել նաև արտաքին գործերի նախարարների կոնֆերանս, որը կիետուի գագաթնաժողովների ընթացքում ընդունված որոշումների իրագործմանը:)

Ուարաքի հանդիպումը մեկ անգամ ևս փաստեց, որ իսլամական աշխարհը նասնատված էր: Այս հանգամանքը բացասական ազդեցություն ունեցավ Իսլամական կոնֆերանս կազմակերպության ողջ գործունեության ընթացքում, սակայն չխանգարեց, որ կազմակերպությունը կայանա և ապացուցի իր կենսունակությունը:

Ուարաքում ընդունված հոչակագրում հստակ դրույթ չկար Իսլամական կոնֆերանս կազմակերպության ստեղծման, ինչպես նաև նրա հետագա գործունեության մասին: Իսկ կազմակերպության կանոնադրությունը (որը միջազգային պրակտիկայում ընդունվում է հիմնադիր համագումարի ընթացքում) վավերացվեց միայն երեք տարի անց՝ 1972թ. իսլամական պետությունների արտաքին գործերի նախարարների հանդիպման ժամանակ:

<sup>70</sup> Նույն տեղում, էջ 12:

<sup>71</sup> Նույն տեղում, էջ 39:

Այս հանգամանքները թույլ են տալիս ենթադրել, որ Ռաբարի հանդիպումը իրավիրվել էր հապճեպ՝ հօգուտ նախաձեռնողների անսպասելիորեն փոխված իրավիճակի, իսկ նախապատրաստական հանձնաժողովը չէր հասցրել այդ կապակցությամբ որևէ փաստաթղթի նախագիծ մշակել:

Դարկ է փաստել, որ մասնագիտական և տեղեկատու գրականության մեջ Իսլամական կոնֆերանս կազմակերպության ստեղծման տարեթվերը հաճախ իրարամերժ են: Մի դեպքում հիմք է ընդունվում Ռաբարի հանդիպման տարեթվը՝ 1969 թվականը, մեկ այլ դեպքում՝ 1944-ի կանոնադրության ընդունման տարեթվը՝ 1972-ը: Իսլամական կոնֆերանս կազմակերպության պաշտոնական իրատարակություններում և ինստերնետային տարբերակներում 1944-ի ստեղծման տարեթվը նշվում է 1969-ը:

Մեր համոզմամբ՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպության պատմությունը սկսվում է Ռաբարի հանդիպումից, որը դարձավ կազմակերպության ստեղծման անկյունաշարը:

Իսլամական պետությունների արտաքին գործերի նախարարների առաջին հանդիպումը տեղի ունեցավ Սաուդյան Արարիայի Զիդդա քաղաքում 1970թ. մարտին՝ Ֆեյսալ թագավորի ամմիջական հովանավորությամբ, որին մասնակցեցին իսլամական քանակությունը պետություններ: Կոնֆերանսում ելույթ ունենալով՝ Սաուդյան Արարիայի թագավորը մասնավորապես ասաց. «Մեր հայրենիքը յուրաքանչյուր մահմեդականի հայրենիքն է...Մենք առաջին հերթին պետք է ձգտենք հասնելու իսլամական ազգի միասնությանը և համագործակցությանը՝ հանուն ընդհանուր նպատակի՝ խրայելական ագրեսիայի վերացման...Թող այս գործում օգնի մեզ ալլահը, թող ամրապնդի մեր հավատքը, ինարավո-

բություն տա մեզ պաշտպանելու մեր պատիվը, սրբատեղին (Երուսա-դեմը-Ա.Փ)»<sup>72</sup>:

Զիդիայի հանդիպումը գործնական քայլեր չարեց խևամական աշխարհին հուզող խնդիրները համակարգելու ուղղությամբ: Դրական արձագանք գտավ գործող քարտուղարություն հիմնելու և խևամական պետությունների միջև համագործակցություն սկզբնավորելու Պակիստանի առաջարկը: Որոշվեց, որ գլխավոր քարտուղարության նստավայրը ժամանակավորապես պետք է գտնվի Զիդիայում «մինչև Երուսաղեմի ազատագրումը»: Սառույան Արաբիան գլխավոր քարտուղարության գրասենյակին տրամադրեց թագավորական պալատի նախկին շենքը Զիդիայում:

Հևամական կոնֆերանս կազմակերպության գլխավոր քարտուղարի պաշտոնում ընտրվեց Մալայզիայի նախկին վարչապետ Թանգու Արդ առ-Ռահմանը երկու տարի ժամկետով: Կոնֆերանսը որոշեց՝ գումարել խևամական պետությունների արտաքին գործերի նախարարների ամենամյա հանդիպումները<sup>73</sup>:

Ռաբարի հանդիպումից երեք տարի անց՝ 1972թ. նարտին, խևամական պետությունների արտգործնախարարների Զիդիայի հանդիպմանն ընդունվեց Իսլամական կոնֆերանս կազմակերպության կանոնադրությունը: Ընդունվեցին նաև մի շարք կարևոր որոշումներ, որոնցից են՝ ստեղծել Իսրայելի դեմ զիհաղի ֆոնդ, վճռականորեն դատապարտել ԱՄՆ-ին՝ Իսրայելին սատարելու համար, ողջունել Սիրիային և Լիբանանին՝ պաղեստինցի պարտիզաններին օգնելու համար:

<sup>72</sup> Սեցերումը՝ Р. Пашаева, Роль Саудовской Аравии в создании Всемирной исламской организации солидарности мусульманских стран. В кн.: Характерные черты социально-политического развития арабских стран в 1950-1970-е годы, Еր., 1980, с. 163.

<sup>73</sup> The First Foreign Ministers' Conference-Jedda (1970). The Islamic Summit Conference, նշվ. ժողովածուի մեջ, էջ 13:

Կոնֆերանսի ընթացքում Ֆեյսալ թագավորը ևս մեկ անգամ մահմեդականներին միասնության կոչ արեց: Նշելով, որ թշնամուն հաջողվել է արաբական երկրների կառավարություններին մեկը մյուսի դեմ տրամադրել, նա մասնավորապես ասաց. «...Անհրաժեշտ է վերացնել այդ տարածայնությունները, հասնել փոխգործողությունների, համագործակցության՝ հիմնվելով մեր հավատքի, մեր շարիաթի, մեր հայրենիքի, մեր ազգի վրա»<sup>74</sup>:

(Այսպիսով, 1970-ականներին միջազգային ասպարեզում ի հայտ եկավ կրոնա-քաղաքական մի կազմակերպություն, որին միավորում էին ոչ թե աշխարհաքաղաքական կամ տնտեսական գործոնները, այլ կրոնը՝ իսլամը, իսկ կազմակերպությանը անդամակցելու իրավունքը վերապահվեց միայն իսլամական պետություններին: Այս առումով տեղին է մեջբերել արաբագետ Ն. Շովկիաննիսայանի այն տեսակետը, որ համագույն դերը ստանձնել հավակնող բոլոր ինստիտուտներից աննաշահավետ վիճակում հայտնվեց իսլամը. «Բավարարելով գործնականում հասարակության բոլոր սոցիալական խմբերի և դասակարգերի կրոնապաշտամունքային պահանջները՝ իսլամի համար դժվար չէ ստեղծել միակ վերդասակարգային ինստիտուտի, ուժի, երևութականություն, որը կարող է միավորել հասարակությանը բոլորի համար ընդունելի սկզբունքներով: Նման երևութականության ստեղծմանը նպաստել է և այն հանգամանքը, որ իսլամը մահմեդական երկրների մեջ մասում հոչակված է եղել որպես պետական կրոն, իսկ որոշ երկրներում հարավորություն է ստացել՝ ներգործել հասարակական-քաղաքական գործնականությունների վրա»<sup>75</sup>:

<sup>74</sup> Մեջբերումը Ք. Պահասա, Եշվ. աշխ. մեջ, էջ 163:

<sup>75</sup> Հ. Օգանեսյան, Активизация ислама: характер, специфика и последствия. В кн.: Ислам в политической жизни стран современного Ближнего и Среднего Востока, Ер., 1986, с. 39.

Զգտելով հիմնավորել իսլամական համերաշխության շարժման պատճառները՝ արևելացետ Ե. Պրիմակովը նկատում է, որ գաղութատիրության անկումից հետո (1940-1970-ականներ) իսլամական երկրները հայտնվեցին համաշխարհային կապիտալիզմի տնտեսական համակարգում: Այն ստեղծեց մի իրադրություն, որի մեջ պետք է փնտրել իսլամական շարժումների պատճառները: Արևմտյան քաղաքականության ազդեցությունը հակասություն ծնեց «վեստերնիզացիայի» և իսլամական ավանդականության միջև, որի հիմքերը բուլացել էին<sup>76</sup>:

Իրավամբ պետք է ասել, որ «Երրորդ աշխարհը» աստիճանաբար հիասթափվում էր արևմտյան արժեքներից: Այս միտումը բնորոշ էր նախկինում գաղութացված և կախյալ երկրներին:

Իսլամական պետությունների ակտիվ մասնակցությունը իսլամական քաղաքական շարժումներին ամերիկացի ուսումնասիրողների կարծիքով մի քանի հիմնավորում ունի: Իսլամական երկրները հաստատում էին, որ իրենք պատկանում են իսլամական աշխարհին և ցույց էին տալիս քաղաքական, տնտեսական, մշակութային ինքնուրույն կյանք վարելու իրենց ընդհանուր գգոտումը: Բացի այդ կազմակերպությանը անդամակցելը մասնակից պետություններին հնարավորություն էր տալու լուծել ինչպես տնտեսական, այնպես էլ արտաքին և ներքին քաղաքականության խնդիրները: Ամերիկացի հետազոտողները նշում են, որ արաբական և ոչ արաբական պահպանողական վարչակարգերի միավորումը Ֆեյսալ թագավորին իրական հնարավորություն տվեց օգտագործել «իսլամական Անտանտը» ի հակալշիր արաբական արմատական պետությունների<sup>77</sup>:

<sup>76</sup> Е. Примаков, Восток после краха колониальной системы, М., 1982, с. 72-74.

<sup>77</sup> М. Филиппова, Оценка американскими учеными "исламского фактора" в международных отношениях. В кн: "Исламский фактор" в международных отношениях в Азии, М., 1987, с. 14-29.

## 2.Իսլամական կոնֆերանս կազմակերպության հիմնական նպատակները, գործունեության սկզբունքները, կառուցվածքը

Իսլամական կոնֆերանս կազմակերպության գործունեությունը իրա-  
տեսորեն գնահատելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել կազմա-  
կերպության հիմնական նպատակները և սկզբունքները, որոնք ամ-  
րագրված են կազմակերպության կանոնադրությամբ:

Իսլամական բարձրագույն քաղաքական մարմնի հիմնական նպա-  
տակներն են՝ աջակցել անդամ պետությունների միջև իսլամական հա-  
մերաշխության ամրապնդանը, անդամ պետությունների միջև ամրագ-  
րել համագործակցությունը տնտեսական, սոցիալական, մշակութային,  
գիտական և կենսական այլ բնագավառներում և խորհրդակցություններ  
անցկացնել անդամ պետությունների միջև միջազգային կազմակեր-  
պություններում, ջանքեր գործադրել՝ վերացնելու ռասայական սեգրե-  
գացիան, խտրակնությունը և արմատախիլ անել գաղութատիրու-  
թյունն իր բոլոր ծերով, անհրաժեշտ միջոցառումներ ծեռք առնել՝ ա-  
ջակցելու արդարության վրա հիմնված միջազգային խաղաղության ու  
անվտանգությանը, համադրել սրբավայրերի պահպանությանն ուղղ-  
ված բոլոր միջոցառումները, ինչպես նաև աջակցել Պաղեստինի ժո-  
ղովրդի պայքարին և օգնել նրանց վերականգնելու իրենց իրավունք-  
ները և ազատագրելու գրավյալ տարածքները, ուժեղացնել իսլամա-  
կան բոլոր ժողովուրդների պայքարը արժանապատվության, անկա-  
խության և ազգային իրավունքների պահպանանան համար, նպատա-  
վոր մթնոլորտ ստեղծել անդամ պետությունների և այլ երկրների միջև

համագործակցության և փոխըմբռնման համար (ԻԿԿ-ի կանոնադրության հոդված 1-ին)՝<sup>78</sup>:

ԻԿԿ անդամ պետությունները վերը նշված նպատակներն իրագործելու համար, համաձայն կանոնադրության, պետք է առաջնորդվեն հետևյալ սկզբունքներով՝ անդամ պետությունների միջև պահպանել լիակատար հավասարություն, հարգել ազգերի ազատ ինքնորոշման և անդամ պետությունների ներքին գործերին չմիջամտելու իրավունքը, հարգել յուրաքանչյուր անդամ պետության ինքնիշխանությունը, անկախությունը և տարածքային ամբողջականությունը, ամեն մի հակամարտություն, որ կարող է ծագել, կարգավորել խաղաղ Ծանապարհով, ինչպիսիք են՝ բանակցությունները, միջնորդությունները, հաշտեցումները կամ միջնորդ դատարանի որոշումը, ծեռնպահ մնալ անդամ պետության տարածքային ամբողջականության, ազգային միասնության կամ քաղաքական անկախության նկատմամբ սպառնալիքի և ուժի գործադրումից (հոդված 2)՝<sup>79</sup>:

ԻԿԿ-ն հավաստում է, որ աջակցում է միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը, պայքարում է ռասայական խտրականության և գաղութատիրության դեմ, իսկ հակամարտությունների լուծումը պատկերացնում է խաղաղ Ծանապարհով, ինչպիսիք են՝ բանակցությունները, միջնորդությունները և այլն: Բացի այդ ԻԿԿ-ն հարգում է անդամ պետությունների ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը, ինքնորոշման սկզբունքը:

<sup>78</sup> Charter of the Islamic Conference, The Islamic Summit Conference, նշվ. ժողովածովի մեջ, էջ 56:

<sup>79</sup> Նույն տեղում:

Կրոնա-քաղաքական բնույթ ունեցող հսլամական կոնֆերանս կազմակերպությունն իր գործունեության մեջ կարևորում է մի շարք խիստ առածնահատուկ խնդիրներ, որոնք օտար են միջազգային այլ կազմակերպություններին և առնչվում են միայն ուժմայիշ՝ իսլամական ազգին: Դրանք են՝ իսլամական պետությունների միջև քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային և կենսական այլ կարևոր բնագավառներում սերտ համագործակցությունը, իսլամական սրբավայրերի պաշտպանությունը, պահեստինցի ժողովորդի իրավունքներին տեր կանգնելը: Այս հանգամանքները թույլ են տալիս եզրակացնել, որ միջազգային իրավունքի շրջանակներում ԻԿԿ-ն ներկայանում է որպես իսլամական ազգերի կազմակերպություն, որի հովանու ներքո իսլամական պետություններն ու ժողովուրդները պարտավորված են ծառայելու իսլամական ուժմայիշ խնդիրներին:

ԻԿԿ-ն ունի երեք գլխավոր մարմիններ՝ պետությունների և կառավարությունների ղեկավարների գագաթնաժողով, արտաքին գործերի նախարարների կոնֆերանս և գլխավոր քարտուղարություն (հոդված 3):

Պետությունների և կառավարությունների ղեկավարների գագաթնաժողովը կազմակերպության բարձրագույն մարմինն է և իր հանդիպումները գումարում են, երբ իսլամական ազգի շահերը դա են պահանջում՝ քննարկելու մահմեդական աշխարհին նտահոգող կենսական խնդիրները և համապատասխանաբար համակարգելու կազմակերպության քաղաքականությունը: Գագաթնաժողովի որոշումներն ընդունվում են կոնսենսուսով (հոդված 4):

Որպես կանոն՝ գագաթնաժողովից առաջ տեղի է ունենում արտաքին գործերի նախարարների նախապատրաստական կոնֆերանսը, որտեղ կազմվում է գագաթնաժողովի օրակարգը:

Եթե մահմեդական շրջանակներում առաջանում է որևէ հրատապ հարցի քննարկման անհրաժեշտությունը, ապա հրավիրվում է արտահերթ գագաթնաժողով:

Արտաքին գործերի նախարարների կոնֆերանսն իրավունք ունի հանդես գալ գագաթնաժողով հրավիրելու առաջարկությամբ, որը պետք է արժանանա անդամ պետությունների 2/3-ի հավանությանը:

Նիշտ է, 1972թ. ընդունված կանոնադրության մեջ նշված չէ, թե ինչ ժամանակահատվածում կարելի է հրավիրել գագաթնաժողով, սակայն 1981թ. Սառույան Արաբիայում անդամ պետությունների դեկավարների հանդիպման ժամանակ որոշվել է ԻԿԿ գագաթնաժողովը երեք տարի մեկ անցկացնելու մասին, չնայած այդ կարգը հաճախ խախտվում է:

Գագաթնաժողովը տեղի է ունենալ անդամ որևէ երկրում և հենց այդ երկիրն էլ մինչև հաջորդ գագաթնաժողովի գումարվելը համարվում է ԻԿԿ նախագահող երկիրը:

Գագաթնաժողովը համակարգում է անդամ երկրների որդեգրած քաղաքականությունը՝ համադրելով այն իսլամական երկրների շահերին:

ԻԿԿ կանոնադրության համաձայն արտաքին գործերի նախարարների կոնֆերանսը կազմակերպության քաղաքական մարմինն է, որը գումարվում է յուրաքանչյուր տարի անդամ պետություններից որևէ մեկում: Այն քննարկում է ԻԿԿ ընդհանուր քաղաքականության իրագործման միջոցները:

Արտաքին գործերի նախարարների արտահերթ նստաշրջան կարող է հրավիրվել անդամ որևէ պետության կամ գլխավոր քարտուղարության պահանջով, եթե արժանանա անդամ երկրների 2/3-ի հավանությանը: ԻԿԿ կանոնադրության 5-րդ հոդվածով սահմանված է հարցերի այն շրջանակը, որն արտգործնախարարների կոնֆերանսի իրավասության

մեջ է: Դրանք են՝ ընդհանուր քաղաքականության կենսագործման միջոցների մշակում, նախորդ նստաշրջաններում ընդունված որոշումների իրագործման բնագավառում ծեռօք բերված առաջադիմության քննարկում, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բանաձևների ընդունում կանոնադրության նպատակների և սկզբունքների համապատասխան, ֆինանսական հաճնաաժողովի ներկայացրած տարեկան գեկույցի ըննարկում և գլխավոր քարտուղարության բյուջեի հաստատում<sup>80</sup>:

Արտաքին գործերի նախարարների կոնֆերանսը սահմանում է գալիք կոնֆերանսի օրը, քննարկում ցանկացած խնդիր, որ մտահոգում է որևէ անդամ պետության կամ պետություններից մի քանիսին՝ նպատակ ունենալով այդ կապակցությամբ համապատասխան միջոցառումներ ծեռնարկել: Կոնֆերանսի որոշումներն ու հաճնարարականներն ընդունվում են ծայների 2/3-ի համաձայնությամբ: Կոնֆերանսում քվորումը ապահովում է անդամների 2/3-ի մասնակցությունը:

Կոնֆերանսը սահմանում է հիմնական ընթացակարգը, որին հետևում է ինչպես արտգործնախարարանների կոնֆերանսը, այնպես էլ պետությունների ղեկավարների գագաթնաժողովը<sup>81</sup>:

Արտգործնախարարների կոնֆերանսը իրավասու և հայտարարել որևէ երկրի անդամակցությունը մասնակից պետությունների 2/3-ի համաձայնության դեպքում: Արտգործնախարարների կոնֆերանսը նշանակում է ԻԿԿ գլխավոր քարտուղարին և նրա օգնականներին (հոդված 5)<sup>82</sup>:

Բացի արտաքին գործերի նախարարների կոնֆերանսից՝ ԽՍՀՄ ական կոնֆերանս կազմակերպությունը սկսել է գումարել նաև նախա-

<sup>80</sup> Նույն տեղում, էջ 58:

<sup>81</sup> Նույն տեղում:

<sup>82</sup> Նույն տեղում, էջ 57-58:

րարների մակարդակով այլ կոնֆերանսներ, որոնք ներառում են տրանսպորտի, կապի, տեղեկատվության, մշակույթի, սպորտի, արդյունաբերության, գյուղատնտեսության, էներգետիկայի և այլ ոլորտները: Նախարարների մակարդակով կոնֆերանսների գումարումը մեծապես խթանում է անդամ պետությունների միջև տարբեր բնագավառներում համագործակցության ամրապնդմանը:

1980թ. ԽՍՀՄ արադում խսլամական պետությունների արտաքին գործների նախարարների կոնֆերանսի որոշմամբ ստեղծվել է մշտական գործող նախարարական հանձնախումբ, որը ներկայացնում են անդամ պետությունների 11 նախարարներ և ԻԿԿ գլխավոր քարտուղարը: Հանձնախմբի շրջանակներում գործող «հիմնգի խումբը», որի մեջ ընդգրկված են Թուրքիան, Սաուդիան Արաբիան, Չամբիան, Քուվեյթը և Պակիստանը, գրադպում է ԻԿԿ անդամ պետությունների անվտանգության հարցերով: Քուվեյթի ղեն Իրաքի ազգեսիայի կապակցությամբ 1990թ. հունվարին ԽՍՀՄ արադում հրավիրված նրանց հանդիպմանը ԻԿԿ գլխավոր քարտուղար Համիդ ալ-Ղարիթը կոչ արեց ամրապնդել ԽՍՀՄ ական կոնֆերանս կազմակերպության ինստիտուտները և պրագմատիկ մոտեցում ցույց տալ անվտանգության խնդիրներին:

Հանձնախմբի խնդիրն է քննարկել անդամ պետություններից որևէ մեկին առնչվող արտակարգ իրավիճակը կամ ճգնաժամը, ինչպես նաև կարգավորել անդամ պետությունների միջև գոյություն ունեցող վեճերն ու հակամարտությունները: Հանձնախումբը կոչված է կատարել խսլամական պետությունների արտաքին գործների նախարարների կոնֆերանսի հանձնարարականները<sup>83</sup>:

<sup>83</sup> Н. Жданов, Исламская конвенция миранорядка, М., 1991, с. 41.

Դանձնախմբի գործունեության վերաբերյալ միջազգային իրավունքի մասնագետ Ն. Ժղանովը իրավացիորեն նշում է. «Ենիշտ է, հանձնախմբի գործառությունները միայն որոշ առումով են իիշեցնում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի գործունեությունը, սակայն նման մշտական գործող մարմնի ստեղծման փաստը ևս մեկ քայլ է ՄԱԿ-ի գործող մեխանիզմների օրինակով իսլամական երկրների միջև համագործակցության կազմակերպչական համակարգ ձևակորելու ճանապարհին»<sup>84</sup>:

Իսլամական կոնֆերանս կազմակերպության գործադիր մարմինը գլխավոր քարտուղարությունն է, որի հիմնադրման մասին որոշումն ընդունվել է 1972-ին: Ինչպես արդեն նշել ենք, գլխավոր քարտուղարության նստավայր գրասենյակը գտնվում է Ջիդայում՝ «մինչև Երուսաղեմի ազատագրումը»:

Գլխավոր քարտուղարին, ինչպես նաև գլխավոր քարտուղարի չորս օգնականներին նշանակում է արտաքին գործերի նախարարների կոնֆերանսը՝ գլխավոր քարտուղարի երաշխավորությամբ՝ ծայների 2/3-ի համաձայնության դեպքում:

Գլխավոր քարտուղարի օգնականներին երաշխավորելիս գլխավոր քարտուղարը պետք է հաշվի առնի նրանց ունակությունը, ազնվությունը և նվիրվածությունը:

Իրենց պարտականությունները կատարելիս գլխավոր քարտուղարը, նրա օգնականները կամ գլխավոր քարտուղարության աշխատակազմը չպետք է հրահանգներ ստանան որևէ կառավարության կամ իշխանության կողմից, բացի ԻԿԿ-ից: Նրանք պետք է խուսափեն ցանկացած գործողությունից, որը կարող է վնասակար լինել իրենց դիրքորոշմանը: Անդամ պետությունները նույնպես պետք է հաշվի առնեն այս

<sup>84</sup> Նույն տեղում:

հանգամանքները և չպետք է որևէ ծևով ազդեն այդ գործընթացների վրա իրենց պարտականությունները կատարելիս:

Գլխավոր քարտուղարությունը պետք է ապահովի կապը անդամ պետությունների հետ և նպաստի ընդհանուր կարևորություն ներկայացնող խորհրդակցությունների անցկացմանը, կարծիքների փոխանակմանը և տեղեկատվության տարածմանը:

Գլխավոր քարտուղարությունը պետք է հետևի խալամական պետությունների հանդիպումների ընթացքում ընդունված որոշումների և հանձնարարականների իրագործմանը և այդ մասին գեկուցի հԿԿ բարձր մակարդակի հանդիպումներում: Բացի այդ գլխավոր քարտուղարությունը անդամ պետություններին պետք է ապահովի աշխատանքային փաստաթղթերով՝ ներառյալ հԿԿ որոշումներն ու հանձնարարականները:

Գլխավոր քարտուղարությունը պետք է նախապատրաստի կոնֆերանսների վարչական և կազմակերպչական հարցերը՝ սերտորեն համագործակցելով հյուրընկալող երկրի հետ (հոդված 6)<sup>85</sup>: Գլխավոր քարտուղարությունն իրականացնում է կանոնադրությամբ նախատեսված բոլոր դրույթներն ու կանոնները:

Դամաձայն կանոնադրության՝ գլխավոր քարտուղարն ընտրվում է երկու տարի ժամկետով և կարող է վերընտրվել ևս երկու տարով, որը պետք է հաստատվի արտաքին գործերի նախարարների կոնֆերանսում: Սակայն 1991-ին Դաքարի գագաթնաժողովում որոշվել է, որ գլխավոր քարտուղարը կարող է ընտրվել մեկ անգամ՝ չորս տարի ժամկետով: Գլխավոր քարտուղարի օգնականները ևս ընտրվում են չորս տարի ժամկետով:

<sup>85</sup> Նույն տեղում, էջ 59:

Գլխավոր քարտուղարի օգնականների թիվը չորսն է՝ 1.գլխավոր քարտուղարի օգնական քաղաքական հարցերով, 2.գլխավոր քարտուղարի օգնական Երուսաղեմի, Պաղեստինի և Խալանական փոքրանասնությունների հարցերով, 3.գլխավոր քարտուղարի օգնական մշակույթի, սոցիալական և Խալանական համերաշխության հիմնադրամի հարցերով, 4.գլխավոր քարտուղարի օգնական տնտեսական, վարչական և ֆինանսական հարցերով<sup>86</sup>:

Գլխավոր քարտուղարությունը, որտեղ աշխատում են շուրջ 200 աշխատակիցներ, ունի վարչություններ, բաժիններ ու ենթաբաժիններ: Քարտուղարությունը գործում է ներքին կանոնադրության դրույթների համաձայն, որը վավերացվել է 1980թ. խալանական պետությունների արտաքին գործերի նախարարների Կուալա-Լումպուրի հանդիպմանը ընթացքում:

Ինչպես արդեն նշեցինք, Խալանական կոնֆերանս կազմակերպության առաջին գլխավոր քարտուղարը եղել է Սալայդիայի ներկայացուցիչ թանքու Արդ առ-Ռահման Բուտրա ալ-Ջաջը, որը պաշտոնավարել է 1970-1973թթ.: Որպես ԻԿԿ գլխավոր քարտուղար՝ պաշտոնավարել են նաև Եգիպտոսի (Հասան ար-Թուհամի, 1974-1975), Սենեգալի (Ամադո Քարիմ Գայե, 1975-1979), Թունիսի (Հարիք Շատտի, 1979-1984), Պակիստանի (Սեյիդ Շարիֆ Ուղդին Փիրզադա, 1985-1988), Նիգերի (Համիդ ալ-Ղարիք, 1989-1996), Մարոկկոյի (Ազ ադ-Ղին ալ-Էռակի, 1997-2001) ներկայացուցիչները: ԻԿԿ ներկայիս գլխավոր քարտուղարը Արդ ալ-Ռահիմ Բելբազիզն է՝ Մարոկկոյից, սկսել է պաշտոնավարել 2001-ից:

<sup>86</sup> The Oxford Encyclopedia of the Modern Islamic world. V. 2, Oxford, 1995, John L. Esposito-Editors in Chief, p. 263.

Իսլամական կոնֆերանս կազմակերպության կանոնադրությամբ ստեղծվել է Ֆինանսական մշտական հանձնաժողովը, որը ծևավորվում է անդամ պետությունների լիազորած ներկայացուցիչներից: Հանձնաժողովը գլխավոր քարտուղարի հետ համատեղ նախապատրաստում և վերահսկում է գլխավոր քարտուղարության բյուջեն այն իրահանգների համաձայն, որոնք ընդունվում են արտաքին գործերի նախարարների հանդիպման ընթացքում (հոդված 7):<sup>87</sup>

Իսլամական կոնֆերանս կազմակերպության անձեռնմխելիության և առանձնաշնորհներին վերաբերող հիմնական դրույթների մասին հիշատակված է ինչպես ԻԿԿ կանոնադրության<sup>88</sup>, այնպես էլ հատուկ համաձայնագրում, որն ընդունվել է 1976-ին Ստամբուլում իսլամական պետությունների արտաքին գործերի նախարարների հանդիպման ընթացքում, համաձայն որի՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը իրավաբանական անձ է: Կազմակերպությունն իր գործառույթները կատարելու և նպատակներն իրագործելու համար անդամ պետություններում իրավունք ունի օգտվելու համապատասխան իրավունակություններից, արտոնություններից և անձեռնմխելիություններից:<sup>89</sup>

Իսլամական կոնֆերանս կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված է նաև կազմակերպությանը անդամակցելու սկզբունքը: ԻԿԿ-ին անդամակցելու կարգը անդամ պետությունների շրջանում լուրջ քննարկումների առարկա է դարձել: ԻԿԿ հիմնական փաստաթղթում նշված չէ, թե ինչ պայմաններ են հարկավոր կազմակերպությանն ան-

<sup>87</sup> Կազմակերպության վարչական բյուջեն մոտավորապես 10 մլն ԱՄՆ դոլար է: Սառույյան Արարիան նույնական է բյուջեի 10%-ը: Իսլամական կոնֆերանսում հանգույցային պաշտոնները գրադեմոնում են հիմնականում Սառույյան Արարիայի քաղաքացիները:

<sup>88</sup> Անձեռնմխելիության և առանձնաշնորհների մասին հոդվածը ԻԿԿ կանոնադրության մեջ ավելացվել է հետագայում:

<sup>89</sup> H. Ջանոս, նշվ. աշխ. մեջ, էջ 43:

դամակցելու համար՝ չհաշված իսլամական պետության պարագան: Սակայն հստակ չէ, թե որն է իսլամական պետության չափանիշը:

Մարոկկացի իրավաբան Մուհամմեդ Ահմադ ալ-Մուրշիդի կարծիքով՝ ԻԿԿ անդամ կարող է դառնալ ցանկացած պետություն, որտեղ մահմեդականները բնակչության ոչ պակաս 50%-ն են<sup>90</sup>: Սակայն ներկայումս իսլամական կոնֆերանս կազմակերպության անդամ պետություններից մի քանիսում մահմեդական բնակչությունը նույնիսկ փոքրամասնություն է՝ Ուգանդա (6%), Գաբոն (7,7%), Մալավի (10%), Կամերուն (20-25%) և այլն:

Միևնույն ժամանակ ԻԿԿ անդամ պետություններից շատերն՝ իրենց սահմանադրության համաձայն, աշխարհիկ են, սակայն անդամակցում են կրոնա-քաղաքական բնույթ ունեցող կազմակերպության<sup>91</sup>:

ԻԿԿ կանոնադրության անդամակցությանը վերաբերող հոդվածում նշված է, որ ցանկացած մահմեդական պետություն անդամակցության իրավունք ունի, եթե ներկայացնի կազմակերպության կանոնադրությունը ընդունելու ցանկության և պատրաստակամության մասին մի դիմում: Դիմումը պետք է ներկայացվի գլխավոր քարտուղարությանը, որը պետք է քննարկվի և հաստատվի արտաքին գործերի նախարարանների հանդիպման ընթացքում (հոդված 8):

ԻԿԿ պաշտոնական փաստաթղթում նշված է, որ կազմակերպությանը կարող են անդամակցել այն պետությունները, որոնք մասնակցել են

<sup>90</sup> Επικινդ Յօστոկ և մեջլիպարօպոս որած, Մ., 1992, ս. 170. Մուհամմեդ Ահմադ ալ-Մուրշիդը 1984թ. Ռաբաթում արաբերենով իրատարակել է «Խալամական կոնֆերանս կազմակերպություն» նենագրությունը:

<sup>91</sup> Այս հանգանանքը բոլով է տալիս մեկ անգամ ևս հաստատել գոյություն ունեցող այն տեսակետը, որ ԻԿԿ անդամ պետություններից շատերը միջազգային իսլամական կազմակերպությանն անդամակցում են որոշակի սկզբունքներից ենթելով: Տնտեսապես բոլով երկները ֆինանսական գզայի աջակցություն են ստանում, իսկ առանձին պետություններ կազմակերպության քաղաքական հովանավորությունն են ակնկալում:

Ուստարի (1969թ.) գագաթնաժողովին, Կարաչիի (1970թ.) և Զիդոյայի (1972թ.) արտգործնախարարների հանդիպումներին, ինչպես նաև՝ բոլոր այն պետությունները, որոնք կընդունեն ԻԿԿ կանոնադրությունը (հոդված 8):

Սակայն այս փաստը չի նշանակում, որ ԻԿԿ-ին կարող են անդամակցել ոչ պետական, թեկուզ իսլամական կառույցները: Բացառություն արվել է միայն Պաղեստինի ազատագրության կազմակերպությանը 1974-ին:

Կանոնադրությունը թույլ է տալիս ցանկացած անդամ պետության հրաժարվել կազմակերպության անդամակցությունից՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով գլխավոր քարտուղարին, որին պետք է իրագեկ դառնան նաև անդամ բոլոր երկրները:

Կազմակերպությունից դուրս եկող պետությունը պետք է իրականացնի իր պարտավորությունները մինչև ֆինանսական տարվա ավարտը, կատարի անդամավճարը, որից հետո այդ երկրի դիմումը կընդունվի (հոդված 10):

Կազմակերպության իիմնադրումից սկսած՝ անդամ երկրների թիվը զգալիորեն աճել է: 1970-ականներին ԻԿԿ-ին անդամակցում էին ընդամենը երեք տասնյակ պետություններ: Ներկայումս ԻԿԿ-ին անդամակցում են՝ Սաուդյան Արաբիան 1969-ից, Հորդանանը 1969-ից, Աֆղանստանը 1969-ից, Թունիսը 1969-ից, Սենեգալը 1969-ից, Սուդանը 1969-ից, Գվինեան 1969-ից, Թուրքիան 1969-ից, Ջուվեյրը 1969-ից, Լիբանանը 1969-ից, Բանգլադեշը 1969-ից, Լիբիան 1969-ից, Պաղեստինը 1969-ից, Իրանը 1969-ից, Չաղը 1969-ից, Պակիստանը 1969-ից, Սալին 1969-ից, Սոմալին 1969-ից, Մալայզիան 1969-ից, Սալաջիան 1969-ից, Եգիպտոսը 1969-ից, Մառոկոն 1969-ից, Սավորիտանիան 1969-ից, Նիգերը 1969-ից, Ալժիրը

1969-ից, Եմենը 1969-ից, Ինդոնեզիան 1969-ից, Կատարը 1972-ից, Օմանը 1972-ից, Սիրիան 1972-ից, Արաբական Միացյալ Ենիրությունները 1972-ից, Բահրեյնը 1972-ից, Բուրկինա Ֆասոն 1974-ից, Կամերունը 1974-ից, Ուգանդան 1974-ից, Գվինեա-Բիսասուն 1974-ից, Գարոնը 1974-ից, Գամբիան 1974-ից, Իրաքը 1975-ից, Կոմորոսը 1976-ից, Մալդիվները 1976-ից, Զիբրուտին 1978-ից, Բենինը 1983-ից, Բրունեյ Դարուսսալամը 1984-ից, Նիգերիան 1986-ից, Աղրեջանը 1992-ից, Ալբանիան 1992-ից, Տաջիկիստանը 1992-ից, Թուրքմենստանը 1992-ից, Ղրղզստանը 1992-ից, Մոզամբիկը 1994-ից, Ղազախստանը 1995-ից, Ուզբեկստանը 1996-ից, Սուրինամը 1996-ից, Տոգոն 1997-ից, Գայանան 1998-ից:

Հարկ է փաստել, որ կազմակերպությանը՝ բացի անդամ պետություններից բույլատրվում է նաև դիտորդների մասնակցություն: Նման կարգավիճակ ստացել են Մակեդոնիայի, Բոսնիայի և Հերցեգովինայի, ինչպես նաև՝ Կենտրոնական Աֆրիկայի, Կոտ Դ'Իվուարի Հանրապետություններն ու Թաիլանդի Թագավորությունը:

ԻԿԿ որոշ անդամներ մինչև կազմակերպությանն անդամակցելը դիտորդի կարգավիճակ են ունեցել, ինչպես օրինակ՝ Նիգերիան, ՊԱԿ-ը և այլն: Դիտորդի կարգավիճակ ունեն նաև առանձին մահմեդական հանայնքներ՝ Կիպրոսի թուրքական, Ֆիլիպինների Մորո մահմեդական հանայնքները: Նշենք, որ Կիպրոսի թուրքական հանայնքը հավակնում է դառնալ ԻԿԿ լիարժեք անդամ:

Որպես կանոն՝ ԻԿԿ աշխատանքներին մասնակցում են նաև միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններ, ինչպես օրինակ՝ ՄԱԿ-ը, Արաբական պետությունների լիգան, Զնիացող երկրների շար-

ժումը, Աֆրիկյան միասնության կազմակերպությունը, Տնտեսական համագործակցության կազմակերպությունը և այլն:

Խսլամական կոնֆերանս կազմակերպության աշխատանքների մեջ ներգրավված են նաև միջազգային խսլամական հաստատություններ, ինչպես օրինակ՝ Խսլամական աշխարհի լիգան, Համաշխարհային խսլամական կոնգրեսը, Խսլամական Երիտասարդների միջազգային ասամբլեան, Խսլամական համալսարանների լիգան, Միջազգային խսլամական բարեգործական ֆոնդը, Եվրոպայի խսլամական խորհուրդը և այլն:

Կարելի է ասել, որ նման կազմակերպությունները ո'չ անդամի և ո'չ էլ դիտորդի կարգավիճակ ունեն: Նրանք ներկայանում են ԻԿԿ հրավերի դեպքում: Անեն տարի միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների մասնակիցների թիվը ավելանում է:

Վերադառնալով ԻԿԿ կանոնադրությանը՝ նշենք, որ այն բույլ է տալիս ուղղումներ կատարել կանոնադրության տեքստի մեջ, եթե հավանության արժանանա և վավերացվի անդամ պետությունների 2/3-ի կողմից (հոդված 11):

Ցանկացած վիճաբանություն, որը կարող է առաջանալ կանոնադրության որևէ հոդվածի մեկնաբանման և իրագործման դեպքում, պետք է կարգավորվի խաղաղ ծանապարհով, բացառապես՝ խորհրդակցությունների, բանակցությունների և հաշտեցման միջոցով (հոդված 12):

Խսլամական կոնֆերանս կազմակերպության պաշտոնական լեզուներն են արաբերենը, անգլերենը և ֆրանսերենը (հոդված 13):

ԻԿԿ պաշտոնական փաստաթղթերում հիշատակվում է նաև արդարության միջազգային խսլամական դատարանը, որի նախին կանոնադրության միջազգային խսլամական դատարանը, որի մասին կանոնադրությունը կազմակերպությունը պահպանում է առաջարկությունը և այլն:

րության մեջ հիշատակում չկա: Այն կազմակերպության դատական մարմինն է:

Դատարանի ստեղծման որոշումն ընդունվել է 1981թ. Մեքքայի գագաթնաժողովում, ուր հանձնարարվել է անդամ պետությունների մասնագետներին՝ մշակել արդարության միջազգային իսլամական դատարանի կանոնադրությունը, իսկ գլխավոր քարտուղարությանը՝ համակարգել այդ աշխատանքները:

Մեքքայի գագաթնաժողովում ունեցած ելույթում Բուվեյթի էնիր շեյխ Զաբեր ալ-Ահմադ աս-Սարահը, խոսելով մահմեդական աշխարհում իսլամական օրենսդրությանն ուղղված միտումների մասին, արդարության միջազգային իսլամական դատարանի ստեղծումը հաճարեց «կարևոր քայլ դեպի միասնության մեր փայփայած երազանքը»<sup>92</sup>:

Դատարանը իրավասու է քննարկելու այն բոլոր խնդիրները, որոնք կարող են առաջանալ անդամ պետությունների միջև: Այն կարող է լուծել ԻԿԿ կանոնադրության մեկնաբանությունների ընթացքում առաջ եկած տարակարծությունները: Գագաթնաժողովի, արտաքին գործերի նախարարների կոնֆերանսի կամ ԻԿԿ որևէ մարմնի կողմից համապատասխան հայցի ներկայացնան դեպքում դատարանը իրավասու է իրավական խորհուրդներ տալ<sup>93</sup>:

Դատարանը կազմված է յոթ անդամներից, որոնց նշանակում է իսլամական պետությունների արտաքին գործերի նախարարների կոնֆերանսը անդամ պետությունների կողմից առաջադրված թեկնածուների հիման վրա: Դատարանը պետք է ունենա անկախ բյուջե, որի ծախսերը պետք է հոգան անդամ պետությունները:

<sup>92</sup> His Highness the Amir of Kuwait's Speech, The Islamic Summit Conference, մշվ. ժողովածուի մեջ, էջ 36:

<sup>93</sup> The Middle East and North Africa 1983-1984, London, 1984, p. 305.

Դատարանի պաշտոնական լեզուներն են արաբերենը, անգլերենը և ֆրանսերենը: Նստավայրը Քուվեյթում է:

Դարկ է փաստել, որ Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը բնականոն զարգացման ընթացքի մեջ է: Այդ է վկայում այն փաստը, որ 1999թ. ԻԿԿ շրջանակներում ստեղծվեց ևս մի կառույց՝ իսլամական պառլամենտների կազմակերպությունը (ԻՊԿ), որն առաջնորդվելու է իսլամական շոուրայի սկզբունքով<sup>94</sup>:

Շոուրայի նախին հիշատակված է 1981թ. Մեքքայի գագաթնաժողովի հոչակագրում. «Մենք վերահաստատում ենք մեր ցանկությունը մահմեդականների մեջ ամրապնդելու շոուրայի պրակտիկան, կարգավորելու այս սկզբունքը կյանքի բոլոր ուղիներում, որպեսզի լավ արարքները աջակցություն գտնեն, իսկ վատերը արմատախիլ արվեն»<sup>95</sup>:

Իսլամական պառլամենտների կազմակերպության հիմնադիր համագումարը տեղի ունեցավ 1999թ. հունիսի 17-ին Թեհրանում<sup>96</sup>: Դասդիպանն ունեցած իր ելույթում Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Սոհամեն Խարամին նշեց, որ Իսլամական կոնֆերանս կազմակերպության և Իսլամական պառլամենտների կազմակերպության միջև համագործակցությունը խիստ հեռանկարային է և կնպաստի գործադիր քաղաքականության իրականացմանը: Այն կօգտագործի իսլամական ումմայի հնարավորությունները՝ բարելավելու իսլամական աշխարհի քաղաքական, տնտեսական, մշակութային իրավիճակը, կերա2-

<sup>94</sup> Իսլամում շոուրան խորհրդակցության սկզբունքն է: Իսլամական գերազում խորհրդական նարկմին նաշխանից մասին աշ-շոուրայի, գործունեության հիմքում ընկած է շոուրայի սկզբունքը, որն ամրագրված է Ղուրանով (42:36):

<sup>95</sup> The Islamic Summit Conference, նշվ. ժողովածովի մեջ, էջ 51:  
1999թ. Իրանը ԻԿԿ նախագահող երկրին էր:

խավորի մահմեդականների բարգավաճումը, բարեկեցությունը, գերակայող ազդեցությունը<sup>97</sup>:

ԻԿԿ գլխավոր քարտուղար Ազ աղ-Դին Լարաքին իր ելույթում նման կազմակերպության ստեղծումը մեծ նշանակություն ունեցող իրադարձություն համարեց, որ կոչված է ամրապնդելու խւաճական համերաշխությունը և պաշտպանելու խւաճական պետությունների առանցքային շահերը<sup>98</sup>:

Կազմակերպության բարձրագույն մարմիններն են ԻԿԿ անդամ պետությունների պաօլամենտների խոսնակների գագաթնաժողովը, որ պետք է հրավիրվի երկու տարին մեկ անգամ, խորհուրդը, գործադիր կոմիտեն և քարտուղարությունը, որի նստավայր գրասենյակը Թեհրանում է<sup>99</sup>:

Ինչպես նշված է կանոնադրության մեջ, ԻՊԿ-ն հարգում է ԻԿԿ հիմնական սկզբունքներն ու նպատակները, որոնցից են խւաճական համերաշխության և համագործակցության ամրապնդումը: ԻՊԿ-ն հարգում է անդամ պետությունների ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը, իսկ հակամարտությունների կարգավորումը պատկերացնում է խաղաղ ճանապարհով: ԻՊԿ հիմնական նպատակներից է անդամ պետությունների միջև միջխորհրդարանական փորձի փոխանակումը, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկումը<sup>100</sup>:

<sup>97</sup> Report of the Founding Conference of the Parliamentary Union of the OIC Members, Tehran, 15-17 June, 1999, p. 3.

<sup>98</sup> Նույն տեղում:

<sup>99</sup> Draft Statute of the Islamic Conference Parliamentary Union, Tehran, 17 June, 1999, p. 1-3.

<sup>100</sup> А. Панахи, Новые тенденции в межисламских отношениях. В кн.: Вопросы арабистики, в. 3, Ер., 2000, с. 38.

Առաջնորդվելով «իսլամի ազնիվ սկզբունքներով»՝ ԻՊԿ-ն համագործակցելու է ինչպես խորհրդարանական, այնպես էլ կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների հետ՝ պաշտպանելու մարդու իրավունքներն ու իսլամական արժեքները:

\*\*\*

Իսլամական կոնֆերանս կազմակերպության կառուցվածքի մասին խոսելիս անհրաժեշտ է անդրադասնալ նաև նրա շրջանակներում գործող հաստատություններին, որոնք ստորադասվում են հետևյալ հիմնական խմբերի՝ *հատուկ հանձնաժողովներ, օժանդակ մարմիններ, մասնագիտացված մարմիններ, առընթեր հաստատություններ:*

Դարձ է նշել, որ հաստատությունների հիմնական նպատակն է՝ կյանքի կոչել Իսլամական կոնֆերանս կազմակերպության՝ տարբեր բնագավառներում ընդունած որոշումները: Առանց նման հաստատությունների՝ իսլամական բարձրագույն քաղաքական մարմնին հազիվ թե հաջողվեր համագործակցություն ձևավորել անդամ պետությունների միջև, իրականացնել իր իսկ որդեգրած սկզբունքները:

ԻԿԿ հաստատությունները տեղակայված են անդամ պետություններում, մասնավորապես՝ Սաուդյան Արաբիայում, Մարոկկոյում, Թուրքիայում, Պակիստանում, Բանգլադեշում, Լիբիայում: Սակայն նրանց ճնշող մեծամասնությունը գործում է Սաուդյան Արաբիայում, որը ներդնում է կազմակերպության հիմնական ֆինանսական միջոցները: ԻԿԿ հաստատությունները գոյատևում են անդամ պետությունների ներդրումների հաշվին:

Իսլամական կոնֆերանս կազմակերպության *հատուկ հանձնաժողովներն են՝ ալ-Կուրսի հածնաժողովը, Տեղեկատվության և մշակութա-*

յին հարցերի մշտական հանձնաժողովը (COMIACH), Տնտեսական և առևտրական համագործակցության մշտական հանձնաժողովը (COMCEC), Գիտական և տեխնոլոգիական համագործակցության մշտական հանձնաժողովը (COMSTECH), Խսլամական խաղաղության հանձնաժողովը, Տնտեսական, մշակութային և սոցիալական հարցերի խսլամական հանձնաժողովը, Մշտական ֆինանսական հանձնաժողովը, Ֆինանսական վերահսկողության մարմինը, Սահելի ժողովրդի հետ խւանական համերաշխության հանձնաժողովը և այլն<sup>101</sup>: Դատուկ հանձնաժողովները կարող են լուծարվել, երբ ավարտեն և կարգավորեն իրենց առջև դրված խնդիրները:

Խսլամական կոնֆերանս կազմակերպության օժանդակ մարմիններն են՝ Վիճակագրական, տնտեսական, սոցիալական հետազոտությունների և խսլամական երկրների համար կադրերի պատրաստման կենտրոնը (SESRTCIC), Տեխնոլոգիայի խսլամական ինստիտուտը (IIT), Առևտրի զարգացման խսլամական կենտրոնը (ICDT), Գիտության, տեխնոլոգիայի և զարգացման խսլամական հիմնադրամը (IFSTAD), Խսլամական իրավագիտության ակադեմիան, Խսլամական համերաշխության հիմնադրամի գործադիր վարչությունը և նրա վակֆերը<sup>102</sup>, Երուսաղեմի հիմնադրամը և նրա վակֆերը, Խսլամական պատմության, արվեստի և մշակույթի հետազոտական կենտրոնը (IRCICA), Խսլամական ժառանգության պահպանության միջազգային հանձնաժողովը (ICPICH), Նիգերի խսլամական համալսարանը, Ուգանդայի խսլամական համալսարա-

<sup>101</sup> IRCICA Newsletter, No. 37, Istanbul, 1995, p. 23.

<sup>102</sup> Վակֆը մահմեդական համայնքին, պետությանը կամ որևէ անհատին պատկանող ունեցվածք է: Վակֆը կարող է օգտագործվել կրոնական կամ բարեգործական նպատակների համար: Վակֆ կարող են լինել դպրոցը, մզկիթը, հողը, անշարժ գույքը և այլն:

նը, Մալայզիայի խամական համալսարանը, Բանգլադেշի խամական համալսարանը<sup>103</sup>:

ԻԿԿ մասմագիտացված մարմիններն են՝ Խամական զարգացման բանկը (IDB), Կրթության, գիտության և մշակույթի խամական կազմակերպությունը (ISESCO), Միջազգային խամական նորությունների գործակալությունը (IINA), Խամական պետությունների ռայուղիադրությունների կազմակերպությունը (ISBO)<sup>104</sup>:

Խամական կոնֆերանս կազմակերպության առջնօրեր հաստատություններն են՝ Առևտորի և արդյունաբերության խամական պալատը, Խամական մայրաքաղաքների և քաղաքների կազմակերպությունը, Խամական համերաշխության խաղերի սպորտային ֆեդերացիան, Միջազգային մահիկի խամական հանճնախումբը, Խամական նավատերերի ընկերությունը, Արաբա-մահմեդական միջազգային դպրոցների աշխարհի ֆեդերացիան, Խամական բանկերի միջազգային ընկերությունը<sup>105</sup>:

Ստորև հարկ ենք համարում ավելի հանգամանորեն լուսաբանել վերոնշյալ հաստատություններից մի քանիսի գործունեությունը, որը, կարծում ենք, հնարավորություն կտա հստակ պատկերացում կազմել խամական ռազմավարության առանձին խնդիրների և այդ հաստատությունների շնորհիվ խամական պետությունների միջև ստեղծված համագործակցության մասին:

Առանձնացնենք Խամական կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը: Այն իր նշանակությամբ խիստ կարևոր մարմին է և զգալի ներդրում ունի անդամ երկրների միջև կրթության, գիտության

<sup>102</sup> IRCICA Newsletter, նույն տեղում:

<sup>103</sup> Նույն տեղում:

թնագավառում փորձի փոխանակման, իսլամական մշակույթի, գիտության զարգացման, հրատարակչական գործի կազմակերպման մեջ: Կազմակերպության նպատակն է իսլամական արժեքների շրջանակներում աջակցել կրթության, գիտության և մշակույթի զարգացմանը, նպաստել ողջ աշխարհի մահմեդականների համախմբմանը և համագործակցությանը, հատկապես՝ կրթության, գիտության, մշակույթի ոլորտում: Կարևորվում է նճանօրինակ նպատակներ հետապնդող ԻԿԿ այլ կառույցների հետ համագործակցությունը, որ կարող է նպաստել իսլամական համերաշխության ամրապնդմանը, կրթության և գիտության զարգացմանը: Կառույցի կարևոր խնդիրներից է իսլամական մշակույթը օտար ազդեցություններից գերծ պահելուն միտված աշխատանքների իրականացումը, ոչ իսլամական երկրներում մահմեդական փոքրամասնությունների իսլամական ինքնագիտակցության պահպանումը և այլն: Այս ծրագրերն իրականացնելու համար կազմակերպությունը պարտավորվում է իսլամական այլ կազմակերպությունների հետ համատեղ նպաստել իսլամական մշակույթի, Ղուրանի լեզվի ուսուցմանը և տարածմանը, աջակցել իսլամագիտական և արաբագիտական ուղղվածությամբ հաճալսարաններին, կրթօջախներին և այլ ուսումնական կենտրոններին դասագրքերի, գրականության, մեթոդաբանական հարցերում, օգնել անդամ պետություններում կրթական, գիտական ծրագրերի իրականացմանը:

Կարևորվում է անհատ հետազոտողների, կազմակերպությունների, կենտրոնների խրախուսումը, աջակցությունը իսլամական երկրներին և իսլամական փոքրամասնություններին՝ հիմնելու իսլամագիտական հետազոտության ամբիոններ և բաժանմունքներ, մշակույթի, արվեստի և քաղաքակրթության առաջընթացը իրականացնել իսլամական մտածո-

դուրյունից և արժեքներից չօտարվելով, իսլամական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում իսլամական համագործակցության նպատակով կազմակերպել սեմինարներ, գիտական կոնֆերանսներ, քննարկումներ և այլն: Նմանատիպ միջոցառումները նպատակ ունեն ամրապնդելու համագործակցությունը անդամ պետությունների միջև կրթության, մշակույթի, գիտության հետազոտության բնագավառում, նպաստել, որպեսզի իսլամական մշակույթը դառնա կրթական ուսումնական ծրագրերի առանցքը բոլոր մակարդակներում, աջակցել մարդկային քաղաքակրթության մեջ մեծ ներդրում ունեցող իսլամական մշակույթի հետագա զարգացմանը և պաշտպանել ու իսլամական մտքի անկախությունը մշակութային այլևայլ ազդեցություններից և աղճատումներից<sup>106</sup>: Իսլամական կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունն ունի իր պարբերական հրատարակությունները<sup>107</sup>:

Կարևոր առաքելություն ունի նաև հայամական պատմության, արվեստի և մշակույթի հետազոտական կենտրոնը, որ հիմնվել է 1976թ. իսլամական պետությունների արտաքին գործերի նախարարների VII կոնֆերանսի որոշմամբ, սակայն սկսել է գործել միայն 1980-ից: Նստավայրը Ստամբուլում է:

Կենտրոնի նպատակն է աջակցել իսլամական մշակույթի, պատմության և արվեստի ուսումնասիրությանն ու զարգացմանը: Նրա նախաձեռնությամբ կազմակերպվում են սիմպոզիումներ, սեմինարներ, կոնֆերանսներ, դասախոսություններ, գրքերի և արվեստի գործերի ցուցահանդեսներ, համերգներ, որին մասնակցում են ԻԿԿ անդամ պետությունների գիտնականներ, մշակույթի գործիչներ, հետազոտողներ:

<sup>106</sup> ISESCO <http://www.isesco.org.ma>

دلیل الدوریات الصادره في أندول الأعضا. في منظمة المؤتمر الإسلامي. الرباط، ١٩٩١.

<sup>107</sup>

Կենտրոնը նպաստավոր պայմաններ է ստեղծում իսլամական պետությունների միջև համագործակցության կազմակերպման համար, հրատարակում են իսլամական մշակույթին և քաղաքակրթությանը նվիրված գրքեր, մատենաշարեր, ժողովածուներ, պարբերականներ, նաև՝ տեղեկագրեր, բույսություններ, քարտեզներ և այլն:

Զգալի աշխատանք է տարվում իսլամական մշակույթի մասնագիտացված գրադարաններ հիմնելու, այս բնագավառում արված աշխատանքներն ի մի բերելու, հետազոտական ծրագրեր մշակելու, իսլամական արվեստի, գիտության բնագավառում արված հետազոտություններ կանոնակարգելու ուղղությամբ:

Կենտրոնն ունի չորս հիմնական բաժիններ՝ հետազոտությունների և հրատարակությունների, մատենագիտության և ծեռագրերի, գրադարանների և արխիվների, վարչական և ֆինանսական: Միայն 1986-1995թթ. հրատարակվել են նի քանի տասնյակից ավելի գրքեր, կազմակերպվել երկու տասնյակից ավել միջազգային սիմպոզիումներ, սեմինարներ, դասախոսություններ, 90-ից ավել ցուցահանդեսներ, որը նույն ընթացքով իրականացվել է նաև 1995-2000թթ.:

Կենտրոնը համագործակցում է միջազգային և տարածաշրջանային տարրեր կազմակերպությունների հետ: Առանձնապես ուշադրության է արժանի 1996թ. հունիսի 8-ին ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակութային կազմակերպության Յունեսկոյի, և կենտրոնի միջև ստորագրված հուշագիրը, որ նպաստակ ունի կազմակերպությունների միջև հաստատել համագործակցություն համատեղ հետաքրքրություն ներկայացնող բնագավառներում<sup>108</sup>:

<sup>108</sup> Activity of IRCICA 1980-1999, IRCICA Newsletter, No. 37, Istanbul, 1995, pp. 25-53.

Բարեգործական մեծածավալ աշխատանք է ծավալվում 1974-ին հիմնադրված Խալամական համերաշխության հիմնադրամի կողմից, որի նպատակն է՝ դրամական միջոցներ հայթայթել՝ խալամական համայնքի կարիքների, խալամական խնդիրների և խալամական մշակութի, արժեքների և համալսարանների ամրապնդումն ապահովելու համար: Հիմնադրամի դրամական միջոցները լայնորեն օգտագործվել են մեկենասության և օժանդակության համար: Այս հիմնադրամի օգնությանը են ստեղծվել Մալայզիայի, Նիգերի, Ուգանդայի և Բանգլադեշի խալամական համալսարանները: Այն օժանդակել է խալամի վերաբերյալ հրատարակություններին ինչպես մահմեդական, այնպես էլ՝ Եվրոպական երկրներում<sup>109</sup>:

Դամախամական հետաքրքրություն ներկայացնող հարցերը, խալամական համերաշխության քաղաքական, տնտեսական և սոցիալական հիմքերը լուսաբանելու և խալամական քարոզչություն իրականացնելու հարցում մեծ տեղ է հատկացրել տեղեկատվությանը<sup>110</sup>: Այդ նպատակով 1975-ից գործում է Խալամական երկրների ռադիոհաղորդումների գործակալությունը: Դաղորդումների մի զգակի մաս նվիրված է խալամին, խալամական աստվածաբանությանը, իրավագիտությանը, Պաղեստինին և խալամական աշխարհին հուգող այլ հիմնահարցերի լուսաբանմանը: ԻԿԿ-Ը մեծ աշխատանք է տանում խալամը քարոզելու և արժեվորելու ուղղությամբ:

Նմանօրինակ նպատակներ է հետապնդում նաև Միջազգային խալամական նորությունների գործակալությունը, որի ստեղծման մասին որո-

<sup>109</sup> The Oxford Encyclopedia of the Modern Islamic world, v. 2, Oxford 1995. John L. Esposito-Editors in Chief, pp. 263, 265.

<sup>110</sup> Այս մասին մանրամասն տես' Ժլանով Հ., Исламская концепция мироустройства, М., 1991, с. 149-169.

շումը հաստատվել է 1972-ին իսլամական պետությունների արտաքին գործերի նախարարների III հանդիպմանը, որի ընթացքում ընդունվել է նաև կազմակերպության կանոնադրությունը: Այս փաստը ցույց է տալիս, որ նորաստեղծ իսլամական բարձրագույն քաղաքական մարմինը մեծ տեղ է հատկացնում իսլամական քարոզչությանը՝ կարևորելով իսլամական տեղեկատվական միջոցների գոյությունը:

Նորությունների գործակալության հիմնական նպատակն է՝ զարգացնել և պահպանել իսլամական մշակույթը, ամրապնդել կապերը համայն աշխարհի մահմեդականների միջև, ստեղծել փոխհամաձայնության մքնողություն: Գործակալությունն ունի լուրերի և հաղորդումների ամենօրյա ծրագրեր արարերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով, որոնց խնդիրն է տեղեկություն հաղորդել իսլամական փոքրամասնությունների վիճակի, կրոնական, մարդասիրական և տարաբնույթ ծրագրերի մասին, ներկայացնել մահմեդականների վիճակի և իսլամական աշխարհում առկա կրոնական, սոցիալական և այլ հիմնահարցեր լուսաբանող հոգևոր գործիչների տեսակետները: Հաղորդումները հեռարձակվում են Կատարի նորությունների գործակալության միջոցով, որ հեռարձակվում է արաբական աշխարհի, Եվրոպայի և Ամերիկայի 700 ալիքներով՝ արաբերենով, անգլերենով, պորտուգալերենով: Ուշադրության են արժանի գործակալության կողմից հրատարկվող նորությունների տեղեկագրքերը, նաև՝ տարեգրքերը, որոնք հարուստ տեղեկատվություն են պարունակում իսլամական աշխարհի զարգացումների մասին և տարածվում են ամբողջ աշխարհով մեկ, ներառյալ՝ իսլամագիտական, տեղեկատվական, ուսումնական, մշակութային կենտրոնները: Նորությունների գործակալությունն աշխարհի տարրեր երկրներում ունի սեփական թղթակիցներ, որոնց գործումներության

նպատակներից մեկն է՝ քննարկել իսլամական համագործակցության ընթացքն ու հեռանկարը<sup>111</sup>:

Իսլամական համագործակցության մեջ ուրույն տեղ է զբաղեցնում մի կազմակերպություն, որի նպատակը ոչ թե տնտեսական կամ կրթական բնագավառներում համագործակցելն է, այլ՝ մահմեդական քաղաքների միջև բարեկամություն և համագործակցություն հաստատելը: Դա 1980թ. հիմնված Իսլամական մայրաքաղաքների և քաղաքների կազմակերպությունն է, որին անդամակցում են իսլամական պետությունների շուրջ 139 մայրաքաղաքներ ու քաղաքիվ մահմեդական քաղաքներ:

Կազմակերպության նպատակն է՝ եղբայրության և բարեկամության շուրջ համախմբել իսլամական մայրաքաղաքներն ու քաղաքները, պահպանել նրանց ինքնությունն ու պատմական ժառանգությունը, աջակցել մայրաքաղաքների ու քաղաքների սոցիալ-տնտեսական, մշակութային բարգավաճմանը, ծառայությունների ոլորտի, անվտանգության համակարգի բարելավմանը, ամրապնդել համագործակցությունը, իրականացնել ներդրումային ծրագրեր:

Յիշյալ նպատակներին հետամուտ լինելու համար կազմակերպվում են իսլամական մայրաքաղաքներին և քաղաքներին նվիրված գիտական կոնֆերանսներ, միջազգային ցուցահանդեսներ, իրատարակվում են ճարտարապետական հետազոտություններ, մայրաքաղաքների և քաղաքների մասին գրքեր, ամսագրեր, հովանավորվում են այս ուղղությամբ կատարվող ուսումնասիրությունները, կազմակերպվում փոխադարձ այցելություններ և այլն<sup>112</sup>:

<sup>111</sup> The International Islamic News Agency <http://www.islamicnews.org>

<sup>112</sup> The Organization of Islamic Capitals and Cities <http://www.oicc.org>

\*\*\*

Եղած փաստերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը օժտված է լայն իրավասություններով և միտված է գարգացնել և խորացնել իսլամական պետությունների միջև համագործակցությունը տարբեր բնագավառներում: Այդ ամենին նպաստում է այն հանգանանքը, որ կազմակերպությունն ունի կուռ կառուցվածք՝ գլխավոր նարմիններ, գործադիր իշխանություն, մի քանի տասնյակից ավել կից և օժանդակ կառույցներ, որոնք սփռված են աշխարհով մեկ և մեծապես նպաստում են անդամ պետությունների միջև համագործակցության գարգացմանը: Ստեղծված համակարգի շնորհիվ՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը կարողանում է գաղափարական-քարոզչական ակտիվ աշխատանք ծավալել՝ նպաստել իսլամի միջազգային դիրքերի ամրապնդմանը, իսլամական մշակույթի և ուսմունքի տարածնանը, իսլամական կրթական համակարգի գարգացմանը, իսլամական քարոզչությանը:

Իսլամական կոնֆերանս կազմակերպության քաղաքական մարմինները քննարկում են իսլամական աշխարհի իրադրությունը միջազգային քաղաքական գարգացումների համատեքստում: Բարձր մակարդակի հանդիպումները հնարավորություն են տալիս իսլամական աշխարհի դեկավարներին՝ պարբերականորեն քննարկել իսլամական աշխարհում ընթացող գործնքացները: Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը սահմանում է իսլամական պետությունների ինչպես ընդհանուր ռազմավարությունը, այնպես էլ դիրքորոշումը առանձին հարցերի վերաբերյալ:

ԳՐՈՒՆԵՐԿՐՈՐԴ

**ԽՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

1.Իսլամական կոնֆերանս կազմակերպության տնտեսական քաղաքականության բնորոշ առանձնահատկությունները

Դայտնի է, որ իսլամը ներառում է ուժմայի տնտեսական կենսակերպին վերաբերող դրույթներ: Դեռևս միջնադարում հենվելով Դուրանի և հաղիսների<sup>113</sup> վրա՝ իսլամական իրավագիտական դասական դպրոցների՝ մազհարեների, կողմից մշակվեց իսլամի սոցիալ-տնտեսական հայեցակարգը<sup>114</sup>:

XX դարում մահմեդական երկրների միջև իսլամական սկզբունքներով ամրագրված տնտեսական համագործակցություն<sup>115</sup> իրականացնե-

<sup>113</sup> Հաղիսները Մուհամմեդի և նրա համախոհների արարքների և արտահայտությունների պատմություններն են, որոնց գրված են հսնադի (աղբյուրագիտական շղրա) հիման վրա: Գոյուրյուն ունեն հաղիսների վեց հիմնական ժողովածուներ:

<sup>114</sup> Այս մասին տես' 1996, Ճ.Ճ. Իսլամական պատմությունները:

<sup>115</sup> Իսլամական տնտեսական հայեցակարգն ընդունում է ինչպես մասնավոր, այնպես էլ հասարակական սեփականությունը: Ըստ այդ հայեցակարգի՝ տնտեսական գործունեության հիմքում ընկած է ոչ թե կապիտալը, այլ աշխատանքը: Սեփականության շահազար կուտակումները քննադատածելի են, իսկ վաշխառությունը՝ մերժելի: Նյութական բարիքներ և հարստություն ստեղծելը արարացվում է միայն ազնիվ աշխատանքի ճանապարհով:

Լու գաղափարները գնալով ավելի իրատեսական դարձան: 1950-ական-ների վերջին և 1960-ականների սկզբին իսլամական համալսարանական շրջանակներում քննարկվում էր, թե արդյոք իսլամի տնտեսական սկզբունքները կարող են համապատասխանել տնտեսության մեջ կապիտալիզմի և սոցիալիզմի գործելակերպին:

Մահմեդական տեսաբանները իսլամական տնտեսական համակարգի գլխավոր դերը համարում էին սոցիալական արդարության վերականգնումը (որը կապահովի հավասար բաշխում), մարդկանց հոգևոր և նյութական կարիքների բավարարումը, արդյունաբերության առավելագույն ընդլայնումը, տնտեսական աճի ապահովումը, համընդիանուր աղքատության վերացումը<sup>116</sup>:

Եզիպտացի տեսաբան Արդ ալ-Ճամիդ ալ-Ղազալիի կարծիքով՝ ցանկացած տնտեսական համակարգի նպատակը պետք է լինի հասարակության հիմնական շերտերի նյութական վիճակի բարելավումը: «Իսլամական համակարգը,-գրում է նա,-եթե ծցգրիտ կառուցվի, մարդկանց կապահովի կենսական բարձր մակարդակ»<sup>117</sup>:

1970թ. մարտին Ճամաշխարհային իսլամական կոնֆերենցի ընդունած հուշագրում նշված էր, որ իսլամական պետությունների ճնշող մեծամասնությունը դեռևս չի հասել տնտեսական ինքնուրույնության, ուստի իսլամական երկրների արտաքին գործերի նախարարները պետք է լրջորեն գնահատեն նեղաղութացման սպառնալիքը իրենց պետությունների նկատմամբ: Հուշագրում առաջարկվում էր տնտե-

Այս մասին նե՞ն՝ Ա. Խոպովա, Օ современной мусульманской трактовке проблем собственности, капитала и труда. В кн.: Социально-политические представления в исламе, М., 1987, с. 81-98.

<sup>116</sup> Современная экономическая доктрина ислама, М., 1983, с. 8.

<sup>117</sup> Սեօթերումը Ա. Հակոբ, Դоктрина "исламской экономики" в изложении теологов Высшего совета по делам ислама. В кн.: Ислам: проблемы идеологии, права политики и экономики. М., 1985, с. 248.

սուրյան բնագավառում ստեղծել միջազետական համագործակցության կազմակերպություն: Բացի այդ քննարկման առարկա էին դարձել համընդիանուր իսլամական շուկայի, սեփական վայրուտային գոտիների և վերջապես, իսլամական տիպի բանկերի ստեղծման հնարավորությունները<sup>118</sup>: Սակայն Զիդայում 1970թ. մարտին իսլամական երկրների արտաքին գործերի նախարարների առաջին հանդիպման ընթացքում անդամ պետությունների միջև տարածայնությունների պատճառով ո՞չ տնտեսական և ո՞չ էլ քաղաքական բնագավառում որևէ լուրջ որոշում ընդունվեց:

Մինչև 1970-ական թվականները մահմեդական երկրների միջև տնտեսական համագործակցության կոչերը տարտամ բնույթ էին կրում և հեռու էին գործնական լինելուց: 1970-ականների առաջին կեսին առաջ եկան նպաստավոր պայմաններ, որպեսզի իսլամական երկրները կարողանան ընդլայնել և խորացնել ֆինանսատնտեսական և առևտրական կապերը:

1970-ականների սկզբին նավթային գների աճը հանգեցրեց համաշխարհային շուկայում նավթաարդյունահանող մահմեդական երկրների կապիտալի դերի մեծացմանը: 1978թ. արտերկրում Օպեկի անդամ երկրների ներդրումները կազմում էին 178 մլրդ դոլար, որի 90%-ը բաժին էր ընկույն Իրանին, Չուվեյթին, Արաբական Միացյալ Էմիրություններին, Սաուդյան Արաբիային:

Ֆինանսական արագընթաց և աննախադեպ հաջողությունները նպաստեցին, որ Ծոցի երկրները, մասնավորապես՝ Սաուդյան Արաբիան, համակարգեն իսլամական պետությունների միջև տնտեսական համագործակցության քաղաքականությունը: Ստեղծված հանգամանք-

<sup>118</sup> Խուն տեղում, էջ 32:

ները նպաստեցին, որ իսլամական համերաշխության շրջանակներում առաջ քաշված իսլամական տնտեսական համագործակացության և ին-տեգրացման կոչերը ավելի տեսանելի դառնան: Իսլամական երկրների տնտեսական համագործակցությունը կարող էր օգնել «Երրորդ աշխար-հի» երկրներին՝ «...պայքարել ներգաղութացման դեմ, հասնել տնտե-սական անկախության, հաղթահարել սոցիալ-տնտեսական հետամնա-ցությունը»<sup>119</sup>:

Ակներև է, որ տնտեսական գործունեությունը Իսլամական կոնֆե-րանս կազմակերպության ամենակարևոր ուղղություններից մեկն է, որն ամրագրված է կազմակերպության կանոնադրությամբ:

Տնտեսական համագործակցությանն ուղղված առաջին համակարգ-ված մոտեցումը Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը իրակա-նացրեց 1974թ. Լահորի գագարնաժողովում, որի՝ գարգացման և մի-ջազգային տնտեսական հարաբերությունների վերաբերյալ ընդունած քանաձնում նշված էր, որ իսլամական աշխարհից անհրաժեշտ է արմա-տախիլ անել աղքատությունը, հիվանդությունները, հետամնացությու-նը, վերջ դնել զարգացած երկրների կողմից զարգացող երկրների շա-հագործմանը, ապահովել վերջիններիս ինքնիշխանությունը իրենց ազ-գային ռեսուրսների նկատմամբ, մեղմացնել տնտեսական դժվարութ-յունները, որոնք առաջ էին եկել հումքի և արտադրանքի գների աճի պատճառով, իսլամական երկրների միջև զարկ տալ տնտեսական հա-մագործակցությանը և համերաշխությանը՝ հիմնելու նոր, արդար և հա-վասար միջազգային տնտեսական հարաբերություններ՝<sup>120</sup>:

<sup>119</sup> А. Максимов, Т. Милославская, Исламские банки в странах Ближнего и Среднего Востока. В кн.: Ислам в странах Ближнего и Среднего Востока, М., 1982, с. 31.

<sup>120</sup> The Islamic Summit Conference, նշվ. ժողովածի մեջ, էջ 16, 17:

Իսլամական համերաշխության շրջանակներում առաջ քաշված իսլամական միջազգային տնտեսական կարգ ու կանոնի հայեցակարգը մշակելու և կյանքի կոչելու նպատակով իսլամական բարձրագույն քաղաքական նարմնի շրջանակներում ստեղծվեցին, ինչպես արդեն նշել ենք, բազմաթիվ տնտեսական կառույցներ, որոնց գործունեությունը խարսխված էր իսլամական սկզբունքների վրա և ուղղորդված իսլամական տնտեսական համագործակցության ամրապնդմանը<sup>121</sup>:

Իսլամական միջազգային տնտեսական կարգ ու կանոնի հայեցակարգի ամենանշանակոր տեսաբաններից մեկի՝ պակիստանցի Վ. Ջամդանիի կարծիքով՝ այն հիմնված է իսլամական հավասարության և արդարության սկզբունքների վրա: Իսլամը ո՞չ շռայլության, և ո՞չ էլ ժուժկալության կողմնակից է: Այն միջին դիրք է գրավում, որ թույլ կտա փրկել ժամանակակից աշխարհի համընդհանուր աղետից<sup>122</sup>:

Իսլամական համերաշխության շարժման տնտեսական կողմերը մանրամասն մշակեց Իսլամական աշխարհի լիգան, որ որպես հուշագիր՝ 1979թ. ներկայացվեց իսլամական պետությունների արտաքին գործերի նախարարների Ֆեսի հանդիպմանը: Իսլամական միջազգային տնտեսական նոր կարգ ու կանոնի ռազմավարությունը հուշագրի հեղինակների կարծիքով պետք է նպաստեր զարգացող երկրների հնա-

<sup>121</sup> Բացի ԻԿԿ մասնագիտացված հաստատություններից, իսլամական միջազգային տնտեսական կարգ ու կանոնի և իսլամական տնտեսության սկզբունքները մշակելու համար ստեղծվեցին նաև այլ հետազոտական կենտրոններ, որոնցից են՝ Զիդայում Արդ ալ-Սակ քաջալդի համայնքանին կից Իսլամական տնտեսության հարցերով գրադլող միջազգային հետազոտական կենտրոնը, Իսլամական զարգացման բանկին կից Իսլամական հետազոտությունների ինստիտուտը, Կիպրոսում միջազգային իսլամական բանկի ասոցիացիային կից Բանկերի և իսլամական տնտեսության ինստիտուտը և Իսլամական տնտեսության մասնագետների միջազգային ասոցիացիան:

<sup>122</sup> Р. Шаринова, Т. Тихонова, Лига исламского мира: от традиционализма к реформаторству. «Народы Азии и Африки», 1984, № 2, с. 35.

ռավորությունների ավելի լայն օգտագործմանը, ներառյալ՝ մարդկային ռեսուրսը, արդյունաբերության, գյուղատնտեսության ոլորտում և բանկային համակարգում համատեղ ծրագրերի ներդրումը<sup>123</sup>:

Խալամական աշխարհի լիգայի հուշագիրը դրական ազդեցություն ունեցավ իսլամական բարձրագույն քաղաքական մարմնի տնտեսական գործունեության վրա: Ֆեսի հանդիպմանն ընդունվեց «Ալկարկ միջազգային տնտեսական իրավիճակի վերաբերյալ. Խալամական կոնֆերանս կազմակերպության անդամ պետությունների ջանքերը զարգացող երկրների միջև տնտեսական համագործակցությանն աջակցելու համար» բանաձևը, որը գործնական բնույթ կրեց: Խալամական պետություններն ընդգծեցին «ինքնապահուման սկզբունքի և զարգացող երկրների աստիճանական տնտեսական ինտեգրացման» կարևորությունը, որն իրականացնելու համար առաջարկվեցին հետևյալ հիմնական միջոցառումները:

-Զարգացող երկրները պետք է որդեգրեն ընդհանուր ռազմավարություն՝ բանակցություններ անցկացնելով միջազգային տնտեսական նոր կարգ ու կանոն հաստատելու համար, որը կնպաստի նոր կանոնների մշակմանը, որոնց հիմքում ընկած կլինեն փոխադարձ կախվածության, հավասարության և մարդու արժանապատվության սկզբունքները: Այդպիսով հնարավոր կդառնա արդյունավետ կերպով լուծել տնտեսական խնդիրներն ու կյանքի կոչել նպատակները:

-Զարգացած երկրները պետք է զգալիորեն ավելացնեն ՄԱԿ-ի շրջանակներում զարգացող երկրներին տրվող օգնությունը:

Ֆեսի հանդիպումը աջակցություն հայտնեց զարգացող երկրների առևտուրի ընդլայնմանն ու դիվերսիֆիկացմանը, կազմակերպչական

<sup>123</sup> Հ. Ջլանով, նշվ. աշխ. մեջ, էջ 77, 78:

դժվարությունների վերացմանը, ինչպիսիք են՝ տարիֆային և ոչ տարիֆային խոչընդոտները, ներմուծման արգելվեները, տարադրամի կուրսի տատանումները, վարչական ձևականությունները, որոնք առնչվում են արդյունաբերական գարգացած երկրների հետ արտահանման և ներմուծման գործարքներին<sup>124</sup>:

1981թ. Մեքքայում իւլամական պետությունների գագարնաժողովով վում ընդունված հոչակագրի տնտեսական բաժնում նշված էր, որ մահմեդական երկրների տնտեսական խնդիրները զգալիորեն սրվել են միջազգային տնտեսական հարաբերություններում առկա ճգնաժամի պատճառով: Այդ իսկ պատճառով մահմեդական երկրների առաջ ծառացած գլխավոր խնդիրները պետք է լուծվեն իւլամական սկզբունքների միջոցով:

Հոչակագրում նշված էր, որ իւլամական երկրները գարգացող աշխարհի մի հատվածն են, ինքնուրույն տնտեսական հանրություն: Ուստի նրանք պետք է ոչ միայն ընդլայնեն և խորացնեն համագործակցությունը միմյանց մեջ, այլև տնտեսապես խնտեգրվեն<sup>125</sup>:

Ուշագրավ է, որ իւլամական միջազգային տնտեսական նոր կարգ ու կանոնի իրականացման դեպքում<sup>126</sup>, ինչպես համոզված էին իւլամական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում, ուժմամ կվերածվի կորպած, ստեղծագործ և նորացված մի համայնքի և կփորձի XX դարի վերջին հասնել գգալի առաջընթացի, հատկապես՝ իւլամական գի-

<sup>124</sup> Առյուն տեղում, էջ 78, 79:

<sup>125</sup> Т. Милославская, Г. Милославский, Концепция “исламского единства” и интеграционные процессы в “мусульманском мире”. В кн.: Ислам и проблемы национализма в странах Ближнего и Среднего Востока, М., 1986, с. 29.

<sup>126</sup> Այս մասին տես’ նաև Ռարիսովа Р., Խաջին Է., Движение исламской солидарности. В кн: “Исламский фактор” в международных отношениях в Азии, М., 1987, с. 67-77.

տության և տեխնիկայի բնագավառում, որպեսզի XXI դար մուտք գործի մյուսների հետ հավասար<sup>127</sup>:

Այսպիսով, «սառը պատերազմի» տարիներին հսլամական կոնֆերանս կազմակերպության կողմից միջազգային ծևակերպում ստացավ «Երրորդ ուղու» գաղափարը, համաձայն որի՝ իսլամը կարող է հանդես գալ որպես այլընտրանքային աշխարհակարգ և ի վիճակի է ապահովել մահմեդականների բարօրությունը: Իսլամական համագործակցության և ինտեգրացման գաղափարները խարսխվեցին կրոնական հենքի վրա:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ իսլամական պետությունները, տնտեսական, ֆինանսական, տեխնոլոգիական կախվածության մեջ գտնվելով գարզացած երկրներից, «սառը պատերազմի» տարիներին չկարողացան ամբողջությամբ իրականացնել իրենց մշակած տնտեսական ծրագրերը, իրականացնել իսլամական միջազգային տնտեսական նոր կարգ ու կանոնի հայեցակարգը, չնայած այն հանգամանքին, որ 1970-80-ականներին իսլամական կոնֆերանս կազմակերպության համակարգում ստեղծվեցին բազմաթիվ մասնագիտացված կառույցներ, իսլամական պետությունների միջև ծևավորվեց կայուն համագործակցություն, անդամ պետություններում իրականացվեցին բազմաթիվ տնտեսական ծրագրեր, ֆինանսական զգալի օգնություններ ստացան դրա կարիքն ունեցող երկրները:

«Սառը պատերազմի» ավարտից հետո հայտնվելով միջազգային նոր իրադրության մեջ՝ ԻԿԿ անդամ պետությունները սկսեցին տնտեսական համագործակցության նոր սկզբունքներ մշակել: Նախկին կարգախոսներին փոխարինեցին սեփական տնտեսական հետաքրքրությունները պաշտպանելու համար առաջ քաշված գաղափարները:

---

<sup>127</sup> Հ. Ժալանով, նշվ. աշխ. մեջ, էջ 81:

1991թ. Ստամբուլում խլամական պետությունների արտաքին գործերի նախարարների հանդիպմանն ընդունված բանաձևի մեջ հույս հայտնվեց, որ Եվրոպական Երկրների միջև զարգացող հարաբերությունները չեն վճարի խլամական պետությունների և Եվրոպական Երկրների միջև առևտորի փոխանակությանը<sup>128</sup>:

Ընդհանուր առմամբ խլամական պետություններին առաջարկվում էին քայլեր ծեռնարկել՝ դիմակայելու միջազգային հարաբերությունների գլոբալ փոփոխությունները: Խլամական նոր ռազմավարության համաձայն՝ խլամական տնտեսական համագործակցության վերջնական նպատակը պետք է լինի տնտեսական մեծ դաշինքների ձևավորումը, որը թույլ կտա մասնակցել գլոբալիզացման գործընթացներին: ԻԿԿ շրջանակներում անդամ Երկրների փոխադարձ հետաքրքրությունների վրա հիմնված տարածաշրջանային համագործակցությունը կծառայի որպես միջանկյալ քայլ անդամ պետությունների տնտեսական ինտեգրացման համար: Այն պետք է ընթանա խլամական պետությունների սերտ համագործակցության միջոցով: Խլամական կոնֆերանս կազմակերպության տնտեսական գործունեությունը աշխարհի տնտեսական գործունեության մի մասն է լինելու, և խլամական պետությունները պետք է առանց վճար հասցնելու իրենց ազգային և տարածաշրջանային հետաքրքրություններին՝ ամբողջությամբ մասնակից դառնան գլոբալ գործընթացներին, որոնք նպատակ ունեն ընդլայնել համաշխարհային դրամական, ֆինանսական և առևտրական համակարգը<sup>129</sup>:

Խլամական պետությունները պետք է նպաստեն գլոբալ տնտեսության զարգացմանը և միջազգային առևտրական համակարգի ազատա-

<sup>128</sup> Final Communiqué of 20<sup>th</sup> Session of ICFM (August 4-8, 1991) <http://oic-un.org>

<sup>129</sup> Draft New Strategies to Strengthen Economic Cooperation Among OIC Countries, Istanbul, September 4-6, 1995.

կանացմանը, որը ենթադրում է, որ զարգացող և զարգացած երկրները պետք է ինտեգրվեն գլոբալ շուկայի մեջ, որը դեկավարվում է ազատ մորգակցությամբ<sup>130</sup>:

Իսկ մինչ այդ շարունակվում են չլուծված մնալ հսլամական կոնֆերանս կազմակերպության որդեգրած ընդհանուր իսլամական շուկայի և հսլամական տնտեսական ինտեգրացման դրույթները: Դիշտ է, հսլամական կոնֆերանս կազմակերպությանը հաջողվել է ստեղծել իսլամական տնտեսական համագործակցության լայն ցանց, սակայն առկա են դրան խոչընդունող հանգամանքներ: Դրանցից են՝ հսլամական պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակներում, քաղաքական համակարգերում և իշխող վարչակառքերի քաղաքական կողմնուշոշումներում առկա տարբերությունները:

Դարձ է փաստել, որ զգալի ֆինանսական խնդիրներ ունի հենց կազմակերպությունը, որոնք ստեղծվել են անդամ երկրների՝ անդամակցարները ժամանակին չկատարելու պատճառով, որի հետևանքով բյուջեին անդամ պետությունների պարտքը 1998թ. 23.7 մլն դոլար էր: 1998թ. հսլամական պետությունների արտգործնախարարների Շոհայի կոնֆերանսի ժամանակ ԻԿԿ համապատասխան նարմինները անդամ պետությունների առաջ բյուջեն կրկնապատկելու հարց բարձրացրեցին: Նշվեց, որ եթե կազմակերպությունը ֆինանսական կարիքներ չունենա, ավելի արդյունավետ կգործի<sup>131</sup>:

<sup>130</sup> Islamic Development Bank, Աշվ. աշխ. մեջ, էջ 33:

<sup>131</sup> 1998/2/17 «السفير»: Ուշագրավ է, որ բյուջեին իրենց պարտքերը չվճարող անդամ պետությունների նկատմամբ որևէ պատժամիջոցներ չեն կիրառվում, և նրանք գործելու ազատ հնարակորություն են ունենում հսլամական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում:

Միևնույն ժամանակ իսլամական տնտեսական ինտեգրացման համար կան մի շարք բարերար գործուներ: Իսլամական պետություններն ունեն բնական, նյութական և մարդկային վիճակարի ռեսուրսներ: Ինկ շրջանակներում բազմիցս նշվել է, որ անհրաժեշտ է ընդլայնել տնտեսական համագործակցությանն ուղղված քայլերը՝ ստեղծելով նպաստավոր օրինական դաշտ՝ առանց տարիֆային խոչընդուների, մասնավորապես՝ առևտության մեջ՝ ներդրողներին գրավելու և տարածաշրջանային համագործակցությունն ընդարձակելու նպատակով<sup>132</sup>:

Իսլամական պետությունների տնտեսական համագործակցության կողմանակիցներն ընդգծում են, որ Իսլամական կոնֆերանս կազմակերպության ֆինանսական և տնտեսական ինստիտուտների գործունեությունը ինքնանպատակ չէ, այլ ուղղողդված է առավելագույնս օգտագործել իսլամական պետությունների տնտեսական ռեսուրսները՝ «ամրապնդելու դրանց տնտեսական հզորությունը և թուլացնելու կախվածությունը զարգացած երկրներից»<sup>133</sup>:

Իսլամական համագործակցության կողմանակիցների կարծիքով՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպության միտումը՝ գործնականում իրականացնելու և զարգացնելու տնտեսական և առևտրական համագործակցություն, «լավագույն ապագա է խոստանում նրա անդամ պետությունների ժողովուրդների համար»<sup>134</sup>:

<sup>132</sup> Islamic Development Bank, նշվ. աշխ. մեջ, էջ 46:

<sup>133</sup> Т. Милославская, Г. Милославский, Некоторые вопросы теории и практики финансово-экономической деятельности ОИК, նշվ. աշխ. մեջ, էջ 65:

<sup>134</sup> Socio-Economic Information Handbook on Islamic Conference Organization's Member Countries, Tehran, 1997, p. 22.

## 2. Իսլամական զարգացման բանկ (ԻԶԲ)

Իսլամական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում իսլամական տնտեսական ինտեգրացման համար առաջին հերթին անհրաժեշտ համարվեցին իսլամական բանկերի ստեղծումը: 1970թ. իսլամական պետությունների արտաքին գործերի նախարարների Կարաչիի հանդիպմանը որոշում ընդունվեց Իսլամական զարգացման բանկ ստեղծելու մասին, իսկ ալ-Ազհարի համալսարանի Խալամական հետազոտությունների ակադեմիային հանձնարարվեց մշակել Իսլամական զարգացման բանկի կանոնադրությունը<sup>135</sup>:

Իսլամական զարգացման բանկի բացման մասին որոշումն ընդունվել է 1973թ. դեկտեմբերին իսլամական պետությունների ֆինանսների նախարարների Ձիոդայի հանդիպմանը, որը վավերացվել է ԻԿԿ կանոնադրական մարմնի կողմից: “Պաշտոնապես բանկը սկսեց գործել 1975թ. հոկտեմբերից՝ ապացուցելով իր կենսունակությունը: Եթե չկանոնավարությունահանող արաբական երկրների՝ նավային հասույթից ստացված դոլարները, որոնք ներդրվեցին բանկի ֆինանսական գործունեության մեջ, դժվար կլինի ենթադրել, թե դեռ որքան ժամանակ կծագվեր բանկի բացումը: Բանկի կանոնադրական կապիտալը սկզբում սահմանվեց 1240 մլն դոլար, իսկ հետո իջեցվեց 950-ի<sup>136</sup>:

ԻԶԲ-ի հիմնական բաժնետերերը՝ Սաուդյան Արաբիան, Լիբիան, Արաբական Միացյալ Էմիրությունները, Վերահսկում են բանկի բաժնետերական կապիտալի 2/3-ը, որը 1977թ. 750 մլն իսլամական դինար էր<sup>137</sup>:

<sup>135</sup> А. Ионова, Ислам и международное экономическое сотрудничество, “Азия и Африка сегодня”, №. 3, 1983г., с. 15.

<sup>136</sup> А. Максимов, Т. Милославская, Исламские банки в странах Ближнего и Среднего Востока, Гюл, աշխ. մեջ, էջ 32:

<sup>137</sup> 1 իսլամական դինարը համարժեք էր 1.3 ԱՄՆ դոլարին:

1977թ. վերջին ԻԶԲ-ն անդամ պետություններին առանց տոկոսի 71 մլն դոլար փոխառություններ տրամադրեց: Նրա մասնաբաժինը զարգացման ծրագրերին 53, 6 մլն դոլար էր, իսկ ներմուծման ծախսերը փակելու համար հատկացված վարկերը՝ 50, 5 մլն դոլար<sup>138</sup>: 1975-1980թվականներին ԻԶԲ-ն տրամադրել է 1,5 մլրդ դոլարի փոխառություններ, որը բանկի համար բավական նեծ նվազում է<sup>139</sup>:

ԻԶԲ-ն օգնության միջազգային վարկային ինստիտուտ է, որ ֆինանսական միջոցներ է տրամադրում անդամ պետություններին և ունի այս ինստիտուտին բնորոշ գծերը: Իր հնարավորությունների սահմաններում ԻԶԲ-ն զգտում է ԻԿԿ շրջանակներում խաղալ այնպիսի դեր, ինչպես Համաշխարհային զարգացման բանկը՝ Արևմուտքում:

Մինչև 1992թ. հունիսը բանկի կանոնադրական կապիտալը 2 մլրդ իսլամական դինար էր: Կառավարիչների խորհրդի 1992թ. որոշմամբ այն հասավ 6 միլիարդի<sup>140</sup>:

Բանկի հիմնական նպատակն է աջակցել ԻԿԿ անդամ պետությունների, մահմեդական ժողովուրդների և համայնքների տնտեսական և սոցիալական զարգացմանը՝ համաձայն իսլամական օրեքների՝ շարիաթի<sup>141</sup>: Բանկի հիմնադրման փաստաթղթում նշված է, որ անհրաժեշտ է իսլամական երկրներում ապահովել ներդաշնակ ու հավասարլուկած զարգացում, որը կիամապատասխանի իսլամական ուժմայի շահերին: Բանկի կանոնադրության մեջ նշված է նաև, որ ԻԶԲ-ն իր գործարքներն իրականացնելիս պետք է առաջնորդվի իսլամի պատվիրաններով, որն

<sup>138</sup> The Middle East and North Africa, 1978-1979, p. 155.

<sup>139</sup> А. Максимов, Т. Милославская, Исламские банки в странах Ближнего и Среднего Востока, Եջմ. աշխ. մեջ, էջ 33:

<sup>140</sup> Islamic Development Bank, Եջմ. աշխ. մեջ, էջ 7.

<sup>141</sup> أبنك إسلامي للتنمية، جده، ١٩٩٧، ص.

արգելում է տոկոսներ գանձել փոխառությունների դիմաց և տոկոսներ վճարել ավանդների համար: Նման գործելակերպը պայմանավորված է իսլամական այն դրույթով, որը մերժում է որբա՛ան, այսինքն՝ վաշխառուական տոկոսը: Իսլամական այս սկզբունքին հավատարիմ մնալու մասին հիշատակված է իսլամական բոլոր բանկերի համապատասխան փաստաթղթերում, սակայն միայն ԻՉԲ-ն է առավել ճշգրտորեն հետևում այս պարտավորությանը:

Հարիաթի թույլատրած բանկային գործարքների (*հալալ*) տեսակներից են՝ մուշարաքարը, մուշարաբարը, մուշարահարը, իջարաքը<sup>142</sup>:

Ըստ մուշարաքարի (բառացի՝ գործընկերություն կամ մասնակցություն) սկզբունքի՝ կապիտալ ներդրում է անում թե՛ բանկը և թե՛ գործընկերը՝ համաձայն հատուկ պայմանագրի (*ակղ*), որով և սահմանվում են կողմերի եկամուտներն ու հնարավոր վճամները:

Մուշարաբարի (բառացի՝ մասնակցություն եկամուտներում) սկզբունքի համաձայն՝ գործընկերներից մեկը հայթայթում է միջոցները, մյուսը դրանք շրջանառության մեջ է դնում: Հակույթը կողմերի մեջ բաշխվում է ըստ նախօրոք ծեղք բերված պայմանավորվածության: Վճամի դեպքում տուժում է կապիտալ ներդնողը, իսկ այն շահագործողը որևէ պարզեատում այլև չի ստանում: Այս սկզբունքը կիրառվում է զարգացման ծրագրերի ֆինանսավորման և արժեթղթային գործարքներում: Արդյունքում իսլամական բանկը որևէ ծրագրի իրականացման համար ծևականորեն տրամադրում է առանց տոկոսի վարկ պայմանով, որ ստանա եկամտի հաստատագրված իր բաժինը դրա իրագործումից

<sup>142</sup> Այս մասին տեսնակ՝ Տ. Милославская, Г. Милославский, Некоторые вопросы теории и практики финансово-экономической деятельности ОИК. В кн.: Ислам: проблемы идеологии, права, политики и экономики, М., 1985, с. 62.

հետո: Այդպիսով նա դառնում է ընկերակցային պայմանագրի նասնակից՝ չխախտելով որիքա՞յի արգելքը:

Մուրաբահարի (բառացի՝ վերավաճառում) սկզբունքի համաձայն՝ բանկը գնում է հումքը կամ սարքավորումները գործընկերոջ պատվերով և արդյունքում վերավաճառում նրան ավելի բարձր գներով:

Իջարարը (բառացի՝ վարձակալում) վարձակալման պայմանագիր է, որը հաճախ լրացվում է գննան մասին ակտով, համաձայն որի՝ վարձակալողը, վճարելով սահմանված գումարը, դառնում է իր վարձակալածի սեփականատերը:

Իսլամական զարգացման բանկն ունի նաև ողորմածության՝ զաքարի հավաքման գանձարան, որը գոյանում է բանկային շահույթի 2,5-5%-ից և առանձին մահմեղականների նվիրատվություններից<sup>143</sup>: Ուրանում հաճախ է խոսվում զաքարի մասին՝ որպես «աստվածավախության ակնհայտ նշան և փրկության միջոց»<sup>144</sup>:

Զաքարից հավաքված միջոցների մի գգալի մաս տրամադրվում է կրոնաքարոզչական գործունեությանը, մզկիթների շինարարությանը, իսլամական կրթական հաստատությունների հիմնմանը, բարեգործությանը:

ԻԶԲ-Ը ֆինանսավորում է զարգացման ծրագրերն ու արտաքին առևտուրը արտոնյալ պայմաններում: Նա ծգտում է ընդլայնել անդամ պետությունների միջև առևտրատնտեսական կապերը: Որպես օրինակ կարելի է բերել 1980թ. Սուլամին բանկի տրամադրած 17 մլն դոլար վարկը Բանգլադեշից պատրաստի ջուտե արտադրանք ներմուծելու համար: Բանկի տրամադրած վարկերի հիմնական նպատակն է աջակ-

<sup>143</sup> Современный ислам: проблемы политики и идеологии, в. 4, ч. 3, М., 1988, с. 55.

<sup>144</sup> H. Gibb, Islam, London, 1978, p. 43.

ցել անդամ պետությունների վճարման հաշվեկշռին: Այսպես, 1980թ. տասը պետություն ԻՉԲ-ից նավթի ներմուծման ծախսերի ֆինանսավորման համար վարկեր ստացան: ԻՉԲ-ն ծրագրի ֆինանսավորման համար 18-40 տարով տրամադրում է արտոնյալ վարկեր: Առևտրի ֆինանսավորման դեպքում գանձվում է մատակարարվող արտադրանքի արժեքի 5-10%-ը սովորաբար 2,5 տարվա ընթացքում վճարելու պայմանով: Իր կենսունակությունը բարձրացնելու և եկամուտները ընդլայնելու նպատակով ԻՉԲ-ն իրականացնում է նաև բանկային այլ գործարքներ: Կապիտալի մի զգակի մաս հատկացվում է պորտֆելային ներդրումներին: ԻՉԲ-ն գնում է անդամ պետություններում արդյունաբերական հաստատությունների բաժնետոմսեր<sup>145</sup>.

ԻՉԲ-ն զգալիորեն աջակցել է ֆինանսապես կարիքավոր իսլամական պետություններին, գրեթե բոլոր անդամ պետություններում իրականացրել տարաբնույթ ծրագրեր: Առանձնացնենք բանկի գործունեությունը Արևադարձային Աֆրիկայի զարգացման ծրագրերի իրագործման մեջ: 1980-ականներին ԻՉԲ-ն առաջին տեղն էր զբաղեցնում տարածաշրջանային ֆինանսական կազմակերպությունների մեջ աֆրիկյան երկրներին ցույց տրված օգնության (422 մլն դոլլար) և իրականացրած ծրագրերի (77 ծրագիր՝ 11 երկրներում) չափով: 1973-1980թթ. արաբական և նավթարդյունահանող այլ երկրների ստեղծած կազմակերպությունների միջոցով Արևադարձային Աֆրիկային ցույց տրված օգնության մեջ ԻՉԲ բաժինը 28% էր<sup>146</sup>:

<sup>145</sup> А. Максимов, Т. Милюсавская, Исламские банки в странах Ближнего и Среднего Востока, Եշվ. աշխ. մեջ, էջ 34:

<sup>146</sup> Л. Ворисов, Организация исламской конференции: экономические, социальные и культурные аспекты деятельности, "Народы Азии и Африки", N. 5, 1984, с. 72.

ԻՉԲ-ին հաջողվել է իրականացնել իր որդեգրած սկզբունքները և ակտիվ գործունեություն ծավալել: Բանկը միջազգային ֆինանսական այլ կազմակերպություններին հաճանման կարևորում է ենթակառուցվածքների ֆինանսավորումը, որն անհրաժեշտ նախապայման է տնտեսական զարգացման և մասնավոր կապիտալի ներհոսքի համար:

ԻՉԲ-ն իրականացրել է բազմաթիվ նախագծեր, որոնցից կարևորագույններից է COMCEC-ի<sup>147</sup> առաջակությամբ ԽՍՀԱՄԱԿԱՆ կոնֆերանս կազմակերպության տեղեկատվական ցանցի (OICIS-NET) ստեղծումը<sup>148</sup>:

Կանոնադրության համաձայն՝ ԻՉԲ բարձրագույն մարմիններն են Կառավարիչների խորհուրդը և Գործադիր տնօրենների խորհուրդը: Բանկն ունի նախագահ, որը ղեկավարում է Կառավարիչների խորհուրդը, մեկ կամ ավելի փոխնախագահներ: Կառավարիչների խորհուրդը գումարվում է տարին մեկ, ներկայացված է յուրաքանչյուր անդամ երկրի մակարդակով: Այն քննարկում է բանկի գործունեությունը, որդեգրում ընդհանուր քաղաքականություն: Գործադիր տնօրենների խորհուրդը 11 անդամից է, որը համալրում են հճուտ ֆինանսիստներ ու տնտեսագետներ: Նրանք ընտրվում են երեք տարի ժամանակով և կարող են վերընտրվել: Գործադիր քաղաքականությունը իրականացնող այս կառույցը պետք է նախապատրաստի Կառավարիչների խորհրդի աշխատանքը, ներկայացնի յուրաքանչյուր ֆինանսական տարվա հաշիվները, բանկի բյուջեն:

Բանկին անդամակցելու հիմնական պայմանը ԽՍՀԱՄԱԿԱՆ կոնֆերանս կազմակերպության անդամ լինելն է, անդամավճարներ կատարե-

<sup>147</sup> COMCEC-ը ԻԿԿ ամենակարևոր տնտեսական կառույցն է: Այս մասին տե՛ս Ա. Y. Yakis, Economic Cooperation Among Islamic Countries, Turkish Review, v. I, November, 1985.

<sup>148</sup> Islamic Development Bank, Եջլ. աշխ. մեջ, էջ 62:

լը, Կառավարիչների խորհրդի որոշումներին ենթարկվելը: Ցանկացած անդամ կարող է դուրս գալ Իսլամական զարգացման բանկից՝ անդամագրվելուց միայն հինգ տարի անց: ԻԶԲ-ն որևէ խնդրի շուրջ չի կարող որդեգրել քաղաքական դիրքորոշում և չի կարող միջամտել անդամ պետությունների քաղաքական գործերին: ԻԶԲ-ն մշտական դիտորդի կարգավիճակ ունի ԻԿԿ բոլոր նակարդակի ֆորումներում՝ ներառյալ հանձնաժողովները<sup>149</sup>:

ԻԶԲ-ն համագործակցում է տարածաշրջանային և միջազգային տնտեսական և ֆինանսական հաստատությունների հետ: ԻԶԲ-ն սերտորեն համագործակցում է Իսլամական կոնֆերանս կազմակերպության մի շարք հաստատությունների հետ: Դրանցից են Տնտեսական և առևտրական համագործակցության, Տեղեկատվության և մշակութային հարցերի, Գիտական և տեխնոլոգիական համագործակցության մշտական հանձնաժողովները, Կրթության, գիտության և մշակույթի իսլամական կազմակերպությունը, Վիճակագրական, տնտեսական, սոցիալական հետազոտությունների և իսլամական երկրների համար կաղրերի պատրաստման կենտրոնը, Առևտուրի զարգացման իսլամական կենտրոնը:

Բանկն ունի տարածաշրջանային երեք մասնաճյուղեր Ռաբարում (1994-ից), Կուալա Լումպուրում (1996-ից), Ալմա-Արայում (1997թ.): Ղազախստանի գրասենյակի գործունեությունը նպատակառությամբ է ԻԶԲ անդամ երկրների և Կենտրոնական Ասիայի հանրապետությունների միջև տնտեսական կապերի զարգացմանը:

<sup>149</sup> البنك الإسلامي للتنمية، أستلة وأجوبة، جدة، ١٩٩٧، ص ١٢.

Բանկի գործառություններն են՝ մասնակցել կառուցողական ծրագրերի և նախաձեռնությունների ֆինանսավորմանը, աջակցել անդամ երկրներում էներգետիկայի և հաղորդակցությունների, նաև՝ տեխնիկական զարգացմանը, տեխնոլոգիաների փոխանակմանը: Բանկը հիմնում է հատուկ ֆոնդեր, որոնք նախատեսված են անդամ երկրների տնտեսական, սոցիալական, ֆինանսական զարգացման համար՝ ներառյալ ոչ իսլամական երկրներում իսլամական փոքրամասնությունների օգնությունը: Մշակվում են պարտքերը մարելու<sup>150</sup>, տնտեսական վճարման կանոնադրություններ և անցկացվում անդամ երկրներում ֆինանսական և քանկային գործունեություն ծավալելու համար: Բանկը զգտում է նպաստել անդամ պետությունների միջև առևտրական կապերի զարգացմանը<sup>151</sup>:

1997-ից ԻԶԲ գործունեության մեջ եական ած է նկատվել: Բանկի հիմնական խնդիրն է՝ աջակցել իսլամական աշխարհի տնտեսական և առևտրական համագործակցությանը:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ՝ բացի կազմակերպության անդամ պետություններին տրամադրվող ծանրակշիռ օժանդակությունից, ոչ իսլամական պետություններում իրականացվում են ԻԶԲ-ի կրթական, առողջապահական և սոցիալական օգնության ծրագրեր մահմեդական համայնքների համար, որոնք ընդլայնվել են 1990-ականներից հետո: Աշխարհագրական առումով այն ընդգրկում է Ասիա, Աֆրիկա, Ավստրալիա մայրցամաքները, ԱՍՆ-ը և Կանադան:

<sup>150</sup> ԻԶԲ անդամ պետությունների արտաքին պարտքը 1997թ. 623.8 մլրդ դոլար էր:

<sup>151</sup> ԻԶԲ գործառույթների մասին մանրամասն տես նաև Ա. Վալի «Խոլամական կոնֆերանս կազմակերպության դերը մահմեդական երկրների միջև տնտեսական համագործակցության հարցում», Պարստ, 1982թ. (արաբերեն) ըստ՝ Հ. Ժկանօ, Исламская концепция миротворчества, М., 1991, с. 188, 189:

Միայն Հնդկաստանում կրթական և ուսումնական հաստատություններ հիմնելու նպատակով ԻՉԲ-ն իրականացրել է հարյուր հիսուներկու ծրագիր<sup>152</sup>: Ասիական երկրներից ԻՉԲ-ն օգնություն է իրականացրել Չին Լանկայում, Կորեայում, Ֆիլիպիններում, Վիետնամում, Թաիլանդում, Սինգապուրում, Չինաստանում, Կամբոջայում, Նեպալում: Աֆրիկյան մայրցամաքում ԻՉԲ ծրագրերն իրագործվել են Տոգոյում, Եթովպիայում, Երիտրեայում, Ռենյոնի թերակղում, Լիբերիայում, Մոզամբիկում, Քենիայում, Տանզանիայում, Զիմբաբվեում, Սալավիում, Ուգանդայում, Նիգերիայում:

Դաշվի առնելով Աֆրիկա մայրցամաքի տնտեսական լուրջ դժվարությունները և դրա հետևանքները ազգաբնակչության վրա՝ ԻԿԿ-ն երբեւ չի անտեսել այս տարածաշրջանը: Չեն անտեսվել անգամ Եվրոպական երկրներում՝ Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Իսպանիայում, Կիպրոսում հաստատված մահմեդական համայնքները, որտեղ ԻՉԲ օգնությամբ հիմնվել են կրթական և հասարակական հաստատություններ: Մինչև 2000թ. Արևելյան Եվրոպայի երկրներում բանկը ներդրել է մոտ 25 մլն դոլար:

Նախկին ԽՍՀՄ-ում օգնության ծրագրեր են իրականացվել Ուզբեկստանի, Աղրբեջանի, Ղազախստանի, Տաջիկստանի, Ղրղզստանի հանրապետություններում, Ռուսաստանում, Ենրառյալ՝ Թաթարստանը և Չեչնիան: Նշված հանրապետություններից յուրաքանչյուրում ներդրվել է 9 մլն դոլար:

ԱՄՆ-ում բազմաբնույթ միջոցառումներ են իրականացվել Նյու Յորք-սիկոյի, Վիրջինիայի, Նյու Յորքի, Լու Անգելեսի, Նյու Ջերսիի իսլա-

<sup>152</sup> Դիշյալ ծրագրերի համար ներդրվել է 150 մլն դոլար: Պետք է հաշվի առնել, որ չնայած Հնդկաստանը չի անդամակցում ԻԿԿ-ին, սակայն մահմեդական բնակչությամբ ամենամեծ երկրներից մեկն է աշխարհում:

մական համայնքներում: Ավստրալիայում օգնությունների ծրագրերն ընդգրկել են Նոր Բարուրինիայի, Նոր Ջելանդիայի, Ֆիջիի մահմեդական համայնքները<sup>153</sup>:

<sup>153</sup> الإسلامية في الدول غير الأعضاء، ألبنك الإسلامي للتنمية: برامج المعونة الخاصة، جده، ١٩٩٧، ص ٧ - ٤، مشاريعات تربوية و صحية واجتماعية في عدد من المجتمعات

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

**ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

Իսլամական կոնֆերանս կազմակերպության հիմնադրման, կառուցվածքի, նպատակների և խնդիրների լուսաբանությունից հետո անհրաժեշտ է քննարկել իսլամական այդ ամենակարևոր քաղաքական կազմակերպության գաղափարական և քաղաքական հայեցակարգը և նրա հիմադրույթները: Միայն այդպես է հնարավոր լիարժեք և ամբողջական պատկերացում կազմել աշխարհի բոլոր մահմեդական պետություններին միավորող կազմակերպության, նրա գործունեության, դերի և տեղի մասին ժամանակակից բարդ և հակասական աշխարհում:

Մասնավորապես նպատակահարմար ենք համարում քննարկել այնպիսի հանգուցային հարցեր, ինչպիսիք են իսլամական ումնայի, իսլամի գլորալ ռազմավարության և այլ խնդիրներ:

Իսլամական կոնֆերանս կազմակերպության գաղափարական-քաղաքական հայեցակարգի կենտրոնական տարրը իսլամական ազգի ումնայի գաղափարն է: Քաղաքական և ռազմավարական բնույթի բոլոր հարցերը բխում են այդ հիմնադրույթից: Ումնան բոլոր մահմեդականների եղբայրության և միասնության գաղափարն է՝ անկախ նրանց ազգային, ռասայական և սոցիալական պատկանելությունից:

Ումժա հասկացությունը ծևավորվեց Մուհամմեդ մարգարեի քարոզչական գործունեության ընթացքում: Քաղաքական իշխանությամբ և ինքնավարությամբ, կրոնական և սոցիալական նկարագրով ումժան որպես ինքնուրույն համայնք, ծևավորվեց Մեղինայում, որը հաստատվել էին 622թ. Մեքբայից գաղթած առաջին մահմեղականները: Մեղինայում կազմավորվել էր մարդկանց մի նոր միավորում, որոնց միավորում էր հավատը միակ աստծո նկատմամբ: Նորադավան մահմեղականների համայնքը ղեկավարում էր Մուհամմեդ մարգարեն, որին վերապահված էր կատարելու աստծո պատվիրանները<sup>154</sup>: Նա մահմեղական հավատացյալների համայնքը, որին աստվածային առաքելություն էր ուղարկվել, անվանեց ումժա<sup>155</sup>:

Մուհամմեդ մարգարեն՝ որպես հավատացյալների համայնքի առաջնորդ, մարմնավորում էր ինչպես հոգևոր, այնպես էլ՝ քաղաքական իշխանությունը: Նա ոչ միայն մարգարե էր, հոգևոր առաջնորդ, նոր կրոնի հիմնադիր, այլև՝ քաղաքական և ռազմական գործիչ: Նշենք, որ այս շրջանից սկսած իսլամն արդեն կատարում էր քաղաքական գործառությունները<sup>156</sup>: Նոր կրոնի՝ իսլամի հայտնվելով՝ առաջացավ նոր կառույց՝ հավատացյալների համայնքը, որ արարամահմեղական պետության ծևավորման մեջ վճռորոշ նշանակություն ունեցավ<sup>157</sup>:

Արարական նվաճողական արշավանքներից հետո ումժա ասելով հասկանում էին մահմեղականներով բնակեցված մի տարածք: Այն արտահայտում էր նաև խալիֆայության գաղափարը: Իսլամում և իսլամա-

<sup>154</sup> М. Пиотровский, Коранические сказания, М., 1991, с. 14.

<sup>155</sup> M. Hodgson, The Venture of Islam, vol. I. The University of Chicago Press, 1974, p.173.

<sup>156</sup> Իսլամը ունիվերսալ համակարգ է: Այստեղ չկան հոգևոր և աշխարհիկ ֆունկցիաների և իշխանությունների տարանջատում: Դամաձայն «դին վա դաւլա» («կրոն և պետություն») տեսնության կրոնը բաժանված չէ բաղարականներունից:

<sup>157</sup> Е. Берияев, Арабы, ислам и Арабский Халифат в раннее средневековье, М., 1966, с. 127.

կան պետության՝ խալիֆայության, մեջ կրոնականի և քաղաքականի միասնությունը խորհրդանշում էր *ումմայի գաղափարը*<sup>158</sup>: Ումման, որի մեջ արաբները փոքրանանություն էին, հաճախմբվում էր պետական հիմնական գաղափարախոսության՝ խալամի շուրջ:

Մահմեդական համայնքի գաղափարը փաստորեն սկսվում է նույնացվել նրա բնակության վայրի՝ խլամի աշխարհի հետ: Խլամական տեսության համաձայն աշխարհը բաժանված է *խլամի աշխարհի* (Dar al-Islam) և *պատերազմի աշխարհի* (Dar al-Harb) միջև: Խլամի աշխարհում խլամի օրենքներով դեկավարում են մահմեդականները: Յնարավոր է նաև, որ մահմեդականներն այստեղ մեծամասնություն չկազմեն: Պատերազմի աշխարհի բնակիչները մահմեդականներ չեն, այլ՝ «անհավատներ», իսկ եթե մահմեդականներ են, ապա «անհավատների» տիրապետության տակ են<sup>159</sup>:

Խլամի աշխարհի նախնական իմաստը համընկնում էր խալիֆայության սահմանների հետ, այսինքն՝ կրոնական համայնքի *ումմայի* սահմանները համընկնում էին քաղաքական սահմաններին:

Խլամական դասական գրականության սկզբնավորման շրջանում ումմա տերմինը հաճախ օգտագործվում էր թե՛ կրոնական և թե՛ երնիկական իմաստներով, իսկ երբեմն էլ՝ առանց դրանց հստակ տարրերակման: Սակայն հետզիեւտ մահմեդական հեղինակները *ումմա* ասելով նկատի են առնում մեկ միասնական խլամական *ումմա*՝ առանց վերջինիս երնիկ կամ տարածքային ստորաբաժանման: Իսկ կրոնական առանձին խմբերի համար նրանք գործածում են արաբերեն *ումմա* բառի հոգմակի (*սումմաթ*) ձևը<sup>160</sup>: Դուրանում նույնպես օգտագործվում է

<sup>158</sup> E. Rosenthal, Political Thought in Medieval Islam, Cambridge, 1962, p. 26.

<sup>159</sup> И. Петрушевский, Ислам в Иране (Курс лекций), Л., 1966, с. 80.

<sup>160</sup> B. Lewis, The Political Thought in Medieval Islam, Cambridge, 1962, p. 26.

ումմա արտահայտությունը, որը ուսումնասիրողների շրջանում տարբեր մեկնությունների առիթ է տվել<sup>161</sup>:

Խսլամական միասնության համար մեծ նշանակություն ունի նաև քառուիդի (արաբերեն՝ միասնություն) սկզբունքը, որի հիմքում ընկած է աստծո միասնության գաղափարը: Թաուիդի մեջ արտահայտված է նաև աստծո վերաբերմունքը մահմեդականների միասնության նկատմամբ: Քանի որ աստվածային արդարությունը (աղյ) հավասարապես տարածվում է խսլամական համայնքի՝ ումմայի յուրաքանչյուր անդամի վրա, նշանակում է, որ բոլոր մահմեդականները հավասար են աստծո առաջ: Այստեղից էլ՝ ումմայի բացարձակ միասնության տեսությունը: Ումմայի համերաշխության դրսնորումներից է խսլամական ամենամյա ուխտագնացությունը՝ հաջը և նրա ծիսակատարությունների ողջ փարերը<sup>162</sup>:

Դատկանշական է, որ խալիֆայության փլուզումից հետո մահմեդական առանձին երկրամասերի միջև հաստատվեցին սերտ նշակութային շփումներ: Պետական սահմանների առկայությունը չխանգարեց, որպեսզի մահմեդականները ընդունեն միմյանց ոչ թե որպես առանձին երկրների հպատակներ, այլ՝ եղբայրներ և նույն համայնքի ներկայացուցիչներ<sup>163</sup>:

ԻԿԿ շրջանակներում խսլամական միասնության կողմնակիցները վկայակոչում են Ղուրանի համապատասխան սուլուաթի հետևյալ այլարը

<sup>161</sup> Այս մասին մանրամասն տե՛ս՝ Encyclopedia of Islam, New Edition, V. X, Leiden-Brill, 2000, p. 861, 862; E. Բարսեղյան, Արաբական առաջնորդության առաջնորդությունը մահմեդական պատմության մեջ, Տարբերակ, Երևան, 2000, 10 համար:

<sup>162</sup> C. A. O. Van Nieuwenhuijze, The Lifestyles of Islam, E. J. Brill-Leiden, 1985, 89.

<sup>163</sup> Բ. Բարյուղիմ, Համապատասխան սուլուաթի հետևյալ այլարը, Տարբերակ, Երևան, 2000, 10 համար:

(3; 102), թե «Եվ ամուր բռնեք այն պարանից, որն ալլահը (մեկնեց ծեղ-Ա.Փ.) և մի՞ բաժանվեք իրարից...»:

Իսլամական ազգի միասնության ու Եղբայրության գաղափարներն այն հիմքերն են, որոնց վրա խարսխվեց Իսլամական կոնֆերանս կազմակերպության գաղափարախոսությունը<sup>164</sup>: Իսլամական ումմայի գաղափարը կարելի է բնորոշել իրեն ամենակարևոր և հիմնարար սկզբունքը, որ պաշտոնապես հայտարարվեց 1981թ. իսլամական պետությունների Սեքջայի գագաթնաժողովում, ուր միաձայն ընդունված հոչակագրում տրված է ումմայի սահմանումը. «Բոլոր մահմեդականները, որոնք թեև տարբերվում են լեզվով, մաշկի գույնով, բնակության վայրով, մի ազգ են. նրանց միավորում է նույն հավատքը. նրանք շարժվում են նույն ուղղությամբ, ունեն մշակութային ընդհանուր ժառանգությունը, աշխարհում ունեն նույն առաքելությունը»<sup>165</sup>:

Իսլամական ազգ հասկացությունը վերաբերում է առանց բացառության բոլոր մահմեդականներին, որոնք շարժվում են նույն ճանապարհով և ունեն նույն առաքելությունը:

Սեքջայի հոչակագրում ումմայի առաջընթացի հիմքը պայմանավորված է իսլամով. «Իսլամը այն միակ ճանապարհն է, որը կարող է առաջնորդել նրանց (մահմեդականներին-Ա.Փ.) դեպի հզորություն, արժանապատվություն, բարգավաճում և պայծառ ապագա»<sup>166</sup>:

Իսլամը ներկայացված է իրեն պայծառ ապագայի երաշխիք. «Սենք հայտարարում ենք, որ միայն մեր անսասան նվիրվածությունը մեր հավատքին հնարավորություն կտա մեզ պահպանել մեր սոցիալական կա-

<sup>164</sup> Այս մասին տես՝ նաև՝ Պ. Շարինովա, Движение исламской солидарности, Основные теоретические концепции. В кн.: “Исламский фактор” в международных отношениях в Азии, М., 1987, с. 60-67.

<sup>165</sup> The Mecca Declaration, The Islamic Summit Conference, նշվ. ժողովածուի մեջ, էջ 47:

<sup>166</sup> Նույն տեղում, էջ 46:

ռույցների հզորությունը և կօգնի մեր համայնքներին խուսափել անհամերաշխությունից և անցյալի սխալներից»<sup>167</sup>:

Դոչակագրում վստահություն է հայտնվում, որ մահմեդականները կարող են վերականգնել միասնությունը և համերաշխությունը իրենց շարքերում՝ հանուն առաջընթացի, հաջողության և բարգավաճման, եթե հետևեն իսլամի արժեքներին «որպես կյանքի ծանապարհ»:

ԻԿԿ-ի գաղափարական և քաղաքական համակարգում իր ուրույն տեղն ունի իսլամական ումմայի վերջնական նպատակների և դրանց հետ կապված իսլամի գլոբալ ռազմավարության հիմախնդիրները:

Մեզանում ժամանակակից իսլամի գլոբալ ռազմավարության հարցերին առաջինն անդրադարձել է արաբագետ Ն. Շովհաննիսյանը: «Իսլամի գլոբալ ռազմավարությունը. հիմնարար սկզբունքներն ու վերջնական նպատակները» հոդվածում նա նշում է, որ իսլամի գլոբալ ռազմավարությունը հիմնվում է երեք հիմնական սկզբունքների՝ ա)մարդագրական գործոնի, բ)մահմեդական պետությունների քաղաքական, տնտեսական և մշակութային ինտեգրացման քաղաքականության և գ)այսպես կոչված իսլամական ազգի տեսության սկզբունքների վրա<sup>168</sup>:

Իսլամական բարձրագույն քաղաքական մարմնի՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպության փաստաթղթերում, մասնավորապես՝ Մեքքայի հոչակագրում նշված է. «Մեր համոզունքն այն է, որ իսլամական ազգը, որը հաշվում է մեկ մլրդ մարդ տարբեր ցեղերից, որոնք սփռված են աշխարհի տարբեր մասերում, տիրապետում են իսկայական ռեսուրսների և միմյանց հետ կապված են հոգևոր ուժով, կարող են ազդե-

<sup>167</sup> Նույն տեղում, էջ 47:

<sup>168</sup> Հ. Оганесян, Глобальная стратегия ислама: основополагающие принципы и конечные цели, Вестник общественных наук, Еր., 1989, с. 22.

ցիկ դիրքեր նվաճել աշխարհում և լավագույն հավասարակշռություն ստեղծել՝ հօգուտ ողջ մարդկության»<sup>169</sup>:

Դետևապես իսլամի և նրա գլխավոր կազմակերպության կարևոր նպատակներից մեկը ազդեցիկ դիրքեր գրավելն է ամբողջ աշխարհում, որը իսլամի գլոբալ ռազմավարության ամենակարևոր բաղադրիչներից մեկն է: Ընդ որում այն դիտվում է որպես սկզբունքային փոփոխություն՝ հօգուտ ամբողջ մարդկության: Դրա փաստարկներից մեկն էլ այն է, որ իսլամական ուժման մարդկության պատմության մեջ գերիշխող դիրքեր է գրադեցրել այն ժամանակ, երբ «աշխարհի մի խառվածք խարիսխել է մտավոր խավարի մեջ»:

Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը սահմանել է *ուժմայի պարտավորությունները*, որոնք վերաբերում են իսլամի երբեմնի փառքի և քաղաքակրթության վերականգնմանը: Մեքբայի հոչակագրում նշված է. «Հավատալով, որ անհրաժեշտ է քարոզել իսլամի սկզբունքները և տարածել նրա մշակույթը և փառքը ողջ աշխարհի իսլամական համայնքներում և հատուկ նշանակություն տալով նրա հարուստ ժառանգությանը, հոգևոր կապերին, բարոյական արժեքներին և իրավունքին, որն առաջնորդում է դեպի առաջընթաց, արդարություն և քարգավաճում, մենք պարտավորվում ենք համագործակցել՝ օգտագործելով մարդկային և նյութական միջոցները այս նպատակներին հասնելու համար»<sup>170</sup>:

1997թ. Թեհրանում իսլամական պետությունների ղեկավարների գագաթնաժողովում ընդունված հոչակագրում նշված է, որ իսլամական քաղաքակրթության վերականգնումը համաշխարհային խաղաղության

<sup>169</sup> The Mecca Declaration, The Islamic Summit Conference, նշվ. ժողովածուի մեջ, էջ 47:

<sup>170</sup> Սույն տեղում, էջ 53:

գրավականն է, և մտահոգություն է հայտնվում այն միտումների համար, որոնք փորձում են իսլամը ներկայացնել որպես սպառնալիք<sup>171</sup>:

Այսպիսով, Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը գործունեության բոլոր բնագավառներում պարտավորվում է առաջնորդվել իսլամի դրույթներով և ուսմունքով, քանի որ իսլամը կարող է հանդես գալ իրեն իսլամական աշխարհի զարգացման հիմնական ուղղություն: Այս ռազմավարության նպատակը, որը թեև հիմնված է կրոնական գործոնի վրա, քաղաքական բնույթ ունի և կոչված է՝ ծառայելու իսլամական երկրների դիվանագիտությանը<sup>172</sup>:

Իսլամական կոնֆերանս կազմակերպության գաղափարական-քաղաքական հայեցակարգի մյուս կարևոր տարրերից մեկը իսլամական պետությունների ինտեգրացումն է քաղաքական, տնտեսական, սոցիալական, գիտական, մշակութային, տեղեկատվական և կենսական այլ կարևոր բնագավառներում, որի ուղղությամբ կազմակերպությունը գգալի ջանքեր է գործադրել:

Չժմտելով Իսլամական կոնֆերանս կազմակերպության առաջ ծառացած դժվարությունները, ինչպիսիք են եղայրասպան պատերազմները, դավանաբանական անհանաձայնությունները, տնտեսական դժվարությունները, արևանյան ազդեցությունը, իսլամական վերածննդի անհրաժեշտությունը՝ մահմեդական աշխարհի առաջնորդները իսլամական աշխարհի ինտեգրացումը համարում են իրական, որ կարող է կյանքի կոչվել Իսլամական կոնֆերանս կազմակերպության ջանքերով: Այդ իսկ պատճառով մեծապես կարևորվում է իսլամական պետությունների համագործակցությունը ինչպես երկկողմ, այնպես էլ՝ տարածաշր-

<sup>171</sup> Tehran Declaration, The Iranian Journal of International Affairs, v. IX, No. 4, Winter 1997/98, p.615.

<sup>172</sup> Ա. Յովհաննիսյան, Դիվանագիտություն, Եր., 1997, էջ 21:

զանային և միջազգային մակարդակներում՝ հասնելու համար հարատև տնտեսական աճի և առաջընթացի:

Իսլամական ժողովուրդների համար մեծապես կարևորվում է նաև ընդհանուր իսլամական ժառանգության և իսլամի դերը: Իսլամական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում տեղի ունեցած միջոցառումներից մեկի ժամանակ՝ «Պակիստանի նախագահ Զիա ուլ-Յակը մասնավորապես ասաց. «... (մենք-Ա.Փ.) հպարտ ենք մեր ընդհանուր ժառանգության, մշակույթի, լեզվի համար, և այն, ինչ միավորում է մեզ. Դուրանն է և սուրբ մարգարեի անունը...», «...մենք ունենք մեկ լեզու՝ Դուրանի լեզուն»: «Պատկերացրեք, շուրջ մեկ մլրդ մարդ՝ աշխարհի բնակչության մեկ քառորդը, խոսում և հասկանում է մեկ լեզվով»: Պակիստանի նախագահի կարծիքով, չնայած լեզվի, սովորույթների և երնիկական տարրերություններին, իսլամական աշխարհը միասնական է իր բազմազանության մեջ, որին նպաստում է իսլամի միավորիչ դերը: «Ես հպարտ եմ ասելու, որ «իսլամական Ումմա» հասկացությունը հպարտության առիթ է տալիս»<sup>173</sup>:

Մահմեդական ժողովուրդների համագործակցությունը պայմանավորված է իսլամական ավանդույթների վրա հիմնված քաղաքական, տնտեսական և մշակութային անկախ գործունեություն ծավալելու նրանց ցանկությամբ: Իսլամական պետությունների ինտեգրացումն իրականացնելու համար Իսլամական կոնֆերանսի շրջանակներում հնչում են կազմակերպության բարեփոխման և վերակառուցման առա-

<sup>173</sup> Speech Delivered By H. E. The President of the Islamic Republic of Pakistan General Muhammad Zia Ul-Haq at the Opening Session Second General Conference of ISESCO, "Islam Today". ISESCO, April , 1986, p. 82.

ջարկներ, որպեսզի իսլամական կոնֆերանս կազմակերպությունը դառնա խիստ տեղեկացված և օպերատիվ մի համակարգ<sup>174</sup>:

Յարկ է նշել, որ կազմակերպության շրջանակներում իսլամական պետությունների ինտեգրացման գործընթացները ամենևին չեն նշանակում, որ կազմակերպության նպատակը միասնական իսլամական պետության ստեղծումն է, ինչն առաջ էին քաշում պանիսլամիզմի տեսաբանները: Իսլամական համերաշխության դրսնորումները և իսլամական ինտեգրացման գործընթացները կարելի է համարել պանիսլամիզմի վերափոխված մի տարրերակ: Իսլամական պետությունների ինտեգրացումն ավելի շատ ենթադրում է իսլամական ուժմայի համագործակցություն կամ դաշինք, որ պետք է փորձի իրականացնել միասնական իսլամական քաղաքականություն: Սակայն աշխարհի ներկայիս քաղաքական գործընթացները ցույց են տալիս, որ իսլամական աշխարհը դեռևս չի կարող հանդես գալ որպես մեկ միասնություն, իսկ իսլամական առանձին պետություններ պատրաստ են հանդես գալ արևմտյան պետությունների կողքին՝ ընդունելով իրենց հավատակից պետությունների:

Եղած հանգամանքները բույլ են տալիս եզրակացնել, որ Իսլամական կոնֆերանս կազմակերպության գաղափարական-քաղաքական հայեցակարգը հիմնվում է մի քանի կարևոր սկզբունքների վրա, որոնք են՝ իսլամական ազգի՝ ուժմայի, հայեցակարգը, համաձայն որի՝ բոլոր մահմեդականները իսլամական ազգի ներկայացուցիչ են, իսլամական ինտեգրացման և աշխարհում իսլամի տարածման ու նրա դիրքերի ամրապնդման գաղափարները:

<sup>174</sup> Final Communiqué of 28<sup>th</sup> Session of ICFM (June 25-27, 2001) <http://www.oic-un.org>

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ  
ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԱՇԽԱՐԺԻՆ ԱՌԱՋՎՈՂ ՀԻՄԱՋԱՐՑԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

1.Իսլամական կոնֆերանս կազմակերպության դիրքորոշումը  
պաղեստինյան խնդրի և արաբ-իսրայելական  
հակամարտության նկատմամբ

Հակամարտությունների կարգավորումը ներկայումս հանաշխարհային հասարակության առաջ ծառացած կարևորագույն խնդիրներից մեկն է, որոնք՝ որպես կանոն, շոշափում են տարբեր պետությունների շահերը: Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը բնականաբար ոչ միայն անդրադարձել է մահմեդականներին առնչվող հակամարտություններին (արաբ-իսրայելական, Պաղեստինի, Աֆղանստանի, Կիպրոսի, Ֆիլիպինների, Զամբիայի, Բոսնիայի, Չեչնիայի, Էրիթրեացիների և այլն), այլև բարոյական, ֆինանսական, տնտեսական աջակցություն ցույց տվել դրանց: ԻԿԿ-ն իր կարևորագույն խնդիրներից է համարում մասնակցությունը միջազգային այն հակամարտությունների լուծմանը, որոնցում ընդգրկված են մահմեդականներ: 1994թ. Կասարլանկայի գագաթնաժողովում ընդունված փաստաթղթի մեջ մասնավո-

րապես ասված է. «Անհրաժեշտ է համախմբել բոլոր ջանքերը՝ ամրապնդելու համերաշխությունը և միասնությունը, որպեսզի սատար կանգնենք իսլամական բոլոր խնդիրներին»<sup>175</sup>:

Մահմեդականներին առնչվող հակամարտությունների մեջ իսլամական կոնֆերանս կազմակերպության համար Պաղեստինի և Երուսաղեմի խնդիրները եղել են ամենակենսականը, այլ կերպ ասած՝ «խլամական ուժմայի գլխավոր խնդիրը»<sup>176</sup>: 1983թ. ժննում Պաղեստինի հարցով միջազգային կոնֆերանսում ԻԿԿ գլխավոր քարտուղար Յարիբ Շատտին հայտարարեց. «...Ներկա միջազգային համաժողովի քննարկման նյութը այն նույն հարցն է, որ եղել է մեր կազմակերպության ստեղծման հիմքը..., որ պահեստինյան հարցը դիտարկում է իրու իսլամական աշխարհի ամենագլխավոր հարցը»<sup>177</sup>:

1948-49թթ. արաբ-խրայելական պատերազմից հետո հակամարտությունը արաբների և իրեաների միջև ավելի խորացավ, իսկ 1967թ. և 1973թ. արաբ-խրայելական պատերազմներից հետո վերածվեց տարածաշրջանային հակամարտության:

1967թ. արաբ-խրայելական պատերազմից հետո Մերձավոր Արևելքում ստեղծված ռազմաքաղաքական լարվածությունը և Խսրայելի ագրեսիվ քաղաքականությունը նպաստեցին, որպեսզի պաղեստինյան հարցը քննարկվի ոչ միայն արաբական քաղաքական շրջանակներում,

<sup>175</sup> ۱۹۹۴/۱۲/۱۶ «النهار»

<sup>176</sup> ԻԿԿ-ի քանածերում, որոշումներում և հայտարարություններում Պաղեստինին և Երուսաղեմին վերաբերող հարցերը նման ծևակերպում են ստացել:

<sup>177</sup> Доклад международной конференции по вопросу о Палестине. Женева, 29 августа -7 сентября 1983г., ООН-Нью-Йорк, 1983, с. 69.

այլև՝ իսլամական ֆորումներում: Իսլամական աշխարհը լարված հետևում էր Պաղեստինում դեպքերի զարգացմանը<sup>178</sup>:

Իսլամական կոնֆերանս կազմակերպության շրջականերում իսրայելական ազրեսիայի և սիոնիզմի հարցերը կենտրոնական տեղ գրադարձին նաև այն պատճառով, որ 1967թ. Իսրայելի գրաված տարածքներում, մասնավորապես՝ Արևելյան Երուսաղեմում, հայտնվեցին իսլամական սրբավայրեր:

Իսլամական աշխարհի համար Պաղեստինը մշտապես եղել է մտահոգության առարկա: Բավական է նշել, որ այդ հարցը համախլամական շրջանակներում սկսել է քննարկվել դեռևս 1930-ականներին: 1931թ. Պաղեստինի մեծ մուժտի Ամին ալ-Քուսեյնի հրավիրած Երուսաղեմի կոնգրեսում առաջին անգամ պաղեստինյան հարցը քննարկվեց համամահմեղական մակարդակով, որտեղ մատնանշվեց Պաղեստինում իսլամական սրբավայրերին սպառնացող սիոնիստական էքսպանսիայի վտանգը<sup>179</sup>:

Իսլամական սրբավայրերի ազատագրումը, պաղեստինյան ժողովրդի ազգային պայքարին աջակցելը և նրանց իրավունքների վերականգնումը կազմակերպության համար սկզբունքային խնդիր է, որի մասին նշված է ԻԿԿ կանոնադրության մեջ<sup>180</sup>:

Պաղեստինի, ընդհանրապես մերձավորարևելյան իրավիճակի հարցը, իսլամական կոնֆերանս կազմակերպությունը քննարկել է մինչև օրս տեղի ունեցած բոլոր գագաթնաժողովների, արտաքին գործերի

<sup>178</sup> Մերձավորարևելյան խնդիր լուծման իսլամական հայեցակարգի մասին տե՛ս՝ Ա. Կյուրիան, Կոնцепция “исламского решения” ближневосточного проблематики. В кн.: “Исламский фактор” в международных отношениях в Азии, М., 1987, с. 77-88.

<sup>179</sup> Այս մասին մանրամասն տե՛ս՝ 1949, ՀՀՀ, Բերուտ:

<sup>180</sup> Charter of the Islamic Conference, The Islamic Summit Conference, նշվ. ժողովածուի մեջ, էջ 56:

նախարարների կոնֆերանսների և այլ հանդիպումների ընթացքում: ԻԿԿ-ն իր համերաշխությունն է հայտնել պաղեստինցի ժողովրդի ազգային պայքարին: Ամեն տարի կազմակերպության շրջանակներում նոյեմբերի 29-ը նշվում է որպես պաղեստինցի արար ժողովրդի պայքարի համերաշխության միջազգային օր<sup>181</sup>:

«Սառը պատերազմի» տարիներին գերտերությունների միջև առկա հականարտությունը, տարածաշրջանի բնեօացումը մի կողմից ԱՍՍ-ի և Խորայելի, մյուս կողմից ԽՍՀՄ-ի և նրա դաշնակիցների միջև, անհնարին դարձեց մերձավորարևելյան ճգնաժամի կարգավորությունը: Մերձավոր և Միջին Արևելքում գերտերությունների դիմակայությունը իր ազդեցությունն ունեցավ նաև մերձավորարևելյան խնդրի նկատմամբ Խաղաղական կոնֆերանս կազմակերպության դիրքորոշման վրա: Պաղեստինյան հարցի և արաբ-խորայելական հականարտության կարգավորման վերաբերյալ խաղաղական առանձին պետությունների միջև գոյություն ունեցող հակասությունները նույնպես իրենց դերն ունեցան ընդհանուր կարծիքի ձևավորման հարցում: Զնայած այս ամենին՝ Պաղեստինի և Երուսաղեմի, ինչպես նաև արաբ-խորայելական հականարտության հարցում խաղաղական պաշտոնական դիրքորոշումը ընդհանուր գծերով մնաց անփոփոխ և վերջնական: Պաղեստինյան հարցը դիտարկվեց իբրև «մերձավորարևելյան հականարտության միջուկ», իսկ Երուսաղեմի հարցը՝ «պաղեստինյան խնդրի եռաթյուն»:

1974թ. խաղաղական պետությունների դեկավարների Լահորի գագաթնաժողովի հայտարարության մեջ նշված է, որ պաղեստինցի ժո-

<sup>181</sup> Message of His Excellency Dr. Azzedin Laraki on the Occasion of the International Day of Solidarity with the Palestinian People, 29 November 1999 <http://www.oic-un.org> Սիօնազգային հանրությունը պահեստինցների հետ համերաշխության օրը նշում է ՍԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1977 թ. No. 32/40-B բանաձևի շրջանակներում:

ղովրդի խնդիրը բոլոր նրանց խնդիրն է, ովքեր հավատում են, որ յուրաքանչյուր ժողովուրդ իրավունք ունի իր ճակատագիրը տնօրինել սեփական կամքով: “Պաղեստինցի ժողովորդի իրավունքների վերականգնումը իր հայունիքում պաղեստինյան հարցի լուծման և մշտական խաղաղության հաստատման հիմնական պայմանն է”<sup>182</sup>:

1970-ականների վերջին ԽՍՀՄ ական կոնֆերանս կազմակերպության որդեգրած խսլամական դիրքորոշումը “Պաղեստինի և արաբ-իսրայելական հակամարտության հարցում խախտեց Եգիպտոսը 1978թ. սեպտեմբերին՝ Քենի-ՂԱկիդում Խորայելի հետ կնքելով անջատ հաշտության պայմանագիր”<sup>183</sup>:

Եգիպտոսի գործողությունները և Քենի-ՂԱկիդի համաձայնագիրը մեծ աղմուկ հարուցեցին արաբական աշխարհում: Եգիպտոսը կորցրեց իր գերակայող դերը, արաբական երկրների ճնշող մեծամասնությունը խզեց դիվանագիտական կապերը Եգիպտոսի հետ: Եգիպտոսի անդամակցությունը կասեցվեց Արաբական պետությունների լիգայում, որի նստավայրը Կահիրեից տեղափոխվեց Թունիս<sup>184</sup>:

ԽՍՀՄ ական կոնֆերանս կազմակերպությունը նույնականութեն հանդես եկավ Քենի-ՂԱկիդի համաձայնագրի դեմ: 1979թ. Ֆեսում խսլամական պետությունների արտաքին գործերի նախարարների հանդիպմանը դատապարտվեց Եգիպտոսի նախագահ Ա. Սադաթի քաղա-

<sup>182</sup> 1997/9/12 «ثعلب»

<sup>183</sup>Տե՛ս Ե. Պրիմակով. Մի դավադրության պատմություն, ԱՄՆ-ի մերձավորակելյան քաղաքանակությունը 70-ական թթ. և 80-ական թթ. սկզբներին, Եր., 1987, էջ 244:

<sup>184</sup> Л. Вальевова, Роль “исламского фактора” и арабского национализма в формировании внешнеполитического курса руководства Саудовской Аравии, Ислам и проблемы национализма в странах Ближнего и Среднего Востока, М., 1986, с. 95.

քականությունը, իսկ Եգիպտոսի անդամակցությունը. նպատակները, գործունեությունը»:

Այս միտումը Խաղամական կոնֆերանս կազմակերպության շրջանակ-ներում շարունակվեց բավական երկար ժամանակ: 1981թ. Սառույան Արարիայի նախաձեռնությամբ Մեքքայում հրավիրված գագաթնաժողովի հոչակագրում նշվեց, որ Խաղամական կոնֆերանս կազմակերպությունը մերժում է բոլոր տեսակի անջատ նախաձեռնությունները պաղեստինյան և արարական գրավյալ տարածքների խնդիրը կարգավորելու հարցում: Որոշվեց պատժամիջոցներ կիրառել այն երկրների դեմ, ովքեր «...ռազմական, տնտեսական և քաղաքական աջակցություն են ցույց տալիս սիրոնիստական շրջանակներին»<sup>185</sup>:

Պաղեստինյան հակամարտության կարգավորման խաղամական ծրագրի վերուժությունը թույլ է տալիս բացահայտել հիշյալ խնդիր վերաբերյալ Խաղամական կոնֆերանս կազմակերպության դիրքորոշման առանձնահատկությունը:

Խաղամական բարձրագույն քաղաքական մարմինը հայտարարում է խաղամական պետությունների պատրաստակամությունը՝ օգտագործելու ռազմական, քաղաքական և տնտեսական բոլոր միջոցները, ինչպես նաև բնական ռեսուրսները, ներառյալ՝ նավթը՝ որպես ազդեցիկ միջոց՝ պաղեստինցի ժողովողի հրավունքները պաշտպանելու և Խսրայելին ռազմական, տնտեսական և քաղաքական աջակցություն ցույց տվող երկրների դեմ պայքարելու համար:

Նման դրույթներ պարունակում են Խաղամական կոնֆերանս կազմակերպության մի շարք բանաձևեր ու որոշումներ: 1975թ. խաղա-

<sup>185</sup> The Tenth Foreign Ministers' Conference-Fes (1979), The Islamic Summit Conference, ճշգ. ժողովածովի մեջ, էջ 23:

<sup>186</sup> ТАСС, БПИ, 5 փետրար, 1981թ., էջ 18.

կան պետությունների արտգործնախարարների Զիդայի հանդիպմանն ընդունված բանաձևում, որը մշակել էին Սիրիան և ՊԱԿ-ը, որոշվեց, որպեսզի իսլամական պետությունները Խրայելի հետ խօեն քաղաքական, տնտեսական և մշակութային կապերը: Սիւնույն ժամանակ ԻԿԿ-ն ՄԱԿ-ի առաջ հարց բարձրացրեց Խրայելին ՄԱԿ-ից հեռացնելու մասին, քանի որ վերջինս չի կատարել արաբական գրավյալ տարօքներից դուրս գալու և այլ պարտավորվածությունների մասին ՄԱԿ-ի որոշումները<sup>187</sup>:

Զիդայի հանդիպմանը քննադատության ենթարկվեց ԱՄՆ-ի ռազմական և տնտեսական օգնությունը Խրայելին, որ թույլ է տալիս նրան չկատարել ՄԱԿ-ի որոշումները և շարունակել պաղեստինյան և այլ արաբական տարածքների օկուպացիան<sup>188</sup>:

Արաբ-խրայելական հարցում Խրայելական կոնֆերանս կազմակերպության ղիրքորշմանը անմիջապես արձագանքեց ամերիկյան վարչակազմը: “Պետքարտուղար Յ. Քիսինցերը անհրաժեշտ համարեց զգուշացնել զարգացող Երկրներին, որ եթե Խրայելը հեռացվի ՄԱԿ-ից, ԱՄՆ-ը կդադարեցնի ֆինանսական օգնություն տրամադրել միջազգային այդ կազմակերպությանը<sup>189</sup>:

\*\*\*

Ուշադրության է արժանի հատկապես Խրայելի բոյկոտի և մերժման իսլամական հայեցակարգը: ԻԿԿ շրջանակներում ստեղծվել է Խրայելի դեմ բոյկոտի բաժին, որը հանգործակցում է Արաբական լիգայի նույնանման կառույցի հետ: Բոյկոտի ելակետն այն էր, որ խրայելական պե-

<sup>187</sup> The Islamic Summit Conference, նշվ. ժողովածուի մեջ, էջ 18, 19:

<sup>188</sup> Ազգային տեղում:

<sup>189</sup> Л. Валыкова, Саудовская Аравия: ислам, нефть, политика, М., 1988, с. 83.

տությունները ՄԱԿ-ում և միջազգային այլ կազմակերպություններում պետք է հետապնդեն հետևյալ նպատակները՝ չճանաչել ՄԱԿ-ում խրայելական պատվիրակության լիազորությունը, ձգտել սառեցնել Խրայելի անդամակցությունը այդ կազմակերպությանը, հետամուտ լինել Խրայելի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու մասին որոշումների ընդունմանը՝ համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության VII հոդվածի<sup>190</sup>:

Ծիշտ է, ներկայունս Խրայելի դեմ բոյկոտի սկզբունքները վերանայվել են, սակայն Խրայելի մերժման և նրա հետ հարաբերություններ չհաստատելու համախանական դիրքորոշումը անփոփոխ է, որը վերահստատվեց 1997թ. խւամական պետությունների Թեհրանի գագաթնաժողովում: Սիրիան և Իրաքը Թեհրանի գագաթնաժողովի քաղաքական հարցերի օրակարգին երկու բանաձև էին ներկայացրել, որոնցից առաջինը դատապարտում էր Թուրքիային՝ Խրայելի հետ ռազմական համագործակցության համար, իսկ երկրորդը՝ քուրդ հեղափոխականներին հալածելու նպատակով Իրաքի հյուսիսի ներթափանցելու համար<sup>191</sup>:

Ի նշան բողոքի՝ Թուրքիայի նախագահ Ռեմիրելը լրեց գագաթնաժողովի դահլիճը: Սակայն արաբական որոշ շրջանակների հաջողվեց թուլացնել լարվածությունը և մեղմացնել բանաձևը, որպեսզի Թուրքիայի անունը բանաձևում չիշխատակվի: Լրագրողներին տված հարցազրույցում Եգիպտոսի արտգործնախարար Ամր Մուսան այս կապակցությամբ ասաց. «Մենք պետք է խնդիրը դրականորեն լուծենք, այնպես, որ

<sup>190</sup> Е. Примаков, Ататомия ближневосточного конфликта, М., 1978, с. 24.

<sup>191</sup> ۱۹۹۷/۱۲/۸ «رأي»

Թուրքիային չկորցնենք և միևնույն ժամանակ կասեցնենք նրա ռազմական համագործակցությունը Խորայելի հետ»<sup>192</sup>:

Արաբական մի շարք Երկրների անհանգստացնում է Թուրքիա-Խորայել ռազմական համագործակցությունը, որը նրանց կարծիքով՝ «խոչընդոտում է Միջին Արևելքում խաղաղությանն ուղղված ջանքերը»<sup>193</sup>:

Թեհրանում ընդունվեց Խորայելի հետ խլամական Երկրների համագործակցությունը դատապարտող հատուկ բանաձև, որտեղ որևէ խլամական պետություն չանվանարկվեց: Կազմակերպության նման վարչագիծը մատնանշում է, որ խլամական բարձրագույն քաղաքական մարմնի նպատակը ոչ թե խլամական պետություններին քննադատելն է, այլ՝ խլամական աշխարհը միասնական և համերաշխ ներկայացնելը: Միևնույն ժամանակ Խլամական կոնֆերանս կազմակերպությունը ձգտում է ցույց տալ, որ Խորայելի հետ ցանկացած համագործակցության փորձ դատապարտելի է և հակասում է խլամական համերաշխության սկզբունքներին:

\*\*\*

Խլամական կոնֆերանս կազմակերպության ջանքերն ուղղված են եղել կասեցնելու արաբական գրավյալ տարածքներում հրեական թնակավայերի կառուցումը: Խորայելի քաղաքականությունը միտված է 1967թ. գրաված արաբական տարածքների յուրացմանը: Այն լուրջ

<sup>192</sup> 1997/8/12 «الدستور»

<sup>193</sup> 1997/8/12 «الرأي» 1996թ. Թուրքիայի և Խորայելի միջև կնքվել է ռազմական համագործակցության պայմանագիր:

խոչընդուներ է ստեղծում պաղեստինյան խնդրի կարգավորման հարցում<sup>194</sup>:

1978-ին Դաքարում իսլամական պետությունների արտգործնախարարների հանդիպման ժամանակ ընդունված քանաձևում մասնավորապես նշված է. «Այն բոլոր միջոցառումները, որոնք ծեռնարկել են Խորայելը արաբական գրավյալ տարածքներում՝ սկսած 1948 և 1967 թվականներից, նպատակ ունեն փոխել դրանց քաղաքական, աշխարհագրական, սոցիալական և մշակութային պատկերը»: Փաստաթում մատնաշված է սինոնիմական կառույցների ընդլայնումը, որ «անհիմն և անընդունելի է»: Այդ իսկ պատճառով կոչ արվեց հնարավոր բոլոր միջոցներով հակազդել Խորայելի նման նախաձեռնություններին<sup>195</sup>:

1994թ. Կասարլանկայի գագարնաժողովում պահանջվեց դադարեցնել պաղեստինցների դեմ ահարեկչական գործողությունները, ինչպես նաև՝ իսլամական վակֆերի բռնագրավումը, իսկ իսլամական և քրիստոնեական սրբաբայրերում բռնությունները կանխելու նպատակով պահանջվեց անհրաժեշտ միջազգային պաշտպանություն կազմակերպել: ԻԿԿ-ն դատապարտեց ալ-Ակսա մզկիթը խորայելական հող համարելու Խորայելի գերագույն դատարանի 1993թ. սեպտեմբերի 23-ի որոշումը<sup>196</sup>:

1996-ին իսլամական պետությունների արտգործնախարարների Զակարտայի հանդիպմանը միջազգային հանրությանը, հատկապես Եվրամիության անդամ պետություններին կոչ արվեց ճնշում գործադրել Խս-

<sup>194</sup> 1967-1976թթ. գրավյալ տարածքներում հիմնվել է 68 խորայելական քնակավայր: Այս մասին մանրամասն տես՝ Ե. Պրիմակօն, Անատոլիա Ցույկու աշխատավայրը, Մ., 1978, ը. 24.

<sup>195</sup> 1978 Հայաստանի պաշտոնական գործադրության մասին օրենքը:

<sup>196</sup> Documents D'Actualite Internationale, No. 6, 15 Mars, 1995, p. 179-184.

րայելի վրա՝ կասեցնելու պաղեստինյան և արաբական գրավյալ տարածքներում, մասնավորապես՝ Երուսաղեմում Իսրայելի վերաբնակեցումը, հողերի զավթումը, նոր բնակավայրերի կառուցումը, որոնք խախտում են միջազգային օրենքը<sup>197</sup>:

Խսլամական բարձրագույն քաղաքական մարմնը քանիցս դատապարտել է ԽԱԴՄ-ից և Արևելյան Եվրոպայից հրեաների արտագաղթը Իսրայել և բնակեցումը արաբական գրավյալ տարածքներում, քանի որ այն խախտում է միջազգային իրավունքը և ապակայունացնում իրավիճակը<sup>198</sup>:

\*\*\*

Մերձավորարևելյան հականարտության առանցքային հարցերից մեկը Երուսաղեմի (ալ-Կուտս աշ-Շարիֆ) հարցն է, որ ուղղակիորեն առնչվում է պաղեստինյան հիմնախնդրին և խսլամական աշխարհի հետաքրքրություններին: Կազմակերպությունը անընդունելի է համարում 1947թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի՝ նոյեմբերի 29-ի 181 (11) որոշումը, որով Երուսաղեմին տրվել էր միջազգային կարգավիճակ՝ որպես առանձին միավոր (*corpus separatum*): ՄԱԿ-ի Ենթակայությամբ՝ փաստարկելով, որ Երուսաղեմի խնամակալությունը վերապահված է միայն մահմեդականներին:

1974թ. Լահորի գագաթնաժողովում ընդունված բանաձեկի մեջ Երուսաղեմի մասին մասնավորապես ասված է. «Ալ-Կուտսը սրբազան աստվածային կրոնների հետ խսլամի մերձեցման անզուգական խորհրդանիշն է: Ավելի քան 1300 տարի մահմեդականները հանձն են առել Երու-

<sup>197</sup> إختتام المؤتمر الإسلامي بجامعة تونس ١٩٩٦ / ١٢ / ١٣ («أُلْشَرِقُ أَنْوَسْطَ»)

<sup>198</sup> ТАСС, БПИ, №. 164, 23 августа, 1990, с. 18, 19.

սաղեմի խնաճակալությունը նրանց համար, ովքեր խորին պատկառանք են տածել նրա հանդեպ: Միայն մահմեդականները կարող են սիրել և անաչառ կերպով պահպանել այն պարզ պատճառով, որ միայն մահմեդականներն են հավատում երեք մարգարեական կողոններին, որոնց արմատները Երուսաղեմում է: Ցանկացած պայմանագիր, արձանագրություն կամ համաձայնագիր, որ կիաստատի Խսրայելի օկուպացիայի շարունակությունը Երուսաղեմ սուրբ քաղաքում, կամ կիանձնի այն ոչ արաբական իշխանության, կամ էլ գործարքի և գիշճան առարկա կղարձնի, անընդունելի կլինի խսլամական Երկրների համար: Երուսաղեմից Խսրայելի հեռացումը հիմնական և անփոփոխ նախապայմանն է Միջին Արևելքում խաղաղության հաստատման համար»<sup>199</sup>:

Նույն բանաձևի մեջ նշված է, որ արաբական գրավյալ տարածքների և մասնավորապես Երուսաղեմի բնույթը փոխելու Խսրայելի ցանկացած նախաձեռնություն միջազգային օրենքի աղաղակող խախտում է և անհամատեղելի՝ Խսլամական կոնֆերանս կազմակերպության անդամ պետությունների և ընդհանրապես խսլամական աշխարհի գգացմունքներին<sup>200</sup>:

1975թ. Զիդիայի հանդիպմանը Սաուդյան Արաբիայի առաջարկով ստեղծվեց Երուսաղեմի հանձնաժողովը, որ գրադվելու էր քաղաքի «հուդայականացման» ծրագրերի հայտնաբերմամբ և քննադատությամբ, քարոզչական խնդիրներով, Երուսաղեմի արաբական խսլամական բնույթի մասին համաշխարհային հասարակական կարծիք ստեղծելու աշխատանքներով: Դանձնաժողովը, որի նախագահությունը

<sup>199</sup> The Middle East Journal, No. 32, March , 1974, p. 172.

<sup>200</sup> Նույն տեղում, էջ 175:

ստանձնեց Մարոկկոյի թագավոր Յասան II-ը, ներկայացնում էին անդամ 15 երկրների արտգործնախարարներ:

1980թ. Խորայելի քննեսետը Երուսաղեմը հայտարարեց Խորայելի «հավերժական և անբաժանելի մայրաքաղաքը», որ խորամական աշխարհում նոր տագնապներ առաջարկեց: Խորամական կոնֆերանս կազմակերպության արծագանքն այս հարցում եղավ ակտիվ աշխատանքը ՍԱԿ-ում և խորամական շրջանակներում: 1980թ. ՍԱԿ-ում Պակիստանի մշտական ներկայացուցիչը ԻԿԿ-ի անունից պահանջեց անճիշտապես հրավիրել ԱԽ նիստ՝ քննարկելու Խորայելի քննեսետի որոշումը: Օգոստոսի 13-ին ԻԿԿ 35 պետություններ ներկայացրեցին մի նախագիծ, որ դարձավ ԱԽ 478 բանաձևի հիմքը<sup>201</sup>: Այն խստորեն դատապարտեց Արևելյան Երուսաղեմի վերաբերյալ Խորայելի քննեսետի որոշումը<sup>202</sup>:

1980թ. Խորամական մայրաքաղաքների և քաղաքների կազմակերպության ստեղծման հիմնական նպատակներից մեկն էլ այն էր, որ Երուսաղեմը ճանաչվի որպես այս կառույցի լիիրավ անդամ: 1980թ. մայիսին խորամական պետությունների արտգործնախարարների Խորամաքաղի արտահերթ հանդիպման ընթացքում խորամական պետություններից պահանջվեց՝ նզել դիվանագիտական հարաբերությունները ցանկացած երկրի հետ, որ կտեղափոխի իր դեսպանատունը Երուսաղեմ կամ կօճանաչի այն՝ որպես Խորայելի մայրաքաղաք<sup>203</sup>:

<sup>201</sup> П. Мищенко, Проблема урегулирования ближневосточного конфликта в деятельности Организации Исламская конференция, "Зарубежный мир: Социально-политические и экономические проблемы", вып. 2, Киев, 1986, с. 96-97.

<sup>202</sup> Палестинская проблема. Документы ООН, международных организаций и конференций, М., 1984, с. 177.

<sup>203</sup> The Eleventh Foreign Ministers' Conference (1980). The Islamic Summit Conference, նշվ. ժողովածության մեջ, էջ 25:

Արդյունքում մի շարք պետություններ՝ Վենեսուելան, Չիլին, Էկվադորը, դուրս բերեցին իրենց դիվանագիտական առաքելությունները Երուսաղեմից: Չնորսանանք նշել, որ Արևոտյան Երուսաղեմը Խսրայելի մայրաքաղաք էր հոչակվել դեռևս 1950-ին, ուր և տեղափոխվել էր խսրայելական խորհրդարանը: Սակայն խսրայելական իշխանությունների այս որոշումները աշխարհի պետությունների մեջ մասի համար զննութելի չեն:

1981թ. Մեքքայի գագաթնաժողովում Խսրայելական կոնֆերանս կազմակերպությունը ջիհադ հայտարարեց բռնազավթված Պաղեստինը՝ արարական տարածքները և սրբավայրերը ազատագրելու համար: «Մենք հանդիսավոր խոստում ենք տալիս ջիհադ հայտարարել մեր տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով՝ ազատագրելու ալ-Կուտուզ և գրավյալ տարածքներով», - նշված է հոչակագրում<sup>204</sup>:

«Ֆրանս Պրես» գործակալությանը տված հարցազրույցում սառւեյան թագաժառանձ Սաուտ ալ-Ֆեյսալը հստակեցրեց, որ ջիհադ հայտարարել չի նշանակում պատերազմ հայտարարել: Նրա մատնանշմանը՝ ջիհադը նաև ինքնակատարելագործվելու կոչ է<sup>205</sup>:

Եվ իսկապես, Ֆեյսալի խոսքերը հաստատեցին իրենց ճշմարտությունը: Խսրայելական պետությունները որևէ ռազմական միջոցներ չձեռնարկեցին Երուսաղեմի ազատագրության համար:

1982թ. Խսրայելական պետությունների արտաքին գործերի նախարարների Նիհամեյի կոնֆերանսում ընդունված բանաձեռնությունը մեջ մասնավորապես ասված է. «...ալ-Կուտուզ աշ-Շարիֆի ազատագրումը խսրայելական օկուպացիայից, այնտեղ արաբական և խսրայելական ինքնակարության վերականգնումը այնպես, որ այն դառնա անկախ պաղեստին-

<sup>204</sup>The Mecca Declaration. The Islamic Summit Conference, նշվ. ժողովածուի մեջ, էջ 48:

<sup>205</sup> Հ. Ջևան, Ա. Իգնատենկո, Ислам на пороге XXI века, М., 1989, с. 223.

յան պետության մայրաքաղաք՝ Պաղեստինի ազատագրության կազմակերպության դեկավարությամբ և սրբազն վայրերի ազատագրումը ռասիստական սիոնիստական օկուպացիայից, ջիհաողի նպատակներից մեկն է, որ պետք է մղեն մահմեդական բոլոր ժողովուրդները և կառավարությունները՝ մասնակից դառնալով իրենց հնարավորությունների սահմաններում»<sup>206</sup>:

Մոտ 15 տարի աշխարհի ոչ մի պետություն չէր ճանաչում Խսրայելի քննեսետի որոշումը՝ Երուսաղեմը Խսրայելի «հավերժական և անբաժան» մայրաքաղաք հայտարարելու վերաբերյալ և որոշում չէր ընդունում իր դիվանագիտական ներկայացուցչությունը Թել-Ավիվից Երուսաղեմ տեղափոխելու մասին։ Սակայն ԱՄՆ-ի կոնգրեսը 1995թ. որոշեց իր երկրի դեսպանությունը տեղափոխել Երուսաղեմ, որն առաջացրեց իւլամական Երկրների խիստ դժգոհությունը։

1995թ. իւլամական պետությունների արտգործնախարարների Կոնակրիի կոնֆերանսը դատապարտեց ԱՄՆ-ի կոնգրեսի այս որոշումը և այն մարտահրավեր համարեց իսլամական ժողովուրդներին։ Կոնակրիի համոհապման մասնակինցները դիմեցին ամերիկյան իշխանություններին՝ գերծ մնալու այդ որոշումն իրագործելուց, քանի որ ԱՄՆ-ը, ինչպես Շշված է, խաղաղության գործնքացի հովանավորն է։ Վերստին դատապարտվեց Խսրայելի քաղաքականությունը իսլամական սրբավայրերի նկատմամբ, մասնավորապես՝ ալ-Ակսա մզկիթը խրայելական հող համարելու, Հարամ Իբրահիմը<sup>207</sup> մասնատելու միջոցառումները<sup>208</sup>։

<sup>206</sup> Палестинская проблема, №2. Ժողովածուի մեջ, էջ 181, 182:

<sup>207</sup> Դամաձայն մահմեդական ավանդության՝ Հերքոնում (ալ-Խալիլ) գտնվող մահմեդական մարզարք Իբրահիմի գերեզմանաստան շուրջը գտնվող տարածքը՝ Հարամ Իբրահիմը հանդպում է իսլամական սրբատեղի։

<sup>208</sup> 1995/12/13 «Արարու»

1994թ. Կասաբլանկայի գագաթնաժողովի ընթացքում ԽՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆԴԵՐԱՆՍ ԿԱԶՄԱԿԵՐԱՊՈՒԹՅՈՒՆԸ դիմեց աշխարհի բոլոր Երկրներին, որպեսզի նրանք չմասնակցեն Երուսաղեմի Երրորդ հազարամյակին նվիրված Խորայելի կազմակերպած տոնակատարություններին: Նա կոչ արեց ԽՍԼԱՄԱԿԱՆ պետություններին՝ Երուսաղեմի հետ քույր քաղաք Դառնալ, ճանաչել այն որպես Պաղեստինի մայրաքաղաք, օգտագործել Երուսաղեմի դրոշմաթուղթը, բարեգործական աշխատանք տանել Երուսաղեմի ֆոնդերի համար, շարունակել միջազգային կազմակերպությունների հետ Երուսաղեմին նվիրված սիմպոզիումներ կազմակերպելը, օգնել այն ուսումնական հաստատություններին, որոնք կարող են նպաստել Երուսաղեմի քարոզչությանը, ֆինանսական օգնություն ցույց տալ՝ Երուսաղեմում հուշարձաններ կառուցելու համար և այլն<sup>209</sup>:

Մինչ օրս Երուսաղեմի հարցը մերձավորարևելյան հակամարտության ամենախճճված խնդիրներից մեկն է: Խորայելը միանշանակ հայտարարում է ամբողջ Երուսաղեմի նկատմամբ իր հավակնությունների մասին: Միևնույն ժամանակ խՍԼԱՄԱԿԱՆ աշխարհը մտադիր չէ հրաժարվել խՍԼԱՄԱԿԱՆ սրբավայրերի նկատմամբ իր հրավունքներից, որոնք գտնվում են Նին քաղաքում<sup>210</sup>:

\*\*\*

Արաբ-խորայելական հակամարտության հարցում հետաքրքրություն է ներկայացնում նաև պաղեստինյան հարցի շուրջ ՄԱԿ-ի ընդունած որոշումների և մերձավորարևելյան ճգնաժամի կարգավորման վերաբերյալ հԿԿ դիրքորոշման բացահայտումը:

<sup>209</sup> Documents D'Actualité Internationale No. 6, 15 Mars, 1995, pp. 181-182.

<sup>210</sup> Е. Дмитриев, В. Ладейчен, Путь к миру на Ближнем Востоке, М., 1974, с. 129.

Արար-իսրայելական հակամարտության հարցում իսլամական բարձրագույն քաղաքական մարմնի դիրքորոշումը ծևավորվել է հիշյալ խնդրի վերաբերյալ ՄԱԿ-ի ընդունած որոշումների համատեքստում: 1967թ. նոյեմբերի 22-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունեց 242 հայտնի որոշումը, որ թեև համապարփակ և հավասարակշռված բնույթ ուներ, սակայն անտեսում էր պաղեստինցիներին ինքնորոշման իրավունք տալու անհրաժեշտությունը՝ պաղեստինյան խնդիրը դիտարկելով գուտ որպես փախստականների խնդիր<sup>211</sup>:

Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը 242 բանաձեռ անընդունելի համարեց իսլամական աշխարհի տեսանկյունից, որի վերաբերյալ Մեքքայի հոչակագրում նշված է. «...Անվտանգության խորհրդի 242 բանաձեռ անհամատեղելի է պաղեստինցիների և արաբների իրավունքներին և չի կարող համապատասխան հիմք դառնալ Մերձավոր Արևելքում ճգնաժամի կարգավորման և պաղեստինյան հիմնահարցի լուծման համար»<sup>212</sup>:

Կարելի է նկատել, որ Իսլամական կոնֆերանս կազմակերպության դիրքորոշումն այս հարցում համընկնում էր արաբական արմատական մոտեցում ունեցող պետությունների տեսակետին համաձայն որի Պաղեստինի արաբական պետություն պետք էր ստեղծել պատմական Պաղեստինի ողջ տարածքի վրա, մերժել Իսրայելի՝ որպես պետության գոյությունը, հետևաբար՝ 242 բանաձեռ: Մինչդեռ չափավոր դիրքորոշում ունեցող պետությունները պահանջում էին ազատագրել արար-իսրայելական վերջին պատերազմների ժամանակ Իսրայելի կողմից գրաված տարածքները, իսկ Արևմտյան ափի և Ղազայի շրջանում ստեղծել պա-

<sup>211</sup> Е. Дмитриев, Палестинский узел, М., 1978, с. 110.

<sup>212</sup> ТАСС, БПИ, №. 25, 5 февраля, 1981, с. 18.

դեստինյան պետություն: Սակայն նրանք անընդունելի էին համարում 242 բանաձեռ, քանի որ դրանում հիշատակված չէր պաղեստինցի ժողովորի իրավունքները, իսկ Պաղեստինի հարցը ներկայացված էր իրև փախստականների խնդիր:

1984թ. Կասարլանկայի գագարնաժողովում խլամական պետությունների ղեկավարները հավանության արժանացրին մերձավորարևելյան խաղաղ կարգավորման ութ կետից կազմված համարաբական ծրագիրը, որ մշակվել էր արաբական երկրների ղեկավարների Ֆեսի հանդիպմանը, ուր իհմք էր ընդունվել Սաոււյան Արաբիայի թագաժառանգ Ֆահդ թագավորի կազմած նախագիծը հակամարտության խաղաղ կարգավորման վերաբերյալ<sup>213</sup>:

Զնորանանք նշել, որ Կասարլանկայի գագարնաժողովը կարևորվում է նաև Եգիպտոսի անդամակցությունը Խլամական կոնֆերանս կազմակերպությունում վերականգնելու հանգամանքով՝<sup>214</sup>:

1991թ. հոկտեմբերի 30-ին Մադրիդում կայացավ Մերձավոր Արևելքի խաղաղությանը նվիրված համաժողովը: Առաջին անգամ միջազգային կոնֆերանսին նաև պաղեստինցիները, որոնք հանդես եկան իրքև հակամարտության կողմ, և որ ամենակարևորը՝ առաջին անգամ կողմերը համաձայնեցին շարունակել բանակցությունները երկու

<sup>213</sup> 1982թ. սեպտեմբերի 9-ին արաբական երկրների բարձր մակարդակի Ֆեսի հանդիպմանը սահմանվեցին մերձավորարևելյան ճշնաժամի խաղաղ կարգավորման հետևյալ սկզբունքները՝ Խորաբեկի գործերի դուրս բերումը 1967թ. գրավական տարածքներից, 1967-ից հետո արաբական գրավական տարածքներում կառուցված բնակավայրերի վերացունք, պաղեստինցի ժողովորի ինքնորոշման և ՊԱԿ-ի գլխավորությամբ իր ազգային իրավունքների իրագործումը երուսալեմ մայրաքաղաքով անկախ Պաղեստինի արաբական պետության ստեղծումը և այլն: Այս ժաման տես՝ Ե. Պարուս, Ելույթական լամիրուց, Մ., 1996, ս. 76.

<sup>214</sup> Այս ժաման մանրամասն տես՝ В. Сычев, Новые тенденции в деятельности «Организации исламской конференции (ОИК)». В кн.: Современный ислам: проблемы политики и идеологии. Вып. 3, часть 2, М., 1985, с. 133, 134.

գուգահեռ ուղղություններով՝ իսրայելա-պաղեստինյան և իսրայելա-արաբական:

Մադրիդի համաժողովը իսլամական աշխարհում ընդհանուր առմանք դրական գնահատվեց: Այս կապակցությամբ 1994թ. Կասարլանկայում տեղի ունեցած իսլամական պետությունների դեկավարների գագարնաժողովի ամփոփիչ հայտարարության մեջ մասնավորապես ասված է. «Մեր գոհունակությունն ենք հայտնում ներկա խաղաղության գործընթացից և հաստատում ենք Անվտանգության խորհրդի 242, 338, 425 որոշումների և «հոդ խաղաղության դիմաց» բանաձևի հիման վրա արդար և համապարփակ խաղաղության վերականգնման, ինչպես նաև՝ արաբական ու պաղեստինյան բոլոր գրավյալ հողերի վերադարձի անհրաժեշտությունը, ներառյալ՝ ալ-Կուտս աշ-Շարիֆը, սիրիական Գոլանը, Լիբանանի հարավը, Երաշխավորել պաղեստինցի ժողովրդի ինքնիշխանությունը իր հողերի և հայրենիքի վրա, ինտ վերադարձնել սեփական ճակատագիրը տնօրինելու և ալ-Կուտս աշ-Շարիֆ մայրաքաղաքով անկախ պետություն ստեղծելու նրա իրավունքը...»<sup>215</sup>:

Գագարնաժողովը վտանգավոր համարեց այն փաստը, որ Իսրայելը շարունակում է խուսափել՝ կատարելու միջազգային որոշումները և այս խնդրի շուրջ իրավիրեց խաղաղության կոնֆերանսի հովանավորների և միջազգային հանրության ուշադրությունը<sup>216</sup>:

1997թ. Թեհրանի գագնաքաժողովում ընդունված ամփոփիչ փաստաթղթում արտացոլված էր արաբական իսլամական աշխարհի դժուհությունը խաղաղության գործընթացի նկատմամբ Իսրայելի քաղաքական վարչագծից:

<sup>215</sup> إعلان الدار البيضاء، ١٩٩٤/١٢/١٦ («أنصار»).

<sup>216</sup> Նույն տեղում:

1998թ. խլամական պետությունների արտգործնախարարների Շոհայի կոնֆերանսում Բենիամին Նաբանյահովի իշխանությունը նեղադրվեց Միջին Արևելքում խաղաղության գործընթացը տապալելու մեջ: Յանդիպան ամփոփիչ հայտարարության մեջ մասնավորապես ասված է. «Խորայելը խախտել է խաղաղության գործընթացի սկզբունքներն ու հիմունքները, ինչպես նաև հրաժարվում է կատարել իր պարտականությունները, համաձայնագրերը, որոնք ամրագրվել են խաղաղության գործընթացի շրջանակներում, ուստի խաղաղության գործընթացը վտանգավոր փուլ է թևակոխում, որի ամբողջ պատասխանատվությունը կրում է Խորայելի կառավարությունը»<sup>217</sup>:

Կոնֆերանսը պահանջեց խլամական պետություններին՝ շարունակել Խորայելի դեմ բոյկոտի քաղաքականությունը. Խորախուսել այն պետություններին, ովքեր վերանայել են Խորայելի հետ ունեցած իրենց հարաբերությունները, փակել Խորայելի ներկայացուցչություններն ու գրասենյակները, մինչև Խորայելը դուրս չգա արաբական գրավյալ տարածքներից<sup>218</sup>:

Կոնֆերանսից հետո մամուլի ասուլիսում կատարի արտգործնախարար շեյխ Ջամադ բին Զաքեր բին Զասեն Ալ Թանին նշեց, որ կատարում փակվել էր Խորայելական առևտությունը: Նա ասաց, որ կատարը և Օմանը 1993-ից Խորայելի հետ տնտեսական հարաբերություններ են ծշակել՝ առանց դիվանագիտական կապեր հաստատելու այն բանից հետո, երբ Խորայելի և ՊԱԿ-ի միջև խաղաղության համաձայնագիր էր կնքվել<sup>219</sup>:

<sup>217</sup> بيان منظمة المُؤتمر الإسلامي بالدوحة (الأذنار) ١٩٩٨ / ٢١٩ «الأنوار» (١٩٩٨)

<sup>218</sup> Նույն տեղում:

<sup>219</sup> Նույն տեղում:

Ակնհայտ է, որ Խսրայելի հետ հարաբերություններ չհաստատելու մասին Խսլամական կոնֆերանս կազմակերպության որոշումները, որոնք անդամ պետությունները պետք է հաշվի առնեն իրենց արտաքին քաղաքական հայեցակարգը մշակելիս, շատ դեպքերում շրջանցվում են անդամ պետությունների կողմից:

Յարկ է նշել, որ չնայած ԻԿԿ անդամ պետությունները դժգոհ են խաղաղության գործընթացի անարդյունավետությունից, մադրիդյան համաժողովից հետո մերձավորարևելյան ճգնաժամի խաղաղ կարգավորման վերաբերյալ Խսլամական կոնֆերանս կազմակերպության դիրքորոշումը փաստորեն փոխվել էր: Եթե մինչև մադրիդյան համաժողովը կազմակերպությունը մերժում էր ՍՍՀ-ի 242 բանաձեռ, այժմ այն հիմք էր ընդունվում խաղաղ բանակցությունների համար: ԻԿԿ քաղաքական նոր վարօքիծը բացատրվում էր նաև պաղեստինյան խնդրի և մերձավորարևելյան ճգնաժամի կարգավորման նոր մարտավարության և խաղաղության գործընթացով ամրագրված սկզբունքների հետ:

\*\*\*

Խսլամական կոնֆերանս կազմակերպության քաղաքականությունը մի ծայրով ուղղված էր նաև տարածաշրջանում ԱՍԽ-ի խսրայելամետ քաղաքականության դեմ:

1967թ. պատերազմում արաբների պարտությունից և Խսրայելի ռազմական հաջողություններից հետո ԱՍԽ-ի քաղաքական վերնախավի շրջանում գերիշխող դարձավ այն տեսակետը, որ Խսրայելը տարածաշրջանում կարող է լուրջ և վստահելի դաշնակից դառնալ ԱՍԽ-ի ազգային շահերի պաշտպանության գործում: Մերձավոր և Միջին Արևելքում ԱՍԽ-ի քաղաքականությունը պայմանավորված էր նաև Խորհրդա-

յին Միության հետ առճակատմամբ, որի արդյունքուն ձևավորվել է ին երկու հակաղիր Ծամբարներ: Յակաամերիկյան տրամադրությունները ինչպես արաբական, այնպես էլ ողջ մահմեդական աշխարհում իրենց ազդեցությունն ունեցան նաև Իսլամական կոնֆերանս կազմակերպության գործունեության վրա: Քեմփ-դեկույան գործարքից հետո ԻԿԿ բարձր մակարդակի հանդիպումներում ընդունված բանաձևներում և որոշումներում կարևորվում էր պայքարը տարածաշրջանում ինպերիալիստական պետությունների, նախևառաջ՝ ԱՄՆ-ի ազդեցության դեմ:

1981թ. Մեքքայի գագաթնաժողովում ուազմական, քաղաքական և տնտեսական բոյկոտ հայտարարվեց այն երկրների դեմ, ովքեր կիանագործակցեն Խորայելի հետ՝ առաջին հերթին նկատի ունենալով ԱՄՆ-ին:

Իսլամական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում հակամերիկյան տրամադրություններ դրսևություն անգամ Սաուդյան Արաբիայի քաղաքական ընտրանու շրջանում: Գոնե իսլամական շրջանակներում Սաուդյան Արաբիան չէր կարող ծեռնպահ մնալ Վաշինգտոնի խորայելանետ քաղաքականության քննադատությունից:

Մեքքայի գագաթնաժողովում ունեցած ելույթում Սաուդյան Արաբիայի քաղաքառանձ Ֆահեդ ԱՄՆ-ին մեղադրեց Խորայելի գոյությունը որպես խորք մարմին արաբական իսլամական աշխարհում հավերժացնելու համար: Անգամ Պակիստանի նախագահ Զիա ուլ-Հակը, որը հայտնի էր իր ամերիկանետ դիրքորոշմամբ, նույն գագաթնաժողովում կոչ արեց ԱՄՆ-ի նախագահ Ռ. Ռեյգանին մերձավորարևելյան նոր քաղաքականություն մշակել՝ համաձայն միջազգային հանրության որոշ-

ման,և Խսրայելի վրա անհրաժեշտ ճնշում գործադրել՝ ստիպելու նրան դադարեցնել ազրեսիան<sup>220</sup>:

1982թ. խւամական պետությունների արտգործնախարարների Նիամեյի հանդիպմանը ԻԿԿ գլխավոր քարտուղար Հարիբ Շատտին խստորեն քննադատեց ԱՍՍ-ի քաղաքականությունը, քանի որ ԱՍՍ-ը շարունակում էր բոլոր ուժերով պաշտպանել սիոնիստական ներխուժումը Լիբանանում՝ դրանով Խսրայելին հնարավորություն տալով ազատորեն օգտագործել սիոնիստական ռազմական մեքենան՝ քաղնելու լիբանանյան քաղաքներն ու պաղեստինցի փախստականների ճամբարները<sup>221</sup>:

Նիամեյի հանդիպմանը դատապարտվեցին պաղեստինցի ժողովրդի իրավունքները ուժնահարող ԱՍՍ-ի գործողությունները: ԱՍՍ-ը մեղադրվեց տարածաշրջանին իր քաղաքականությունը պարտադրելու և նրա ժողովրդին վնաս պատճառելու մեջ: Կոչ արվեց անդամ պետություններին՝ վերանայել դիվանագիտական հարաբերությունները ԱՍՍ-ի հետ: Անհրաժեշտ համարվեց ջիհադ մղել իսլամական պետությունների հետ համատեղ և միասնական դիրքորոշում որդեգրել խսրայելական ծավալապաշտության դեմ<sup>222</sup>:

Միևնույն ժամանակ Խսրամական կոնֆերանս կազմակերպության չափավոր արևմտամետ թևը ծգտում էր կազմակերպության հակաամերիկյան որոշումները գրկել գործնական նշանակությունից: Նիամեյի հանդիպումից հետո՝ 1982թ. օգոստոսի 23-ին, Սաուդյան Արաբիայի արտաքին գործերի նախարար Սաուդ ալ-Ֆեյսալը, մամուլի ասուլիսում, մեկնաբանելով իսլամական բարձրագույն քաղաքական մարմնի դիր-

<sup>220</sup> Л. Борисов, Организация Исламская Конференция. Политические аспекты деятельности, "Народы Азии и Африки", № 4, 1983, с. 104.

<sup>221</sup> Э. Наджин, XIII сессия ОИК (Нигер, 1982). Современный ислам: проблемы политики и идеологии, в. 2, М., 1983, с. 232.

<sup>222</sup> Առաջնական տեղում:

քորոշումը ԱՄՆ-ի նկատմամբ, նշեց, որ անդամ պետությունները Վաշինգտոնի դեմ պատժամիջոցներ չեն կիրառի, քանի որ Երանք մտադիր են ուղղել և ոչ թե պատժել և պատերազմի գնալ ԱՄՆ-ի դեմ<sup>223</sup>:

Սակայն արաբ-իսրայելական հակամարտության հարցում առավել արմատական դիրքորոշմամբ պետությունները, մասնավորապես՝ Սիրիան Իսլամական կոնֆերանս կազմակերպության շրջանակում, շարունակում էին հանդես գալ Իսրայելի և ԱՄՆ-ի ռազմական համագործակցության քննադատությամբ: 1984թ. իսլամական պետությունների արտգործնախարարների Կասարլանկայի գագաթնաժողովում ունեցած ելույթում Սիրիայի փոխվարչապետ, արտգործնախարար Աբդ ալ-Յալիմ Խադրամը նշեց, որ ԱՄՆ-իսրայել ռազմական դաշինքը արաբական իսլամական աշխարհի համար խիստ վտանգավոր է, քանի որ ԱՄՆ-ի նպատակը արաբների նկատմամբ Իսրայելի գերակայության հաստատում է: Իսկ այդ դեպքում «Իսրայելը դառնում է ամերիկյան ուժերի հենարանը և ամերիկյան ռազմական ուժերի պահեստը»<sup>224</sup>:

Եղած փաստերի վերլուծությունը հավաստում է, որ Իսլամական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում առանձնացվել են պաղեստինյան հակամարտության հետևյալ հիմնական ուղղությունները: 1.Պաղեստինի արաբ ժողովրդի օրինական իրավունքները վերականգնելու և արաբական գրավյալ տարածքներում Իսրայելի ագրեսիայի հետևանքները վերացնելու հարցը: 2.Երուսաղեմի և Խուրանական սրբավայրերի հարցը: 3.Տարածաշրջանային իրադրության, Իսրայելին և նրա դաշնակիցներին հակազդելու ուղիներ և ձևեր ընտրելու ռազմավարությունը: 4.Մերձավորարևելյան խաղաղության գործընթացը:

<sup>223</sup> Л. Борисов, Организация Исламская Конференция, նշվ. աշխ. մեջ, էջ 105:

<sup>224</sup> ۱۹۸۴/۱۱۹ «الشرين»

Այսպիսով, իսլամական բարձրագույն քաղաքական մարմինը ոչ միայն մեծ տեղ հատկացրեց մերձավորարևելյան հակամարտությանը, այլև մշակեց Մերձավոր Արևելքում խաղաղություն հաստատելու սեփական հայեցակարգ: Մերձավորարևելյան ճգնաժամի կարգավորման համախւանական ծրագիրն ընդորւկում է Խորայելի ռազմական ուժերի անվերապահ հեռացումը 1967թ. գրավյալ արաբական տարածքներից, Պաղեստինի ժողովրդի օրինական իրավունքների վերականգնումը, պաղեստինյան արաբական պետության ստեղծումը Հորդանան գետի արևմտյան ափին և Ղազայի հատվածում Երուսալեմ մայրաքաղաքով:

Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը հայտարարել է պաղեստինցիներին բարոյական և նյութական աջակցություն ցույց տալու իր վճռականության, ինչպես նաև՝ միջազգային կարծիքը հօգուտ պաղեստինցիների փոխելու անհրաժեշտության նասին: Պաղեստինի ժողովրդին աջակցելու և արաբական գրավյալ տարածքները ազատագրելու համար Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը պատրաստ է օգտագործել անդամ պետությունների քաղաքական, ֆինանսական, տնտեսական, ռազմական ներուժն ընդունելու հարայելական ագրեսիայի ջիհադ հայտարարելով Պաղեստինի և իսլամական սրբավայրերի ազատագրության համար: Նման որոշումները արտահայտում են իսլամական պետությունների միասնական կեցվածքը:

Իսլամական կոնֆերանս կազմակերպության որոշումները, ինչպես հայտարարել է ՊԱԿ-ի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը, ամրապնդում են պաղեստինցի ժողովրդի վճռականությունը՝ բոլոր միջոցներով պայքարելու անկախ պետականության ստեղծման համար<sup>225</sup>:

<sup>225</sup> "Народы Азии и Африки", 1983, №. 4, с. 103.

Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը ակտիվ աշխատանք է տանում սինիզմի քննադատության ուղղությամբ, որն ընկալվում է իրև լուրջ սպառնալիք արարական իսլամական աշխարհի անվտանգությանը: Իսլամական կոնֆերանսում հաճախ է հնչում «սինիզմ ռասուզմ է»<sup>226</sup> կամ «սինիզմը շովինզմի և ռասիզմի ծներից է»<sup>227</sup> արտահայտությունը, որով վկայակոչվում է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի No. 3379 բանաձեռը:

Իսլամական կոնֆերանս կազմակերպությանը գոնե մասամբ հաջողվել է իրականացնել Պաղեստինի հարցում իսլամական պետությունների միասնական դիրքորոշումը: Ներկայում իսլամական պետությունների ճնշող մեծամասնությունը որևէ հարաբերություն չունի Խսրայելի հետ: Բացի այդ ՄԱԿ-ում Պաղեստինի հարցում իսլամական պետությունները միասնական դիրքորոշում են որդեգրում: 1994թ. Կասարլանկայի գագաթնաժողովում իսլամական պետություններին կոչ արվեց միջազգային բոլոր ֆորումներում պաշտպանել Խսրայելի կոնֆերանսի դիրքորոշումը, հարգել Խսրայելի դեմ իրականացվող բոյկոտի սկզբունքները:

Ամեն պարագայում վստահորեն կարող ենք ասել, որ մահմեդականների պայքարը՝ հանուն Պաղեստինի և Երուսաղեմի ազատագրության, Խսրայելի կոնֆերանս կազմակերպության շրջանակներում իսլամական երկրների արտաքին քաղաքականության անկյունաքարն է:

<sup>226</sup> "The Economist" 21.12.1991 & 03.01.1992, vol. 321, Issue 7738, p. 42.

<sup>227</sup> ۱۹۸۷/۱/۲۶ «البُلْعَث»

## 2. Իսլամական կոնֆերանս կազմակերպության քաղաքականությունը աֆղանական թնջուկի նկատմամբ

Դամընդիանուր կոնֆլիկտային համակարգի մեջ առանձնահատուկ տեղ է գրադեցնում աֆղանական հարցը, որ 1980-ականներից ընդգրկվեց Իսլամական կոնֆերանս կազմակերպության օրակարգում՝ կապված 1979թ. ԽՍՀՄ-ի ռազմական ուժերի՝ Աֆղանստան ներխուժելու հետ։ ԽՍՀՄ-ի բանակի մուտքը Աֆղանստան սկիզբ դրեց լայնածավալ ռազմական գործողությունների մի կողմից՝ խորհրդային և աֆղանական կառավարական բանակի, մյուս կողմից՝ աֆղանական ընդդիմադիր ուժերի՝ մոշահինների<sup>228</sup> միջև։

Եթե ԽՍՀՄ-ը ծգտում էր ընդլայնել իր ազդեցության ոլորտները, ապա ԱՄՆ-ը աշխատում էր ամեն կերպ հակազդել նրան՝ կարևորելով համագործակցությունը իսլամական առանձին շրջանակների հետ։ «Ալ-Լիուա» թերթի մի հրապարակման համաձայն՝ Աֆղանստանում քայլվեցին տարածաշրջանում սեփական հետաքրքրությունները փնտրող ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի շահերը, որոնք ծգտում էին չեզոքացնել իսլամական համերաշխությունը<sup>229</sup>։

ԱՄՆ-ը սկսեց մեծ քանակությամբ գենք ու զինամթերք մատակարանել Պակիստանին՝ վկայակոչելով «խորհրդավաֆղանական» սպառնալիքը<sup>230</sup>։ Այստեղից գենքի հսկայական քանակություններ էին ուղարկ-

<sup>228</sup> Արարեն մոշահին նշանակում է մարտիկ, որը կովում է հանուն հավատքի և սուրբ գործի, հանուն ջիհադի։ Այս տերմինը լայն տարածում ունի իսլամական աշխարհում և ընդունված է այն անձանց, ովքեր մասնակցում են սոցիալական, ազգային-ազատագրական, ինչպես նաև քաղաքական-կրոնական շարժումներին։

<sup>229</sup> ۱۹۸۴/۱/۲۳ «الرأي»

<sup>230</sup> Г. Бондаревский, Особенности неоколониалистической политики США на мусульманском мире, Современный ислам: проблемы политики и идеологии, в. 3, ч. 2, М., 1985, с. 8.

վում մոջահիդներին, որոնց մի զգալի մասը գործում էր նաև Պակիստանի և Իրանի տարածքում:

ԽՍՀՄ-ի ներխուժումը Աֆղանստան լուրջ անհանգստություն առաջցրեց Սաոււյան Արաբիայի և Ծոցի Երկրների քաղաքական շրջանակներում: 1980-ականներին արաբական մի շարք Երկրներում ստեղծվեցին աֆղան մոջահիդներին աջակցող կազմակերպություններ, որոնցից առավել հայտնի էր Աֆղանստանի համար ֆինանսական միջոցներ հայթայրող Իսլամական համակարգման խորհուրդը, ինչպես նաև՝ սաոււյանաֆղանական հանձնախումբը, որ գրաղվում էր Աֆղանստան գենք ու գինամքերը ուղարկելով<sup>231</sup>:

Ինչ վերաբերում է Սաոււյան Արաբիային, ապա նա մի կողմից հանդիս էր գալիս խորհրդային ծավալապաշտության դեմ, մյուս կողմից ծգտում էր ուժեղացնել Աֆղանստանում արմատական իսլամի ազդեցությունը: 1980-ականներից Սաոււյան Արաբիան զգալի ֆինանսական միջոցներ սկսեց տրամադրել Պակիստանին՝ աֆղանական պատերազմի համար:

ԽՍՀՄ-ի ներխուժումը Աֆղանստան լրացուցիչ ազդակ եղավ՝ Արևմուտքի և արաբական Երկրների կողմից աջակցություն գտնող իսլամական շարժումները հովանավորելու համար: Աֆղանստանը «անհավատների» դեմ պայքարի և իսլամական համերաշխության խորհրդանիշ դարձավ:

1980թ. հունվարի 27-28-ը Սաոււյան Արաբիայի նախաձեռնությամբ՝ Իսլամարադում իրավիրվեց իսլամական պետությունների արտաքին գործերի նախարարների արտահերթ հանդիպում՝ քննարկելու Աֆ-

<sup>231</sup> К. Поляков, А. Хасяинов, Роль арабских экстремистов в афганском конфликте. В кн.: Афганистан: проблемы войны и мира, М., 2000, с. 160-161. Ամեն ամիս Աֆղանստան էր առաջվում 1, 5 մլն. ԱՄՆ դոլլարի գենք:

դանստանում խորհրդային գինված ուժերի մտնելուց հետո ստեղծված իրավիճակը: Ուշագրավ է նաև այն փաստը, որ արաբական արմատական ուժերին հաջողվեց կոնֆերանսի հրավիրման օրը հունվարի 26-ից տեղափոխել հունվարի 27-ը, քանի որ հունվարի 26-ը Եգիպտոսի և Իսրայելի միջև հարաբերությունների կարգավորման օրն էր, որ նշանավորվեց Երկուստեք դեսպանություններ հիմնելով:

Նախքան ԽՍՀՄ արարադի հանդիպումը Դամասկոսում տեղի ունեցավ Տոկունության և Հակազդեցության ազգային ճակատի<sup>232</sup> արտաքին գործերի նախարարների կոնֆերանսը, որ ԻԿԿ գլխավոր քարտուղարին և իսլամական պետությունների կառավարություններին ուղղված նամակում հիշեցնում էր, որ ԽՍՀՄ արարական կոնֆերանս կազմակերպության ստեղծման շարժառիթը եղել է ալ-Ակսա մզկիթի հրկիզումը, ուստի նա առաջին հերթին պետք է քննարկի Պաղեստինի հարցը և սատար կանգնի Երուսաղեմի ազատագրությանը<sup>233</sup>:

Նույնիսկ Հորդանանի Հուսեյն թագավորը ԽՍՀՄ արարադի հանդիպումից մի քանի օր առաջ հայտարարել էր, որ անհրաժեշտ է առաջնահերթությունը տալ Պաղեստինի և Երուսաղեմի, այլ ոչ թե Քարուլի հարցին<sup>234</sup>:

ԽՍՀՄ արարադյան հանդիպմանը Աֆղանստանում խորհրդային ներխուժման քննարկումների դեմ միասնական ճակատ՝ ստեղծեցին ԽՍՀՄ-ի ճամբարում հանդես եկող Երկրները: Սիրիան և Եմենի ժողովրդադե-

<sup>232</sup> Տոկունության և հակազդեցության ազգային ճակատը հիմնադրվեց 1977թ. թէկտեմբերի 2-9-ը Տրիպոլիում հրավիրված Լիբիայի, Սիրիայի, Լիբանանի, Եմենի ժողովրդադեմոկրատական Հանրապետության, ՊԱԿ-ի ղեկավառների հանդիպման ժամանակ՝ Եգիպտոսի անջատողական քաղաքականությանը առավել արմատական դիրքերից: Քան մյուս արական Երկրները, հակազնելու նպատակով:

<sup>233</sup> Լ. Վանկովա, Հայուսկա Արաբիա: ներք., իслամ, ուսուցչություն, Մ., 1987, ս. 84.

<sup>234</sup> ۱۹۸۰/۱/۲۲ «الرأي»

մոկրատական Յանրապետությունը հրաժարվեցին հանդիպմանը մասնակցել՝ պատճառաբանելով, որ առաջնահերթյունը տրվել է աֆղանական հարցին: Լիբիայի և Ալժիրի ներկայացուցիչները խիստ քննադատեցին Սաուդյան Արաբիայի՝ Աֆղանստանի վերաբերյալ տասնմեկ կետից կազմած նախագիծը՝ պատճառաբանելով, որ պաղեստինյան հարցն այնտեղ առաջնահերթ չէ: Լիբիայի ներկայացուցիչը հայտարարեց, որ աֆղանական իրադարձությունների շուրջ ստեղծված աղմուկի հետևում ԱՄՆ-ն է, որի նպատակը մերձավորարևելյան ճգնաժամից արարական իսլամական պետությունների ուշադրությունը շեղելն է: Նա նշեց, որ իսլամական պետություններն առաջին հերթին պետք է քննարկեն այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են Խրայելի կողմից շարունակվող արարական տարածքների բռնազավրման, Սադաթի քաղաքականության, տարածաշրջանում ամերիկյան ռազմական ներկայության հետ կապված հարցերը<sup>235</sup>.

Պակիստանի նախագահ Ջիա ուլ-Ճակը բացման խոսքում առաջարկեց խորհրդային Սիոնիթյանը ԻԿԿ-ի անունից ուղերձ հղել՝ արտահայտելով իսլամական աշխարհի չափազանց վրդովմունքը Աֆղանստանում խորհրդային ռազմական ուժերի ներկայության համար՝ կոչ անելով դադարեցնել ներխուժումը: Առաջարկն ընդունելության արժանացավ<sup>236</sup>:

Իսլամաբադում ընդունված բանաձևում խստորեն դատապարտվեց Աֆղանստանում խորհրդային ներխուժումը, ԽՍՀՄ-ից պահանջվեց առանց նախապայմանների դուրս բերել զորքերը Աֆղանստանից: Սիամանակ կոչ արվեց անդամ պետություններին՝ խզել դիվանագիտա-

<sup>235</sup> Ո. Բանկօնա, նույն տեղում:

<sup>236</sup> The Islamic Summit Conference, նշվ. ժողովածուի մեջ, էջ 23, 24:

կան հարաբերությունները «Քարուլի ոչ օրինական իշխանությունների հետ», դադարեցնել նրան բոլոր տեսակի օգնությունները, աջակցել աֆղանական ընդունությանը, հարևան Պակիստանին ու Իրանին: Որոշվեց բոյկոտել Սոսկվայում հունիս ամսին կայանալիք օլիմպիական խաղերը<sup>237</sup>:

Սակայն կոնֆերանսը չբավարարվեց միայն Քարուլի իշխանությունների քննադատությամբ, այլ կասեցրեց Աֆղանստանի անդամակցությունը Խուզամական կոնֆերանս կազմակերպությանը, որ նշանակում էր լիակատար բոյկոտ խորհրդայնամետ աֆղանական կառավարությանը: Չմոռանանք նշել, որ Խուզամաքաղի հանդիպմանը իրանական պատվիրակության կազմում ներկա էին աֆղան ուր մոջահիդներ<sup>238</sup>:

Փաստորեն, Աֆղանստանը Եգիպտոսից հետո մահմեդական երկրորդ պետությունն էր, որի մասնակցությունը խուզամական բարձրագույն քաղաքական մարմնին ընդհատվեց:

Խուզամաքաղում որոշվեց ԽԿԿ շրջանակներում ստեղծել Աֆղանստանի հարցով հատուկ հանձնաժողով՝ Գվինեայի, Իրանի, Թուրքիայի և Պակիստանի ներկայացուցիչներից՝ Դարիք Շատտիի գլխավորությամբ, որին հանձնարարվեց ՄԱԿ-ի միջնորդությանը աֆղանական կառավարության հետ բանակցություններ սկսել՝ խնդրի կարգավորման ուղղությամբ: Փաստորեն, փորձ արվեց աֆղանական ճգնաժամը օգտագործել՝ շեղելու արաբական խուզամական աշխարհի ուշադրությունը մերձավորարևելյան, մասնավորապես՝ Արևելյան Երուսաղեմի խնդրից:

Խուզամաքաղյան հանդիպումը որևէ կերպ չնպաստեց աֆղանական հարցի առողջ քննարկմանը: Այս հարցի շուրջ ոչ միասնական դիրքորո-

<sup>237</sup> Նույն տեղում:

<sup>238</sup> Նույն տեղում, էջ 24:

շումը փաստեց, որ իսլամական աշխարհը ենթակա էր «սառը պատերազմի» կանոններին, որի արդյունքում կազմակերպության ներսում ծևավորվել էին երկու իրարամերժ թեր:

1981թ. իսլամական պետությունների գագաթնաժողովում աֆղանական հարցը առաջնային տեղ զբաղեցրեց, քանի որ հիմնական թեման Խորայելի ծավալապաշտական քաղաքականությունն էր: Մեքքայի հոչակագրում Աֆղանստանի վերաբերյալ նշված էր. «Մենք մեր համերաշխությունն ենք հայտնում Աֆղանստանի ժողովրդին, որ ջիհադ է մղում հանուն ազատության և անկախության»<sup>239</sup>: Փաստաթղթում կոչ արվեց կրկնապատկել ջանքերը, որպեսզի Աֆղանստանը մնա անկախ նահմեդական պետություն, իսկ Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը հավաստեց, որ կշարունակի իր գործողությունները խնդրի կարգավորման ուղղությամբ<sup>240</sup>:

Մեքքայի հոչակագրում ԽՍՀՄ-ի ներխուժման մասին չիշատակվեց, որը կարելի է բացատրել այս խնդրում Սաուդյան Արաբիայի դիքորոշման փոփոխությամբ: Այն հարցին, թե ինչու Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը չքննարկեց ԽՍՀՄ-ի դեմ պատժամիջոցներ կիրառելու հարցը, Սաուդյան Արաբիայի արտգործնախարար Սաուդ ալ-Ֆեյսալը ասաց. «Մենք իրատես ենք: Մենք չենք կարող վարվել ԽՍՀՄ-ի պես գերտերության հետ այնպես, ինչպես՝ Խորայելի հետ»<sup>241</sup>:

Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը աֆղանական հարցն առաջարկեց կարգավորել խաղաղ ճանապարհով՝ երկրից դուրս բերել օտար ռազմական ուժերը, երաշխավորել ապագա պետությանը չմիա-

<sup>239</sup> The Islamic Summit Conference, նշվ. ժողովածուի մեջ, էջ 49:

<sup>240</sup> ВПИ, 25, No. 25, февраль, 1981, с. 19.

<sup>241</sup> Մեքքերում՝ Л. Валькова, Саудовская Аравия: нефть, ислам, политика, М., 1987, с. 124:

ցող երկրի կարգավիճակ՝ միաժամանակ ջանք ու եռանդ չխնայելով աֆղանական ընդդիմության լեզիտիմությունը ապահովելու համար:

Իսլամական կոնֆերանս կազմակերպության բարձր մակարդակի բոլոր հանդիպումներում Աֆղանստանը սկսեցին ներկայացնել մոջահիդները: 1983թ. իսլամական պետությունների արտգործնախարարների Դարձայի կոնֆերանսին մասնակցեց մոջահիդների առաջնորդներից մեկը՝ Բուրհամուդիհն Ռաբբանին՝ «Աֆղանստանի իսլամական հասարակություն» կազմակերպության ղեկավարը, որ հետագայում հրչակվեց Աֆղանստանի նախագահ: Խոկ 1987-ին Թուվեյթի գագաթնաժողովում, որին մասնակցում էր 1986թ. Փեշավարում ընդդիմադիր ուժերից կազմված «Յորնյակի դաշինքի» խոսնակը՝ Սայաթը՝ կոչ արվեց ուժեղացնել համագործակցությունը դաշինքի հետ:

1987թ. Թուվեյթի գագաթնաժողովից առաջ խորհրդային մամուլի հրապարակումներում գերիշխում էր այն տեսակետը, որ հետադիմական ուժերը կօգտագործեն Խոլամական կոնֆերանսի ամբիոնը՝ հարձակվելու դեմոկրատական Աֆղանստանի դեմ և պաշտպանելու դուշմաններին<sup>242</sup>:

Թուվեյթի գագաթնաժողովին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության հղած ուղերձում տեղեկացվում էր, որ Խորհրդային Միությունը մոտ ապագայում պատրաստվում է դուրս բերել զորքերը Աֆղանստանից, պայմանով, որ բացառի միջամտությունը այդ ինքնիշխան, չնիացող իսլամական պետության գործերին, որը, ինչպես նշված էր, կնպաստի Աֆղանստանում ազգային համերաշխության գործընթացի բարեհաջող զարգացմանը<sup>243</sup>:

<sup>242</sup> «Известия» 26 января, 1987 г.

<sup>243</sup> Նույն տեղում:

Չմոռանանք նշել, որ դեռևս 1982թ. իսլամական պետությունների արտգործնախարարների Նիհամեյի հանդիպմանը խոսելով ԽԱՀՍ-ի և Իսլամական կոնֆերանս կազմակերպության հարաբերությունների մասին՝ ԻԿԿ գլխավոր քարտուղար Դարիք Շատտին նշեց, որ երկուստեք անհամաձայնությունը միայն աֆղանական խնդրի շուրջ է<sup>244</sup>:

Միսալված չենք լինի, եթե նկատենք, որ աֆղանական հարցում ԻԿԿ դիրքորոշումը խախտեցին անդամ առանձին պետություններ, մասնավորապես՝ Սաոււդյան Արաբիան, Պակիստանը, որոնք անմիջականորեն միջամտեցին աֆղանական պատերազմին՝ հովանավորելով Արևմուտքից աջակցություն գտնող մոջահիդներին:

1988թ. ապրիլի 14-ին ժննում վեց ամսյա բանակցություններն ավարտվեցին Խորհրդային Միության և ԱՄՆ-ի, ինչպես նաև՝ Աֆղանստանի և Պակիստանի միջև երկկողմ պայմանագրերի ստորագրությամբ: Ըստ այդմ ԽԱՀՍ-ը պետք է դուրս բերեր ռազմական ուժերը Աֆղանստանից, իսկ կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում էր չմիջամտել Աֆղանստանի ներքին գործերին: ԽԱՀՍ-ը և ԱՄՆ-ը հանդես եկան որպես քաղաքական կայունության և քարիղրացիության երաշխավորներ Պակիստանի և Աֆղանստանի միջև<sup>245</sup>:

Խորհրդային գործերի դուրս բերումը սկսվեց և ավարտվեց 1988-ին: Ամերիկյան «Խյուսուլիք» թերթը գրում էր, որ Աֆղանստանի պարադրսներից մեկն այն էր, որ մոջահիդների դաշինքը սկսեց քայլայվել այն ժամանակ, երբ ԽԱՀՍ-ը պատրաստվում էր դուրս բերել զորքերը Աֆղանստանից<sup>246</sup>:

<sup>244</sup> Современный ислам: проблемы политики и идеологии, в. 2, М., 1983, с. 223.

<sup>245</sup> «Известия», 16 апреля, 1988 г.

<sup>246</sup> ТАСС, АТЛАС, 16 (1609), 3 мая, 1988 г.

Խորհրդային գործերի դուրս գալուց հետո Աֆղանստանում իրավիճակը շարունակում էր անկայուն մնալ: Բուրհանուլղին Ռաբբանիի ժամանակավոր կառավարությունը ի գորու չեղավ երկրում իրավիճակը կայունացնել, իսկ տարածայնությունները ընդդիմադիր ուժերի միջև պելի խորացան: Ռաբբանի-Ահմադ Շահ Մասուդ դաշինքը Աֆղանստանի շուրջ չորս մլն տաջիկների գլխավորությամբ գերակայող ուժ դարձավ փաշտունների դեմ:

1993թ. Սաոււյան Արարիան հանդես եկավ հակամարտ կողմերին հաշտեցնելու կոչով, որ պաշտպանեցին նաև Պակիստանն ու Իրանը: Նրանց աջակցությամբ 1993թ. Խուանաբաղում կնքվեց հաշտության դաշինք<sup>247</sup>:

Աֆղանստանում ռազմական բախումները վերսկսվեցին և ավելի սուր բնույթ կրեցին այն բանից հետո, երբ 1994թ. Վերջերից Աֆղանստանի քաղաքական դաշտում հայտնվեց մի նոր ուժ՝ փաշտունների (փուշտուն)<sup>248</sup> տալիրամ շարժումը: Քանի դեռ ասպարեզ չէր իջել տալիրանը Աֆղանստանում, հակամարտ հիմնական ուժերի՝ Ահմադ Շահ Մասուդի, Ջեզնարիարի, Դոսթումի, Խոմայիլ Խանի և Աբդուլ Մազարի միջև փխրուն հրադադար էր հաստատվել. յուրաքանչյուրը տնօրինում էր իրեն վերապահված նահանգներում:

Տալիրները Պակիստանում աֆղան փախստականների համար ստեղծված կրոնական դպրոցների աշակերտներն էին<sup>249</sup>: Նրանց մեջ թիւ չէին նաև նախկին մոջահիդները, որոնք զինվորական պատրաստվածություն էին անցել Պակիստանում: Տալիրներին առաջին փուլում

<sup>247</sup> Կ. Պոլյակով, Ա. Խաչյան, նշվ. աշխ. մեջ, էջ 163:

<sup>248</sup> Աֆղանստանը, որի բնակչությունը դավանում է մահմեդականություն, խայտարղես երսկեական կազմ ունի: Բնակչության 50%-ը փաշտուններ են, մնացյալը՝ տաջիկներ, դագախներ, նորիստանցիներ, հազարներ և այլն:

<sup>249</sup> Արարենն տալիր նշանակում է աշակերտ:

աջակցում էր ԱՍՆ-ը, որին ձեռնտու էր այդ շրջանում տալիքների հակախրանական ուղղվածությունը<sup>250</sup>:

Յանդես գալով վահիաբականության դիրքերում և հատուկ նշանակություն տալով հանուն իսլամի մղվող պատերազմին՝ ջիհադին, տալիքները մահմեդական համայնքում սկսեցին գործնականում իրականացնել «հերետիկոսությունից մաքրվելու» միջոցառումներ: Տալիքան շարժումը փաստորեն կասեցրեց Աֆղանստանում կառավարության ծևավորումը և առաջընթացը, իսկ 1996թ. Բարուլի գրավումից հետո երկիրը բաժանվեց երկու մասի և հայտնվեց տալիքան շարժման և նրան հակազդող Յայուսիսային դաշինքի հսկողության ներքո, որ դեկավարում էր Աֆղանստանի հայտնի քաղաքական և ռազմական գործիչ Ահմադ Շահ Մասուդը<sup>251</sup>:

Յարկ է փաստել, որ Ուիադը Պակիստանից ոչ պակաս է նպաստել տալիքան շարժման ստեղծմանը՝ հանդես գալով իսլամական արմատականության դիրքերում<sup>252</sup>:

Աֆղանստանում սկսված արյունահեղ բախումները դարձան իսլամական աշխարհի մտահոգության առարկան: 1994թ. ԻԿԿ գլխավոր քարտուղար Յամիդ ալ-Ղարիբը, անդրադառնալով աֆղանական խնդրին՝ որպես իսլամական աշխարհին ամենից հուզող հարցերից մեկը, նշեց, որ խորհրդային ռազմական ուժերի դուրս գալուց հետո Իսլա-

<sup>250</sup> В. Москаленко, Афганистан и Пакистан. В кн.: Афганистан: проблемы войны и мира, М., 2000, с. 136.

<sup>251</sup> Տալիքներին հաջողվեց գրավել երկորի հիմնական մասը՝ շուրջ 90%-ը. իսկ Յայուսիսային դաշինքին՝ 10%-ը՝ իսկ բնակեցված հյուսիսային և հյուսիսարևմայն շրջանները:

<sup>252</sup> Հ. Պոլտօն, Ա. Խաչյան, Եշվ. աշխ. մեջ, էջ 163: Տալիքան շարժումը, որպես Աֆղանստանի օրինական իշխանություն, նանաչեցին Պակիստանը, Սաուդյան Արաբիան և Արարական Սիացյալ եմիրությունները:

մական կոնֆերանս կազմակերպությունը Աֆղանստանի իշխանություն-ներից քանից պահանջել է դադարեցնել արյունահեղությունը<sup>253</sup>:

Աֆղանստանում սկիզբ առած եղբայրասպան պատերազմը խլամական աշխարհի առաջ ծառացած ամենասուր խնդիրներից էր: Խլամական բարձրագույն քաղաքական մարմնի կարծիքով՝ Աֆղանստանում շարունակվող առճակատումը պետք է լուծվեր խաղաղ ճանապարհով, իսկ որպես խաղաղության հաստատման երաշխիք՝ առաջարկվեց Աֆղանստանում ստեղծել կոալիցիոն կառավարությունը<sup>254</sup>:

Դարձ է նշել, որ ԻԿԿ շրջանակներում գործող Աֆղանստանի հաստուկ հանձնաժողովը որոշակի քայլեր արեց ընդդիմադիր խմբավորումների հետ բանակցություններ անցկացնելու և համընդիհանուր խաղաղություն հաստատելու ուղղությամբ: Զգալի աշխատանք տարվեց նաև ԱՍԿ-ի հետ համատեղ: Սակայն կազմակերպությանը չհաջողվեց հասնել այդ երկրում վերջնական խաղաղության հաստատմանը:

Աֆղանստանում դեպքերն ավելի ողբերգական բնույթ ստացան 2001թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած ահարեկչական գործողություններից հետո: Տալիբան շարժումը հրաժարվեց ԱՄՆ-ի իշխանություններին հանձնել հանցագործության մեջ մեղադրվող ահարեկիչ «ալ-Կահիդա» խմբավորման առաջնորդ Ուսամա Բեն Լադենին, որին ապաստան էր տվել այն նույն տալիբանը, որի կայացմանը և գործունեությանը վերջին զգալիորեն նպաստել էր:

Բեն Լադենը Աֆղանստանում խորհրդային ներխուժման տարիներին սերտորեն համագործակցել է ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական

<sup>253</sup> ۱۹۹۸/۹/۱۱ «متحاد».

<sup>254</sup> Final Communiqué of the 25<sup>th</sup> Session of the Islamic Conference of Foreign Ministers (ICFM) (March 15-17, 1998) <http://www.oic-un.org>

վարչության հետ, որի կողմից աֆղան մոշահիդներին տարեկան տրամադրվել է 500 մլն ԱՄՆ դոլար: Սակայն արդեն «սառը պատերազմի» ավարտից հետո Աֆղանստանում գործող մարտական մի շարք կազմակերպություններ դուրս եկան ԱՄՆ-ի վերահսկողությունից, իսկ 1987թ. Բեն Լադենի ստեղծած «ալ-Կահիդա» խմբավորումը աստիճանաբար ձևափոխվեց հակամերիկյան կառույցի: 1988թ. «ալ-Կահիդան» բոլոր մահմեդականներին կոչ արեց ամենուր սպանել զինվորական և ոչ զինվորական ամերիկացիներին, ինչպես նաև՝ նրանց դաշնակիցներին<sup>255</sup>:

Բեն Լադենը, որի անվան հետ է կապված 1993թ. Նյու-Յորքի Ջամաշխարհային առևտուրի կենտրոնի, ինչպես նաև Նայրորիի (Քենիա) և Դարուսալամի (Տանզանիա) ամերիկյան դեսպանատների պայթունները, աֆղանական ողջ պատերազմի ընթացքում համակարգել է ջիհադը և ռազմական ու նյութական օգնություն ցույց տվել աֆղանցիներին<sup>256</sup>:

1990-ականներից Ուսամա Բեն Լադենը զգալի մասնակցություն է ունեցել Աֆղանստանի ողջ տարածքում գործող, այսպես կոչված, մարզվողների ճամբարներ ստեղծելու հարցում: 1992-ից սկսած՝ Աֆղանստանում նման մարզական ճամբարներ ստեղծել և դեկավարել են արարկանական կամաց աշխատավորությունները: Ջամաձայն որոշ աղբյուրների՝ այս հարցում զգալի դեր է խաղացել նաև Սուհամմեդ Նասեր ալ-Աբբուդը, որ եղել է ԻԿԿ գլխավոր քարտուղարության պաշտոնյա<sup>257</sup>:

Սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողություններից հետո ԱՄՆ-ը հայտարարեց Աֆղանստանում ահաբեկչությանն աջակցող ուժերի՝ տալիքան շարժման և «ալ-Կահիդայի» դեմ հատուցման ռազմական գոր-

<sup>255</sup> Е. Примаков, Мир после 11 сентября, М., 2002, с. 20, 21.

<sup>256</sup> В. Луков, Саудовский миллионер Усама бин Laden и очаг международного терроризма в Афганистане, в кн.: Афганистан: проблемы войны и мира, М., 2000, с. 168.

<sup>257</sup> К. Поляков, А. Хасинов, Եզ. աշխ. մեջ, էջ 164:

ծողություններ իրականացնելու մտադրության մասին: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանի կարծիքով՝ պատերազմը Աֆղանստանի դեմ արդարացված էր իրավունքների պաշտպանության տեսանկյունից<sup>258</sup>:

ԱՄՆ-ի ռազմական գործողությունների հետևանքով՝ Աֆղանստանում խաղաղ բնակչության սպառնացող հնարավոր վտանգը կանխելու, ինչպես նաև միջազգային ահարեւկչության խնդիրները քննարկելու նպատակով Իրանի նախագահ Մոհամեդ Խարամին առաջարկեց հրավիրել իսլամական պետությունների արտաքին գործերի նախարարների արտահերթ կոնֆերանս, որ տեղի ունեցավ Կատարի մայրաքաղաք Դոհայում 2001 թվականի հոկտեմբերի 10-ին:

Կոնֆերանսում ընդունված հայտարարության մեջ դատապարտելով միջազգային ահարեւկչությունը՝ իսլամական պետությունները մտահոգություն հայտնեցին ահարեւկչության դեմ պայքարի հնարավոր հետևանքների համար՝ ներառյալ գոհերը Աֆղանստանի խաղաղ բնակչության շրջանում: Սերժվեց ահարեւկչության դեմ պայքարի պատրվակով որևէ իսլամական արաբական պետությանը թիրախ դարձնելը:

Կոնֆերանսում ելույթ ունեցողները, անդրադառնալով ահարեւկչությանը սատարող ուժերին, նշեցին, որ պետական ահարեւկչությանն աջակցող ամենամեծ հովանավորը Խարայելն է: Այս փաստն արտացոլվեց կոնֆերանսի ամփոփիչ հայտարարության մեջ<sup>259</sup>:

Հանդիպման որոշմամբ իմանվեց աֆղանական ժողովրդին աջակցող ֆոնդ: Իսլամական պետությունների արտաքին գործերի նախարարնե-

<sup>258</sup> ۲۸ «النور» العدد ۱۲۶، ۲۰۰۱ء.

<sup>259</sup> Final Communique of the Ninth Extraordinary Session of the ICFM (October 10, 2001) <http://www.oic-un.org>

որ վերստին արձանագրեցին այն փաստը, որ անհրաժեշտ է ապահովել Աֆղանստանի ամբողջատիրությունը և նրա իսլամական բնույթը:

Աֆղանստանում ԱՄՆ-ի՝ ռազմական հենակետերին հասցված ոմքա-կոծություններին զոհ գնացին նաև Աֆղանստանի խաղաղ բնակիչներ, որ դարձավ իսլամական պետությունների մտահոգության առարկան: Չնայած վերջիններս հայտարարեցին, որ պատրաստ են պայքարել ա-հարեւելության դեմ, սակայն դատապարտեցին Աֆղանստանում ԱՄՆ-ի ռազմական գործողությունները:

Հոկտեմբերի 11-ին Իրանի նախագահ Մոհամեդ Խաթամին պատերազմը դադարեցնելու կոչ արեց, քանի որ այն «կիանզեցնի մարդկային աղեստի և կեներված ժողովրոի արյունահեղությանը»<sup>260</sup>:

Միևնույն ժամանակ իսլամական աշխարհը մտահոգություն հայտնեց «սիոնիստական ռեժիմի» գործողությունների նկատմամբ, որը շահարկելով ահարեւելության դեմ միջազգային պայքարը՝ ուժեղացրել էր ճնշումները պաղեստինիների նկատմամբ: «Ան-նուր» ամսագրի մի հրապարակման համաձայն սեպտեմբերի 11-ից հետո «իսրայելական իշխանությունները, ինչպես նաև ԱՄՆ-ի և Արևմուտքի ծայրահետ մոլեռանդները ընդհանուր առմանը շտապեցին խրախուսել նոր խաչակրաց պատերազմը իսլամի և մահմեդականների դեմ»<sup>261</sup>:

Ներկայում տալիքան շարժումը դուրս է մղվել Աֆղանստանի քաղաքական կյանքից: Ստեղծվել է ժամանակավոր կառավարություն՝ Շամիդ Քարզայի ղեկավարությամբ, որ ծեռնամուխ է եղել Աֆղանստանի վերակառուցմանը: Այս գործընթացները իսլամական կոնֆերանս կազ-

<sup>260</sup> «Ettela'at», No. 1788, Tehran, 11.10. 2001

<sup>261</sup> ۳۱، ص ۲۰۰، ۱۷۶ «العدد ألتور».

մակերպությունը հավանության է արժանացրել<sup>262</sup>: Միևնույն ժամանակ վերականգնվել է Աֆղանստանի անդամակցությունը կազմակերպությանը: ԻԿԿ շրջանակներում գործում է աֆղանցիների օգնության ֆոնդը:

Դարձ է նշել, որ աֆղանական թնջուկը բացասաբար անդրադարձավ կազմակերպության վարկանիշի վրա, քանի որ ուժմայի ներսում եղբայրասպան պատերազմները արժեզրկեցին կազմակերպության առաջ քաշած իսլամական համերաշխության և եղբայրության կարգախոսները:

### 3. Իսլամական կոնֆերանս կազմակերպության դիրքորոշումը մահմեդական փոքրամասնությունների նկատմամբ

Իսլամական կոնֆերանս կազմակերպության գործունեության մեջ կարևորվում է աշխարհի տարբեր մասերում մահմեդական ժողովուրդների շահերի, նրանց «վտանգված» և «ոտնահարված» իրավունքների պաշտպանությունը քաղաքական, բարոյական, տնտեսական-ֆինանսական և այլ միջոցներով: ԻԿԿ գլխավոր քարտուղարության շրջանակներում գործում է ոչ իսլամական երկրներում իսլամական փոքրամասնությունների վարչությունը: ԻԿԿ-ն պարտավորվել է պաշտպանել նաև ոչ իսլամական երկրներում բնակվող մահմեդական համայնքների շահերը՝ համագործակցելով մահմեդական փոքրամասնություն ունեցող պետությունների կառավարությունների հետ: Այս քաղաքականությունը, ինչպես արդեն նշել ենք, խարսխվում է իսլամական ազգի՝ ուժմայի գաղափարի վրա:

<sup>262</sup> Final Communiqué of the 29<sup>th</sup> Session of ICFM <http://oic-un.org>

Մահմեդական փոքրանասնությունների նկատմամբ Իսլամական կոնֆերանս կազմակերպության դիրքորոշման ուսումնասիրությունը, համոզված ենք, լույս կտիի ԽԿԿ գլոբալ քաղաքականության վրա և կարող է օգնել այդ կազմակերպության խնդիրների, ծրագրերի և գործական քաղաքականության մասին ավելի լիակատար պատկերացում կազմելուն: Միևնույն ժամանակ կցանկանայինք նշել, որ այն խստ ընդգրկուն թեմա է, ուստի կըննարկենք մահմեդական փոքրանասնություններին առնչվող միայն մի քանի դեպքեր:

1980-ականներին շուրջ 300 մլն մահմեդականներ բնակվում էին ոչ մահմեդական երկրներում, որոնք ծգուում էին պահպանել իրենց իսլամական ինքնությունը: Դրա լավագույն ապացույցը Մեծ Բրիտանիայում ապրող մահմեդականների դիմումն էր տեղի իշխանություններին իրենց համայնքում շարիաթի ընտանեկան իրավունքի տարածնան խնդրով, որը, սակայն, մերժվել էր<sup>263</sup>:

1978թ. Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը՝ Եվրոպայի իսլամական խորհրդի<sup>264</sup> հետ համատեղ Լոնդոնում հրավիրեց միջազգային սեմինար, որտեղ քննարկվեցին մահմեդական փոքրանասնություններին վերաբերող խնդիրներ<sup>265</sup>:

Իսլամական շրջանակներում հաճախ է նշվում, որ մահմեդական փոքրանասնությունները ումնայի անբաժան նաև են: Այս կապակցությամբ հաճախ վկայակոչվում է հաղիսի հետևյալ հատվածը. «Մահմեդա-

<sup>263</sup> Kerr David, Islam in Modern Europe. Islam's understanding of itself. (Richard G. Hovhannesian and Speros Vryonis, Editors), California, 1983, p. 138.

<sup>264</sup> Եվրոպայի իսլամական խորհրդը հիմնվել է 1973թ. Լոնդոնում համակարգելու Եվրոպայում գործող մի քանի տասնյակից ավել իսլամական հաստատությունների ու կենտրոնների գործունեությունը:

<sup>265</sup> Kerr David, Islam in Modern Europe, նշվ. աշխ. մեջ, նույն տեղում:

կանները նման են մի մարմնի: Եթե մարմնի մի հատվածը ցավում է, ուրեմն ամբողջ մարմնը տկար է»<sup>266</sup>:

Ասվածից հետևում է, որ իսլամական ումմայի շահերի պաշտպանությունը իսլամական քարծրագույն քաղաքական մարմնին կարող են մղել ծայրահեղ միջոցների, ընդհուպ մինչև ինքնիշխան պետության ներքին գործերին միջամտելը. ինչպես նաև իսլամական անջատողական շարժումներին աջակցելը:

Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը երեսունից ավելի տարիների գործունեության ընթացքում զգալի աջակցություն է ցույց տվել աշխարհի տարբեր անկյուններում ապրող մահմեդական փոքրամասնություններից՝ հանդես գալով նրանց իրավունքների աջակցությամբ: Առանձնացնենք դրանցից մի քանիսը:

\*\*\*

Մոտ երեսուն տարի է, ինչ ՍԱԿ-ի Անվտանգության խորհրդի և Գլխավոր ասամբլեայի, ինչպես նաև միջազգային մի շարք կազմակերպությունների, այդ թվում ԻԿԿ-ի օրակարգից դուրս չի գալիս Կիպրոսի հարցը: Դակամարտությունը կղզում հունական և թուրքական երկու հանայնքների միջև ժամանակ առ ժամանակ սրվում է, ապա՝ թուլանում: Կիպրոսի հակամարտության պատճառները իիմնականում պայմանավորված են կղզու էթնիկական կազմի, ինչպես նաև՝ աշխարհաքաղաքական և ռազմավարական այն գործոնների հետ, որոնք առնչվում են այդ տարածաշրջանին: Կիպրոսի հակամարտությունը Հունաստանի և

<sup>266</sup> Նույն տեղում, էջ 141:

Թուրքիայի միջև գոյություն ունեցող հակասությունների հիմնական պատճառներից մեկն է<sup>267</sup>:

Կիպրոսի միջիանանքային հարաբերությունների ճգնաժամը ավելի ակնհայտ դարձավ, երբ 1974-ին կղզի ներխուժեցին թուրքական զորամասերը, որոնք հուլիս-օգոստոս ամիսներին գրավեցին Կիպրոսի տարածքի 40%-ը հյուսիսում<sup>268</sup>: Թուրքական ծավալապաշտությունը Կիպրոսում իր խիստ բացասական հետևանքներն ունեցավ: Այն խախտեց Կիպրոսի Հանրապետության ամբողջականությունը և ինքնիշխանությունը: Համայնքային նախկին խնդիրներին ավելացան նորերը՝ փախստականների, անհայտ կորածների, ինչպես նաև՝ սահմանադրական և տարածքային հարցերը:

1974թ. Կիպրոսում Թուրքիայի ներխուժումը քննարկվեց ՄԱԿ-ում: 1974թ. նոյեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 29-րդ նստաշրջանում ընդունվեց No. 3212 բանաձևը, որ բոլոր պետություններին կոչ արեց հարգել Կիպրոսի Հանրապետության ինքնիշխանությունը, անկախությունը և տարածքային ամբողջականությունը, գերծ մնալ այդ երկիր ներխուժելուց և ամեն տեսակի միջանությունից: ՄԱԿ-ը կոչ արեց շուտափույթ հեռացնել օտար ռազմական ուժերն այդ երկրից:

Չնայած Կիպրոսում թուրքական ներխուժման վերաբերյալ միջազգային շրջանակներում ստեղծված խիստ բացասական դիրքորոշմանը, Թուրքիան ծեռնամուխ եղավ դիվանագիտական ճանապարհով խնդրի «օրինականացմանը»: Մահմեդական ժողովուրդների «շահերի» հուսալի պաշտպան կարող էր լինել ԽՍՀՄ ակադեմիայի կազմակերպությունը, որ ակնհայտ աջակցություն ցույց տվեց Կիպրոսում թուրքա-

<sup>267</sup> В. Шмаров, Кипр в средиземноморской политике НАТО, М., 1982, с. 13, 14.

<sup>268</sup> Նույն տեղում:

կան ներխուժմանը: Անկարան իիջյալ խնդրին հասնելու նպատակով Կիպրոսի հարցը ԽՍՀՄական կոնֆերանսի քաղաքական հարցերի օրակարգ ներկայացրեց:

Կիպրոսյան հարցին հնչեղություն տալու առումով առանձնապես կարևորվում է 1976թ. խորական պետությունների արտգործնախարարների ստամբուլյան հանդիպումը, ուր կազմակերպությունը Կիպրոսի թուրքական մահմեդական համայնքին աջակցություն և օգնելու պատրաստականություն հայտնեց, որպեսզի վերջինս միջազգային ճանաչում ստանա: Կիպրոսի թուրքական համայնքին իրավունք տրվեց՝ մասնակցել կազմակերպության աշխատանքներին: Ստամբուլի կոնֆերանսում առաջին անգամ Կիպրոսի մասին բանաձև ընդունվեց<sup>269</sup>:

Դանդաման ընթացքում Կիպրոսի թուրքական մահմեդական համայնքի առաջնորդ Ռաուլ Ղենքթաշը, խոսելով իրենց իրավունքների համար պայքարող կիպրոսցի թուրքերի մասին, զուգահեռներ անցկացրեց պաղեստինյան հարցի հետ՝ նշելով, որ «այնպես, ինչպես պաղեստինյան խնդիրն է աջակցություն ստանում, նույնպես և թուրք կիպրոսցիներին պեսոք է սատարել»<sup>270</sup>:

Ստամբուլան հանդիպումը նշանակալից դեր խաղաց նաև Թուրքիայի և ԽՍՀՄական կոնֆերանս կազմակերպության հարաբերություններում: Անկարան՝ ի պատասխան Կիպրոսի հարցում աջակցության, արաբական երկրներին սիրաշահելու մի կարևոր քայլ արեց: Թուրքիայի արտաքին գործերի նախարարը հանդիպեց ԻԿԿ-ում ՊԱԿ-ի պատվիրակության ղեկավարի՝ Ֆարուկ Բաղդումիի հետ, որից հետո Թուրքիան համաձայնեց 1979թ. իր երկրում բացել ՊԱԿ-ի ներկայացուցչություն<sup>271</sup>:

<sup>269</sup> E. İhsanoglu, նշվ. աշխ. մեջ, էջ 85:

<sup>270</sup> Նույն տեղում:

<sup>271</sup> Նույն տեղում:

Թուրքիայի ծեռնարկած քայլերը վճռորոշ եղան Կիպրոսի հարցում Իսլամական կոնֆերանս կազմակերպության դիրքորոշման ծևավորման համար: 1977թ. իսլամական պետությունների արտգործնախարարների Տրիպոլիի հանդիպմանը հաստատվեց Կիպրոսի երկու համայնքների քաղաքական հավասարությունը:

Իսլամական բարձրագույն քաղաքական մարմինը ձգտում էր գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի Կիպրոսի թուրքական համայնքը կարողանա միջազգային աջակցություն ստանալ: Կիպրոսին կազմակերպության ցուցաբերած աջակցությունը, և ԻԿԿ շրջանակներում Թուրքիայի տնտեսական հարաբերությունների ընդլայնումը, մասնավորապես Պարսից ծոցի երկրների հետ, նպաստեց Թուրքիայի և Իսլամական կոնֆերանս կազմակերպության միջև կապերի ամրապնդանը: Թուրքիան դարձավ ԻԿԿ-ին կից Իսլամական զարգացման բանկի անդամ: Բացի այդ՝ ուազմավարական առումով կազմակերպության մի շառը կարևոր կառույցներ, ինչպես օրինակ՝ Իսլամական պատմության, արվեստի և մշակույթի կենտրոնը, Տնտեսական և առևտուրական համագործակցության հանձնաժողովը սկսեցին գործել Թուրքիայում:

Թուրքիային և թուրք կիպրոսիցներին ողջ իսլամական աշխարհի աջակցության համոզիչ փաստն էր 1979թ. մարտին Կիպրոսի թուրքական հատվածում անցկացված իսլամական պետությունների լրագրողների կոնֆերանսը, իսկ 1980թ. մարտին՝ Համաշխարհային իսլամական կոնգրեսի հերթական նստաշրջանը: Այդ կապակացությամբ Ռ. Ղենքքաշը նշեց, որ նման միջոցառումները ամբողջությամբ համապատասխանում են իսլամի ոգուն և համերաշխությանը:

Իսլամական աշխարհի համերաշխությունը Կիպրոսի թուրքական համայնքին իրականացվում էր Իսլամական կոնֆերանս կազմակերպության անդիջական հովանավորությամբ:

1983թ. նոյեմբերի 15-ին հոչակվեց, այսպես կոչված, «Հյուսիային Կիպրոսի թուրքական հանրապետությունը» («ՀԿԹ»): Ինչպես 1974թ. թուրքական ռազմական ուժերի ներխուժման փաստը, որն իրականացվեց «ինքնորոշման» և թուրք կիպրոսցիներին «պաշտպանելու» պատրվակով, այնպես էլ «ՀԿԹ»-ի հոչակումը անօրինական է և հակասում է միջազգային իրավունքի նորմերին:

ՄԱԿ-ի դիրքորոշումը թուրքական ներխուժման և «ՀԿԹ»-ի հոչակման հարցում միանշանակ է: 1983թ. նոյեմբերի 19-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հատուկ բանաձևը «Հյուսիային Կիպրոսի թուրքական հանրապետության» հոչակումը հայտարարեց անհամատեղելի 1960թ. Կիպրոսի Հանրապետության ստեղծման վերաբերյալ հոչակագրին: ՄԱԿ-ը Կիպրոսից բոլոր օկուպացիոն ուժերի անհապաղ դուրս բերումը և ստատուս քվոյի վերականգնումը համարեց Կիպրոսի խնդրի կարգավորման միակ հիմքը<sup>272</sup>:

Անկարան, ծգտելով միջազգային շրջանակների կողմից օրինականացնել թուրքական ներխուժումը և այսպես կոչված «ՀԿԹ»-ի հոչակումը, ակնկալում էր, որ իսլամական բարձրագույն քաղաքական մարմինը կճանաչի նորաստեղծ պետությանը: 1983թ. Դաքայում իսլամական պետությունների արտգործնախարարների հանդիպման ժամանակ չնայած Կիպրոսի հարցում դրսնորված համերաշխությանը, անդամ պետությունների մեծամասնությունը մասնավորապես արարական երկրները մերժեցին ճանաչել «Հյուսիային Կիպրոսի թուրքական հանրապե-

<sup>272</sup> Ближний восток и международное право, №2, аշխ. մեջ, էջ 117:

տության» անկախությունը և կազմակերպության լիիրավ անդամ դառնալու նրա խնդրանքը: ԻԿԿ գլխավոր քարտուղար Յաբիբ Շատտին միայն ցանկություն հայտնեց վերսկսված տեսնել Կիպրոսի հույն և թուրք համայնքների միջև բանակցությունները:

Փաստորեն, ԽՍԼԱՄԱԿԱՆ կոնֆերանս կազմակերպությունը չկարողացավ անտեսել ՄԱԿ-ի, մասնավորապես՝ Անվտանգության խորհրդի որոշումները և բացասական դիրքորոշումը Կիպրոսում թուրքական ներխուժման և «ՂԿԹ»-ի ճանաչման հարցում: Սակայն այս հանգամանքները չխանգարեցին, որպեսզի «Ղյուսիային Կիպրոսի թուրքական հանրապետության» ղեկավարությունը շարունակի մեծ սպասելիքներ ունենալ ԻԿԿ-ից: Այդ է վկայում նաև «ՂԿԹ» նախագահ Ռաուլ Շենքաշի կեցվածքը 1991թ. Ղաքայում խՍԼԱՄԱԿԱՆ պետությունների գագաթնաժողովում, որտեղ ճիշտ է, «ՂԿԹ» անդամակցության հարցն այդպես էլ չըուծվեց, սակայն Թուրքիայի ներկայացրած բանաձևը արժանացավ մասնակից երկրների հավանությանը: Կիպրոսի թուրքական համայնքը ստացավ ԽՍԼԱՄԱԿԱՆ կոնֆերանս կազմակերպության անդամի գրեթե բոլոր արտոնություններից օգտվելու իրավունքը: Ի վերջո Ռ. Շենքաշը գագաթնաժողովում առաջին անգամ կրեց «նախագահ» մակագրությունը<sup>273</sup>:

Կիպրոսի հարցում ԽՍԼԱՄԱԿԱՆ կոնֆերանս կազմակերպությունը, ըստ էության, արդարացրեց Թուրքիայի ռազմական ներխուժումը: Նա որևէ որոշում չի ընդունել այն դատապարտելու ուղղությամբ: Ավելին, ԻԿԿ-ն բարձր է գնահատել Կիպրոսի թուրքական համայնքի ջանքերը խաղաղ բանակցությունների գործընթացում:

<sup>273</sup> «Ազգ» 25.12.1991

1997թ. Թեհրանում իսլամական պետությունների գագաթնաժողովի ամփոփիչ հայտարարության մեջ ԻԿԿ անդամ պետություններին կոչ արվեց ընդլայնել կապերը թուրք կիպրոսցինների հետ բոլոր բնագավառներում, ներառյալ՝ առևտուրը, զբոսաշրջիկությունը, մշակույթը, տեղեկատվությունը, ներդրումային համակարգը: Մեկ անգամ ևս դրականորեն գնահատվեց բանակցություններում թուրքական կողմի կառուցողական ջանքերը: Կոչ արվեց խնդիրը լուծել միայն քաղաքական ճանապարհով՝ հարգելով կիպրոսի թուրքական համայնքի արդարացի ձգտումները<sup>274</sup>:

2000թ. նոյեմբերին Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, որտեղ նշված էր. «Կազմակերպության անդամ մահմեդական երկրները պաշտպանում են կիպրոսի թուրքերի արդարացի պահանջները՝ վերահստատելով այդ հարցում նախկինում ընդունած իրենց բոլոր որոշումները»<sup>275</sup>:

ճիշտ է, Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը բացահայտուեն խուսափում է ճանաչել «ՂԿԹՀ»-ի անկախությունը, սակայն կիպրոսի մասին ընդունած բանաձևերի ենթատեքստից կարելի է հասկանալ, որ կազմակերպությունն իր անթաքույց համակրանքն է հայտնում «ՂԿԹՀ»-ի անկախությանը: Նշենք նաև, որ 1979-ից<sup>276</sup> մինչ օրս թուրքական համայնքը դիտորդի կարգավիճակով մասնակցում է Իսլամական կոնֆերանս կազմակերպության աշխատանքներին՝ հավակնելով մի օրդառնալ անդամ պետություն:

<sup>274</sup> 1997/12/9 «آخرى»

<sup>275</sup> "Zaman" 15.11.2001 (The Turkish Version) <http://www.zaman.com>

<sup>276</sup> The Islamic Summit Conference, նշվ. ժողովածով մեջ, էջ 19, 20:

\*\*\*

1970-ականների կեսից ԽՍՀՄ ական կոնֆերանս կազմակերպությունը հետամուտ եղավ նաև Բուլղարիայի բուրք մահմեդականների հարցի քննարկմանը՝ կապված Բուլղարիայում Թողոր ժիվկովի նախագահության շրջանում նրանց իրավունքների ուժահարման հետ<sup>277</sup>: Արդյունքում խիստ սրվեցին բուրք-բուլղարական հարաբերությունները:

Բուլղարիայի իշխանությունների խիստ քննադատությամբ հանդես եկավ ԽՍՀՄ ական կոնֆերանս կազմակերպության գլխավոր քարտուղար Սեյիդ Շարիֆուլիմին Փիրզադան, որի հայտարարության մեջ նշված էր. «Մշտական և ընդլայնվող ճնշումները Բուլղարիայում նահմեդական համայնքի նկատմամբ ուղղ իսլամական աշխարհում առաջ է բերել խորը անհանգստություն և վրդովնունք: Աշխարհի տարբեր վայրերում գոյություն ունեցող իսլամական հաստատությունները պահանջել են գործուն միջոցներ ծեռնարկել՝ պաշտպանելու Բուլղարիայում իրենց եղբայրների կյանքը, ունեցվածքը, կրօնական և մշակութային իրավունքները»: Գլխավոր քարտուղարը Բուլղարիայի իշխանություններից պահանջեց դադարեցնել բռնությունները, հարգել մարդու իրավունքները, ինչպես նաև արձագանքել Բուլղարիայի իշխանությունների հետ երկկողմ բանակցություններ անցկացնելու Թուրքիայի առաջարկին»<sup>278</sup>:

Փիրզադան դիմեց ԽՍՀՄ ական պետություններին և միջազգային հանրությանը՝ կոչ անելով անհապաղ քայլեր ծեռնարկել բուրք մահմեդականների իրավունքները, ինչպես նաև արձագանքել Բուլղարիայի իշխանությունների հետ երկկողմ բանակցություններ անցկացնելու Թուրքիայի առաջարկին»<sup>278</sup>:

<sup>277</sup> Այս մասին մանրամասն տես՝ Suppression of Islam in Non-Muslim Countries, Echo of Islam, Tehran, May, 1985, pp. 12-15.

<sup>278</sup> Statement by His Excellency Syed Sharifuddin Pirzada Secretary General of the Organization of the Islamic Conference on the Plight of Muslim Minority of Turkish Origin in Bulgaria (25 September, 1985), "Turkish Review", Winter 1985-86, Ankara, p. 214.

1986թ. ԻԿԿ Ֆեսի հանդիպումը հանձնարարեց գլխավոր քարտուղարին՝ ծևավորել երեք անձից կազմված հանձնախումբ՝ ուսումնասիրելու Բուլղարիայում թուրք մահմեդականների իրավիճակը՝ լիազորելով անհրաժեշտ քայլեր ծեռնարկել<sup>279</sup>: Դանձնախումբը, որ ղեկավարում էր իսլամական լիգայի գլխավոր քարտուղարը, այցելեց Թուրքիա և Բուլղարիա, որից հետո ԻԿԿ-ին ներկայացրեց հաշվետվություն:

1989թ., երբ Բուլղարիայից մեծ քանակությամբ թուրքեր արտագաղթեցին Թուրքիա, ԻԿԿ-ն Թուրքիային այդ առնչությամբ զգալի աջակցություն ցույց տվեց: Գլխավոր քարտուղարն այցելեց թուրք-բուլղարական սահմանին գտնվող բուլղարացի թուրք փախստականների ճամբարները:

Բուլղարիայի վրա զգալի էր ոչ միայն իսլամական, այլև միջազգային ճնշումը: Այս հանգամանքները նպաստեցին, որպեսզի Բուլղարիայի կառավարությունը մեղմացնի թուրք մահմեդականների հետապնդման քաղաքականությունը: Այս հարցում ոչ պակաս դերակատարություն ունեցավ նաև Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը:

\*\*\*

Մահմեդական փոքրամասնություններին ցույց տված ԻԿԿ-ի անվերապահ աջակցությունը մեկ անգամ ևս ապացուցում է իսլամական ժողովուրդների քաղաքական շարժումներին աջակցելու Իսլամական կոնֆերանս կազմակերպության պատրաստակամությունը՝ անկախ այն հանգամանքից, թե իրականում ինչ միջոցներով և ինչ եղանակներով են իրականացվում դրանք: Իր ողջ գործունեության ընթացքում ԻԿԿ-ն - փաստորեն աջակցել է մահմեդականներին առչվող գրեթե թուրք շար-

<sup>279</sup> E. Ihsanoglu, Եշվ. աշխ. մեջ, էջ 96:

ժումներին, լինեն դրանք ազգային-ազատագրական, երնիկական, երնո-քաղաքական, թե՝ անջատողական: ԻԿԿ-ն պաշտպանել է հակամար-տող մահմեդական կողմի իրավունքները: Այս հանգամանքները հաս-տատում են, որ կազմակերպությունը գործում է իսլամական համերաշ-խության, իսլամական աշխարհի սերտ համագործակցության, իսլամա-կան ժողովուրդների պայքարին աջակցելու, ոչ իսլամական երկրնե-րում իսլամական փոքրամասնությունների իրավունքները պաշտպանե-լու կարգախոսներով: ճիշտ է, իսլամական կոնֆերանս կազմակեր-պությունը վճռորոշ դերակատարում չունի հակամարտությունների կարգավորման հարցում, սակայն ի գորու է ազդել գործընթացների վրա՝ ստեղծելով համապատասխան միջազգային կարծիք:

Իրենց հերթին մահմեդական ժողովուրդները մշտապես ակնկալում են իսլամական կոնֆերանս կազմակերպության աջակցությունը: 1997թ. Թեհրանի գագաթնաժողովի նախօրեին «ալ-Բայյան» թերթում տեղ գտած «Թեհրանի գագաթնաժողովը շատերին օգուտ կրերի» հրապարկման մեջ նշված է, թե իսլամական որ շրջանակներն ինչ օ-ժանդակություն են ակնկալում միջազգային իսլամական այս կարևոր ֆորումից<sup>280</sup>:

<sup>280</sup> 1997/12/12/ 6288, «البيان» ألعدد.

#### 4.Իսլամական կոնֆերանս կազմակերպության դիրքորոշումը միջիսլամական հակամարտությունների նկատմամբ

Իսլամական կոնֆերանս կազմակերպության քաղաքական գործունեությունն ուսումնասիրելիս կցանկանայինք անդրադառնալ նաև միջիսլամական խնդիրներին: Կարևոր է այն հանգամանքը, թե իսլամական քաղաքական բարձրագույն մարմինը ինչ դիրքորոշում ունի այն հակամարտությունների նկատմամբ, որոնք ծագել են մահմեդական պետությունների միջև: Ստորև կը ներկենք ԻԿԿ-ի դիրքորոշումը իրանահրաժյան պատերազմի և Իրաքի՝ Թուվեյր ներխուժման վերաբերյալ:

1980թ. Մերձավոր Արևելքում ի հայտ եկավ ճգնաժամի մի նոր օջախ: Ակսվեց իրանահրաժյան պատերազմը, որ միջիսլամական հակամարտության ամենացայտուն օրինակներից մեկն է:

Իրանահրաժյան հարաբերությունների ողջ պատմությունը անզիջում պայքարի և հակասությունների մի երկար ուղի է եղել: Պատերազմից առաջ Իրանի և Իրաքի միջև գոյություն ունեցող հակասությունները հիմնականում առնչվում էին տարածաշրջանում Իրանի և Իրաքի միջև մրցակցությանը. Շատ ալ-Արաք գետին (Իրանը այն դիտարկում էր իրու սահմանային գետ, իսկ Իրաքը՝ պատմական Իրաքի ազգային գետ), քրդական խնդիրն և այլն: Բացի այդ Իրաքին անհանգստացնում էր իսլամական ֆունդամենտալիզմի թափանցման վտանգն իր երկիր, որի բնակչության շուրջ 60%-ը շիաներ են: 1971թ. նոյեմբերին Իրանը գրավել էր Ծոցի ջրերում գտնվող արաբական Երեք կղզիները՝ Աբու Մուսան, Մեծ և Փոքր Թոնքը: Այս փաստը արաբական աշխարհում խիստ բացասական արձագանքներ գտավ: Սա-

կայն միայն Իրաքն էր, որ անմիջապես խզեց դիվանագիտական հարաբերությունները Իրանի հետ<sup>281</sup>:

1975թ. մարտին Ալժիրում Իրանի և Իրաքի միջև կնքվել էր փոխգիշումային համաձայնագիր<sup>282</sup>: Նույն թվականի հունիսին Բաղդադում կողմերի միջև կնքված նմանօրինակ մեկ այլ պայմանագրում մատնանշված էին Իրանի և Իրաքի ժողովուրդներին կապող աշխարհագրական, պատմական, կրոնական և մշակութային ընդհանրությունները: Շատ ալ-Արաբը կողմերը դիտարկել էին միջազգային ջրային ուղի, պարտավորվել ծեռնպահ մնալ ցանկացած գործողությունից, որ կվճարի գետի նավագնացությանը<sup>283</sup>:

Ալժիրի համաձայնագիրը և Բաղդադի պայմանագիրը ստեղծեցին Իրանի և Իրաքի միջև ցամաքային և ջրային խնդիրները կարգավորելու միջազգային օրինական հիմք, ինչպես նաև համապատասխան մեխանիզմ՝ քննարկելու և լուծելու հնարավոր վեճերը, որոնք կարող էին առաջանալ պայմանագրի մեկնարանության և ընդունման ժամանակ:

Սակայն 1979թ. Իրանի իսլամական հեղափոխությունից հետո Իրանի կառավարությունը իրաժարվեց ճանաչել շահի կնքած որևէ պայմանագիր:

Պատերազմը սկսվեց 1980թ. սեպտեմբերին: Իրաքը պահանջեց, որ Իրանը ճանաչի Իրաքի օրինական իրավունքները՝ նկատի ունենալով,

<sup>281</sup> Հ. Օգանեսյան, *О同胞ения Иракской Республики со странами Арабского Востока*, Ер., 1985, с. 82, 83.

<sup>282</sup> Դիմելով տարածքային ամբողջականության պահպանման, սահմանների անձեռնմխելության և պետության ներքին գործերին չմիջանտելու միջազգային սկզբունքների վրա կողմերը համաձայնության եկան վերականգնելու անվտանգությունը ընդհանուր սահմանի երկայնքով պարտավորվելով իրականացնել խիստ և արդյունավետ հսկողություն: Ալժիրան համաձայնագրով հիմնվեց իրականարարյան համատեղ համձնախումը՝ ծեռքբալան համաձայնությունները իրականացնելու համար:

<sup>283</sup> Ալժիրի և Բաղդադի պայմանագրերի մասին մարդաբան տե՛ս՝ Ենոյան Վուշտ և մեջյուրօնու որոշ. նշվ. աշխ. մեջ, էջ 94-96:

որ Շատ ալ-Արաբը, ինչպես նաև Ահվազի նահանգը Իրաքին պատկանող տարածքներ են: Պատերազմի ընթացքում կողմերը չհարգեցին ՍԱԿ-ի և Խոլանական կոնֆերանս կազմակերպության սկզբունքները, որոնց անդամակցությունը համապատասխան պարտավորություններով:

1980թ. սեպտեմբերի 28-ին ՍԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունեց 479 բանաձևը՝ կողմերից պահանջելով անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները և ծեռնամուխ լինել հականարտության խաղաղ կարգավորմանը՝ համաձայն միջազգային իրավունքի<sup>284</sup>:

Իրանահրաքյան պատերազմի երկարատև բնույթը պայմանավորված էր կողմերի անհանդուրժողականությամբ, ինչպես նաև՝ պատերազմի շուրջ ստեղծված քաղաքական և տնտեսական հանգամանքներով: Իրանահրաքյան պատերազմը խախտեց տարածաշրջանի քաղաքական հավասարակշռությունը և տնտեսական սուր խնդիրներ առաջացրեց: Այն մասնաւոր արարական իսլամական աշխարհը, չնայած 1982թ. սեպտեմբերին Ֆեսում արարական երկրների գագաթնաժողովի ամփոփիչ հայտարարության մեջ նշված էր, որ «հարձակումը արարական որևէ երկրի վրա կդիտարկվի իբրև հարձակում արարական բոլոր երկրների վրա»<sup>285</sup>:

Խոլանական կոնֆերանս կազմակերպության համար իրավիճակն անելանելի էր, քանի որ Իրաքը և Իրանը խոլանական պետություններ են, նույն կազմակերպության անդամներ:

1981թ. իսլամական պետությունների Մեքքայի գագաթնաժողովի նախօրեին թե՛ Սաուդյան Արաբիան, թե՛ Ծոցի արարական երկրները վստահ են, որ պատերազմն անօգուտ էր և տագնապ էր առաջացնում

<sup>284</sup> Նույն տեղում, էջ 103:

<sup>285</sup> Նույն տեղում, էջ 102:

բոլոր մահմեղականների մեջ<sup>286</sup>: Սառույան Արարիայի տեղեկատվության նախարար Մուհամմեդ Արդո Յանանիի կարծիքով՝ իսլամական պետությունների ղեկավարների բարձր մակարդակի հանդիպումը պետք է ծիշտ որոշումներ ընդուներ, որ կպահպաներ կողմերից յուրաքանչյուրի իրավունքը իր տարածքների և սահմանների նկատմամբ<sup>287</sup>:

Մեքքայի զագարնաժողովին Իրանը կտրականապես իրաժարվեց մասնակցել. քանի որ դժգոհ էր ԻԿԿ անդամ պետությունների դիրքորոշումից և հանդիպմանը Իրաքի մասնակցությունից:

Մեքքայում ընդդիմախոսի բացակայության պայմաններում Իրաքը հնարավորություն ստացավ ներկայացնել իր երկրի տեսակետը: Նշվեց, որ Իրաքը պատրաստ է վերադարձնել գրաված իրանական տարածքները, եթե Իրանը վերադարձնի ուժով գրաված իրաքյան տարածքներն ու վերականգնի արդարությունը:

Իրանի բացակայությունը և մերժողական կեցվածքը չխանգարեց մասնակիցներին՝ իրանահրաքյան պատերազմի հարցում հստակ դիրքորոշում մշակել: Իսլամական պետությունների ղեկավարները խիստ անհանգստություն հայտնեցին մահմեղական երկու պետությունների միջև ռազմական գրոժողությունների համար և կոչ արեցին՝ անհապաղ դադարեցնել պատերազմը: Փաստարդում որևէ կետ չկար Իրաքի դատապարտման ճասին, որ անդում էր Իրանը:

ԻԿԿ շրջանակներում ձևավորվեց իրանահրաքյան պատերազմի հարցերով գրադղող հանձնախումբ: Իրաքը համաձայնեց կողմերին հաշտեցնելու հանձնախմբի առաքելության հետ և պատրաստակամություն հայտնեց ընդունել ցանկացած նախաձեռնություն՝ կրակի դա-

<sup>286</sup> ТАСС, АТЛЯС, 4 (1229), 23 յանվար, 1981г., с. 37.

<sup>287</sup> Նույն տեղում, էջ 37, 38:

դարեցման և կողմերից յուրաքանչյուրին իր օրինական իրավունքները վերադարձնելու հԿԿ ցանկացած որոշման հետ<sup>288</sup>:

1987թ. Իրանի պատվիրակությունը հերթական անգամ իրաժարվեց մասնակցել խլանական պետությունների բարձր մակարդակի հանդիպմանը, քանի որ դժողով էր գագարնաժողովը ոչ չեզոք արարական երկրում՝ Թուվեյրում, իրավիրելու փաստից<sup>289</sup>: Իրանը պահանջում էր, որ Թուվեյրի հանդիպմանը Իրաքը դատապարտվի որպես ազրեսոր պետություն: Սակայն երբ պարզ դարձավ, որ նման բանաձևն չի ընդունվելու, Իրանը չներկայացավ հանդիպմանը՝ իրաժարվելով նաև հԿԿ միջնորդական առաքելությունից<sup>290</sup>:

Գագարնաժողովի իրավիրման նախօրեին՝ համաձայն մամուլի իրապարակումների, Լիբիան առաջարկեց ստեղծել համատեղ խլանական ուժեր, որի հիմքը կազմելու էին Ալժիրի, Ինդոնեզիայի և Նիգերի ու ազգական ուժերը: Խլանական ուժերը պետք է տեղաբաշխվեին հակամարտ կողմերի միջև<sup>291</sup>: Սակայն Իրանի խորհրդարանի նախագահ Ջաշեմի Ռաֆսանջանին այս գաղափարը գնահատեց որպես անիրական, «քանի որ անհնար էր ստեղծել այնքան ուժեղ բանակ, որ պեսզի կանգնի իրաքյան բանակի և իրանական ուժերի միջև: Իրաքի հետ մեր համատեղ սահմանը ձգվում է 1300կմ, իսկ մարտերն ընթանում են ամենուր»<sup>292</sup>:

Իրանաիրաքյան սահմանին խլանական խաղաղապահ ուժեր տեղադրելու հարցը չըննարկվեց հԿԿ բարձր մակարդակի հանդիպումների ընթացքում: Թուվեյրյան հանդիպմանը իրանաիրաքյան պատերազ-

<sup>288</sup> Близкий Восток и международное право, №2. аշխ. мեջ, էջ 103:

<sup>289</sup> Բայց այդ Իրաքը պնդում էր, որ Թուվեյրն օգնում է Իրաքին:

<sup>290</sup> Նույն տեղում, էջ 104:

<sup>291</sup> Նույն տեղում:

<sup>292</sup> Նույն տեղում:

մի վերաբերյալ ընդունված բանաձևում տարբերակվեցին երկու հակառակ կողմեր՝ պատերազմը դադարեցնելու պատրաստ և ԻԿԿ նախաձեռնությունը մերժող, որով ԻԿԿ-ն նկատի ուներ Իրանի մերժողական կեցվածքը կազմակերպության նախաձեռնությունների հարցում:

Բուվեյթի հանդիպմանը առաջարկվեց իրանահիրաքյան պատերազմի հարցը քննարկել արդարության իսլամական դատարանում, որի ստեղծման մասին որոշումն ընդունվել էր հենց նույն հանդիպմանը: ԻԿԿ գլխավոր քարտուղար Շարիֆուդդին Փիրզադան, որին հանձնարարված էր շարունակել աշխատանքը պատերազմի դադարեցման ուղղությամբ, Ենեց, որ իսլամական դատարանը այն տրամաբանական ֆորումն է, որի շրջանակներում կարելի է լուծել մահմեդականների խնդիրները՝ առանց օտար կազմակերպությունների միջամտության<sup>293</sup>:

Իսլամական պետությունների առաջնորդները շտապում էին իրանահիրաքյան հակամարտությունը լուծել համահլամական ուժերով, մինչդեռ կազմակերպությունը չուներ այդ լծակները: Իսլամական դատարանն այդպես էլ ի վիճակի չեղավ որևէ դեր խաղալ միջիսլամական խնդիրների կարգավորման հարցում, իսկ համատեղ իսլամական ուժեր ստեղծելու և պատերազմին միջամտելու գաղափարներն այդպես էլ կյանքի չկոչվեցին:

Պատերազմի ութ տարիների ընթացքում հակամարտ կողմերը կրեցին ահօելի կորուստներ, տուժեցին միլիոնավոր մահմեդականներ: Իրաքը և Իրանը չանսացին իսլամական համերաշխության և եղբայրության գաղափարներին:

1988թ. պատերազմի ավարտից հետո էլ Իրանի և արաբական երկրների միջև առկա էին որոշ հակասություններ, որոնցից շատերը հետա-

<sup>293</sup>Նույն տեղում:

գայում իրենց լուծումը գտան նախագահ Խաբամիի օրոք: 1997թ. դեկտեմբերին ԻԿԿ Թեհրանի գագաթնաժողովի ընթացքում Իրանը լուրջ քայլեր ծեռնարկեց՝ բարելավելու հարաբերությունները արաբական խալամական աշխարհի հետ, ամրապնդելու իսլամական համերաշխուրյան գաղափարները: ԻԿԿ նախագահության երեք տարիների ընթացքում Իրանը եռանդուն կերպով պաշտպանեց արաբական և իսլամական շահերը: Մերձավորարևելյան ճգնաժամի կարգավորման հարցում Իրանը մեկ անգամ ևս հաստատեց իր դիրքորոշումը 2000թ. օգոստոսին ՊԱԿ-ի նախագահ Յասեր Արաֆաթի՝ Թեհրան կատարած այցի ժամանակ, որի ընթացքում Իրանի արտգործնախարար Ք. Խարազին ընդգծեց, որ «ոչ մի մահմեդական թույլ չի տա, որպեսզի սուրբ քաղաքը (Երուսաղեմը-Ա. Փ.) օկուպացված մնա, իսկ Խալամական կոնֆերանս կազմակերպությունը ոչ մեկին չի թույլատրի որևէ գործարք կատարել Երուսաղեմի վերաբերյալ»<sup>294</sup>:

\*\*\*

Իրաքը դասեր չքաղեց իրանահրաքյան պատերազմից և Ծոցում իրականացրեց նոր, լայնամասշտար ռազմական գործողություն: 1990թ. օգոստոսի 2-ին Իրաքը գրավեց իր հարևան Քուվեյթ անկախ պետությունը: Դամաշխարհային հանրության տեսակետը՝ ի դեմս ՍԱԿ-ի, միանշանակ էր Իրաքի ազրեսիայի նկատմամբ: Այս 600 բանածեր, ընդգծելով, որ Իրաքի ներխուժումը Քուվեյթ խախտում է միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը, պահանջեց Իրաքից անհապաղ և առանց նախապայմանների դուրս բերել զորքերը Քուվեյթից: Մեկ այլ՝

<sup>294</sup> И. Феодоров, Ирано-американские отношения рубеж веков. В кн.: Иран: ислам и власть, М., 2001, с. 182.

661 բանաձևով ԱԽ-Ն կոչ արեց բոլոր պետություններին՝ դադարեցնել Իրաքից և Քուվեյթից որևէ ներմուծում և այդ երկրներում արտահանում կամ գործարք իրականացնելը<sup>295</sup>:

Սակայն Իրաքի նախագահ Սաղդամ Յուսեյնը համառորեն անտեսեց ՄԱԿ-ի և համաշխարհային հանրության կարծիքը: Իրաքի իշխանությունները իրաժարվեցին Ենթարկվել միջազգային կազմակերպություններին:

Արաբական երկրներին նույնպես չհաջողվեց հասնել Ծոցի ճգնաժամի խաղաղ կարգավորմանը<sup>296</sup>. Արաբական քաղաքականությունը, չնայած ունեցած լծակներին, ինչպես նախկինում, այս անգամ էլ հանդես բերեց պասիվություն և անարդյունավետություն:

Դիվանագիտական և քաղաքական ջանքերը սպառված էին, և Անվտանգության խորհուրդը 1991թ. հունվարի 15-ը սահմանեց Քուվեյթից Իրաքի դուրս գալու վերջին ժամկետը և բույատրեց ռազմական բնույթի նախազգուշական սանկցիաների իրագործում նշված ժամկետից հետո<sup>297</sup>:

1991թ. հունվարին 30 պետություններ՝ ԱՄՆ-ի գլխավորությամբ սկսեցին «Փոքրիկ անապատում» ծրագրի իրագործումը, այսինքն՝ ռազմական գործողություններ Իրաքի դեմ, որին նասնակցեցին նաև արաբական իսլամական պետությունները, այդ թվում՝ ԻԿԿ անդամ պետությունները՝ Սաուդյան Արաբիան, Սիրիան, Ծոցի արաբական երկրները, Թուրքիան և այլն:

<sup>295</sup> Ելույթն Ոստօք և մշակութարժության պարագաները, Եշվ. աշխ. մեջ, էջ 111, 112:

<sup>296</sup> 1991թ. Կահիրենում Արաբական լիգայի 12 արաբական պետությունները դատապարտեցին Իրաքի ազգային և իրենց աջակցությունը հայտնեցին ՄԱԿ-ի ԱԽ 660 բանաձևին, իսկ 9 արաբական երկրներ համերաշխությունը հայտնեցին Իրաքին:

<sup>297</sup> Ելույթն Ոստօք և մշակութարժության պարագաները, Եշվ. աշխ. մեջ, էջ 113:

Պատերազմական գործողություններում Իրաքը պարտվեց, Քուվեյթը վերականգնեց իր ինքնիշխանությունը: Ծոցի ճգնաժամի պատճառով Քուվեյթն ունեցավ մոտ 30 մլրդ դոլարի կորուստ: Իրաքի ազրեսիան բացասաբար անդրադարձավ նաև տարածաշրջանի տնտեսական իրադրության վրա, գորեք կարգածահար եղավ ՕՊԵԿ-ի գործունեությունը, զգալիորեն բարձրացան նավթի գները<sup>298</sup>:

Իրաքի ազրեսիային քաղաքական գնահատական տվեց ԽՍԼԱՄԱԿԱՆ կոնֆերանս կազմակերպությունը՝ խստորեն դատապարտելով Իրաքի ներխուժումը Քուվեյթ: 1991թ. օգոստոսին խսլամական պետությունների արտաքին գործերի նախարարների Ստամբուլի կոնֆերանսում ունեցած ելույթում Եգիպտոսի արտաքին գործերի նախարար Ամր Մուսան նշեց, որ Իրաքի ազրեսիան սպառնում է անվտանգության, կայունության և համերաշխության հիմքերին<sup>299</sup>:

Ստամբուլի հանդիպմանը Իրաքից պահանջվեց փոխհատուցել մարդկային և նյութական այն կորուստները, որ նա պատճառել էր Քուվեյթին և այլ երկրներին՝ համաձայն ՍԱԿ-ի Անվտանգության խորհրդի համապատասխան որոշումների: Անհրաժեշտ համարվեց, որպեսզի Իրաքը կատարի ՍԱԿ-ի ԱԽ այն բանաձևերը, որոնք առնչվում են զանգվածային ոչնչացման բոլոր տեսակի գենքերին: Իրաքից պահանջվեց անհապաղ ազատ արձակել Քուվեյթի քաղաքացիներին և գինվորական պատանեներին:

Կոնֆերանսում ընդունված բանաձևն իր մերժողական վերաբերնունքը հայտնեց Իրաքի իշխանություններին: ԽՍԼԱՄԱԿԱՆ պետությունների արտաքին գործերի նախարարները անհանգստություն

<sup>298</sup> Այս մասին մանրամասն տե՛ս՝ Ալի-Ամրի Սաւադ Սալման, Второй кризис в Заливе (1990-1991 гг.) и его последствие. В кн: Арабский сборник Выпук третий, М., 2000, с. 49-61.

<sup>299</sup> Final Communiqué of the 20<sup>th</sup> Session of ICFM (August 4-8, 1991) <http://www.oic-un.org>

հայտնեցին, որ Իրաքի վարչակարգի անհանդուրժողականության պատճառով Իրաքի համբերատար ժողովուրդը հայտնվել է ծանր փորձության մեջ<sup>300</sup>:

Չնայած Խալամական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում Իրաքի նախագահ Սադղամ Չուսենի հասցեին հնչած քննադատությանը՝ 1994թ. Կասարլանկայի գագաթնաժողովը հաստատեց, որ հարգում է Իրաքի իշխանությունը, նրա քաղաքական անկախությունը և իր համակրանքը հայտնեց Իրաքի ժողովրդին: Դրա հետ մեկտեղ՝ ԻԿԿ-ն հիշեցրեց, որ Իրաքը պարտավոր է հետևել ՄԱԿ-ի ԱԽ 949 որոշմանը, համաձայն որի՝ Իրաքը չպետք է օգտագործի իր երկրի ռազմական ուժերը՝ որպես սպառնալիք հարևան երկրի դեմ<sup>301</sup>:

Միաժամանակ Խալամական կոնֆերանս կազմակերպությունը հետամուտ էր, որպեսզի որևէ հանգամանք չսպառնա Իրաքի ինքնիշխանությանն ու ամբողջականությանը: Իրաքի նկատմամբ ՄԱԿ-ի պատճամիչոցների հարցում ԻԿԿ դիրքորոշումը երբեմն ծևավորվում էր Իրաքի նկատառումների հիման վրա: 1994թ. Կասարլանկայի գագաթնաժողովի օրակարգից հանվեց այն հատվածը, որտեղ Բաղդադից պահանջվում էր կատարել Իրաքի վերաբերյալ ՄԱԿ-ի որոշումները՝ զանգվածային ոչնչացման գենքերի կապակցությամբ<sup>302</sup>:

1995թ. արտգործնախարարների Կոնակրիի հանդիպմանը Իրաքի արտաքին գործերի նախարարը իր ելույթում պահանջեց չեղյալ հայտարարել Իրաքի դեմ ՄԱԿ-ի ԱԽ որոշումները, քանի որ դա ամերիկյան

<sup>300</sup> Նոյեմբերում:

<sup>301</sup> 1994/12/19 «ألتئار»

<sup>302</sup> Նոյեմբերում:

դավադրություն է և ճնշում՝ իր երկրի դեմ: Նա հերքեց, որ Իրաքում քուվեյթի պատանդներ կան<sup>303</sup>:

Եթե իրանաիրաքյան պատերազմի ժամանակ կազմակերպությունը չեղոք դիրք գրավեց, չնայած իրանական կողմը ԻԿԿ-ին մեղադրեց կողմնապահության մեջ, ապա Ծոցի ճգնաժամի նկատմամբ կազմակերպության վերաբերմունքը հստակ էր: ԻԿԿ-ն միանշանակորեն դատապարտեց Իրաքի ներխուժումը Քուվեյթ՝ որակելով այն որպես ազրեսիա:

Թե՛ իրանաիրաքյան և թե՛ Իրաքի ազրեսիան Քուվեյթում բացասաբար անդրադառնությունները ցանկացած պահի կարող են անտեսել Իսլամական կոնֆերանս կազմակերպության վարկանիշի վրա՝ փաստելով, որ իսլամական պետությունները ցանկացած պահի կարող են անտեսել Իսլամական կոնֆերանս կազմակերպության հոչակած սկզբունքները ու իսլամական համերաշխության ու եղբայրության կարգախոսները: Իր հերթին ԻԿԿ-ն չունի համապատասխան մեխանիզմներ՝ կանխելու իսլամական պետությունների միջև ծագող հակամարտությունները:

## 5. Իսլամական կոնֆերանս կազմակերպության դիրքորոշումը միջազգային մի շարք խնդիրների նկատմամբ

Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը հակամարտություններից բացի անդրադառնությունը է նաև քաղաքական նշանակության այլ հարցերի, որոնք միջազգային կարևորություն ունեն և պարբերաբար քննարկվում են նաև ՄԱԿ-ում: Միջազգային կարևոր հարցերին վերաբե-

<sup>303</sup> 1995/12/13 / 29817 «آخر أيام» العدد

բող կազմակերպության անդրադարձները ոգով և բովանդակությամբ համապատասխանում են ՍԱԿ-ի որոշումներին:

Խալամական կոնֆերանս կազմակերպությունը սերտորեն համագործակցում է ՍԱԿ-ի հետ՝ 1975-ից դիտորդի կարգավիճակով մասնակցելով ՍԱԿ-ի աշխատանքներին<sup>304</sup>: ՍԱԿ-ի և ԻԿԿ-ի միջև համագործակցությունն առնչվում է միջազգային խաղաղության ու անվտանգությանը, զինաթափմանը, ապագաղութացմանը, մարդու իրավունքների, ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի պաշտպանությանը: Ամեն տարի ՍԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի օրակարգում տեղ է գտնում «ՍԱԿ-ի և ԻԿԿ համագործակցության մասին» կետը, ընդունվում է համապատասխան բանաձև: 1985թ. հոկտեմբերի 25-ի 40/4 բանաձևում նշված է, որ «Գլխավոր ասամբլեան, ի գիտություն ընդունելով ՍԱԿ-ի և ԻԿԿ-ի միջև համագործակցության վերաբերյալ գլխավոր քարտուղարի գեկույցը, նկատի առնելով երկու կազմակերպությունների ձգտումը՝ ավելի սերտ համագործակցել գլոբալ խնդիրների լուծման համատեղ փնտրությի մեջ, ինչպիսիք են՝ միջազգային խաղաղությունը և անվտանգությունը, զինաթափումը, ապագաղութացումը, մարդու իիմնական իրավունքների և միջազգային տնտեսական կարգ ու կանոնի հաստատումը, հիշեցնելով ՍԱԿ-ի կանոնադրության համապատասխան հոդվածները, որոնք խրախուսում են գործունեությունը տարածաշրջանային համագործակցության ճանապարհով՝ ՍԱԿ-ի սկզբունքների և նպատակների իրականացման համար», խնդրում է ՍԱԿ-ին և ԻԿԿ-ին՝ «շարունակել համագործակցել գլոբալ խնդիրների լուծումը գտնելու նպատակով...»<sup>305</sup>:

<sup>304</sup> Ислам, краткий справочник, М., 1983, с. 128.

<sup>305</sup> Ближний Восток и международное право, նշվ. աշխ. մեջ, էջ 171:

ՄԱԿ-ում ԻԿԿ-ն մշտական դիտորդական առաքելություն ունի ժնևում և Նյու-Յորքում: Որպես կանոն՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը նաև ակցում է ԻԿԿ բարձր մակարդակի քաղաքական հանդիպումներին: ԻԿԿ առանձին օժանդակ մարմինները, ինչպես նաև գլխավոր քարտուղարությունը տարաբնույթ պայմանագրեր ու հուշագրեր են կնքել ՄԱԿ-ի հովանավորությամբ գործող միջազգային մի շարք կազմակերպությունների հետ<sup>306</sup>:

Իսլամական կոնֆերանս կազմակերպության առանձին շրջանակներ այն տեսակետոն են արտահայտել, որ ԻԿԿ-ն վետոյի իրավունքով պետք է դառնա ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամ: Այս մասին հայտարարեց Իրանի հոգևոր առաջնորդ այաթոլլա Խամենեին 1997-ին Թեհրանի գագարնաժողովում. «...Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը պետք է դառնա Միացյալ ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի մշտական անդամ և լինի վետոյի իրավունքով վեցերորդ անդամը այնքան ժամանակ, քանի այս իրավունքը գոյություն ունի»<sup>307</sup>:

Իսլամական կոնֆերանսը կարևորում և մեծ ուշադրություն է դարձնում միջուկային գենքի խնդիրներին: Կազմակերպությունը որպես կանոն միջազգային հանրությանը զգուշացնում է միջուկային սպառնալիքի մասին: ԻԿԿ-ն հանդես է գալիս երկրագնդի առանձին շրջաններում միջուկային գենքերից զերծ գոտիներ ստեղծելու առաջարկով: 1976 թվականից սկսած ԻԿԿ-ն ներկայացրեց Աֆրիկայում, Մերձավոր Արևելքում և հարավարևելյան Ասիայում միջուկային գենքից ծերբազատված

<sup>306</sup> The OIC and International Organizations, <http://www.oic-un.org>

<sup>307</sup> Speech Delivered by Ayatollah Seyyed Ali Khamenei, IRI'S Spiritual Leader at the Opening Ceremony of the 8<sup>th</sup> Organization of the Islamic Meeting Summit Conference, The Iranian Journal of International Affairs, vol. IX, No. 4, Winter 1997/98, p. 598.

գոտիներ ստեղծելու, ինչպես նաև՝ Դնդկական օվկիանոսը խաղաղության շրջան դարձնելու առաջարկներ՝<sup>308</sup>։ ԻԿԿ դիրքորոշումն այս հարցում վերահաստատվել է 1995թ. արտաքին գործերի նախարարների Գվինեայի կոնֆերանսում՝<sup>309</sup>։

\*\*\*

Պարբերաբար քննարկվող հարցերի շրջանակում է նաև ահարեկչության խնդիրը, որ միջազգային հանրությանը հուզող ամենասուր հարցերից մեկն է։

ԻԿԿ-ն միանշանակորեն մերժում է Արևմուտքի, մասնավորապես ԱՄՆ-ի՝ արար-իսրայելական հակամարտության շրջանակներում պաղեստինցիներին և իսլամական պետություններին վերագրվող ահարեկչության մեղադրանքները։ 1987թ. Քուվեյթի գագաթնաժողովում ունեցած ելույթում Սիրիայի նախագահ Ջաֆեզ ալ-Ասադը մասնավորապես նշեց, «Ամերիկայի Սիացյալ Նահանգները խոսում են ահարեկչության մասին, եթե ինքը պատճության մեջ հայտնի ամենաահարեկչական երկիրն է։ Ծիծաղելի է, որ Սիացյալ Նահանգները հիշատակվում են որպես ահարեկչությանը դիմագրավող երկիր, մինչդեռ ինքն է գրադարձ ահա-

<sup>308</sup> 1975 թվականին ԱՄԿ-ի Գլխավոր ասամբլեան սահմանեց միջուկային գենքերից գերծ գոտի հասկացությունը։ Նման գոտիները, որպես այդպիսից, ճանաչվում են Գլխավոր ասամբլեայի կողմից։ Նրանք կարող են ստեղծելով պնդությունների ցանկացած խճիք կողմից, ովքեր իրենց ինքնինշանության շրջանակներում կնքում են պայմանագիր կամ կոնվենցիա, սահմանում տվյալ միջուկային գենքից գերծ գոտին, ինչպես նաև ստեղծում պարուականությունները կատարելու երաշխիքների ստուգման և վերահսկողության միջազգային համակարգ։

<sup>309</sup> 1995/12/13 / 29817 «الدّارم» لـ»

բեկչության այնպիսի տեսակներով, որ մարդկության պատմությանը ծանոթ չէր մինչ այդ»<sup>310</sup>:

Սիրիայի նախագահը նշեց, որ ԱՄՆ-ը աջակցեց պաղեստինցիների դեմ խրայելական ահարեկչությանը և նյութապես աջակցեց նրան՝ հաստատելով իր մասնակցությունը: Ասադի կարծիքով՝ իրականում ԱՄՆ-ը և Խորայելն են տարածում ահարեկչությունը՝ ճգտելով աղճատել ազգերի ազատագրական պայքարը<sup>311</sup>:

ԱՄՆ-ին մեղադրելով պաղեստինցիների ցեղասպանության կազմակերպմանը խրայելցիներին աջակցելու մեջ՝ Յ. Ասադը նշեց, որ այդ երկիրը փորձում է ազգային-ազատագրական պայքարը ներկայացնել որպես ահարեկչություն:

Քուվեյթի գագաթնաժողովն ընդունեց Սիրիայի առաջարկը և դիմեց ՍԱԿ-ին՝ միջազգային կոնֆերանս իրավիրելու համար, որպեսզի հստակ տարրերակում նշովի ահարեկչության և ժողովրդական, ինչպես նաև՝ ազգային-ազատագրական պայքարի միջք<sup>312</sup>: Այս որոշումը վերահաստատվեց իսլամական պետությունների բարձր մակարդակի հետագա հանդիպումների ընթացքում:

ԻԿԿ-ն ահարեկչական բոլոր տեսակի գործողություններին գնահատական տալու համար պահանջում է նախ ուսումնասիրել դրանց ծնող պատճառները՝ հանդես գալով միջազգային ահարեկչության խիստ քննադատությամբ, որի դեմ պայքարելու համար մեծապես կարևորվում է իսլամական համագործակցությունը:

---

<sup>310</sup> 1987/1/28 «ԱՐԴ»

<sup>311</sup> Նույն տեղում:

<sup>312</sup> Նույն տեղում:

Միևնույն ժամանակ ԻԿԿ-ն խիստ մտահոգություն է հայտնում ահաբեկչական այն գործողությունների համար, որոնց մասնակից են մահմենդականները, քանի որ, ինչպես նշվում է, իսլամը որևէ առնչություն չունի ահաբեկչության հետ: Այս կապակցությամբ թեհրանյան հոչակագորում ասված է. «Մասնակիցները միահամուռ դատապարտում են ահաբեկչությունը, որ նշանակում է շեղում իսլամական ուսմունքից: Այս երևույթը բռնություն է մեր արժեքներին, սովորույթներին և իրավունքին, որ նսեմացնում է արժանապատվությունը և մարդու նկատմամբ հարգանքը»<sup>313</sup>:

Ընդունելով, որ ներքին սպառնալիքներն արդի փուլում ավելի լուրջ վտանգ են, քան արտաքինը, Թեհրանի գազարնաժողովն անթույլատրելի համարեց ահաբեկչության ընդլայնումը, անգամ եթե այն իրագործում է որևէ իսլամական երկիր՝ օգտագործելով իսլամը շահադիտական նպատակների համար: Ահաբեկչության և ծայրահեղականության դեմ պայքարի գործողությունները համակարգելու համար որոշվեց ԻԿԿ գլխավոր քարտուղարությանը կից ստեղծել միջկառավարական խումբ, որն իրականացնում է պաշտպանության և անվտանգության բնագավառներում տեղեկատվության փոխանակումը<sup>314</sup>:

2001թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկչությունը անհախաղեալ էր իր ահռելիությամբ: Այն ցույց տվեց, որ ահաբեկչությունը գերազույն վտանգ է<sup>315</sup>: Ինչպես իրավացիորեն նշում է արարագետ Ն. Ջովիաննիսյանը, ահաբեկիչների և նրանց առաջնորդների կողմից ԱՄՆ-ին թիրախ դարձնելը ամենաին պատահական

<sup>313</sup> 1997/16/12 «باعث»

<sup>314</sup> Նույն տեղում:

<sup>315</sup> ألا رها بـ، القاهرة، ٢٠٠١، ص ٧

չեր, քանի որ նրանց պատկերացմամբ «...ԱՄՆ-ը չարիքի, բռնության, անբարոյականության մարմնավորում է, համաշխարհային շահագործող, որը արհամարհում է մյուս ժողովուրդների և երկրների հետաքրքրությունները և ծգտում է թելադրել իր կամքը և քաղաքականությունը ամբողջ աշխարհին»<sup>316</sup>:

ԱՄՆ-ում տեղի ունեցած ողբերգությունը, որին զոհ գնացին հազարավոր մարդիկ, դարձավ ողջ աշխարհի մտահոգության առարկան: Ահարեւէչական գործողությունների քննադատությամբ հանդես եկան արարական իսլամական պաշտոնական շրջանակները, որին միացան անգամ հակամամերիկյան դիրքորոշում ունեցող իսլամական պետությունները: Միևնույն ժամանակ իսլամական աշխարհը խիստ մտահոգություն հայտնեց Աֆղանստանում ռազմական գործողություններ սկսելու ԱՄՆ-ի որոշման վերաբերյալ:

Ահարեւէչական գործողությունները, որոնք տեղի ունեցան իսլամի քողի ներքո, խորացրին միջազգային ասպարեզում իսլամի դեմ անհանդուրժողականության դրսնորումները: Գոյություն ունեցող մտայնությունները կանխելու ապացույցն է 2001թ. սեպտեմբերի 12-ին ԻԿԿ գլխավոր քարտուղար Աբդ ալ-Ռահիմ Բելքազիզի հայտարարությունը, որ ողջ իսլամական աշխարհի անունից ցավակցություն հայտնեց ԱՄՆ-ի նախագահին, իշխանություններին և ժողովրդին: Ընդգծվեց, որ իսլամական աշխարհը ընդհանուր առմամբ կիսում է ամերիկյան ժողովրդի ցավը և դատապարտում ոճրագործներին<sup>317</sup>:

2001-ին ԻԿԿ նախագահ Կատարի Էմիր շեյխ Յամմադ բին Խալիֆա Ալ Թանիին ուղղված իրանի նախագահ Մ. Խաբամիի նամակը նույն-

<sup>316</sup> "Արարու", No. 36, 19-25 օкտյոբր, 2001թ.

<sup>317</sup> Events that Took Place in the United States of America <http://www.oic-un.org>

պես նման մտայնություններ էր արտահայտում: Իրանի նախագահի կարծիքով ԱՄՆ-ում տեղի ունեցած աննարդկային իրադարձությունները որպես պատրվակ կարող են օգտագործվել նրանց համար, ովքեր հետամուտ են հակախլամական զգացումներ ծնել արևմտյան երկրներում և հակամարտություն առաջացնել իսլամական քաղաքակրթության և Արևմուտքի միջև: Խարազի կարծիքով՝ խալամի աշխարհի և միջազգային հանրության հետաքրքրությունները պահանջում են, որպեսզի մահմեդական առաջնորդների գգոնության շնորհիվ այդ վտանգը չեղոքացվի<sup>318</sup>:

Իրանի արտաքին գործերի նախարար Ք. Խարազի կարծիքով՝ «անհրաժեշտ է խուսափել իսլամական աշխարհի և Արևմուտքի առաջակատումից»<sup>319</sup>:

Արաբական «ան-Նուր» ամսագրի մի իրապարակման համաձայն՝ նախորդ դարերում աշխարհի բաժանումը «խալամի աշխարհի» և «պատերազմի աշխարհի» միջև ներկայումս, կարծես, կյանքի է կոչվում: Սակայն ավելի հավանական է, գրում է ամսագիրը, որ սեպտեմբերի 11-ից հետո ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակը ոչ թե պատերազմ է մահմեդականների և «անհավատների» միջև, այլ նպատակ ունի փոխել քաղաքական ուժերի հաշվեկշիռը<sup>320</sup>:

Սեպտեմբերի 11-ից հետո ստեղծված նոր աշխարհաքաղաքական իրադրությունը, ինչպես նաև Աֆղանստանում հատուցման ռազմական գործողություններ իրականացնելու ԱՄՆ-ի քաղաքականությունը<sup>321</sup> քննարկելու նպատակով Իրանի նախագահ Մոհամեդ Խարամի առա-

<sup>318</sup> "Ettela'at" No. 1773, Tehran, 19.09.2001

<sup>319</sup> Լույս տեղում:

<sup>320</sup> ۳۲-۳۳، ص. ۲۰۰، ۱۲۶ دعدور، آنلاین:

<sup>321</sup> Այս մասին ավելի մանրամասն տես՝ գրքի՝ Աֆղանստանին վերաբերող բաժնում:

ջարկով 2001թ. հոկտեմբերի 10-ին Դոհայում անցկացվեց իսլամական պետությունների արտաքին գործերի նախարարանների արտահերթ հանդիպում: Կոնֆերանսի ամփոփիչ հայտարարության մեջ նշված է, որ ահարեկչական գործողությունները դեմ են աստվածային կրոնների ուսմունքին, ինչպես նաև՝ մարդկային արժեքներին: Իսլամական պետությունները հաստատեցին իրենց պատրաստակամությունը՝ գործնականորեն աջակցելու ԱՄՆ-ի հովանու ներքո ահարեկչության դեմ միջազգային համատեղ միջոցառումների իրագործմանը: ԻԿԿ-ն մեկ անգամ ևս կարևորեց միջազգային կոնֆերանսի հրավիրումը, որ կսահմանի ահարեկչության ֆենոմենը «...առանց ընտրողականության կամ երկակի չափանիշների (double standards)», որ կօգնի հայտնաբերել ահարեկչության առաջացման պատճառները, արմատախիլ անել դրանք՝ հետամուտ լինելով միջազգային անվտանգության և կայունության հաստատմանը:

Միևնույն ժամանակ իսլամական պետությունների արտգործնախարարները նշեցին, որ ներժում են որևէ կապ տեսնել ահարեկչության և իսլամական ու արաբական ժողովուրդների՝ հանուն ինքնորոշման, ինքնապաշտպանության, ինքնիշխանության, Խորայելի և օտար տիրապետության դեմ պայքարելու իրենց հրավունքների միջև<sup>322</sup>:

\*\*\*

Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը հանդիս է եկել քաղաքակրթությունների միջև երկխոսություն անցկացմելու առաջարկով<sup>323</sup>,

<sup>322</sup> Final Communiqué of the 9<sup>th</sup> Extraordinary Session of ICFM (October 10, 2001) <http://www.oic-un.org>

<sup>323</sup> Առաջարկն արվել է 1997թ. իսլամական պետությունների Թեհրանի գագարնաժողովի ընթացքում:

որ հավանության է արժանացել ՍԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 53-րդ նստաշրջանում, և 2001 թվականը հայտարարվել է քաղաքակրթություն-ների միջև երկխոսության տարի:

Աշխարհի բոլոր պետություններին Խալամական կոնֆերանս կազմակերպությունը երկխոսության կոչ է արել: Ելույթ ունենալով 1998թ. Կատարում խալամական պետությունների արտգործնախարանների կոնֆերանսում՝ Իրանի նախագահը նշեց, որ համաշխարհային հանրության դրական արձագանքը ցույց տվեց, որ քաղաքակրթությունների միջև երկխոսություն անցկացնելու առաջարկը բավարարում է այն պահանջները, որոնք ի հայտ են եկել «սառը պատերազմից» հետո և հակասում են միջազգային կարգ ու կանոնի ավանդական համակարգին<sup>324</sup>:

Նախագահ Խարամիի կարծիքով Խալամական կոնֆերանս կազմակերպությունը, որ կարող է դառնալ մահմեդական ժողովուրդների միասնության օրինակը, պետք է նպաստի մշակույթների և քաղաքակրթությունների միջև երկխոսության ամրապնդմանը, բարձր մակարդակով մասնակից դառնա համաշխարհային գործընթացներին, քաղաքացիական հասարակության, ժողովրդավարության ամրապնդմանը, պայքարի հանուն մարդու իրավունքների, խաղաղության և անվտանգության<sup>325</sup>:

\*\*\*

ԻԿԿ պաշտոնական փաստաթղթերում մեծ տեղ է հատկացվում աշխարհում խաղաղության և անվտանգության հաստատման հարցերին: Խալամական պետությունների անվտանգությանը վերաբերող բանաձևե-

<sup>324</sup> «Третий взгляд» (Новости, репортажи и комментарии из иранской прессы), №. 74, 25 декабря 2000 г., с. 11.

<sup>325</sup> Նոյն տեղում, էջ 13:

րում մատնանշվում է, որ յուրաքանչյուր իսլամական պետության անվտանգություն վերաբերում է բոլոր իսլամական պետություններին, շեշտադրվում է հարգանքը անդամ պետությունների ինքնիշխանության, քաղաքական անկախության և տարածքային ամբողջականության միջազգային սկզբունքների նկատմամբ: ԻԿԿ-ն մերժում է միջազգային հարաբերություններում ուժի օգտագործումը և անդամ պետությունների ներքին գործերին միջամտելը:

Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը ձգտում է ուժեղացնել անդամ պետությունների անվտանգությունը իսլամական պետությունների համագործակցության միջոցով՝ համաձայն ԻԿԿ-ի և ՄԱԿ-ի կանոնադրության սկզբունքների և նպատակների՝ կարևորելով այն նախաձեռնությունները, որոնք խրախուսում են անդամ պետությունների միջև վստահությունը և անվտանգությունը ինչպես երկկողմ, այպես էլ՝ տարածաշրջանային մակարդակներով:

Իսլամական պետությունների արտգործնախարարների Դաշարի կոնֆերանսի որոշմամբ՝ 1979թ. փետրվարին Լոնդոնում անցկացվեց «Պաշտպանությունը և մահմեդական աշխարհը» թեմայով խորհրդակցություն: Սակայն այն նվիրված էր ոչ թե խրայելական ագրեսիայի դեմ պայքարը ռազմական տեսանկյունից անցկացնելու խնդրին, այլ՝ «ինքնապահովման և միացյալ պաշտպանության հիմքի վրա իսլամական պետությունների միության ստեղծման գաղափարի ձևակերպմանը»: Նման դաշինքի մեջ նախատեսվում էր ընդգրկել Սաուդյան Արաբիային, Արաբական Միացյալ Էմիրությունները, Քուվեյթը, Լիբիան և Կատարը<sup>326</sup>:

<sup>326</sup> Հ. Ժданով, Ա. Իգնատենկո, նշվ. աշխ. մեջ. էջ 226:

1981թ. Մեքքայի գագաթնաժողովի աշխատանքների ընթացքում տեղի ունեցավ Սաուդյան Արաբիայի, Արաբական Միացյալ Էմիրությունների, Քուվեյթի, Օմանի, Կատարի և Բահրեյնի ղեկավարների հանդիպումը: «Քուվեյթ քայլու» թերթի հրապարակումների համաձայն Մեքքայի գագաթնաժողովի փակ դռների հետևում քննարկվել է Քուվեյթի առաջարկած նախագիծը Ծոցի երկրների միջև քաղաքական, տնտեսական և ռազմական բնագավառներում գործողությունների համակարգման հարցը<sup>327</sup>:

Սակայն ԻԿԿ շրջանակներում ռազմական համագործակցության ծրագիրն այդպես էլ չիրականացավ: Ինչպես արդեն նշել ենք, չիրականացավ նաև իրանահրաքյան պատերազմի ժամանակ միացյալ իսլամական խաղաղապահ ուժեր ստեղծելու առաջարկը: Իսկ անվտանգության շրջանակներում համագործակցությունը տեղայնացվեց: 1981թ. ստեղծվեց Ծոցի արաբական երկրների համագործակցության խորհուրդը, որին տրվեց ռազմա-քաղաքական բնույթը<sup>328</sup>:

Ասվածից հետևում է, որ Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը չունի ընդհանուր անվտանգության և պաշտպանության համակարգ, և ոչ էլ՝ միացյալ ռազմական ուժեր, չնայած նման առաջարկներ բազմից հնչել են: 1997թ. ԻԿԿ գլխավոր քարտուղար Ազ ադ-Դին ալ-Երակին նշեց, որ կազմակերպությունը չունի ո՞չ տնտեսական, ո՞չ ռազմական ճնշման միջոցներ, առավել ևս՝ լծակներ Անվտանգության խորհրդի վրա ազդելու համար: Այդ իսկ պատճառով գլխավոր քարտուղարը կարևորեց ԻԿԿ-ի բարեփոխման և նորացման անհրաժեշտությունը:

<sup>327</sup> Նոյն տեղում, էջ 226, 227:

<sup>328</sup> Ծոցի արաբական երկրների համագործակցության մասին տե՛ս՝ Ե. Մելքոնյան, Совет сотрудничества арабских государств Персидского залива. Причины создания и основные направления деятельности. В кн.: Арабские страны: история, экономика, политика, М., 1986, с. 218-233.

նը<sup>329</sup>: Զմոռանանք նշել, որ կազմակերպության շրջանակներում հաճախ է հնչում այն միտքը, որ Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը լուրջ բարեփոխումների կարիք ունի:

Այսպիսով, ԻԿԿ անդամ պետությունների անվտանգությանը վերաբերող բանաձևերն ու որոշումները կրում են սոսկ հռչակագրային բնույթ և գերծ են անվտանգության համակարգը սահմանելու հստակ ձևակերպումներից, ինչը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ Իսլամական կոնֆերանս կազմակերպության լժակները ի գորու չեն ազդելու քաղաքական այն իրադարձությունների վրա, որոնք առնչվում են մահմեդականների անվտանգությանն ու պաշտպանությանը:

---

<sup>329</sup> «الهدف» العدد ١٢٥٨ / ٦/١٩٩٧

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

**ԽՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՐՅՈՐՈՇՈՒՄԸ  
ՂԱՐԱԲԱԴՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄՔ**

Ժամանակակից աշխարհի ամենակնճռոտ հարցերից մեկը էր նիկական և էրնիկ-քաղաքական հակամարտություններն են, որոնք ընդգրկում են մի շարք տարածաշրջաններ՝ Մերձավոր և Սիցիլ Արևելքը, Բալկանները, Կովկասը և այլն: Դրանց թվին է պատկանում նաև Լեռնային Ղարաբաղի (ԼՂ) հակամարտությունը, որն առնչվում է ազգերի ազատ ինքնորոշման միջազգային նորմերին:

Դայլկական պետականության սկզբնավորումից ի վեր Լեռնային Ղարաբաղը կամ պատմական Արցախը մշտապես եղել է նրա կազմում: Դայլերը մշտապես եղել են Լեռնային Ղարաբաղի բնակչության գերակշիռ մեծամասնությունը: Այն եղել է հայ ժողովրդի տնտեսական և մշակութային կյանքի կարևոր կենտրոններից մեկը:

Խորհրդային Միության կազմավորման շրջանում հայկական պետականության մի մասը կազմող Լեռնային Ղարաբաղը 1921թ. հունիսի 5-ին ՈԿ(թ)կ Անդրեվը կոմիտե Կովկասյան բյուրոյի որոշմամբ բռնակցվեց Աղրբեջանին<sup>330</sup>, որ փաստում է ազգային հարցում խորհրդային քաղաքականության լուրջ սխալներն ու բացբողությունները:

Մարդու իրավունքների գծով փաստաբանները Լեռնային Ղարաբաղի մասին իրենց գեկուցագրում արծանագրել են, որ Լեռնային Ղարա-

<sup>330</sup> Нагорный Карабах в 1918-1923 гг. (Сборник документов и материалов), Ер., 1998, с. 650.

բաղը Ադրբեջանին բռնակցելուց ի վեր Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում (ԼՂԻՄ) իշխել են տնտեսական հետամնացությունը, սոցիալական անհավասարությունը, քաղաքական, էրնիկական, ինչպես նաև՝ կրոնական խտրականությունը, որոնք իրականացվել են ադրբեջանական իշխանությունների հետևողական քաղաքականությամբ<sup>331</sup>:

Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը բազմիցս հարց է հարուցել մարզը Ադրբեջանի մեջ մտցնելու միալ որոշումը վերանայելու մասին, պահանջել ստեղծել անհրաժեշտ պայմաններ մարզի հայ բնակչության սոցիալ-տնտեսական և մշակութային ազատ զարգացման համար: Սակայն ամբողջատիրական կարգերի պայմաններում նման փորձերը ճնշվել են:

1980-ական թվականների կեսերին, երբ Խորհրդային Միությունում հասարակական կյանքի ազատականացման և հրապարակայնության ուղղությամբ իրագործվեցին որոշ միջոցառումներ, Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը կրկին հարց բարձրացրեց՝ մարզը Հայաստանին միացնելու մասին: Դայ բնակչության կամքը արտահայտելով՝ ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհուրդը 1988թ. փետրվարի 20-ին որոշում ընդունեց մարզը Հայկական ԽՍՀ-ի հետ միավորելու վերաբերյալ և համապատասխան խնդրանքով դիմեց Հայաստանի, Ադրբեջանի և ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդներին: Սակայն ԽՍՀՄ և Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարությունը մերժեցին այդ խնդրանքը:

Ադրբեջանի իշխանությունները՝ Լեռնային Ղարաբաղի որոշման ի պատասխան, 1988թ. փետրվարի 26-28-ը Սումգայիթ քաղաքում կազմակերպեցին հայերի սպանություններ, որին մասնակցեցին նաև քաղա-

<sup>331</sup> N. Hovhannissyan, The Karabakh Problem. Factors, Criteria, Variants of Solution, Yerevan, 1999, p. 26.

քի իրավապահ մարմինները<sup>332</sup>: Ոչ պակաս դաժան էին Գյանջայում (Կիրովաբադ), իսկ այնուհետև՝ Բաքվում հայերի նկատմամբ իրականացրած բռնությունները: Աղորեջանի տարբեր վայրերում բնակվող գրեթե ողջ հայությունը, չունենալով ապահովության երաշխիքներ, գաղթեց Յայաստան:

Աղորեջանի իշխանություններն ի սկզբանե որդեգրեցին դարարայան հարցը բռնի, ոչ քաղաքական ճանապարհով լուծելու մեթոդները: Լեռնային Ղարաբաղի շուրջ ծավալված հակամարտության ընթացքում Աղորեջանը Յայաստանը շրջափակեց, որ լուրջ տնտեսական դժվարություններ ստեղծեց առանց այդ էլ երկրաշարժից տնտեսապես խիստ տուժած երկրում:

Սկսած 1991թ. ապրիլի 30-ից՝ երեք ամիս շարունակ Աղորեջանը հրականացրեց հայության սպանություն և բռնագաղթ Գետաշենի Ենթաշրջանում և Շահումյանի շրջանում, որտեղի 24 հայկական գյուղեր հայրափակվեցին:

Ռազմական գործողություններում աղորեջանական ներքին ուժերի գորամիավորումների հետ համագործակցեց խորհրդային բանակը: Շարցականի տակ էր դրված Լեռնային Ղարաբաղի և հայ ազգաբնակչության գոյությունը:

1991թ. դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղում անցկացվեց հանրաքվե՝ ԼՂ կարգավիճակը սահմանելու նպատակով: Մասնակիցների 95%-ը արտահայտվեցին Լեռնային Ղարաբաղի անկախության օգտին: 1991թ. դեկտեմբերի 28-ին ընտրվեց ԼՂ առաջին խորհրդարանը,

<sup>332</sup> Սոմգայտ... Գեոնիդ... Շլասնուշ? , Եր., 1989, ս. 6-7.

իսկ 1992թ. հունվարի 6-ին Լեռնային Ղարաբաղը հռչակվեց անկախ պետություն<sup>333</sup>:

Լեռնային Ղարաբաղի ճնշող մեծամասնությունը կազմող հայ ազգաբնակչությունը սահմանադրական ժանապարհով արտահայտեց ազատ և ինքնիշխան ապրելու իր ցանկությունը, որին ի պատասխան՝ Աղրբեջանը լայնածավալ ռազմական գործողություններ սկսեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) դեմ: Ստեղծված պայմաններում ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերին հաջողվեց համախմբվել և ինքնապաշտպանություն կազմակերպել: 1992թ. մայիսի 9-ին ազատագրվեց Շուշին, ապա՝ Լաշինը, որով ԼՂՀ-ն Հայաստանի հետ կապող միջանցք ունեցավ:

1993թ. գարնանից ռազմական ուժերի հաշվեկշիռը արմատապես փոխվեց հօգուտ հայերի: ԼՂՀ ռազմական ուժերը կարողացան հետ գրավել ԼՂՀ-ում աղրբեջանցիների գրաված տարածքները, ինչպես նաև Վերահսկողություն սահմանել Թելբաջարի, Ղուբրալիի, Աղդամի, Զանգելանի, Ֆիզուլիի, Ջերրախիլի շրջաններում: Ռազմական գործողությունները հնարավորություն ստեղծեցին ԼՂՀ-ի շուրջը ստեղծել անվտանգության գոտի:

Ղարաբաղյան խնդրի կարգավորման հարցով 1992թ. գարնանից ի վեր զբաղված է Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Կազմակերպությունը (ԵԱՀԿ): Սակայն ղարաբաղյան հակամարտությունը դեռևս իր լուծումը չի գտել, իսկ ասպարեզի վրա առայժմ չկան կողմերի համար ընդունելի խաղաղ կարգավորման առաջարկություններ:

<sup>333</sup> N. Hovhannisyan, նշված աշխա. մեջ, էջ 45:

\*\*\*

Աղրբեջանը դարաբաղյան խնդիրը հօգուտ իրեն կարգավորելու համար մեծ ակնկալիքներ ուներ ոչ միայն միջազգային կազմակերպություններից, այլև խլամական շրջանակներից, որի հետ համագործակցությունը թվում էր խոստումնալից: ԽՍՀՄ-ի փլուզումից և անկախություն ձեռք բերելուց հետո Աղրբեջանը մշտապես ընդգծում էր իր պատկանելությունը՝ խլամական աշխարհին:

1992թ. Շրի Լանկայում Աղրբեջանի հոգևոր առաջնորդ Ալլահ Շուքրուր Փաշա-Զադեն հայտարարեց, որ աղրբեջանական ժողովրդի խնդիրների նկատմամբ անտարբերությունը հավասար է խլամական համերաշխության պատվիրանների մոռագությանը<sup>334</sup>:

Հականարտության ռազմական փուլում Աղրբեջանը փորձեց պատերազմի մեջ ներգրավել մահմեդական պետություններից հավաքագրված վարձկանների, մասնավորապես՝ մոջահինների:

1993թ. օգոստոսին Աղրբեջանի ներքին գործերի փոխնախարարը հանդիպեց Աֆղանստանի վարչապետ և «Խլամական կուսակցության» առաջնորդ Գուլբեդիին Հեջմարիարի հետ՝ պայմանավորվածություն ձեռք բերելու աֆղան մոջահիդներին Աղրբեջան ուղարկելու մասին<sup>335</sup>:

Ռազմական գործողությունների ընթացքում հականարտության կրոնական կողմի շեշտադրությունը ամենակին իրական հիմքեր չուներ և չէր համապատասխանում դարաբաղյան հականարտության եռթյանը:

1993թ. Շվեյցարիայի Մոնթրյո քաղաքում և ապա Մոսկվայում հայ և աղրբեջանցի ժողովուրդների հոգևոր առաջնորդները կոչով դիմեցին իրենց հավատացյալներին՝ խնդրելով դադարեցնել ռազմական գործողությունները:

<sup>334</sup> «Ազգ», 03.10.1992

<sup>335</sup> Յ. Ղեմոյան, Դարաբաղյան հականարտությունը և թյուրքական գործոնը, Եր., 2002, էջ 96:

յունները և բանակցություններ սկսել արդարացի և խաղաղ լուծում գտնելու նպատակով: Իսկ 1995-ին Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ի միջնորդությամբ Գարեգին Ա կարողիկոսը և Փաշա Զադեն Մոսկվայում ստորագրեցին համատեղ խաղաղասիրական հայտարարություն<sup>336</sup>:

Լրատվամիջոցներին տված հարցազրույցում Փաշա-Զադեն մասնավորապես նշեց. «Փառք Աստծո, որ (դարաբաղյան հակամարտությանը-Ա.Փ.) չհաջողվեց տալ կրոնական երանգավորում, չնայած նման փորձեր եղան, և հատուկ մարդիկ էին դրանով գրադաժ»<sup>337</sup>:

Ի դեպ, արևմտյան մամուլում երբեմն դարաբաղյան հակամարտությունը սիսալմամբ բնութագրվել է որպես «հակամարտություն քրիստոնյա հայերի և մահմեդական աղբեջանցիների միջև»: Մինչդեռ «կրոնը չափազանց սահմանափակ ներակատարություն է ունեցել տարածաշրջանային (Կովկասի-Ա.Փ.) հակամարտություններում...»<sup>338</sup>:

1992-1994թթ. Աղբեջանը Անկարայի աջակցությամբ դարաբաղյան հարցում փորձեց ստանալ թյուրքալեզու պետությունների հովանավորությունը: Սակայն չցանկանալով վատթարացնել հարաբերությունները Հայաստանի՝ որպես ԱՊՀ անդամ երկրի, ինչպես նաև Ռուսաստանի հետ, որի դերը գնալով ավելի էր կարևորվում, կենտրոնական ասիական հանրապետությունների նախագահները, ավելի ճկուն դիրքորոշում ընդունելով, տեղի չտվեցին Բաքվի և Անկարայի «թյուրքական եղբայրության» կարգախոսով առաջնորդվող ճնշումներին<sup>339</sup>:

<sup>336</sup> "Արմենիա & Միր", №. 0, դեկաբր 1995, ս. 33.

<sup>337</sup> Նույն տեղում:

<sup>338</sup> Svante E. Cornell, Religion as a Factor in Caucasian Conflicts, Civil Wars, vol. 1, No. 3, Fall 1988, p. 2-3.

<sup>339</sup> Յ.Ղեմոյան, Ղարաբաղյան հակամարտությունը թյուրքաներու պետությունների փոխարաբերությունների հանատեքստում, Սերծավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովրդներ, հ. XIX, Եր., 2000, էջ 47:

Բաքուն չեր ուզում հաշտվել այն իրողության հետ, որ Լեռնային Ղարաբաղի դուրս գալը ադրբեջանական իրավասությունից չի նշանակում Ադրբեջանի տարածքային ամբողջականության խախտում, առավել ևս հայկական ագրեսիա՝ Ադրբեջանի դեմ<sup>340</sup>.

Ի թիվս այլ կրվանների՝ Ադրբեջանի համար իսլամական համերաշխության գաղափարները կարող էին լավագույնս օգտագործվել Լեռնային Ղարաբաղի հարցում իսլամական պետությունների համակրանքը շահելու համար: Բաքուն, իսլամական շրջանակներում քննարկելով դարաբառյան հարցը, ծգտում էր Հայաստանը ներկայացնել մի պետություն, որ հավակնություններ ունի Ադրբեջանի տարածքային ամբողջականության նկատմամբ՝ միաժամանակ հետամուտ լինելով Հայաստանի նկատմամբ քաղաքական և տնտեսական պատժամիջոցների կիրառմանը: Ադրբեջանցի դիվանագետներն այս նպատակին հասնելու համար հատկապես կարևորեցին Խոլամական կոնֆերանս կազմակերպության դերը՝ որպես իսլամական աշխարհի ամենամեծ, պետական-կառավարական մակարդակով միակ կազմակերպության:

1991թ. դեկտեմբերի 9-12-ը Սենեգալի մայրաքաղաք Դաքարում տեղի ունեցած իսլամական պետությունների գագաթնաժողովի ընթացքում Ադրբեջանը դարձավ Խոլամական կոնֆերանս կազմակերպության լիիրավ անդամ, որի միջոցով նա փորձելու էր օգտագործել կազմակերպության քաղաքական, տնտեսական և ֆինանսական ներուժը, ինչպես նաև աջակցություն ստանալ Լեռնային Ղարաբաղի հարցում:

1992թ. մարտին Խոլամական կոնֆերանս կազմակերպության հատուկ հանձնախումբը այցելեց Թեհրան, Անկարա, Բաքու, Մոսկվա,

<sup>340</sup> Ն. Պոլիաննիսյան, Սերծավորարնեյան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիր. Սերծավոր և Սիցին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 16, Եր., 1996, էջ 14:

Երևան: Պատվիրակության ղեկավարն էր ԻԿԿ գլխավոր քարտուղար Ջամիդ ալ-Ղարիբի օգնական դեսպան Մուհամեդ Մոհսինը (Բանգլա-նեց): Պատվիրակության կազմում ընդգրկված էին նաև գլխավոր քարտուղարության լրատվության բաժնի տնօրեն Աբու Բաքր Ֆալը (Սենեգալ) և համակարգման բաժնի տնօրեն Մուհամմեդ Միսավին (Թունիս)<sup>341</sup>: Մինչ այդ Հայաստանը դիմել էր Ռուսաստանին, Ռւկրանիային, Ղազախստանին, ինչպես նաև՝ Արաբական լիգային և Խումանական կոնֆերանս կազմակերպությանը՝ հականարտության գոտի դիտորդներ ուղարկելու խնդրանքով:

Այցելության նպատակն էր ծանոթանալ դարաբաղյան խնդրի և նրա լուծնան հնարավորությունների վերաբերյալ այս պետությունների ղեկավարների տեսակետներին: Այցելությունը համաձայնեցված էր այդ ժամանակ ԻԿԿ նախագահող Երկրի՝ Սենեգալի նախագահ Աբդ աղ-Դիաֆի հետ:

ԻԿԿ պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ ՀՀ Արտաքին գործերի նախարարությունում և Գերագույն Խորհրդի Արցախի հարցերով գրադադարի հանձնաժողովում, ուր քննարկվեցին դարաբաղյան հականարտության իրավական և իրավաբանական կողմերը, Հայաստանի և մահմեդական Երկրների միջև դիվանագիտական հարբերություններ հաստատելու հարցը և այլն:

Պատվիրակությանն ընդունեց նաև ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, որին Ս. Մոհսինը հայտնեց ԻԿԿ գլխավոր քարտուղար ալ-Ղարիբի մտահոգությունը դարաբաղյան դեպքերի զարգացման վերաբերյալ՝ ընդգծելով կազմակերպության անկեղծ ցանկությունը՝ աջակցել տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատմանը:

<sup>341</sup> Ինֆորմացիա Խումանական կոնֆերանս կազմակերպության պատվիրակության՝ Հայաստան այցելության վերաբերյալ /21 մարտի 1992/ (ՀՀ ԱԳՆ փաստաթղթեր, արխիվ):

ՀՅ նախագահի հետ գրույցի ընթացքում կողմերն անթույլատրելի համարեցին դարաբաշխ խնդիրը կրոնական տեսանկյունից դիտարկելու միտումները: ՀՅ նախագահը նշեց, որ Հայաստանի ղեկավարությունը, որ զգում է խաղաղության, չի ցանկանում, որ խնդիրը դառնամի նոր կրոնական հակամարտություն՝ Արևելի և Արևմտաքաղաքական միջև<sup>342</sup>:

Հայաստանի իշխանությունները ԻԿԿ պատվիրակության այցելությունը Հայաստան դրական գնահատեցին: Պատվիրակության հետ հանդիպման ընթացքում Հայաստանի նախագահը, ողջունելով բոլոր տեսակի անաշառ միջնորդությունները, հույս հայտնեց, որ Խոլամական կոնֆերանսի նման հեղինակավոր կազմակերպության աջակցությունը կարող էր նպաստել դարաբաշխ խնդիրի խաղաղ լուծմանը<sup>343</sup>.

Հայաստանից պատվիրակության վերադարձից հետո՝ 1992թ. ապրիլին, Զիղդայում Համիդ ալ-Ղարիբը հրապարկեց մի հայտարարություն, որում ԻԿԿ գլխավոր քարտուղարը համաշխարհային ընկերակցությանը և խոլամական երկրներին կոչ արեց անհետածգելի քայլեր ծեռնարկել՝ Լեռնային Ղարաբաղի բնակչության տառապանջները մեղմացնելու համար: Միաժամանակ նա հակամարտ կողմերին կոչ արեց հանդես բերել կրակը անհապաղ դադարեցնելու և առկա խնդիրները խաղաղ միջոցով լուծելու բարի կամք և հեռատեսություն<sup>344</sup>:

Խոլամական կոնֆերանս կազմակերպության պատվիրակության այցելությունը Հայաստան որոշակի հիմքեր կարող էր ստեղծել ԻԿԿ-ի և Հայաստանի միջև հարաբերությունների հետագա զարգացման, ինչպես նաև հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ: Աս-

<sup>342</sup> Զրույցի գրառում կայացած 1992թ. մարտի 21-ին Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի և ԻԿԿ-ի գլխավոր քարտուղարի օգնական Ս. Մոհսինի միջև (ՀՅ ԱԳՆ փաստաթղթեր, արխիվ):

<sup>343</sup> Լոյն տեղում:

<sup>344</sup> «Հայաստանի Հանրապետություն» 2.04.1992

վածի լավագույն ապացույցն է նաև ԻԿԿ գլխավոր քարտուղարի հայտարարությունը:

Սակայն կազմակերպության գործողություններն ի սկզբանե կողմնապահ էին: ԻԿԿ գլխավոր քարտուղարը անհանգստություն հայտնեց Լեռնային Ղարաբաղի բնակչության համար, մինչդեռ ԻԿԿ պատվիրակությունը Հայաստանում հրաժարվեց հանդիպել ԼՂԴ պաշտոնատարների հետ՝ պատճառաբանելով, որ նման լիազորություն չունի: Այս հանգամանքը մեր կարծիքով որոշակի կասկածներ է առաջացնում կազմակերպության առաջելության անաչառության վերաբերյալ:

Ըսլամական կոնֆերանս կազմակերպության դիրքորոշումը հայ-ադրբեջանական հակամարտության վերաբերյալ արմատապես փոխվեց Լեռնային Ղարաբաղի պաշտպանական ուժերի կողմից Շուշիի և Լաշինի ազատագրումից հետո, որ հնարավորություն տվեց կանխել արցախահայության բնաջնջումը: ԻԿԿ դիրքորոշման ծևավորման հարցում ոչ պակաս ազդեցություն ունեցավ նաև նույն ուժերի կողմից վերահսկողության սահմանումը ռազմավարական նշանակություն ունեցող այլ տարածքների վրա:

ԻԿԿ կանոնադրական մարմիններում Լեռնային Ղարաբաղի շուրջ հայ-ադրբեջանական հակամարտության հարցը առաջին անգամ քննարկվեց 1992թ. հունիսի 14-ին Ստամբուլում կայացած յսլամական պետությունների արտգործնախարարների արտահերթ հանդիպման ընթացքում:

Նախքան ստամբուլյան հանդիպումը՝ Ադրբեջանը յսլամական քրօնակներում ձեռնամուխ եղավ ակտիվ քարոզչության: Ադրբեջանի քարձրաստիճան պաշտոնյաններից մեկը Բարու Ժամանած պակիստանցի դիվանագետ Աշրաֆ Զեհանգիր Բազիի հետ հանդիպմանը կոչ

արեց, որպեսզի Պակիստանը պաշտպանի «Աղրբեջանի դեմ Հայաստանի ազրեսիան» խլամական պետությունների արտգործնախարանների հանդիպման օրակարգ մտցնելու Աղրբեջանի առաջարկությունը: Ինչպես նշում է «Նեզավիսիմայա գաղետան», Ստամբուլում Աղրբեջանը ամեն կերպ ձգտում էր հասնել Հայաստանի նկատմամբ տնտեսական պատժամիջոցների կիրառմանը<sup>345</sup>:

Դունիսի 14-ին ստամբուլյան հանդիպման առաջին օրը Թուրքիայի արտգործնախարար Յ. Չերինը հայտարարեց, որ պաշտպանում է ստամբուլյան հանդիպման օրակարգում դարաբաղյան հակամարտության հարցը մտցնելու Աղրբեջանի պահանջը<sup>346</sup>: Ի դեպ, Թուրքիան Խաղանական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում Աղրբեջանին աջակցող ամենաարժատական պետություններից մեկն է, որը հրաժարվել է Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել նախապայման դնելով Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը:

Աղրբեջանը՝ որպես ԻԿԿ-ի լիիրավ անդամ, առաջին անգամ մասնակցելով բարձր մակարդակի հանդիպմանը, առիթը չկորցրեց օգտագործել կազմակերպության ամբիոնը՝ Հայաստանին «ագրեսոր» ներկայացնելու համար: Միևնույն ժամանակ աղրբեջանական խնդիրների նկատմամբ խլամական բարձրագույն քաղաքական մարմնի հետաքրքրությունը միանգանայն համապատասխանում է մահմեդական ժողովուրդների իրավունքները պաշտպանելու Խաղանական կոնֆերանս կազմակերպության հայտարարություններին ու կոչերին: ]

Լեռնային Ղարաբաղի շուրջ հայ-աղրբեջանական հակամարտությունը ստամբուլյան կոնֆերանսում ներկայացրեց Աղրբեջանի արտա-

<sup>345</sup> “Независимая газета” 16.06.1992

<sup>346</sup> Նոյն տեղում:

քին գործերի նախարար Թոփիկ Ղասիմովը: Նա կոնֆերանսի մասնակիցներին տեղեկացրեց հակամարտության խաղաղ լուծումներ գտնելու Ադրբեջանի ջանքերի մասին, որոնք, իբր, խոչընդոտվում էին Հայաստանի իշխանությունների անհանդուրժողականության պատճառով: Նա նշեց, որ հակամարտության բնույթը արմատապես փոխվել էր Լեռնային Ղարաբաղի հայկական ուժերի կողմից Լաշինի և Նախիջևանի սահմանային շրջանների «գրավումից» հետո, որ վկայում էր Հայաստանի «ծավալապաշտական» ծրագրերի մասին: Ղասիմովը կարևոր համարեց Հայաստանին ստիպել՝ դուրս բերելու գործերը ադրբեջանական «գրավյալ» տարածքներից և անհրաժեշտ պայմաններ ստեղծել, որպեսզի ադրբեջանցի գաղթականները կարողանան վերադառնալ իրենց տները:

Հարկ է փաստել, որ Ադրբեջանի արտգործնախարարի հայտարարությունը՝ Նախիջևանի սահմանային շրջանների գրավման վերաբերյալ չեր համապատասխանում իրականությանը: Հայկական ուժերը երբեք Նախիջևանի սահմանային շրջանները գրավելու փորձ չեն կատարել: Ադրբեջանցի դիվանագետը, ապատեղեկացնելով կոնֆերանսում ներկա գտնվողներին, ծգտում էր հնարավոր բոլոր միջոցներով նրանց ուշադրությունը սևոել մահմեդական ադրբեջանցիների խնդիրներին:

Ստամբուլի կոնֆերանսում հայ-ադրբեջանական հակամարտության մասին առանձին բանաձև չընդունվեց, սակայն այն տեղ գտավ կոնֆերանսի ամփոփիչ հայտարարության 14-րդ կետում: Կոնֆերանսը Հայաստանին կոչ արեց վերանայել «ծավալապաշտական իր ագրեսիվ քաղաքականությունը», իսկ միջազգային հանրությանը կոչ արեց Հայաստանի վրա հնարավոր ծնշում գործադրել, որպեսզի վերջինս դադա-

րի արգելք դառնալ հակամարտության խաղաղ լուծման ճանապարհին, ապահովի Աղրբեջանի տարածքային ամբողջականությունը, երաշխավորի փախստականների վերադարձ իրենց տները: Սահմանների անձեռնմխելիության և տարածքային ամբողջականության միջազգայնութեն ընդունված սկզբունքներին աջակցելու համատեքստում խլամական պետությունների արտգործնախարարները համերաշխություն հայտնեցին Աղրբեջանին<sup>347</sup>:

Խոլամական բարձրագույն քաղաքական մարմինը Հայաստանին մեղադրեց ագրեսիայի մեջ այն դեպքում, երբ կազմակերպության անդամ Աղրբեջանը շրջափակել էր Հայաստանը, իսկ Ստամբուլի հանդիպման օրերին Լեռնային Ղարաբաղի սահմանի երկայնքով շարունակվում էին աղրբեջանական բանակի սանձազերծած մարտական գործողությունները, չեր դադարում հայկական բնակավայրերի գնդակոծումը «Գրադ» կայանքներից, հրանոթներից և գնդացիրներից<sup>348</sup>. ]

ՀՀ արտգործնախարար Ռ. Յովհաննիսյանի գնահատմամբ՝ Ստամբուլում ԻԿԿ-ի տեսակետը դարաբաղյան հակամարտության վերաբերյալ կողմնապահ էր՝ հիմնված Աղրբեջանի խեղաքյուրված և կանխակալ կարծիքի վրա: ԻԿԿ-ի գլխավոր քարտուղար Յամիդ ալ-Ղարիբին ուղղված նամակում ՀՀ արտգործնախարարը նշում էր, որ Ստամբուլի կոնֆերանսը, Հայաստանին մեղադրելով ագրեսիայի և ծավալապաշտության մեջ, անտեսել էր Աղրբեջանի աննախադեպ ագրեսիան Հայաստանի դեմ: Աղրբեջանը գրավել և հայաբափել էր մի շարք հայկական գյուղեր՝ բազում անգամներ խախտելով Հայաստանի սահմանը: Նամակի մեջ նախարարը ներկայացնում էր խաղաղ լուծում գտնելու Հայաստա-

<sup>347</sup> ՀՀ ԱԳՆ փաստաթղթեր (արխիվ):

<sup>348</sup> «Հայաստանի Հանրապետություն» 16.06.1992

նի ջանքերը: Ավելին, նա տեղեկացնում էր, որ Հայաստանի իշխանություններն առաջարկել էին Նախիջևանի Հանրապետության կառավարությանը՝ բանակցություններ անցկացնել սահմանային և անվտանգության հարցերի շուրջ, սակայն ոչ մի պատասխան Նախիջանի դեկավարությունից չին ստացել<sup>349</sup>:

ՀՀ արտգործնախարարը նկատի ուներ ընդհանուր սահմանը անվտանգ գոտի դարձնելու նպատակով Նախիջևանի իշխանությունների հետ համակողմանի համագործակցության պայմանագիր կնքելու ՀՀ - նախագահի առաջարկը, որը դրական էր գնահատվել միջազգային շրջանակներում<sup>350</sup>:

Ալ-Ղարիբին ուղղված նամակում նախարարը նշում էր, որ Խսլամական կոնֆերանսի դիրքորոշումը դարաբաշյան հակամարտության նկատմամբ անհանգստության տեղիք էր տալիս: Սակայն այս հանգանքանը չին խանգարում, որպեսզի Հայաստանի իշխանությունները կազմակերպության հետ համագործակցելու պատրաստակամություն հայտնեն:

Խսլամական կոնֆերանս կազմակերպության հետ դիվանագիտական շփումների ընթացքում հայաստանյան կողմը բազմից փորձել է պարզաբանումներ անել դարաբաշյան հակամարտության եռթյան, խաղաղ լուծումներ գտնելու Հայաստանի իշխանությունների ջանքերի մասին: Հայ դիվանագետները շարունակաբար հանդիպումներ են ունեցել կազմակերպության անդամ պետությունների իրենց գործն-

<sup>349</sup> ՀՀ արտգործնախարարի նամակը ԻԿԿ գլխավոր քարտուղար Համիլ ալ-Ղարիբին 6.07.1992 (ՀՀ ԱԳՆ փաստաթղթեր, No. 10/1511);

<sup>350</sup> «Հայաստանի Հանրապետություն» 28.05.1992

կերների հետ ՄԱԿ-ի և միջազգային այլ կազմակերպությունների շրջանակներում:

Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ Հայաստանի պաշտոնական դիրքորոշումը ԻԿԿ շրջանակներում լուսաբանելու ապացույցն է ՀՀ նախագահ L. Տեր-Պետրոսյանի՝ Խաղամական կոնֆերանս կազմակերպության գլխավոր քարտուղար Համիդ ալ-Ղարիբին և խաղամական պետությունների արտաքին գործերի նախարարների 1993թ. ապրիլի 25-29-ը Պակիստանի Կարաչի քաղաքում գումարված XXI կոնֆերանսի մասնակիցներին հասցեագրված ուղերձը:

Ուղերձի մեջ ՀՀ նախագահը չեր թաքցնում, որ Հայաստանի իշխանությունները հուսախարված էին, քանի որ Խաղամական կոնֆերանսը չեր արձագանքել համագործակցության Հայաստանի առաջարկություններին: Անարձագանք էին մնացել ՄԱԿ-ում Խաղամական կոնֆերանսի և Հայաստանի ներկայացուցիչների հետ շփումներ հաստատելու, ինչպես նաև՝ կազմակերպության հետ հաղորդակցության կանոնավոր ուղի հաստատելու Հայաստանի առաջարկները:

Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ կազմակերպության կողմնապահ բնույթը ՀՀ նախագահի կարծիքով միակողմանի տեղեկատվության պատճառով էր: Նա համոզնունք էր հայտնել, որ եթե կազմակերպության անդամ պետությունների ներկայացուցիչները հնարավորություն ունենային խնդրի վերաբերյալ բազմակողմանի տեղեկատվություն ստանալ, այլ կերպ կգործեին:

Ըստ ՀՀ նախագահի՝ ԻԿԿ հայտարարությունների նման կանխակալ բնույթը նսեմացնում էր այն հարգանքը, որ միջազգային հանրությունը ուներ Խաղամական կոնֆերանս կազմակերպության նկատմամբ, նվազեցնում էր հակամարտ կողմերի վստահությունը միջազգային կազմա-

կերպությունների հանդեպ, դժվարեցնում բանակցությունների հաջողության հնարավորությունները:

ԴՅ նախագահի նամակը ալ-Ղարիթին հանձնեց Եգիպտոսում ԴՅ - դեսպանը Կարաչիի կոնֆերանսի նախօրեին: Դայ դիվանագետի հետ զրոյցի ընթացքում ալ-Ղարիթը նշել էր, որ Լեռնային Ղարաբաղի նասին բանաձևը կոնֆերանսից մի քանի օր առաջ արժանացել էր քաղաքական կոնֆերանսի հավանությանը: Դամաձայն ընթացակարգի բանաձևը օրակարգից կարող էր հանել միայն բանաձևի հեղինակ երկիրը, տվյալ դեպքում՝ Աղրբեջանը, ինչը բացառված էր: Ղարաբաղյան հարցը կոնֆերանսի օրակարգ մտցնելու հարցում հատկապես ակտիվ էին գործել Թուրքիայի ներկայացուցիչները:

ԴՅ նախագահի նամակը գլխավոր քարտուղարը դրական էր գնահատել, որի կարծիքով՝ Դայաստանի և կազմակերպության միջև հնարավոր էր իրականացնել համագործակցություն թեկուզ Եգիպտոսում Դայաստանի դեսպանության միջոցով<sup>351</sup>:

Կարաչիի հանդիպումից առաջ Աղրբեջանի արտգործնախարար Թ. Դասիմովը Նյու-Յորքում հանդիպելով ՄԱԿ-ին կից ԻԿԿ անդամ պետությունների մշտական ներկայացուցիչների հետ, նրանց է ներկայացրել Աղրբեջանի արևմտյան և հարավարևմտյան շրջաններում Դայաստանի գինված գործողություններին գնահատական տալու հարցը: Ավելի քան իսլամական պետությունների դեսպաններ Դայաստանի «ագրեսիան» դատապարտող հայտարարություն էին արել: Իրանի ներկայացուցիչը առաջարկել էր տարածաշրջանային զարգացումներին

<sup>351</sup> Եգիպտոսում ԴՅ դեսպան է Նալբանդյանի նամակը ԴՅ արտգործնախարարին (ԴՅ ՍԳՆ փաստաթթեր, 1993թ. հուլիս):

իետևելու նպատակով ԻԿԿ շրջանակներում ստեղծել շփման խումբ<sup>352</sup>(contact-group):

Չնայած այն հանգանանքին, որ 1993թ. ապրիլի 29-ին Կարաչիի կոնֆերանսը դարձարայան հարցի վերաբերյալ ընդունեց Դայաստանի «ագրեսիան» դատապարտող բանաձև<sup>353</sup>, միաժամանակ կոչ արեց հականարտությունը լուծել խաղաղ ճանապարհով՝ պետությունների տարածքային ամբողջականության և սահմանների անծեռնմխելիության միջազգայնորեն ընդունված սկզբունքների հիման վրա: Բանաձևում կոչ էր արվում թե՝ Դայաստանին և թե՝ Ադրբեյջանին՝ շարունակել բանակցությունները ԵԱՀԿ շրջանակներում՝ ծեռպահ մնալով ցանկացած գործողությունից, որը կարող է դժվարություններ ստեղծել խաղաղ լուծման ճանապարհին<sup>354</sup>:

Կարաչիի կոնֆերանսը կոչ արեց անդամ պետություններին, ԻԶԲ-ին և իսլամական այլ հաստատություններին՝ անհապաղ ֆինանսական և մարդասիրական օգնություն ցույց տալ Ադրբեյջանին՝ փախստականներին օգնելու համար: Միաժամանակ ԻԿԿ-ն առաջարկեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին և Անվտանգության խորհրդի նախագահին, որպեսզի Անվտանգության խորհրդից Դայաստանի «ագրեսիան» դատապարտող բանաձև ընդունի՝ «Դայաստանից պահանջելով ուղամական ուժերի անհապաղ դուրսբերումը ադրբեյջանական գրավյալ տարածքներից»<sup>355</sup>:

Կարաչիի կոնֆերանսում Պակիստանի վարչապետ Բալախ Մազարին «ԻԿԿ-ին կոչ արեց խստորեն դատապարտել Դայաստանի հարձա-

<sup>352</sup> «Ազգ» 14.04.1993

<sup>353</sup> Resolution on the Conflict Between Armenia and Azerbaijan, Final Communiqué of the 21<sup>st</sup> ICFM (April 25-29, 1993).

<sup>354</sup> Final Communiqué of the 21<sup>st</sup> Session of ICFM (April 25-29, 1993) <http://www.oic-un.org>

<sup>355</sup> Նույն տեղում:

կումը Աղրբեջանի վրա, ինչպես նաև՝ Աղրբեջանից ու Լեռնային Ղարաբաղի շրջանից դուրս բերել բոլոր օտար ուժերը»<sup>356</sup>: Թուրքիայի արտգործնախարար Յ. Չերինը նշեց, որ Աղրբեջանի պարագայում խախտվել էին միջազգային նորմերը<sup>357</sup>:

Ուշագրավ է, որ ալ-Ղարիթը Կարաչիի կոնֆերանսում արտասանած իր ելույթում չանդրադարձավ ղարաբաշյան հարցին: Խսլամական կոնֆերանսի պրակտիկայում գլխավոր քարտուղարը՝ որպես կանոն, անդրադառնում է խսլամական աշխարհում առկա գործել բոլոր հակամարտություններին: Զի բացառվում, որ ՀՀ նախագահի ուղերձը որոշակի ազդեցություն էր գործել գլխավոր քարտուղարի դիրքորոշումը ձևավորելու հարցում:

1995թ. դեկտեմբերի 9-12-ը Գվինեայի մայրաքաղաք Կոնակրիում տեղի ունեցած խսլամական պետությունների արտգործնախարարների հանդիպման ամփոփիչ հայտարարության մեջ խստորեն դատապարտվեց Աղրբեջանի դեմ Հայաստանի «ագրեսիան», իսկ «գրավյալ» տարածքներում աղրբեջանցի ազգաբնակչության դեմ գործողությունները որակվեցին որպես «մարդկության դեմ ուղղված հանցագործություն»: Խսլամական կոնֆերանս կազմակերպությունը ՍԱԿ-ի Ահ-ից պահանջեց իրականացնել իր իսկ կողմից ընդունած 822, 853, 874 և 884 բանաձևերը, «որտեղ հայկական ուժերից պահանջվում էր անհապաղ, առանց նախապայմանների և ամբողջապես դուրս բերել գործերը աղրբեջանական բոլոր գրավյալ տարածքներից, ներառյալ՝ Լաշինը և Շուշին»: ԻԿԿ-ն կոչ արեց ՍԱԿ-ի Անվտանգության խորհրդին՝ ճանաչել Աղրբեջանի Հանրապետության դեմ ազրեսիան՝ միաժամանակ պար-

<sup>356</sup> Նույն տեղում:

<sup>357</sup> Նույն տեղում:

տավորվելով ՄԱԿ-ում այս հարցի շուրջ համակարգված գործողությունների դիմել<sup>358</sup>:

Կոնֆերանսն իր համերաշխությունը և հարգանքը հայտնեց «Աղբեջանի կառավարությանը և ժողովրդին՝ իր հայրենիքը պաշտպանելուն ուղղված ջանքերի համար», անհանգստություն արտահայտելով Աղբեջանում գտնվող «մեկ միլիոն տեղահանված մարդկանց և փախստականների կապակցությամբ»<sup>359</sup>:

Դարկ է նշել, որ աղբեջանական կողմի կրած վճասները միշտ չափազանցված են ներկայացվել ԻԿԿ-ում: Դրա ապացույցն է նաև աղբեջանցի փախստականների մտացածին, ուռճացված թվերը, որոնք շրջանառության մեջ է դրել Աղբեջանը: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է փաստել, որ ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի 822, 853, 874 և 884 բանաձևերում Դայաստանը չի նեղադրվում Աղբեջանի դեմ իրականացված ագրեսիայի մեջ: Սակայն ԻԿԿ-ն որպես կանոն վկայակոչում է դրանք՝ Դայաստանին դատապարտելու համար:

Խլամական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում դարձային խնդրի նկատմամբ որոշ ծայրահեղ միտումներ դրսնորվեցին 1996թ. դեկտեմբերի 9-13-ը Ինդոնեզիայի մայրաքաղաք Ջակարտայում խլամական պետությունների արտաքին գործերի նախարարների հանդիպմանը:

Խլամական կոնֆերանս կազմակերպությունը կոչ արեց աշխարհի բոլոր պետություններին՝ «զերծ մնալ Դայաստանին զինված ուժեր և սպառագինություններ տրամադրելուց, քանի որ այն կարող է խրախուսել ագրեսորին» ավելի ընդարձակելու հականարտությունը և շարունա-

<sup>358</sup> Final Communiqué of the 23<sup>rd</sup> Session of ICFM (December 9-13, 1996) <http://www.oic-un.org>

<sup>359</sup> Նոյն տեղում:

կելու աղրբեջանական տարածքների բռնազավթումը: ԻԿԿ-ի անդամ պետությունների տարածքը չպետք է օգտագործվի նման մատակարարությունների համար»: ԻԿԿ-ն կոչ արեց իսլամական պետություններին, ինչպես նաև՝ միջազգային հանրությանը «օգտագործել քաղաքական և տնտեսական ազիտեցիկ միջոցներ՝ վերջ դնելու հայկական ազրեսիային և աղրբեջանական տարածքների բռնազավթմանը»<sup>360</sup>:

ԵԱՀԿ շրջանակներում դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման բանակցային գործընթացի կապակցությամբ Զակարտայում ընդունված բանաձևում կոնֆերանսն իր աջակցությունը հայտնեց 1996թ. դեկտեմբերի 2-3-ը ԵԱՀԿ Լիսաբոնի գագաթնաժողովում ԵԱՀԿ նախագահի հայտարության երեք սկզբունքներին, «որոնք պետք է Հայաստանի և Աղրբեջանի միջև հակամարտության խաղաղ կարգավորման հիմք դառնան, դրանք են՝ Հայաստանի Հանրապետության և Աղրբեջանի տարածքային ամբողջականության պահպան սկզբունքը, ինքնորոշման սկզբունքով ամրագրված պայմանագրով Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակի սահմանումը, որ Լեռնային Ղարաբաղին ինքնավարության բարձրագույն աստիճանակարգ կշնորհի Աղրբեջանի կազմում, ինչպես նաև՝ Լեռնային Ղարաբաղի և նրա ողջ ազգաբնակչության անվտանգության երաշխավորումը, ներառյալ՝ փոխադարձ պարտավորությունները, որոնք կերաշխավորեն բոլոր կողմերի մասնակցությունը կարգավորման գործընթացի նախապատրաստմանը»<sup>361</sup>:

Այսպիսով, իսլամական կոնֆերանսը, չունենալով հակամարտության կարգավորման սեփական հայեցակարգ, առաջարկեց դարաբաղ-

<sup>360</sup> Սույն տեղում:

<sup>361</sup> Final Communiqué of the 24<sup>th</sup> Session of ICFM (December 9-13, 1996) <http://www.oic-un.org>

յան հակամարտության կարգավորման համար հիմք ընդունել Լիսաբոնի գագաթաժողովում ԵԱՀԿ գործող նախագահի՝ Ֆ.Կոտիի հայտարարությունը: Սակայն այն չէր կարող հակամարտության կարգավորման գործընթացի հիմք դառնալ, քանի որ ԵԱՀԿ-ում որոշումները ընդունվում են կոնսենսուսով: Իսկ Կոտիի հայտարարությունը ԵԱՀԿ պաշտոնական որոշում չէր, քանի որ Լիսաբոնի հոչակագրում նրա առաջարկած սկզբունքների ընդգրկմանը դեմ էր արտահայտվել:

1997թ. դեկտեմբերի 9-11-ը Իրանում տեղի ունեցած Թեհրանի գագաթաժողովը նույնպես կարևորվում է Լեռնային Ղարաբաղի հարցի քննարկման առումով: Հայ-ադրբեջանական հակամարտության վերաբերյալ թեհրանյան բանաձևը ոգով և բովանդակությամբ գրեթե չէր տարբերվում նախկիններից:

Ելույթ ունենալով գագաթաժողովում՝ Իրանի նախագահ Մոհամեդ Խսաթամին դարաբարյան խնդրին չանդրադարձավ, որին, սակայն, անդրադարձան այաթոլլա Խամենեին և Բանգլադেշի վարչապետը:

Իրանի հոգևոր առաջնորդը, որ մինչ այդ քանիցս հանդես էր եկել Ադրբեջանի մահմեդականների դեմ Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերի ռազմական գործողությունները դատապարտող հայտարարություններով, Թեհրանում միայն նշեց, որ «ԻԿ-ն կարող է հիմնել հատուկ հանճնախմբեր՝ լուժելու Բունիայի, Քաշմիրի, Սոմալիի, Ղարաբաղի և այլ շրջաններում մահմեդականների առաջ ծառացած խնդիրները, որին անդամ բոլոր պետությունները պետք է մասնակցեն»<sup>362</sup>:

Բանգլադեশի վարչապետ Շեյխ Հասինան, խոսելով մահմեդական ժողովուրդների առաջ ծառացած խնդիրների մասին, նշեց, որ «ադրբե-

<sup>362</sup> The Iranian Journal of International Affairs, vol. IX, No. 4, Winter 1997/1998, Tehran, p. 596.

ջանցիները դեմ առ դեմ կանգնած են հայկական ազրեսիայի առաջ՝<sup>363</sup>: Առհասարակ ԻԿԿ շրջանակներում Բանգլադեշը աչքի է ընկնում դարաբաղյան հարցի վերաբերյալ արմատական դիրքորոշմամբ:

Հանդիպման ընթացքում հայ-ադրբեջանական հականարտության վերաբերյալ տարածվեց ԻԿԿ գլխավոր քարտուղար Յամիդ ալ-Ղարիբի ծանուցումը, որ հիմնված էր բացառապես ադրբեջանական իշխանություններից ստացված տեղեկությունների վրա: Այստեղ մանրամասն ներկայացված էր ԻԿԿ դիրքորոշումը հայ-ադրբեջանական հականարտության վերաբերյալ, շեշտադրված էին պատերազմում Ադրբեջանի կրած վճասերը, Յայաստանի կողմից Ադրբեջանի տարածքի ավելի քան 20%-ի «գրավման» փաստը<sup>364</sup>:

Չնայած Թեհրանի գագաթնաժողովն ընդունեց «Յայաստանի ազրեսիան Ադրբեջանի դեմ» բանաձևը, օրակարգում գետեղված քաղաքական հարցերի թվում այն աննկատ մնաց: Թեհրանի գագաթնաժողովում դարաբաղյան հարցը, լինելով օրակարգի 140 հարցերից մեկը, չղարձավ լուրջ քննարկումների առարկա, թեև Ադրբեջանը արեց առավելագույնը՝ դարաբաղյան հիմնախնդրին հնչեղություն տալու ուղղությամբ: Իրանական մաճուլը նույնպես, մեկնաբանելով Թեհրանի գագաթնաժողովը, գրեթե չարձագանքեց դարաբաղյան հարցին:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Սաուդյան Արաբիայի թագաժառանգ Աբդ Ալլահ իբր Աբդ ալ-Ազիզ աս-Սաուդի ելույթը ևս կրում էր ընդհանուր բնույթ, ուստի չշոշափեց որևէ առանձին հարց, չնայած Ռիադի

<sup>363</sup> Տեղեկությունը ըստ IRNA լրատվական գործակալության 09.12.1997 (<http://www.irna.com>)

<sup>364</sup> Report of the Secretary General on the Aggression of the Republic of Armenia against the Republic of Azerbaijan to the Eight Islamic Summit Conference (December 9-11, 1997) (ՅՅ ԱՊՆ փաստարդեր, արխիվ):

դերը զգալի էր դարաբաշխան հարցը զագաթնաժողովի օրակարգ մտցնելու հարցում<sup>365</sup>:

Իր խոսքում հայ-աղրբեջանական հակամարտությանն անդրադարձավ նաև Սիրիայի նախագահ Ջաֆեզ ալ-Ասադը: Վերջինս իր ելույթի «Խուսափում տարածայնություններից երկխոսության միջոցով» բաժնում անդրադառնալով հայ-աղրբեջանական հակամարտությանը, նշեց. «Դարկ է ընդգծել, որ մեր կազմակերպության անդամ Աղրբեջանի և Հայաստանի միջև լարվածության հետագա շարունակումը տարածաշրջանում առաջ է բերում անհանգստության, մտավախության և անկայունության գործոններ, ինչպես նաև նպաստում է երկու երկրների ուժի և կարողությունների ջլատմանն ու կորստին, փոխանակ դրանք ուղղելու վերակառուցմանը և վերականգնմանը»<sup>366</sup>:

Ի դեպ, սա միակ թեման էր ներարարական և արար-խորայելական հակամարտությունից բացի, որին անդրադարձավ Սիրիայի նախագահը: Վերջինս, հաշվի առնելով Հայաստանի հետ իր երկրի բարեկամությունը, ծեռնպահ մնաց կտրուկ որակուններից: Հազիվ թե Սիրիան բացահայտորեն հանդես գար Աղրբեջանի պաշտպանությամբ, որը կողմնորոշված է դեպի Թուրքիան: Սիրիային մտահոգում են տարածաշրջանում գերտերություն դառնալու Թուրքիայի հավակնությունները: Բացի այդ՝ Սիրիան ջերմ և բազմակողմ հարաբերություններ է հաստատել Հայաստանի հետ:

Թեհրանի զագաթնաժողովին անմիջապես հաջորդեց 1997թ. ԵԱՀԿ արտգործնախարարների Կոպենհագենի հանդիպումը, ուր քննարկվեց Լեռնային Ղարաբաղի հարցը: Գագաթնաժողովում ունեցած ելույթում

<sup>365</sup> «Ազգ» 23.12.1997

<sup>366</sup> سوريا ودوره الشهير، دمشق، ١٩٩٧، ص ٥٧

ՀՅ արտգործնախարար Ա. Արզումանյանը Աղրբեջանին մեղադրեց հակահայկական տրամադրությունները բորբոքելու և ԵԱՀԿ շրջանակներում բանակցությունները խոչընդոտելու մեջ: ՀՅ արտգործնախարարը նշեց, որ ասվածի ապացույցը Թեհրանի գագաթնաժողովում հակամարտության վերաբերյալ աղրբեջանական կողմի տվյալներն էին, որոնցում աղավաղվել և կրոնական երանգով էին ներկայացվել հակամարտության փաստերը: ՀՅ արտգործնախարարի կարծիքով՝ հայ-աղրբեջանական հակամարտության վերաբերյալ ԻԿԿ-ի աղրբեջանամետ հայտարարություններն ու բանաձևերը կարող էին բացասաբար ազդել միջազգային կազմակերպությունների գործունեության վրա<sup>367</sup>:

Դայաստանի նկատմամբ Իսլամական կոնֆերանս կազմակերպության դիրքորոշումը եական փոփոխություններ չկրեց 1999թ. հունիսի 28-ից հուլիսի 1-ը Բուրկինա Ֆասոյի մայրաքաղաք Ուագադուգույում իսլամական պետությունների արտգործնախարանների հանդիպման ընթացքում, որտեղ ընդունված բանաձևում նշված էր, որ Դայաստանի «ագրեսիան» «...սպառնում է աղրբեջանական ժողովրդի մշակութային և պատմական ժառանգությանը»<sup>368</sup>.

ԻԿԿ-ն իր վերաբերնունքն է արտահայտել նաև Լեռնային Ղարաբաղում ընթացող քաղաքական գործընթացների հանդեպ: 1997թ. սեպտեմբերի 15-ին ԻԿԿ-ի գլխավոր քարտուղարը հանդես է եկել հայտարարությամբ՝ Լեռնային Ղարաբաղում անցկացվող նախագահական ընտրությունները բնութագրելով որպես «ոչ լեզիտիմ և սաղրիչ գործողություն», որ հակասում է միջազգային իրավունքի սկզբունքներին:

<sup>367</sup> «Ազգ» 19.12.1997

<sup>368</sup> IRCICA, Newsletter, No. 49, Istanbul, 1999, p. 5.

2001թ. սեպտեմբերի 2-ին ԽՍՀՄ ազգային կոնֆերանս կազմակերպությունը տարածեց ևս մեկ հայտարարություն, որտեղ նշված էր, որ Լեռնային Ղարաբաղում ընթացող քաղաքական գործընթացները խախտում են միջազգային իրավունքը:

ԻԿԿ-ն նկատի ուներ 2001թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խորհրդարանական ընտրությունները, որոնք հայտարարության մեջ անվանված են, այսպես կոչված, տեղական կառավարման ընտրություններ: Լեռնային Ղարաբաղի օրինական իշխանությունների գործողությունները հայտարարության մեջ անվանված են «անջատողական շարժում, որ հսկողություն է սահմանել Ադրբեյջանի Լեռնային Ղարաբաղի շրջանում»<sup>369</sup>:

ԽՍՀՄ ազգային կոնֆերանս կազմակերպությունը կասկածի տակ առնելով Լեռնային Ղարաբաղի իշխանությունների օրինականությունը՝ անտեսում է այն փաստը, որ ԼՂՀ ազգաբնակչությունը սահմանադրական ծանապարհով է ընտրել իր իշխանություններին, ինչպես նաև՝ ազատ և ինքնիշխան ապրելու իր իրավունքը:

ԽՍՀՄ ազգային կոնֆերանսը հայ-ադրբեյջանական հակամարտության կարգավորումը պատկերացնում է քաղաքական ծանապարհով, բանակցային գործընթացի միջոցով, սակայն՝ Հայաստանի Հանրապետության անվերապահ գիշումներով: ԻԿԿ-ի հայտարարություններում շեշտադրվել է հայ-ադրբեյջանական հակամարտության ժամանակ տուժած միայն ադրբեյջանական կողմը, նշվել, որ բռնությունների է ենթարկվել միայն ադրբեյջանցի ազգաբնակչությունը, ավերվել են միայն ադրբեյջանական շինությունները: Ոչինչ չի ասվել հայերի նկատմամբ

<sup>369</sup> The OIC Denounces the Forthcoming Elections in the Nagorno Karabagh Region as a Breach of the International Law, 2 September, 2001 <http://www.oic-un.org>

աղրբեջանական բռնությունների, հալածանքների, իայ փախստական-ների, ինչպես նաև՝ հայկական պատմական հուշարձանների ոչնչացման մասին: Բացառապես աղրբեջանական աղբյուրներին ապավիճնելը կազմակերպությանը բույլ չտվեց հակամարտության վերաբերյալ անաշար դիրքորոշում կազմելուն:

Դայ-աղրբեջանական հակամարտության կարգավորման իսլամական ծրագրում՝ որպես Աղրբեջանին հակագող կողմ հիշատակվում է Դայաստանը, որը զիջումներ պետք է անի Աղրբեջանին՝ անմիջապես և առանց նախապայմանների դուրս բերելով զորքերը աղրբեջանական «գրավյալ» տարածքներից, անգամ Շուշիից և Լաշինից, իսկ Լեռնային Ղարաբաղը պետք է մնա Աղրբեջանի կազմում: Երբեք չի նշվել, թե ինչ հնարավոր զիջումներ կարող է անել Աղրբեջանը՝ որպես հակամարտող կողմ:

ԻԿԿ-ն որպես կամոն, դիմել է ԻԶԲ-ին և իսլամական պետություններին՝ Բաքվին ֆինանսական և այլ կարգի օգնություններ տրամադրելու կոչով, որին արձագանքել են իսլամական շրջանակները: 1996թ. հոկտեմբերին Բաքվում տեղի ունեցավ Աղրբեջանի գաղթականների աջակցության առաջին միջազգային կոնֆերանսը, որը կազմակերպել էին Իսլամական կոնֆերանս կազմակերպության Իսլամական համերաշխության ֆոնդը, Միջազգային իսլամական բարեգործական ասոցիացիան, Միջազգային իսլամական օգնության կազմակերպությունը: Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցեցին իսլամական տարբեր երկրներից ժամանակ պատվիրակներ, այդ թվում՝ ԻԿԿ գլխավոր քարտուղարի պատվիրակը՝ Դալիթ Էրենը:

Դանոյիամանն ունեցած իր ելույթում Աղրբեջանի նախագահ Ջենդար Ալիկը հույս հայտնեց իսլամական երկրներից՝ մասնավորապես

Խորանական կոնֆերանս կազմակերպությունից, օգնություն ստանալ աղրբեջանցի գաղքականների համար: Աղրբեջանի նախագահի կարծիքով՝ նման հանդիպումները ոչ միայն կօժանդակեն աղրբեջանցի փախստականներին, այլև կամրապնդեն հարաբերությունները Աղրբեջանի և ԻԿԿ անդամ պետությունների ու խորանական կազմակերպությունների միջև<sup>370</sup>:

Կոնֆերանսում ընդունվեցին մի շարք հանձնարարականներ, որոնք նպատակադրեցին ստեղծել իրազեկության մրնոլորտ և միջազգային օգնություն ցույց տալ փախստականներին և Էմիգրանտներին<sup>371</sup>:

Աղրբեջանն ակտիվորեն համագործակցում է Խորանական կոնֆերանս կազմակերպության ամենատարբեր շրջանակների հետ: Ուշադրության են արժանի Աղրբեջանի նախագահ Ալիևի այցելությունները ԻԿԿ առանձին հաստատություններ, մասնավորապես՝ Խորանական արվեստի, պատմության և մշակույթի ուսումնասիրման կենտրոն, որի նստավայրը Ստամբուլում է: 1998թ. դեկտեմբերին Խորանական արվեստի, պատմության և մշակույթի ուսումնասիրման կենտրոնը Բաքվում կազմակերպեց «Խորանական քաղաքակրթությունը Կովկասում» թեմայով միջազգային կոնֆերանսը: Ելույթ ունենալով կոնֆերանսում՝ Աղրբեջանի նախագահ Յ. Ալիևը նախակիցների ուշադրությունը հրավիրեց այն փաստի վրա, որ Կովկասում խորանական տարածումը սկսվել է Աղրբեջանից, իսկ աղրբեջանցիները խորանական մշակույթի, ավանդույթների և արժեքների կրողներն են<sup>372</sup>:

<sup>370</sup> Նույն տեղում:

<sup>371</sup> IRCICA, Newsletter, No. 41, 1996, Istanbul, p. 26.

<sup>372</sup> Г. Алиев, Наша родина-национально-духовное богатство нашего народа, Баку, 1998, с. 90.

Աղյոթեցանը իր ակտիվ քարոզչությամբ փորձում է խլամական աշխարհին ապացուցել իր խլամական ինքնությունը, որ հաճախ կասկածամտությամբ է ընկալվում ինչ խլամական աշխարհի կողմից:

\*\*\*

Ներկայումս Հայաստանի Հանրապետության համար կարևորվում է այն հանգամանքը, թե արդյո՞ք Խլամական կոնֆերանս կազմակերպության դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հարցում որևէ կերպ չի խոչընդոտում Հայաստանի և խլամական աշխարհի միջև համագործակցության գարգացումը:

Ինչպես նշվեց, Խլամական կոնֆերանս կազմակերպության դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հարցում իմանված է խլամական համեռաշխության սկզբունքի վրա: ] ԻԿԿ-ի պաշտոնական փաստաթղթերում նշված է, որ կազմակերպության անդամ պետություններն իրենց արտաքին քաղաքականությունը մշակելիս պետք է հաշվի առնեն կազմակերպության որդեգրած ուղին: Սակայն միշտ չէ, որ խլամական պետությունները հաշվի են առնում կազմակերպության որդեգրած դիրքորոշումը: Այնպես որ, ԻԿԿ-ի ոչ նպաստավոր կեցվածքը դարաբաղյան հարցում չի կարող ստվեր գցել խլամական պետությունների հետ Հայաստանի Հանրապետության միջամտական կապերի գարգացմանը:

Առանձնացնենք մասնավորապես արաբական աշխարհը, որ կարևոր դեր ունի Մերձավոր և Միջին Արևելքի ռազմավարական-աշխարհաքաղաքական համակարգում, ինչպես նաև՝ Խլամական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում: Հայաստանը սերտ կապեր է հաստատել արաբական երկրների հետ: Ներկայումս Եգիպտոսը, Սիրիան, Լիբանանը, Հորդանանը, Լիբիան, Ալժիրը, Թուվեյրը, Արաբական Միացյալ

Եմիրությունները, Թունիսը և արաբական այլ երկրներ հավաստել են իրենց բարեկամությունը և համագործակցությունը ՀՀ-ի հետ, որը դիվանագիտական առաջելություններ ունի արաբական մի շարք երկրներում: Հայաստանը Մեծ Սերծավոր Արևելքի մի մասն է, և արաբական աշխարհի հետ համագործակցությունը Հայաստանին հնարավորություն է տալիս ամրապնդել իր դիրքերը տարածաշրջանում:

Հայաստանը արաբական աշխարհի հետ ունի պատմական նույն ժառանգությունը: Դեռևս 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին թե՛ արաբները և թե՛ հայերը Օսմանյան կայսրության հպատակներն էին և պայքարում էին անկախ պետականության կերտման համար<sup>373</sup>: 1915թ. Օսմանյան կայսրության կազմակերպած ցեղասպանության տարիներին սիրիացի արաբները օգնության ծեռք մեկնեցին գաղթական հայերին՝ ապաստան տալով Երանց: Արաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո հայկական համայնքներ ձևավորվեցին Սիրիայում, այնուհետև՝ Լիբանանում, Եգիպտոսում, Իրաքում, Հորդանանում, հետագայում նաև՝ Բուլղարիայում, Արաբական Միացյալ Եմիրություններում: Ներկայում հայկական համայնքները կարևոր գործոն են հայ-արաբական բարեկամական հարաբերությունների պահպաննան և զարգացման գործում:

Հայաստանի և Արաբական Արևելքի շահերը համընկնում են պանթյուրքիզմի նկատմամբ ունեցած դիրքորոշման հարցում: Արաբական երկրներին մտահոգում է այն միտքը, որ Թուրքիան ծգտում է իր ազդեցությունը տարածել թյուրքալեզու պետությունների շրջանում և դառնալ տարածաշրջանային գերտերություն: Արաբական աշխարհը պան-

<sup>373</sup> Այս մասին տե՛ս՝ Ն. Դովիաննիսյան, Հայաստան-արաբական երկրներ, Հայ-օտսական և հայ-արաբական հարաբերությունները, Եր., 1992:

թուրքիզմն ընկալում է իբրև լուրջ սպառնալիք իր ազգային անվտանգությանը: Արաբական երկրներին մտահոգում է նաև իսլամական աշխարհում Թուրքիայի դիրքերի հետագա ուժեղացումը: Այդ է վկայում նաև 1991թ. դեկտեմբերին իսլամական պետությունների Դաքարի գագաթնաժողովը, ուր քննարկվեցին նախկին ԽՍՀՄ-ի նորանկախ հանրապետությունների ճանաչման և ԻԿԿ-ին նրանց անդամակցության հարցը: Գագաթնաժողովի աշխատանքներին մասնակցում էին Աղրբեջանի, Ղազախստանի և Թյուրքալեզու այլ երկրների պատվիրակություններ: Ինչպես գրում է թուրքական «Հյուրրիեթ» թերթը, ի տարբերություն նախորդների, հիշյալ գագաթնաժողովն աչքի էր ընկնում կուլիսներում թուրքական տարրեր բարբառներով տարվող խոսակցություններով: Իսկ ինչ վերաբերում է արաբական երկրներին, ապա նրանք թուրուվին չեն թաքցնում իրենց մտահոգությունը՝ կապված կազմակերպության ոչ արաբական երկրների թվի աճի հետ<sup>374</sup>:

Արաբական երկրներն առաջիններից են, որ ճանաչեցին Յայաստանի անկախությունը: Նոր ձևավորվող հարաբերությունների կայացմանը ճանապարհ հարրեց 1992թ. ապրիլի վերջին Յայաստանի Յանրապետության նախագահ L. Տեր-Պետրոսյանի այցը Սիրիայի Արաբական Յանրապետություն և քանակցությունները նախագահ Յաֆեք ալ-Ասադի հետ, որի արդյունքում կնքվեցին փոխադարձ համագործակցության մի շարք պայմանագրեր<sup>375</sup>:

Զգակի կարևորություն է ներկայացնում նաև Յայաստան-Եգիպտոս միջպետական համագործակցությունը, որ ամրագրվեց 1992թ. մայիսի 26-28-ը ՀՀ նախագահ L. Տեր-Պետրոսյանի՝ Եգիպտոս կատարած այցե-

<sup>374</sup> «Ազգ» 25.12.1991

<sup>375</sup> «Ազգ» 29.04.1992

լուրյամբ և նախագահ Յոսնի Մոբարաքի հետ ունեցած հանդիպումներով, որի ընթացքում քննարկվեցին գիտության, մշակույթի, կրթության և առևտության բնագավառում երկողմ համագործակցությանն առնչվող հարցեր:

Ուշադրության է արժանի նաև 2002թ. ապրիլի 20-22-ը ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի այցը Արաբական Միացյալ Եմիրություններ և Կատար, որի ընթացքում ՀՀ նախագահը քննարկել է դարարապյան հարցում ԻԿԿ-ի դիրքորոշման վրա այս երկրների հնարավոր հակագործությունը: Զմոռանաք նշել, որ Ծոցի արաբակական երկրները Խսլամական կոնֆերանս կազմակերպության քաղաքական և ֆինանսական ընտրանին են և զգալի ազդեցություն ունեն կազմակերպության ընդհանուր քաղաքականության ձևավորման հարցում:

Յարկ է նշել, որ արաբական երկրների և նրանց հասարակայնության համար Լեռնային Ղարաբաղի հարցը չունի այնպիսի սրություն և կարևորություն, ինչպես Թուրքիայի, Իրանի կամ Ռուսաստանի համար: Արաբական երկրները դարարապյան հարցում առաջնորդվում են միջազգային հանրության կողմից ընդունված՝ պետությունների տարածքային ամբողջականության պահպաննան և հակամարտությունները խաղաղ ճանապարհով լուծելու սկզբունքներով: Խոսքը պետական դիրքորոշման մասին է, թեև քաղաքական առանձին ուժեր կամ գիտական շրջանակներ կարող են ունենալ այլ մոտեցումներ<sup>376</sup>: Ղարաբաղյան խնդրի վերաբերյալ ԻԿԿ-ի անդամ արաբական պետությունների

<sup>376</sup> 1993թ. Բեյրութում լուս տեսավ լիբանանցի պատմաբան Սալեհ Զահր աղ-Ղիմի «Ղարաբաղը իր ճակատագրի լուծման և բուրանասինմատական ծրագրերի մեջ» մենագործությունը: Քեղինակի կարծիքով՝ ղարաբաղյան հարցն առնչվում է ընդհանուր դեմոկրատիայի սկզբունքներին և, նախևառաջ, ազգերի պատմ ինքնորոշման իրավունքին: Նշվում է, որ պանթյուրքիզմը հավասարապես ուղղված է հայերի և արաբների դեմ, որի վտանգը կանխելու համար անհրաժեշտ է միավորել երկու ժողովուրենքին:

տեսակետներին ծանոթանալու առումով կարևորություն են ներկայացնում իրենց գործընկերների հետ ՍԱԿ-ի, ինչպես նաև միջազգային այլ կազմակերպությունների շրջանակներում Հայաստանի դիվանագետների հանդիպումներին վերաբերող նյութերը, որոնք պահպում են ՀՀ արտաքին գործերի նախարարությունում:

Աղրբեջանը, ծգտելով կանխել հայ-արաբական միջավետական հարաբերությունների հետագա խորացումը, որ Աղրբեջանի իշխանությունների կարծիքով կարող է բացասաբար անդրադառնալ Լեռնային Ղարաբաղի հարցում, ակտիվ քայլերի է դիմում՝ չեզոքացնելու հայկական գործոնի ազդեցությունը: Այս առումով ուշագրավ է 1997թ. դեկտեմբերին Աղրբեջանի արտաքին գործերի նախարար Հասան Հասանովի այցելությունը Լիբանան Թեհրանի գագաթնաժողովի նախօրեին, որի նպատակը դարաբաշխյան հարցում Լիբանանի դեկավարների աջակցությունը ստանալը էր: «Ան-Նահար» լիբանանյան թերթը հաղորդում է, որ Հ. Հասանովը բացասաբար է արտահայտվել լիբանանցի բարձրաստիճան պաշտոնյաների՝ Հայաստան կատարվող այցելությունների մասին, որոնք շրջանցել են Աղրբեջանը: Նախարարն ակնարկել է մինչ այդ պահը Բաքվում Լիբանանի դեսպանության բացակայության, իսկ Երևանում՝ գոյության փաստը: Լիբանանի բարձրաստիճան պաշտոնյաները Հասանովին տեղեկացրել են, որ Աղրբեջանի և Հայաստանի միջև հակամարտության գոյության պարագայում իրենք մշտապես կողմնակից են դիվանագիտական լուծումներին<sup>377</sup>:

Խսլամական պետությունների գագաթնաժողովից առաջ Լիբանանում աղրբեջանամետ տրամադրություններ ստեղծելու Աղրբեջանի

<sup>377</sup> 1997/11/21 «Անդար»

արտգործնախարարի ջանքերն ընդհանուր առնամբ ծախսողվեցին, չնայած Լիբանանը ցանկություն հայտնեց Աղրեջանի հետ հարաբերություններ զարգացնել: Բաքուն հաշվի չառավ Լիբանանի հասարակական-քաղաքական կյանքում հայկական գործոնի, ինչպես նաև՝ Հայաստանի և Լիբանանի բարեկամական հարաբերությունների դերը:

Քաղաքական նշանակությամբ գգալի կարևորություն է ներկայացնում 1997թ. մարտի 19-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ա. Արգումանյանի հանդիպումը Արաբական պետությունների լիգայի գլխավոր քարտուղար Խսմաք Արդ ալ-Մագիդի և Արաբական լիգայում հավատարմագրված արաբական 22 դեսպանների հետ, որոնց նա ներկայացրել է Հայաստանի դիրքորոշումը դարաբաշխ հիմնահարցի վերաբերյալ: Արդ ալ-Մագիդը Արաբական պետությունների լիգայի անունից հավաստել է, որ դարաբաշխ հիմնահարցը քաղաքական և ոչ թե կրոնական հարց է<sup>378</sup>:

Ի դեպ, Ա. Արգումանյանը առաջին ոչ արաբական երկրի ներկայացուցիչն էր, որին հնարավորություն էր տրվել ԱՊԼ-ում ներկայացնել իր երկրի պաշտոնական տեսակետը:

Խսլամական կոնֆերանս կազմակերպության անդամ պետություններից կարևորվում է նաև Իրանի դերը, որ ազդեցիկ գործոն է մերձավորարևելյան տարածաշրջանում, ինչպես նաև՝ Խսլամական կոնֆերանս կազմակերպության մեջ: Ներկայում Հայաստանը Իրանի հետ ունի շերտ և քազմակողմանի հարաբերություններ: Անժխտելի է այն հանգանքը, որ Հայաստանը և Իրանը ներկա աշխարհում ունեն քազմարիվ

<sup>378</sup> N. Hovhannissyan, The Foreign Policy of Armenia, 1997, p. 56.

ընդհանուր, այդ թվում նաև ռազմավարական շահեր, վերջապես՝ ավանդական կապեր<sup>379</sup>:

Լեռնային Ղարաբաղի հարցում Իրանի ռազմավարությունը աչքի է ընկնում որոշ առանձնահատկություններով, որ կապված է Աղրբեջանի և Իրանի հարաբերությունների հետ: Աղրբեջանը մասնավորապես Ա. Էլչիբեյի իշխանության տարիներին, ստանալով Անկարայի աջակցությունը, անթաքույց պաշտպանում և ծգտում էր իրականացնել Աղրբեջանի Դանրապետության և իրանական Աղրբեջանի միավորնան և «Մեծ Աղրբեջանի» ստեղծման գաղափարը: Իրանը չի կարող հաշվի չառնել իր տարածաշրջանային ամբողջականությանը սպառնացող նման վտանգ-ները, որի հետևում նա տեսնում է Անկարայի պանթյուրական քաղաքանության իրականացման, տարածաշրջանում թուրքիայի ազեցության և դիրքերի ամրապնդման նկրտումները<sup>380</sup>:

Իրանը առաջ է քաշել ղարաբաղյան հակամարտության կարգավորման սեփական ծրագիր, որ 1992թ. հունվարի վերջին ներկայացրեց Հայաստանին, Աղրբեջանին և ԼՂՀ-ին: Իրանական ծրագիրը նախատեսում էր կրակի դադարեցում, գերիների փոխանակում, շրջափակման վերացում, բանակցությունների անցկացում՝ քաղաքական լուծում գտնելու նպատակով, որին պետք է մասնակցեին Հայաստանը, Աղրբեջանը, ինչպես նաև՝ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները: Միաժամանակ Իրանը կոչ արեց ՍԱԿ-ին՝ ԼՂՀ ուղարկել միջազգային խաղաղապահ ուժեր: Իրանը առաջարկեց նաև իրավիրել միջազգային կոնֆերանս՝

<sup>379</sup> Վ.Բայրության, Հայ-իրանական հարաբերությունները Հայաստանի անկախության ծեղորդումից հետո, Մերձավոր և Սիցին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 17, Եր., 1998, էջ 9:

<sup>380</sup> Ն.Յովհաննիսյան, Մերձավորակենան-անդրկովկասյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի ծնավորումը, Մերձավոր և Սիցին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 20, Եր., 2001, էջ 91:

խնդրի վերջնական կարգավորման նպատակով: Սակայն Աղրբեջանը դեմ արտահայտվեց ԼՂՀ ներկայացուցիչների մասնակցությանը խաղաղության կոնֆերանսին, որի պատճառով իրանական նախաձեռնությունը փակուղի նտավ և ի վերջո տապալվեց<sup>381</sup>: Չնայած դրան՝ Իրանը մինչև օրս հանդես է գալիս Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման միջնորդության առաջարկով:

ԻԿԿ անդամ պետություններից Հայաստանը բարեկամական հարաբերություններ ունի նաև կենտրոնական ասիական իսլամական հանրապետությունների հետ, որոնց հետ համագործակցությունն ընթանում է նաև ԱՊՀ շրջանակներում:

Լեռնային Ղարաբաղի հարցում ԻԿԿ-ի անդամ պետությունների դիրքորոշումներն ընդհանուր առմամբ կարելի է բաժանել երկու խմբի՝ արմատական և չափավոր: Արմատական են Թուրքիայի, Սաուդյան Արքայի, Պակիստանի, Բանգլադেշի նոտեցումները:

Արմատական մոտեցում ունեցող պետությունները՝ որպես կանոն հանդես են գալիս Աղրբեջանի նկատմամբ Հայաստանի «ազրեսիայի» քննադատությամբ: Նրանք Հայաստանի Հանրապետության հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը պայմանավորում են դարարայան հակամարտության վերջնական կարգավորմամբ: Արմատական դիրքորոշում ունեցող պետությունները Խալամական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում գգալիրեն աջակցում են Աղրբեջանին: Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը դիտարկելով որպես իսլամական աշխարհի իրավունքների պաշտպանության բաղկացուցիչ մաս:

<sup>381</sup> Հ. Օգանեսյան, Կարաբахский конфликт, этапы, подходы, варианты, решения, Еր., 1997, с. 42.

Ինչ վերաբերում է շափակոր կողմնորոշում ունեցող պետություններին, որոնք ԻԿԿ-ի ծնշող մեծամասնությունն են, ապա նրանք Հայասատանի հետ պատրաստ են հաստատել բազմակողմ հարաբերություններ: Նման հարաբերություններ իրոք հաստատվել են և գարգանում են բարեհաջող: Չափավոր թիվ կարծիքով՝ հայ-ադրբեջանական հակամարտությունը քաղաքական բնույթ ունի և պետք է կարգավորվի բանկցությունների միջոցով:

Ամփոփելով Խոլանական կոնֆերանս կազմակերպության դիրքորոշումը դարաբաղյան հակամարտության հարցում՝ հանգում ենք հետևյալ դիտարկություններին.

-ԻԿԿ-ն Լեռնային Դարաբաղի հարցը դիտարկել է իրեն հայ-ադրբեջանական հակամարտություն՝ խորամուխ չինհելով խնդրի քաղաքական, պատմական, իրավական, էթնիկ և լեզվամշակութային կողմերի մեջ:

-ԻԿԿ-ի բանաձևերը և որոշումները աչքի են ընկել ադրբեջանամետ շեշտադրությամբ: Խորամուխ չինհելով հարցի եռւթյան մեջ՝ անդամ երկրները քվեարկել են Ադրբեջանի և նրա համախոհ երկրների կազմած նախագծերի օգտին՝ առանց հաշվի առնելու, թե որքանով են դրանք նպաստում դարաբաղյան հիմնահարցի խաղաղ կարգավորմանը:

-ԻԿԿ-ն, աջակցելով Ադրբեջանին, առաջնորդվել է խոլանական համերաշխության սկզբունքով, այդ իսկ պատճառով կազմակերպության դիրքորոշումը դարաբաղյան հիմնահարցի նկատմամբ չի կարող անաչառ համարվել:

-Դայ-աղբբեջանական հակամարտության հանդեպ ԻԿԿ-ի դիրքորոշումը ծևավորվել է հիմնականում աղբբեջանական տեղեկատվության միջոցով, որի պատճառով այն օբյեկտիվ չէ:

-ԻԿԿ-ն հակամարտությունը կարգավորելու ուղղությամբ կառուցողական առաջարկներ դեռևս չի ներկայացրել:

-ԻԿԿ-ն դարաբաղյան հիմնահարցում որպես կանոն առաջնորդվել է տարածքային ամբողջականության սկզբունքով՝ փաստելով, որ առանձին խնդիրների նկատմամբ կիրառում է երկակի չափանիշների սկզբունքը: Այդ է վկայում այն փաստը, որ պաղեստինցիների պարագայում ԻԿԿ-ն առաջնորդվել է ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքով, ինչն անտեսվել է արցախահայության դեպքում: Ուստի երկու նմանօրինակ հիմնահարցերի նկատմամբ կազմակերպության խիստ հակադիր տեսակետները կասկածի տակ են առնում ու անընդունելի դարձնում նրա աղբբեջանամետ կեցվածքը:

-Միաժամանակ պետք է նշել այս հարցում ԻԿԿ-ի դիրքորոշման առանձնահատկությունը: Նա որևէ կոնկրետ քայլ չի ծեռնարկել դարաբաղյան հակամարտության վերաբերյալ իր հոչակած սկզբունքները գործնականում իրականացնելու ուղղությամբ:

-ԻԿԿ աղբբեջանամետ կեցվածքը չի կարող խոչընդոտել իսլամական պետությունների հետ ՀՀ միջապետական կապերի հաստատումը և զարգացումը:

-ԻԿԿ-ում դարաբաղյան հիմնահարցը չի ունեցել այնպիսի սրություն, ինչպես նահմեդականներին առնչվող շատ այլ խնդիրներ: Այդ է վկայում այն փաստը, որ դարաբաղյան հակամարտությունը կարգավորելու համար մինչև օրս որևէ հանձնախումբ ԻԿԿ-ն չի ստեղծել: Ղարաբաղյան հարցը շատ հաճախ դուրս է մնացել մահմեդական երկրնե-

ոի ղեկավարների և ԻԿԿ գլխավոր քարտուղարի ուշադրությունից, իսկ դրան վերաբերող բանաձևերն ու հայտարարությունները հոչակագրա-յին բնույթ են կրել:

Դարձ է փաստել, որ 2002թ.-ից դարաբաղյան հարցում ԽՍՀՄ ական կոնֆերանս կազմակերպության նախկին կոչտ դիրքորոշման մեջ տեղ գտան որոշ տեղաշարժեր ոչ հօգուտ Աղրբեջանի: Դիշյալ Խնդրի վերաբերյալ կազմակերպության դիրքորոշումն այլևս չունի նախկին քաղաքական հնչեղությունը: Ասվածի լավագույն ապացույցն է 2002թ. հունիսին խսանական պետությունների արտգործնախարարների Խարթումի կոնֆերանսը, որ կոչ արեց Հայաստանի և Աղրբեջանի միջև հականարտությունը լուծել Խաղաղ ճանապարհով՝ հարգելով դրացիական հարաբերությունները և միջազգայնորեն ճանաչված սահմանները<sup>382</sup>:

Փաստորեն, ԻԿԿ-ն ծեռնպահ մնաց այլ գնահատականներից: Կազմակերպությունը Աղրբեջանին կոչ արեց՝ հրաժարվել դարաբաղյան խնդիրը ուղամական ճանապարհով լուծելու գաղափարից:

2002թ. օգոստոսին Լեռնային Ղարաբաղում նախագահական ընտրությունների կապակցությամբ հանդես գալով հայտարարությամբ՝ ԻԿԿ-ն կոչ արեց Բաքվին՝ խուսափել Հայաստանի հետ ուղամական քայլումից: ԽՍՀՄ ական կոնֆերանս կազմակերպությունը այս անգամ Բաքվին փորձեց հասկացնել, որ եթե Աղրբեջանը պատերազմ սկսի, իր հետ հույսեր չկապի: Աղրբեջանցի քաղաքագետ Ռ. Մուսաբեկովի կարծիքով՝ «ԻԿԿ-ի վերջին հայտարարությունը խիստ մեղմ է նախորդների համեմատությամբ» և հակասում է խսանական այն սկզբունքին, որ

<sup>382</sup> Final Communiqué of the 29<sup>th</sup> Session of ICFM (June 25-27, 2002) <http://www.oic-un.org>

թույլ է տալիս գենք օգտագործել այն իրադրության դեպքում, որ համապատասխանում է հայ-աղբյուրական հակամարտությանը<sup>383</sup>:

Այս հանգամանքները թույլ են տալիս եզրակացնել, որ Հայաստանի և իսլամական աշխարհի միջև զարգացող հարաբերությունները հեռանկարային են՝ խարսխված բարեկամության և փոխհամագործակցության գաղափարներով։ Հայաստանի Հանրապետությունը այսուհետև նույնպես պետք է օգտագործի հնարավոր միջոցները՝ իսլամական աշխարհի հետ իր հարաբերությունները զարգացնելու համար։ Հայաստանի Հանրապետությունը պետք է հաշվի առնի միջազգային հարաբերություններում իսլամական գործոնի հնարավոր ազդեցությունը։ Հայաստանի արտաքին քաղաքականությունը այսուհետև նույնպես պետք է ուղղված լինի Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը, ինչպես նաև՝ տարածաշրջանում կայունության և խաղաղության ապահովմանը։ Հայաստանի դիվանագիտությունը պետք է փորձի չեզզարդել իսլամական աշխարհում իր համար ոչ բարենպաստ երևույթները։ Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է շարունակել Իսլամական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում դարաբաշխ հակամարտությունը օբյեկտիվորեն լուսաբանելու աշխատանքները։

<sup>383</sup> «Новое время» 17.08.2002

## ՎԵՐՋԱԲԱՆ

Իսլամական բարձրագույն քաղաքական մարմնի ստեղծմանը մեծապես նպաստեց միջազգային ասպարեզում իսլամական գործոնի ազդեցությունը, ինչպես նաև նավթարդյունահանող արարական պետությունների, մասնավորապես՝ Սաուդյան Արարիայի քաղաքական և ֆինանսական ներուժը:

Միջազգային իրավունքի շրջանակներում հանդես գալով որպես իսլամական ազգերի կազմակերպություն՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը գործունեության քառորդ դարի ընթացքում աջակցել է իսլամական աշխարհի համագործակցությանը քաղաքական, տնտեսական, ֆինանսական, մշակութային, տեղեկատվական, կրթական և այլ կարևոր բնագավառներում: Մահմեդական ժողովուրդները, համախմբվելով հիշյալ ֆորումի մեջ, ծգտել են հաղորդակից դառնալ միմյանց: Կազմակերպության ջանքերն ուղղված են եղել ամբողջ աշխարհով մեկ քարոզելու իսլամական ուսումնական անդամությունների համար միջազգային դիրքերը, վերականգնելու նրա երբեմնի փառքը:

Իսլամական կոնֆերանս կազմակերպության ստեղծումը անառարկելիորեն կարևոր փաստ է ընդհանուր հետաքրքրություններ ունեցող պետությունների և ժողովուրդների համագործակցության համար, որ խորհրդանշում է միասնական իսլամական քաղաքականություն վարե-

լու նրանց ընդհանուր ցանկությունը: Իսլամական աշխարհակարգը Իսլամական կոնֆերանս կազմակերպության գաղափարախոսների կարծիքով կժառայի իսլամական համագործակցությանը, կամրապնդի իսլամական համերաշխության և նյասնության գաղափարները, ինչպես նաև՝ իսլամական ուժմայի դիրքերը միջազգային ասպարեզում, իսկ մեկ միջարդից ավել բնակչություն ունեցող իսլամական աշխարհը կփրկի տարանջատումից, օտար ազդեցություններից, եղբայրասպան պատերազմներից, տնտեսական հետամնացությունից, աղքատությունից:

Իսլամական կոնֆերանս կազմակերպության ստեղծումը իսլամական ինտեգրացման գործընթացների արդյունք է: ԻԿԿ-ի վերջնական նպատակը ինտեգրացված իսլամական համայնքն է, որ միջազգային հարաբերություններում կարող է հանդես գալ որպես ինքնուրույն քաղաքական գործոն: Միևնույն ժամանակ իսլամական ինտեգրացված համայնքը, առաջնորդվելով իսլամի գաղափարներով, ավելի կոնսոլիդացված ձևով կարծագանքի համախւամական խնդիրներին՝ որպես մեկ միասնական ամբողջություն:

Չնայած զգալի ծեռքբերումներին՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպությանը չի հաջողվել ամբողջությամբ իրականացնել իսլամական համագործակցության քաղաքական, տնտեսական հայեցակարգերը, իսլամական պետությունների միջև ստեղծել գործող և անխափան համերաշխություն և, վերջապես, ինտեգրացված իսլամական համայնք: Իսլամական կոնֆերանս կազմակերպության վերջանական նպատակների իրականցմանը խանգարող գործոններից առանձնացնենք մի քանիսը.

-Իսլամական պետությունների միջև առկա են քաղաքական, սոցիալ-տնտեսական, գաղափարական, էթնիկական, դավանաբանական, մշակութաբանական տարրերություններ:

-Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը չունի ընդհանուր անվտանգության համակարգ, որը կազմակերպությանը դարձնում է ոչ կենսունակ: Իսլամական ուժմայի հետաքրօնությունները և շահերը ամբողջությամբ և հետևողականորեն պաշտպանելու հարցում ազդեցիկ մեխանիզմների բացակայությունը կազմակերպության քաղաքականությանը հաղորդում է հռչակագրային բնույթ:

-Իսլամական պետություններից շատերը նախապատվությունը միանշանակ չեն տալիս կրոնական գործոնին կամ, համենայն դեպս, չեն ցանկանում անտեսել այլ գործոնների դերը արտաքին քաղաքականության մեջ:

Միջազգային հարաբերությունների արդի փուլում իսլամական աշխարհում գոյություն ունեցող միտումները թույլ են տալիս եզրակացնել, որ չնայած առկա խնդիրներին՝ իսլամական միասնության կողմնակիցները այսուհետ նույնպես կպայքարեն՝ իսլամական երկրները որպես ինքնուրույն քաղաքական ուժ ներկայացնելու համար: Իսլամական կոնֆերանս կազմակերպության գործունեությունը կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ մահմեդականների առաջ ծառացած են խնդիրներ, որոնց լուծման համար իսլամական կարգախոսներ օգտագործելու անհրաժեշտություն կլինի: Կազմակերպության գործունեությունը այսուհետև նույնպես նպատակառուղղված կլինի ինտեգրացված իսլամական համայնքի ստեղծմանը և միասնական իսլամական քաղաքականության իրականացմանը. գլոբալ գործընթացներին իսլամական ուժմայի մասնակցությանը, ինչպես նաև՝ ուժմայի միջազգային դիրքերի ամրապնդմանը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՆԵՐԻ ՑԱՆԿ

Փաստաթղթեր, պաշտոնական որոշումներ, հայտարարություններ,  
տեղեկատու գրականություն, ուսումնասիրություններ

1. Ինֆորմացիա Խոլամական կոնֆերանս կազմակերպության պատվիրակության հայաստան այցելության վերաբերյալ /21 մարտի 1992/ (ՀՀ ԱԳՆ փաստաթղթեր, արխիվ):

2. Զրույցի գրառում կայացած 1992թ. մարտի 21-ին Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի և ԻԿԿ-ի գլխավոր քարտուղարի օգնական Ս. Մոհսինի միջև (ՀՀ ԱԳՆ փաստաթղթեր, արխիվ):

3. ՀՀ արտգործնախարարի նամակը ԻԿԿ գլխավոր քարտուղար Համիդ ալ-Ղարիբին 6.07.1992 (ՀՀ ԱԳՆ փաստաթղթեր, No. 10/1511, արխիվ):

4. ՀՀ նախագահի նամակը ԻԿԿ գլխավոր քարտուղարին 22.04.1993 (ՀՀ ԱԳՆ փաստաթղթեր, արխիվ):

5. Доклад международной конференции по вопросу о Палестине. Женева, 29 августа-7 сентября, 1982, ООН, Нью-Йорк, 1983.

6. Палестинская проблема. Документы ООН, международных организаций и конференций, М., 1984, 237 с.

7. Ислам, краткий справочник, М., 1983, 157 с.

8. Нагорный Карабах в 1918-1923гг. (Сборник документов и материалов), Ер., 1992, 796с.

9. Charter of the Islamic Conference, The Islamic Summit Conference (ISC), Sixth Issue, Revised Edition, Kuwait, 1987, pp. 55-62.

10. Documents D'Actualité International, Paris, Numero 6-15 Mars, 1995.

11. Draft New Strategies to Strengthen Economic Cooperation Among OIC Countries, Istanbul, September 4-6, 1995 (ՀՀ ԱԳՆ փաստաթղթեր, արխիվ)

12. Draft Statute of the Islamic Conference Parliamentary Union, Tehran 17 June, 1999

13. The Eleventh Foreign Ministers' Conference (1980), The Islamic Summit Conference, Sixth Issue, Revised Edition, Kuwait, 1987, pp. 24-25.

14. Encyclopedia of Islam. New Edition, v. X, T-U, Leiden-Brill, 2000.

15. Final Communiqué of the 20<sup>th</sup> Session of the Islamic Conference of Foreign Ministers (ICFM) (August 4-8, 1991) <http://www.oic-un.org>
16. Final Communiqué of the 21<sup>th</sup> Session of ICFM (April 25-29, 1993) <http://www.oic-un.org>
17. Final Communiqué of the 22<sup>th</sup> Session of ICFM (December 10-11, 1994) <http://www.oic-un.org>
18. Final Communiqué of the 23<sup>th</sup> Session of ICFM (December 9-13, 1995) <http://www.oic-un.org>
19. Final Communiqué of the 24<sup>th</sup> Session of ICFM (December 9-13, 1996) <http://www.oic-un.org>
20. Final Communiqué of the 25<sup>th</sup> Session of ICFM (March 15-19, 1998) <http://www.oic-un.org>
21. Final Communiqué of the 26<sup>th</sup> Session of ICFM (June 28- July 1, 1999) <http://www.oic-un.org>
22. Final Communiqué of the 27<sup>th</sup> Session of ICFM (June 27-30, 2000) <http://www.oic-un.org>
23. Final Communiqué of the 28<sup>th</sup> Session of ICFM (June 25-27, 2001) <http://www.oic-un.org>
24. Final Communiqué of the 29<sup>th</sup> Session of ICFM (June 25-27, 2002) <http://www.oic-un.org>
25. Final Communiqué of the 9th Extraordinary Session of ICFM (October 10, 2001) <http://www.oic-un.org>
26. The First Foreign Ministers' Conference-Jedda, The Islamic Summit Conference, Sixth Issue, Revised Edition, Kuwait, 1987, pp. 12-13.
27. The Foreign Ministers' Extraordinary Conference-Islamabad, The Islamic Summit Conference, Sixth Issue, Revised Edition, Kuwait, 1987, pp. 23-24.
28. His Highness the Amir of Kuwait's Speech, The Islamic Summit Conference, Sixth Issue, Revised Edition, Kuwait, 1987, pp. 34-37.
29. International Islamic News Agency <http://www.islamicnews.org>
30. The Lahore Declaration, The Islamic Summit Conference, Sixth Issue, Revised Edition, Kuwait, 1987, pp. 41-45.
31. The Mecca Declaration, The Islamic Summit Conference, Sixth Issue, Revised Edition, Kuwait, 1987, pp. 46-54.
32. Message of His Excellency Dr. Azzedin Laraki on the Occasion of the International Day of Solidarity with the Palestinian People, 29 November 1999 <http://www.oic-un.org>
33. The Oxford Encyclopedia of the Modern Islamic World (V.1, 2). John L. Esposito-Editors in Chief, Oxford, 1995.
34. The OIC Denounces the Forthcoming Elections in the Nagorno Karabagh Region as a Breach of the International Law, 2 September, 2001 <http://www.oic-un.org>
35. Organization of Islamic Capitals and Cities <http://www.oicc.org>
36. OIC and International Organizations <http://www.oic-un.org>
37. OIC Member States <http://www.oic-un.org>
38. OIC Observer States <http://www.oic-un.org>

39. The Rabat Declaration, The Islamic Summit Conference, Sixth Issue, Revised Edition, Kuwait, 1987, pp. 38-40.
40. Report of the Secretary General on the Aggression of the Republic of Armenia against the Republic of Azerbaijan to the Eight Islamic Summit Conference (ՀՀ ԱԳՆ փաստաթիվը, արխիվ):
41. Report of the Founding Conference of the Parliamentary Union of the OIC Members, Tehran 15-17 June, 1999:
42. Resolution on the Conflict Between Armenia and Azerbaijan, Final Communiqué of the 21<sup>th</sup> Session of ICFM (25-29 April, 1993) (ՀՀ ԱԳՆ փաստաթիվը, արխիվ):
43. Research Center for Islamic History, Art and Culture <http://www.isesco.org.ma>
44. The Sixth Foreign Minister's Conference-Jedda, The Islamic Summit Conference, Sixth Issue, Revised Edition, Kuwait, 1987, pp. 18-19.
45. Speech Delivered by H. E the President of the Islamic Republic of Pakistan General Muhammad Zia-Ul-Hagg at the Opening Second General Conference of The Research Center for Islamic History, Art and Culture (ISESCO), "Islam Today", ISESCO, 1986, April, pp. 78-84.
46. Speech Delivered by Ayatollah Seyyed Ali Khamenei, IRI'S Spiritual Leader at the Opening Ceremony of the 8<sup>th</sup> Organization of the Islamic Meeting Summit Conference, The Iranian Journal of International Affairs, vol. IX, No. 4, Winter 1997/98, pp. 587-598.
47. Socio-Economic Information Handbook on Islamic Conference Organization's Member Countries, Tehran, 1997, p. 177.
48. Statement by His Excellency Syed Sharifuddin Pirzada Secretary General of the Organization of the Islamic Conference on the Plight of Muslim Minority of Turkish Origin in Bulgaria (25 September, 1985), "Turkish Review", Winter 1985-86, Ankara, pp. 213-214.
49. Tehran Declaration. The Eight Islamic Summit Conference. The Session of Dignity, Dialogue, Participation, The Iranian Journal of International Affairs, vol. IX, No. 4, 1997-98, pp. 612-619.
50. The Tenth Foreign Minister's Conference-Fes, The Islamic Summit Conference, Sixth Issue, Revised Edition, Kuwait, 1987, pp. 22-23.

51 قرار بشأن فلسطين، ١٩٧٨

52 الموسوعة العربية العالمية، السعودية، ١٩٩٦

53 إعلان الدار البيضاء، ١٩٩٤ (أذنها ١٦/١٢/١٩٩٤)

54 إعلان جاكسون قضية جامو-كمبى، ١٩٩٤ (الشرق الأوسط ٢/١٦/١٩٩٦)

55 إختتام المؤتمر الإسلامي بجاكارتا، ١٩٩٦ (الشرق الأوسط ٢/١٦/١٩٩٦)

56 بيان منظمة المؤتمر الإسلامي بالدوحة، ١٩٩٨ (الأنوار ١٩٩٨/٢/١٩)

- 57 قرارات مؤتمر قمة الإسلامي طهران ١٩٩٧ (الشعب ١٢/١٦/١٩٩٧)  
58 نص بيان القمة حول الوضع في البوسنة ١٩٩٤ (الشرق الأوسط ١٢/١٦/١٩٩٤)  
59 مشروع جدول أعمال قمة طهران الإسلامي ١٩٩٧ (السفير ١١/٢٧/١٩٩٧)

### 1. Գործեր և հոդվածներ

60. Բաղդասարյան Ս., Թուրքիայի քաղաքական համակարգը 1920-1930-ական թթ., Եր., 2001, 159 էջ:
61. Բայրուլոյան Վ., Հայ-իրանական հարաբերությունները Հայաստանի անկախության ծեղործելումից հետո, Սերծավոր և Սիցին Արևելքի երկրներ և ժողովրդներ, հ. XVI, Եր., 1998, էջ 5-21:
62. Ղեմոյան Յ., Պարաբարյան հակամարտությունը բյուրքալեզու պետությունների համատեքստում, Սերծավոր և Սիցին Արևելքի երկրներ և ժողովրդներ, հ. XIX, Եր., 2000, էջ 46-53:
63. Ղեմոյան Յ., Պարաբարյան հակամարտությունը և բյուրքական գործություններ, Եր., 2002, 136 էջ:
64. Կարամանուլյան Շ., Արաբական պետությունների լիզայի դերը արաբական երկրների հակամայթերիալիստական պայքարում, Եր., 1988, 203 էջ:
65. Նաջարյան Ե., Արաբական ազգային-մշակութային գարքունքը, Եր., 1988, 498 էջ:
66. Դովիհաննիսյան Ն., Դիվանագիտություն, Եր., 1997, 103 էջ:
67. Դովիհաննիսյան Ն., Սերծավորակենսան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը, Սերծավոր և Սիցին Արևելքի երկրներ և ժողովրդներ, հ. XVI, Եր., 1996, էջ 9-19:
68. Դովիհաննիսյան Ն., Հայաստան-արաբական երկրներ, Հայ-ռուսական և հայ-արաբական հարաբերությունները, Եր., 1992, էջ 37-45:
69. Դովիհաննիսյան Ն., Սերծավորակենսան-անդրկվակայան աշխարհաքաղաքական տարածաշրջանի ձևավորում, Սերծավոր և Սիցին Արևելքի երկրներ և ժողովրդներ, հ. XX, Եր., 2001, էջ 5-41:
70. Պրիմակով Ե., Մի դավադրության պատմություն, Եր., 1987, 398 էջ:
71. Ալիև Գ., Наша родина-национально-духовное богатство нашего народа, Баку, 1998.
72. Аль-Амри Саид Сальман, Второй кризис в Заливе (1990-1991гг.) и его последствие. В кн.: Арабский сборник. Вып. третий, М., 2000 с. 48-61.
73. Бартольд Б., Сочинение, т. 6, М., 1966.
74. Беляев Е., Арабы, Ислам и Арабский Халифат ранее средневековье, М., 1966.
75. Ближний Восток и международное право, М., 1992, 261 с.

76. Бондаревский Л., Особенности неоколониалистической политики США на мусульманском мире. В кн.: Современный ислам: Проблемы политики и идеологии, вып. 3, часть 2, М., 1983, с. 3-16.
77. Борисов А., Организация исламская конференция: политические аспекты деятельности, "Народы Азии и Африки", 1983, № 4, с. 101-108.
78. Валькова Л., Саудовская Аравия в международных отношениях, М., 1979, 222 с.
79. Валькова Л., Саудовская Аравия: нефть, ислам, политика, М., 1987, 254 с.
80. Валькова Л., Роль "исламского фактора" и арабского национализма в формировании внешнеполитического курса руководства Саудовской Аравии. В кн.: Ислам и проблемы национализма в странах Ближнего и Среднего Востока, М., 1986, с. 92-115.
81. Васильев А., История Саудовской Аравии (1745-1973), М., 1982, 612 с.
82. Дмитриев Е., Палестинский узел. К вопросу об урегулировании палестинской проблемы, М., 1978, 303 с.
83. Дмитриев Е., Ладейкин В., Путь к миру на Ближнем Востоке, М., 1974, 274с.
84. Жданов Н., Исламская концепция миропорядка, М., 1991, 214 с.
85. Жданов Н., Игнатенко А., Ислам на пороге XXI века, М., 1989, 350 с.
86. Иванова И., Турецко-Арабские отношения и их место в системе международных связей на Ближнем Востоке (1945-1983), М., 1985.
87. Ионова А., Ислам и международное экономическое сотрудничество, "Азия и Африка Сегодня" № 3, 1983г, с.15-17.
88. Ионова А., О современной мусульманской трактовке проблем собственности, капитала и труда. В кн.: Социально-политические представления в исламе, М., 1987, с. 81-98.
89. Климович Л., Мусульманам дают халифа, М., 1932, 95 с.
90. Кудрявцев А., Концепция "исламского решения" ближневосточной проблемы. В кн.: "Исламский фактор" в международных отношениях в Азии, М., 1987, с. 77-87.
91. Левин З., Развитие основных течений общественно-политической мысли в Сирии и Египте, М., 1972, 266 с.
